

ՄԱՐԶԻԿ

ՀԱՄԸՄ

Մարզիկ

مجلة رياضية شهيرة
تصدرها جمعية المهتمين ببيروت

marzig
SPORTS MAGAZINE

38-րդ ՄԱՐԻ, 2019, ԹԻԻ 412 VOL. XXXVIII N° 412 السنة الثامنة والثلاثون - عدد رقم ٤١٢





ԽՄԲԱԳԻՐ

Վիգեն Աւագեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Գրիգորիս Պողարեան,
Մարո Քէշիշեան,
Սեւան Նազարեան,
Տիրան Շահինեան

ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԶՄ

Պատրիկ Կիւլպէնկեան, Աբօ
Մոսիկեան, Սիլվա Սաղըրեան,
Յարութ Ալաճաճեան, Նազօ
Հապիպեան, Ռիթա Օղուլեան,
Ատլին Շամմասեան

ԹԵՔՆԻԲ ԱՆՁՆԱԿԱԶՄ

Էջադրում

Արշօ Պալեան

Կողքի Պատրաստութիւն

Y concept International

Տպագրութեան

Պատրաստութիւն

Photogravure Paklayan

Տպագրութիւն

Համազգայինի

«Վահէ Սէթեան» տպարան

ՀԱՍՅԷ

«Սեւան» շէնք, թիւ 77 փողոց
թիւ 4 հատուած

Պուրճ Համուտ, Լիբանան

☎ 9611 248043, +9611 260117

📘 Homenetmen-Հ.Մ.Ը.Մ.

🌐 Homenetmen.org

ՅՐԻՌՈՒՄ-ԱՌԱՔՐՈՒՄ

«Մարզիկ»-ի բացառիկ այս թիւին
Լիբանանի մէջ հատավաճառի
սակն է՝ 8.000 լ.ո.,
տարեկան բաժանորդագրութեան
սակ ճշդուած է՝ Լիբանան 32 \$,
Միջին Արեւելեան եւ եւրոպական
երկիրներ 70 \$, Մ. Նահանգներ
եւ Աւստրալիա 75 \$: Թերթին
ցրումը Լիբանանի մէջ
կը կատարուի յատուկ
ցրուիչով (հեռ. 71/ 239209):
Թերթը կարելի է ստանալ
նաեւ «Համազգային»-ի
գրախանութէն:

ԱՅՍ ԹԻԻԸ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

2 Միւս երրորդութիւնը

ՈՂՋՈՅՆԻ ԽՕՍՔԵՐ

- 4 Վսեմագոյն արժէքներու եւ արժանիքներու ի խնդիր
- 5 Մեծապէս յիշատակելի տօնակատարութիւն մը
- 6 Յարատեւ վերելք
- 7 Հ.Մ.Ը.Մ.՝ միշտ յառաջ
- 8 Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առիթով
- 9 Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեայ խորհուրդը
- 10 Գիր օրինութեան Հայ Մարմնակրթական Ընդհանուր
Միութեան Գանատայի Շրջանային Վարչութիւն
- 11 Պատուի ա՛ռ հարիւրամեայ Հ.Մ.Ը.Մ.ին
- 12 Առաջնորդական պատգամ Հ.Մ.Ը.Մ.ի
հիմնադրութեան 100-ամեակին առիթով
- 13 Յառա՛ջ, դէպի յաղթանակ

100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 14 Լիբանան
- 34 Սուրիա
- 49 Իրաք
- 52 Քուէյթ
- 54 Եգիպտոս
- 56 Երուսաղէմ
- 58 Հայաստան
- 59 Ռուսիա
- 60 Արեւմտեան Մ. Նահանգներ
- 76 Արեւելեան Մ. Նահանգներ
- 84 Գանատա
- 94 Հարաւային Ամերիկա
- 96 Աւստրալիա
- 99 Կիպրոս
- 100 Յունաստան
- 104 Անգլիա
- 107 Ֆրանսա
- 109 Շուէտ
- 112 Հոլանտա
- 115 Աւստրիա

100-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԵՐ

- 116 Յետադարձ ակնարկով նշմար մը
Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեայ պատմութենէն
- 118 Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակ
- 119 Ձօն Հ.Մ.Ը.Մ.ին
- 120 Երիտասարդ միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի
100-ամեակին առիթով
- 122 «Նահատակ ցեղի անմահներ»ու
կամաւոր բանակը
- 124 Վերյուշ մը կէս դարու անցեալէն

100-ԱՄԵԱԿԻ ԱՆԴՐԱԴԱՐՁ

- 127 Հ.Մ.Ը.Մ.ը երբե՛ք պիտի չմեռնի

100-ԱՄԵԱԿԻ ԱԿՆԱՐԿՆԵՐ

- 130 Ուխտ Արարատին ձօն՝ Հ.Մ.Ը.Մ.ին
- 131 Նոր 100-ամեակներու տեսլականով...
- 132 Ազգային տառապանքէ ծնած միութիւնը
- 135 Երախտագիտութեան եւ արժեւորման փորձ
- 136 «Բարձրացի՛ր-բարձրացուր»

Հ.Մ.Ը.Մ.Ի 24 ՇՐՋԱՆՆԵՐ, 110 ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ԵՒ ՄԻԱՌՐՆԵՐ

Հայաստան: Երեւան, Մալաթիա, Չէքոն, Կոմիտաս, Էրեբունի, Արովեան, Չարեկցաւան, Հրազդան, Արմատիր, Էջմիածին, Մարտունի, Կիւմրի, Վերի. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկոյա. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պուրճ Համուր, Այնճար, Եփեսոս, Անթիպատ, Երզրէյրէ, Պատուշիէ, Ռատուր. **Սուրիա:** Հալէպ, Դամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղատար, Մոսուլ. **Քուէյթ:** Զուբէյր. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթինիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնդոն. **Աստորիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանդիա:** Արմելո, Ալքմար, Ամստըր. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէդ:** Սթոքհոլմ, Վեստերոս, Ստոկհոլմիա. **Պուլիարիա:** Սոֆիա, Ռուս, Փրովպիլ, Վառնա, Շումէն, Պուրկաս, Տուրիչ. **Գանատի:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէնպըր, Սէնթ Գաբրիէլ, Լաւալ, Վանկուվըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անճելըս, Սան Գրասինիարօ, Ֆրէզնօ, Մոնթրէալիլլօ, Փասադինա, Կլէմըլէյ Օրէնճ Բաունթի, Սան Ֆեռնանտօ, Սան Տիէյօ, Բոլթոն Էմիլիօ, Սանթա Գլարա, Զրեւենթա Հովիտ, Պրայէնք, Լաս Վեկաս, Ֆիւնիքս, Ուոլնիք Բրիք, Նորթ Հոլիվուդ, Սաքրամենթօ, Սանթա Զարիթա. **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Երքօ, Շիքաօ, Ֆիլադելֆիա, Տիքոն, Փրովիդընս, Ֆլորիդա, Ալպըն, Շարլոթ, Մեծ Մերիլանդ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորյուպա, Մոնթեւիդէօ. **Աստորիա:** Սիւրնի («Անդրանիկ»), Սիւրնի («Արարատ»), Սիւրնի («Կամք»), Սիւրնի («Արարատ»), Մելպուռն.

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն



ՄԻՒՍ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարություններու ասարտին, գրուած ու արտասանուած խօսքերու լոյսին տակ, անպայման հարցում մը կը ծագի հայ մարդուն ուղեղին մէջ, թէ՛ ո՞ր պէտք է փնտռել մարմնակրթական այս մեծ միութեան դար մը գոյատեւման գաղտնիքը:

Իսկապէս, ո՞ր պէտք է փնտռել՝

- **Արդեօք իր երդումի՞ն մէջ:** Այն երդումին, որով ճամբայ ելան Հ.Մ.Ը.Մ.ական սերունդները՝ Նոյեմբեր 1918-ին: Այդ սերունդներէն առաջինը երդում ըրաւ ամէն զնով իր պապերուն հողերուն եւ ազգային արժէքներուն վերատիրանալ: Երկրորդ սերունդը, առաջինին օրինակով, իր երդումը վերանորոգեց՝ բռնատիրական կարգերու տապալումէն ետք հայրենիք վերադառնալու եւ Եռագոյնը Երեսնակի սրտի՛ն կոթողելու: Մինչ երրորդ սերունդը Եռագոյնը Երեսնակէն Արարատի կատարը փոխադրեց եւ օրհնեալ օր մը զայն Միացեալ Հայաստանի վերեւ ծածանելու երդումը կատարեց:

- **Արդեօք իր նպատակին մեծութեա՞ն մէջ:** Այն նպատակին, որ 100 տարի շարունակ առաջադրեց անհատին մէջ մարդը եւ մարդուն մէջ հայը կերտել: Պատրաստել պատասխանատուութեան զիտակցութեան տէր սերունդ մը, որ անցած ըլլալ հայ սկաւառութեան կամ մարզական կեանքի բովէն, անոր առողջարար մթնոլորտէն եւ գործէ հանրային կեանքի բոլոր մարզերէն ներս, դառնայ փնտռուած ուժ, փնտռուած ներկայութիւն, եւ իր պարտաճանաչութեամբ, ծառայասիրութեամբ եւ վատահեղիութեամբ զատորոշուի բոլորէն:

- **Արդեօք իր ոգեկան արժէքներո՞ւն մէջ:** Այն արժէքներուն, որոնք միութեան հիմքն ու առաջնորդը հանդիսացան: Այդ ոգին էր, որ Եղեռնէն ճողոպրած սերունդը իրարու քով բերաւ՝ հիմը դնելով Հ.Մ.Ը.Մ.ին: Այդ ոգին էր, որ 1930-ական եւ 1940-ական տարիներուն թափ ու կշիռ տուաւ անոր աշխատանքներուն, եւ ազգային արժէքներու հանդէպ երկիւղածութեան աստիճանի հասնող յարգանքի եւ գոյգոյրանքի զգացումներ սերմանեց ան-



դամներուն մէջ: Ու նաեւ, այդ ոգին էր, որ մղիչ ուժը հանդիսացաւ 1970-ականներուն եւ 1980-ականներուն միութեան տարածման, հզօրացման, համագաղութային կառոյցի ստեղծման ու, վերջապէս, Հայաստանի անկախութենէն ետք՝ սկաւառական եւ մարզական համահայկական շարժումի վերածման՝ սերունդներ զինուորագրելով իր դրօշին տակ եւ հազարաւորներ լծելով մարդակերտման ու հայակերտման նուիրական գործին:

- **Արդեօք իր անդամներու դաստիարակութեա՞ն մէջ:** Այն դաստիարակութեան, որ Հ.Մ.Ը.Մ.ական մարդուն մէջ կը սերմանէ անսակարկ կերպով տալու, նուիրաբերելու, նուիրելու զգացումը, իրրելու անձնուէր, մարդասէր եւ ազգասէր մարդու, որ զիտէ իր ժամանակին մէկ մասը գոհել իր նմանին օգտակար դառնալու համար: Մարդ, որ զիտէ դժուարութեան թէ ուրախութեան ժամանակ, իր ամբողջ կարելիութիւններով «Միշտ պատրաստ» ըսել եւ յարատեւ բարձրանալ, իր հետ բարձրացնելով նաեւ անոնք, որոնց աչքերը յառած կը մնան Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիրներուն եւ նպատակին:

- **Արդեօք իր աշխատանքի եղանակի՞ն մէջ:** Աշխատանքը որեւէ գործի յաջողութեան նախապայմանն է: Այն հարստութիւնը, զոր մարդ կրնայ ունենալ եւ բնաւ չսնանկանալ, աշխատանքի հարստութիւնն է: Հ.Մ.Ը.Մ.ական մարդը իր դաստիարակութեամբ ու գործով լաւ զիտէ, որ յարատեւ ու անխնայ աշխատանքի արդիւնք են միութենական բոլոր յաջողութիւնները, իրագործումներն ու նուաճումները: Ու ինչ որ այսօրուան միութենականները կը վայելեն իրրելու բնական յարմարութիւններ՝ Հ.Մ.Ը.Մ.ի ակումբներ, մարզադաշտեր, բարոյական վարկ, նիւթական ինքնաբարձութիւն, միջազգային ճանաչում թէ այլ, այդ բոլորը արդիւնք են Հ.Մ.Ը.Մ.ական յաջողակ սերունդներու տասնամեակներու վրայ երկարած յամառ ու հետեւողական աշխատանքին: Ոչինչ պատահականութեան կամ բախտի արդիւնք է: Ոչինչ վիճակահանութեան մեծ պարգեւէ շահուած շոսալանք է: Բազում նուիրեալներու աշխատանքին քրտինքն ու գոհողու-



թինը շաղախուած է այնտեղ. տեղեկագիրները վկայ, պատմութիւնը ապացոյց:

Ու տակաւին, այս մեծ միութեան դար մը գոյատեւման գաղտնիքը արդեօք իր անգիր օրէնքնե՞րն են, կամ՝ նուիրումի իր պատրաստակամութի՞ւնը: Իր գաղափարակա՜նութի՞ւնը: Իր կազմակերպութեամբի՞ւնը: Իր կարգապահութի՞ւնը: Ստեղծած հմա՞յքը: Իր անցեա՞լը: Իր կոչո՞ւմը: Այդ կոչումին գիտակցութի՞ւնը: Իր խօ՞սքը: Իր խրայատուկ աշխատե՞լը: Իր պատմութի՞ւնը: Իր հիմնադիր երրորդութի՞ւնը: Հաւանաբար այս բոլորը, բայց նաեւ՝ այս բոլորէն վեր ու այս բոլորէն զօրաւոր այլ յատկութիւն մը, որն է՝ հաւատքը:

«Խեներութեան» աստիճանի հասնող հաւատք մը, որ ընթացիկ տրամաբանութեամբ եւ մանր հաշիւներով չի բացատրուիր: Մեծ նպատակներն ու իտեպլները մեծ հաւատք կը պահանջեն: Նախ մարդ ի՞նք պէտք է հաւատայ իր նպատակին կարելիութեան, կարելութեան եւ արդարացիութեան, որպէսզի կարենայ ուրիշներուն ալ հաւատացնել:

Հ.Մ.Ը.Մ.ականի հաւատքն է այդ վաղուան հանդէպ: Ու Հ.Մ.Ը.Մ.ականի հաւատամքը միանգամայն: Աւելի լաւ ընկերութեան մը, անելի առողջ երիտասարդութեան մը կերտման ի խնդիր ամէն զոհողութիւն յանձն առնելու, անսահման եռանդով ու կամաւոր զոհաբերութեամբ անկարելին կարելի դարձնելու եւ նուազագոյն կարելիութիւններով առաւելագոյն յաջողութիւններ արձանագրելու համար:

Կայ նաեւ *հաւատք՝ Հ.Մ.Ը.Մ.ի հանդէպ*: Այն, որ հայ

թէ օտար պատասխանատուներ, ազգային-եկեղեցական պատասխանատուներ գրաւոր թէ բանաւոր կերպով կ'արտայայտեն: Այն, որ մեր ժողովուրդը հազարներով մարգագաշտեր կ'առաջնորդէ՝ իր պաշտած Հ.Մ.Ը.Մ.ական խումբը քաջալերելու: Ու նաեւ այն համոզումը, որ Հ.Մ.Ը.Մ.ը կ'ընէ՝ եթէ ուզէ: Կրնայ՝ եթէ հարկ ըլլայ: Անկարելի բան չկայ այս միութեան համար: Միութեան 100-ամեակի աշխարհասփիռ տօնակատարութիւնները վկայ՝ Երեսնէն Մոսկուա, Միտնիէն Ամերիկացներ, Երոսպա եւ Սիջին Արեւելք:

Ու վերջապէս, կայ նաեւ հաւատքի երրորդ տեսակ մը՝ **Հ.Մ.Ը.Մ.ականին հաւատքը Հ.Մ.Ը.Մ.ին հանդէպ**: Մտածումով, խօսքով ու գործով կապուածութիւնը միութեան նպատակին, անցեալին ու բարոյական տիպարին: Հաւատք մը, որ անպայման միութեանական դառնալու առաջին օրէն ձեռք չի բերուիր, այլ՝ Հ.Մ.Ը.Մ.ը շնչելով, Հ.Մ.Ը.Մ.ի մէջ ապրելով եւ Հ.Մ.Ը.Մ.ի արժէքները կրելով կը շահուի:

Հաւատքի այս երրորդութիւնն է, անհասկի, որ կը հանդիսանայ Հ.Մ.Ը.Մ.ի դար մը գոյատեւման գաղտնիքը, ու նաեւ՝

Երաշխիքը այս մեծ միութեան մնայուն յաջողութեան, ներքին ամրութեան, անդամներու տիպարային մաքրութեան, անոնց անշահախնդիր վարքին եւ անձնուէր գործին, որուն շնորհիւ համակիր զանգուածները կ'առաջնորդուին եւ որուն միջոցով 100-ամեայ այս միութիւնը իր կարեւոր դերը կը խաղայ մեր ժողովուրդի կեանքին մէջ:

ՎՍԵՄԱԳՈՅՆ ԱՐԺԷՔՆԵՐՈՒ ԵՒ ԱՐԺԱՆԻՔՆԵՐՈՒ Ի ԽՆԴԻՐ

Հիացմունքի արժանի է րեանել ՀՄԸՄԻ Լիբանանի 10 մասնաճիղերը, իրենց մարզական եւ սկսուրական քեւերով, կը փոնակապարեն միութեան 100-ամեակը:

Դար մը պայմութիւն, որուն ընթացքին մարզական եւ սկսուրական յաջորդական սերունդներ իրագործումներ կապարած են, ախոյեանութիւններ նուաճած են, եւ ո՛չ միայն Լիբանանի մէջ, այլեւ աշխարհի այն 110 քաղաքներուն մէջ, ուր ՀՄԸՄը կը գործէ իր անդամ-անդամուհիներով եւ վարչականներով:

Կ'արժէ 25 հազար անդամներէ աւելի ունեցող ՀՄԸՄին գեղեցկագոյն խօսքերը նուիրել, փրուած ըլլալով որ ան Լիբանանին նուիրած է քաղմաքի յաղթանակներ, որոնք ցուցանիչը կը հանդիսանան անոր յարաբերութեան ոգիին, եռանդին եւ սահման չճանչցող չգփումներուն փեւարար լաւագոյնը իրագործելու մարզի մը մէջ, որ կը նպաստէ մարդկային արժէքներու կերպման:

Արդարեւ, մարդակերպման աշխատանքի եւ մարզական ոգիի կերպման համար կապարուած որեւէ ներդրում միութեան մը կողմէ, ներդրում է վսեմագոյն արժէքներու եւ արժանիքներու ի խնդիր:



Միաժամանակ, ան կարեւոր ազդակ մըն է երիտասարդութեան համար ինքզինք կերպելու եւ աւելի լաւ ներկայ մը եւ աւելի առողջ ապագայ մը ունենալու համար:


Կասկած չկայ, որ չեր միութեան 100-ամեակի փոնակապարտութիւնները, Լիբանանի եւ աշխարհի չորս ծագերուն, հոն ուր նուաճումներ կապարեցիք եւ առողջ մրցակցութիւն սրեղծեցիք, համակիր չեր զանգուածին համար նշանակալից պիտի ըլլան: Զանգուած մը, որ իր միութիւնը ջերմօրէն կը քաջայերէ եւ միութեան նշանաբանին հաւատարիմ անհատական քէ խմբային ախոյեանութիւններու մէջ կը ջանայ առաւելագոյն յաջողութիւններու հասնիլ:

Մրփանց շնորհաւորութիւններ Հայ Մարմնակրփական Ընդհանուր Միութեան իր 100-ամեակին առիթով:

Վարչքը կապար միութեան բոլոր նուիրեալներուն:

Յաջողութիւն եւ փեւական վերելք այս մեծ միութեան:

ՍԱՍՏ ՀԱՐԻՐԻ
Լիբանանի Վարչապետ



ՄԵԾԱՊԷՍ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Միլեյի՝ բարեկամներ.

Մեծ սիրով ջերմագին ողջոյններս կը փոխանցեմ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի փոնակապարտքեան ներկայ զգնուողներուն:

1918 թուականէն սկսեալ, Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհի փարածքին ոգեշնչած եւ աջակից դարձած է հայ երիտասարդութեան: Վերջին 60 տարիներուն, չեք կազմակերպութիւնը մուտք գործած է նաեւ Պանապա, իր ծառայութեան արժէքները ներդնելով եւ Պանապայի Հայ Կեդրոններու միջոցով զանոնք երիտասարդութեան ուսուցանելով:

Առիթը օգտագործելով կ'ուզեմ գնահատանքի



խօսքս ուղղել Հ.Մ.Ը.Մ.ի Պանապայի շրջանին, որ համբերապարօրէն կը կապարէ իրեն վստահուած պարտականութիւնը՝ ի շահ մարդաշ սերունդին: Կրնաք հպարտանալ, որովհետեւ չեք աշխատանքը օգտակար կը դառնայ մեր ազգի բազմամշակութային արժէքներու հզօրացման:

Հաճեցէք ընդունիլ լաւագոյն բարեմաղորութիւններս՝ մեծապէս յիշատակելի փարեդարչի մը փոնակապարտքեան առիթով:

Անկեղծօրէն՝
ՃԱՍԹԻՆ ԹՐՈՒՏՕ
Պանապայի Վարչապետ



ՅԱՐԱՏԵՒ ՎԵՐԵԼՔ




Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրու-
թիւնը, 1918-ին, հայ ժողո-
վուրդի արդի պայմանութեան
փայլուն էջերէն մէկն է, ան-
կասկած, մանաւանդ մեկ-
նած այն հանգամանքէն,
որ երիտասարդութիւնը կը
կազմէ որեւէ ժողովուրդի,
որեւէ հասարականութեան,
որեւէ ընկերութեան ամէնէն
կարեւոր եւ ամէնէն հիմնա-
կան ազդակներէն մէկը:

Հ.Մ.Ը.Մ.ի 100 տարուան պայմանութիւնը աւելի քան
փաստ մըն է, որ այս միութիւնը կարողացած է շարու-
նակաբար, փարածուելով աշխարհի չորս կողմը, ազ-
գային ոգի եւ հայկականութիւն սերմանել նորահաս
սերունդներու մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնական առաքելութիւններէն մէկը
նաեւ, այնպէս ինչպէս իր անունը կը մարմաննշէ,
մարմնակրթութիւնն է: Եւ այնպէս ինչպէս Հ.Մ.Ը.Մ.ի թէ՛
մարզական խումբերը եւ թէ՛ սիւսուրհան կոմիտէները
իրենց առաքելութիւնը կը նկատեն, առողջ մարմնի եւ
ֆիզիքական առողջ կարելիութիւններու մէջ կը կայա-
նայ նաեւ առողջ միտքը:

Այս առիթով կ'ուզենք մեր գնահատականը արչա-
նագրել, հակառակ անոր, որ Հ.Մ.Ը.Մ.ը այնքան մեծ
կազմակերպութիւն մըն է, որուն դիմաց անհատ մար-
դու մը գնահատականը որքան ալ մեծ ըլլան անոր
պատասխանատուութիւնները, մեծ նշանակութիւն
կրնայ չունենալ, սակայն պէտք է ըսել, որ փարիներու
մեր փորձառութիւնը ցոյց տուած է, որ այն կուսակցա-
կանը, ազգային կեանքի մէջ այն գործողը, որ անցած
է Հ.Մ.Ը.Մ.ի դպրոցէն՝ եղած է աւելի պատասխանա-
տու, աւելի գիտակից եւ աւելի ազգասէր: Հեղինակաբար,
շնորհատրելով Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեա-
կը, անոր կը մաղթեմ յարապեւ վերելք, յարաբեու-
թիւն, որպէսզի կարողանանք Հ.Մ.Ը.Մ.ի միջոցով ազ-
գասիրութիւն, հայկականութիւն, մարդասիրութիւն եւ
գիտակցութիւն սերմանել աշխարհի բոլոր կողմերը
զարմուղ, Սփիւռքի թէ՛ հայրենիքի մէջ գործող երիտա-
սարդական մեր շարքերուն:

ԱԲԵՏԻՍ ԿԻՏԱՆԵԱՆ
Լիբանանի Զբօսաշրջութեան Նախարար



Անցնող մէկ դարուն, Հ.Մ.Ը.Մ. սուկ
մարզական կամ սիւսուրհան շար-
ժում մը չեղաւ: Յանչնառու մարդու,
օրինակելի քաղաքացիի եւ հպարտ
հայու կերպման դարբնոց մը հանդի-
սացաւ ան՝ յաջորդական սերունդնե-
րու համար:

Հ.Մ.Ը.Մ.ի մարդկերպման ու հայա-
կերպման դարբնոցին մէջ նկարագիր,
ինքնութիւն եւ դիմագիծ կերպած մեր
սքանչելի տղաքն ու աղջիկները եղան
փէր ու պահապան բարոյական մեր
արժէքներուն եւ ազգային մեր ըս-
կրգրունքներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի ազգային քուրային մէջ,
մեր պատանիներն ու երիտասարդնե-
րը սորվեցան բարոյայրում չճանչնալ,
յաղքանակի հպարտութիւն ունենալ եւ
միշտ ընթանալ յառաջ, հաւաքքով,
խանդավառութեամբ եւ փեսիլքով:



Հ.Մ.Ը.Մ.՝ ՄԻՇՏ ՅԱՌԱՋ

Ցնծուքեան մէջ է Հ.Մ.Ը.Մ.ի ընկրանիքը:

Մէկ դար բոլորած մարմնակիրքական մեր մեծ միութիւնը կը պատրաստուի բարչրաճակատի իր կեանքին երկրորդ դարը քնակոխել, արդար վաստակով ու գնահատանքով:

Անցնող մէկ դարուն, Հ.Մ.Ը.Մ. սոսկ մարզական կամ ըսկաուրական շարժում մը չեղաւ: Յանձնառու մարդու, օրինակելի քաղաքացիի եւ հրպարտ հայու կերպման դարբնոց մը հանդիսացաւ ան՝ յաջորդական սերունդներու համար:



Հ.Մ.Ը.Մ.ի մարդկերպման ու հայակերպման դարբնոցին մէջ նկարագիր, ինքնութիւն եւ դիմագիծ կերպած մեր սրանչելի փղաքն ու աղջիկները եղան փէր ու պահապան բարոյական մեր արժէքներուն եւ ազգային մեր ըսկզբունքներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի ազգային քուրային մէջ, մեր պատանիներն ու երիտասարդները սորվեցան բարոյալքում չճանչնալ, յաղթանակի հպարտութիւն ունենալ եւ միշտ ընթանալ յառաջ, հաւաքով, խանդավառութեամբ եւ փեսիլքով:

Միս քէ ինչո՞ւ

Հ.Մ.Ը.Մ.ականը եղաւ ու մնաց գաղափարական Մարդ, որ յանչն առաւ քալել Եռագոյն դրօշին երկունէն, իբրեւ ներկայացուցիչը հաւաքաւոր հայ երիտասարդութեան:

Հ.Մ.Ը.Մ.ականը եղաւ ու մնաց առաքինի Մարդ, որ միութեան եւ ժողովուրդին շահերը վեր դասեց անչնական իր հաշիւներէն եւ նախասիրութիւններէն, իբրեւ օրինակ նուիրումի եւ անշահախնդիր գործի:

Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ ու մնաց կարգապահ մարզիկ, խոնարհ սկաուր եւ պարկեշտ վարչական, որ իր արժէքը փեսաւ Հ.Մ.Ը.Մ.ի յանելեալ հզօրացման եւ հայ ժողովուրդի փեսական զարգացման մէջ, ի խնդիր հաւաքական մեր ուժին ամրապնդման եւ ազգային մեր գերագոյն նպատակներուն իրականացման:

Շնորհաւոր յոբելեանդ, Հ.Մ.Ը.Մ.:

Յարգանք 100-ամեակդ կերպած նուիրեալներուն:

Պատրի՛ քեզ ծնող ժողովուրդին:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

Պետական Երեսփոխան
Հայկական Երեսփոխանական
Պլոքի Ներկայացուցիչ

Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ



Սրբի անհուն գոհունակութեամբ եւ օրհնութեամբ կ'ողջունենք Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընթացիկը՝ Կեդրոնական, Արեւմրդեան Միացեալ Նահանգներու Շրջանային եւ մասնաճիւղերու վարչութիւններն ու անոնց հովանիին փակ գործող բոլոր միատրները, սկստութեան կազմերն ու մար-

զիկները, մարզական աշխարհապարսձ միութեան 100-ամեակին առիթով, որ յիշատակուեցաւ «Պատուար անցեալէն դէպի յաղթական ապագայ» նշանաբանով, մաղբելով, որ Հ.Մ.Ը.Մ.Ի ցաւը, դարադարձը եզրափակող այս հանդիսատար փոճակապարտութիւններէն ետք, ընդմիջը մնայ վառ, անոր Եռագոյն դրօշը հպարտօրէն ծածանի հայաշխարհի երկնակամարին:

Իր առաջին դարադարձը փօժող Հ.Մ.Ը.Մ.ը հայութեան կեանքին մէջ ծնունդ առաւ իբրեւ բարիք, անոր գործը քալեց յարանուն վերելքով ու այսօր մեզի կը ներկայանայ բաց ճակատով, անցեալ դարու իրագործումները բազմապարկելու վճռակամութեամբ եւ նորահաս սերունդներուն ազգային դաստիարակութիւնն ու մարդակերպումը աննահանջ շարունակելու կամքով: Հ.Մ.Ը.Մ.ը այսպէ՛ս եղած է իր ծննդեան առաջին օրէն սկսեալ. անոր երբքը սկզբնաւորուած է այն օրերուն, երբ մեր մայր հայրենիքը կենաց մահու մարտերէ յաղթական դուրս գալով՝ կը հիմներ անկախ ու ազատ Հանրա-

պետութիւն: Հ.Մ.Ը.Մ.ը իրաւամբ եղաւ անդրանիկ հանրապետութեան հաւաքարիմ դրօշակակիրը, իր երախտաշատ գործը փարսձեց Միջին Արեւելքէն մինչեւ Եւրոպա, Ամերիկաներ ու Աւստրալիա, ամէն փեղ կիրարկելով «Առողջ միպք՝ առողջ մարմինի մէջ» սկզբունքը, իրերայաջորդ սերունդներ փոգորեց մեր եկեղեցական ու ազգային արժէքներով, աւանդներով: Հայաստանի անկախութեան վերահաստատումը հայրենիքին դուռները անգամ մը եւս լայն բացաւ այս միութեան առջեւ ու մենք ամէն փարի, գաղութներու մէջ իրականացող մարզահանդէսներուն ու յաղթական փողանցքներուն զուգահեռ, վիան կ'ըլլանք Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին շուրջ բազմահազար պատանիներու ու երիտասարդներու համախմբումին:

Թող անմար մնայ յիշատակը Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն ու անոնց ծառանգութիւնը նոր ծաղկում ապրի փարտէ փարի: Վարձքը կատար բոլոր անչնդիր ծառայողներուն, որոնք հաստատ քայլերով դէպի յառաջ կը քալեն Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգով ամրագրուած ուխտերը իրականացնելու վճռակամութեամբ:

Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը:
Ապրի՛ն հաւաքարմաքար դրօշակակիրները:
Փառք ու պարի՛ն Հ.Մ.Ը.Մ.ը ծնող հայութեան ու Հայաստանին:

Աղօթարար՝
ՄՈՒՇԵՂ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ
Առաջնորդ Արեւմտեան Մ. Նահանգներու
Արեւմտեան Թեմի



Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հայ Մարմնակիրական Ընդհանուր Միության բազմասերունդ հրաշալի առաքելության հարիւր փարիներու վասպակը լուսաւոր կերպով արչանագրուած պիտի մնայ հայտնական պատմական երթի մայր էջին վրայ: Եթէ յեփարդարչ սկնարկով վերջիշենք ու վերապատմենք փարապայման կացութեանց մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ծննդեան ու զարգացման ուղին, զարմանքով ու հիացումով պիտի լեցուինք՝ ի փես անոր իրագործումներուն ու յաղթանակներուն: Պարմարանը կամ վերլուծողը, ծաւալուն փունայնէրու լոյսին փակ, պիտի փորձէ հասկնալ դար մը արժանաւորութեամբ գոյատեւած Հ.Մ.Ը.Մ. իրականութեան խորհուրդը:

Մենք լիիրաւ առումով որակեցինք՝ Հ.Մ.Ը.Մ.ի խորհուրդը: Հ.Մ.Ը.Մ.ը ոչ թէ անբացափակ էր կամ անհասկնալի երեւոյթ մըն է մեր կեանքին մէջ, այլ դարերու խորքէն եկող, հայտնական նկարագրի լուսագոյն փարբերը համադրող ու արտայայտող այնպիսի կառոյց-միութիւն մըն է, որուն իրագործած աշխարհափարած ներկայութիւնն ու արչանագրած որակական յառաջդիմութիւնը կը փայլին, կը ճառագայթեն եւ կը լուսաւորեն: Այո՛, խորհուրդ մըն է, համանման եկեղեցւոյ կամ կրօնական իրականութեանց խորհրդաւորութեան: Աստուծոյ, անանկիցին եւ արարչագործութեան ընծայած խոր յարգանքին ու սիրոյն մէջ, կարգ ու կանոնին նուիրապետութեան ազնուացնող հնազանդութեան մէջ, ուրիշ նաեւ կը քաղէ ներքին ուժակնութիւն մը՝ ապրելու դրականութեամբ եւ ծառայելու նուիրումով: Այս բոլորով ան կը մնայ օրինակելի բոլոր ժամանակներու հայ մարդու կեանքին մէջ:

Արդարեւ, հայ ինքնութեան կերպումի դարաւոր փորձառութեան մէջ արտասովոր «դպրոց» մը կայ, որ իր իրայայտուկ դրոշմն ու ներդրումը ունեցաւ հայ, այս պարագային սուրիահայ նորահաս սերունդներու դաստիարակչական յոյժ կենսական առաքելութեան մէջ: Հ.Մ.Ը.Մ.ը հարիւր փարի անընդմիջաբար, հայ արիները նահապակութեան ճանապարհէն յանդիմութեան ու անմահութեան առաջնորդելու յանձնարարութեամբ, սովորական որակումով բոլոր փեսակի «դպրոցներէն» փարբեր, բարոյական ու կարգապահական բարձր արժանիքներով, առողջ մարմինին, յարակալեալ միտքին ու պայծառաստեալ հոգիին պարզեց բարձրանալու եւ իր հեղ փեր՝ դէպի վեհն ու փեսնը բարձրացնելու իրաւաւ:

«Յառա՛ջ, նահապակ գեղի անմահներ», ոչ միայն նահապակներն են անմահ, այլ նոյնիքն գեղն է անմահ, երբ ինքզինք կազմակերպել գիտէ եւ կազմակերպուածութեամբ իր արժանի փեղը կը գրաւէ մարդկութեան ու հայտնական կեանքին մէջ: Եւ բնաւ պարահասկան չէ, որ մեր ազգային կեանքի բազմերես ծառայութեանց մէջ ներգրաւուած հայորդիներուն ընտելացոյցները, անկասկած, Հ.Մ.Ը.Մ.ի «դպրոց»ին բարի պտուղներն են:



Սուրիահայերը, եօթնամեայ փազնապէն ետք, անհուն ուրախութեամբ իմացան եւ իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի դարադարձի նախաշեռնութեանց, որոնք կազմակերպչական լուրջ ու բրձախնդիր աշխատանքով դրսեւորեցին յանձնառութիւնն ու վճռակամութիւնը, նուիրումով շարունակելու հաւաքական երթը՝ ի խնդիր «Բարձրացիր-բարձրացուր»ին:

Համախմբուած հարիւրամեայ գնահապելի ծառայութեան եզրափակիչ կեդրոնական հանդիսութեան, յարգանքով խոնարհինք յիշապակին առջեւ «Նահապակ գեղի անմահներ»ուն, որոնք ծառայեցին ողջ էութեամբ ու անցան, եւ շնորհաւորենք ու գնահապենք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը՝ պարաստեալներով ու անդամներով, որոնք այսօր նոյն նուիրումով ու յանձնարարութեամբ կը շարունակեն ծառայել մեր ժողովուրդին յառաջապեսիլ իր երթին մէջ:

Անմահութեան ճանապարհէն ընթացող Հ.Մ.Ը.Մ.ին կը մաղթենք բարի երթ՝ նոր բացուող հարիւրամեակին, իսկ լուսաւոր հորիզոն մեր ժողովուրդին:

Հայրական սիրոյ ջերմ օրհնութեամբ:

Աղօթիւր՝
ՇԱՀԱՆ ԱՐՔ. ՍԱՐԳԻՍԵԱՆ
Առաջնորդ Բերիոյ Հայոց Թեմի

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՄԱՐՄՆԱԿՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՆԱՏԱՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Սրբի անհուն ուրախութեամբ կ'ողջունեն Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 100-ամեակը:

Արդարեւ, ներկայ տարեշրջանին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը արդար հպարտութեամբ կը նշէ իր հիմնադրութեան 100-ամեակը:

Հայ ժողովուրդի Մայիսեան յաղթանակի պայմանական օրերուն ինչպիսի՛ հրաշք, Հայաստանի Ա անկախ Հանրապետութեան արեւոյժում, միաժամանակ րեսիլը ու երազ ունեցող ղեկավարներ՝ Շաւարշ Քրիսեաններու, Յովհաննէս Հինդլեաններու եւ Գրիգոր Յակոբեաններու մտայնացումով Պոլսոյ մէջ հիմը կը դրուի Հ.Մ.Ը.Մ.ին: Այո՛, փայլուն ղեկավարներ, որոնք Արեւմուտքի համայնարաններէն վկայուած ու միջազգային սկստութեան շարժումով ներշնչուած, Պոլիս կը վերադառնան ու ամբողջապէս կը նուիրուին առաքելութեան մը՝ պատրաստներու եւ երիտասարդներու դաստիարակութեան սրբազան գործին, ազգասէր ու մարդասէր հայու նկարագիրը կերտելու:

Անցած են 100 տարիներ, սակայն Հ.Մ.Ը.Մ.ը կը շարունակէ ոգի փոխանցել, մարդկային եւ ազգային առողջ ու հարազատ ապրումներով փոզորելու հայ պատրաստներու ու երիտասարդը: Առողջ մարմինին մէջ, առողջ հոգիին հետ կերտած է ու կը շարունակէ կերտել նկարագիր մը, որ ուրիշ բան չէ՛ եթէ ոչ բիւ-

րեղ եւ անվիճելի հայկականութեան կնիքով դրոշմը:

Անցած են 100 տարիներ, սակայն Հ.Մ.Ը.Մ.ը կը մնայ այն առողջ դպրոցը, ուր կը դաստիարակուին սերունդներ՝ անսայու հայ ազգի կանչին ու մանաւանդ տաղանայի ու ամենադժուար իսկ պահերուն իրենց ամբողջական կարելիութեամբ ըսելու «ՄԻՇՏ ՊԱՏՐԱՍ»: Յարապէս բարձրանալու եւ իրենց հետ բարձրացնելու անոնք, որոնք իրենց հայեացքը սեւեռած են դէպի Ազգն ու հայրենիքը, դէպի Ազգայ, Անկախ ու Ամբողջական Հայաստանը:

Յարգանք բոլոր անոնց, որոնք եկան, գործեցին ու անցան: Թող Աստուած օրինէ հիմնադիր բոլոր անդամներուն անբառամ յիշատակը:

Թող Աստուած վարչահատրոյց ընէ ապրող, շնչող ու արեւոյժագործող բոլոր վաստակաւոր անդամները, որոնք տակաւին կը շարունակեն ծառայել ի խնդիր մեր ժողովուրդի զաւակներուն ինքնուրոյն դիմագիծի պահպանման ու հարստացման:

Յանուն Գանապոլայի Հայոց Թեմի Կրօնական Ժողովին եւ Ազգային Վարչութեան, կը շնորհաւորենք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը:

Ի խորոց սրբի կ'աղօթենք, որ նորանոր եւ առաւել մեծ ծառայութիւններով ծաղկի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան սրբազան գործը:

Օրհնութեամբ եւ սիրոյ ջերմ ողջունի՛ւ՝
Աղօթարար
ԲԱԲԳԷՆ ԱՐՔ. ՉԱՐԵԱՆ
Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի



ՊԱՏՈՒԻ ԱՌ ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ

2018 թուականը համայն աշխարհի հայութեան համար բախարոյր էր և պարտաւեր երկու 100-ամեայ յոբելեաններով կը յարկանշուի. առաջին յոբելեանը՝ Հայաստանի Հանրապետութեան եւ երկրորդը, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, որ մեր ժողովուրդին համար դարձաւ սիրելի եւ հարազատ անունն էր Հ.Մ.Ը.Մ.: Տարբեր պարագաներու եւ միջավայրերու մէջ ծնունդ առած, բայց իրարու այնքան լծակից ու առնչակից ու միազանգուած եղան:

Հայաստանի անկախ Հանրապետութեան կերպումը հայ ժողովուրդի սեփական ուժերով իրականացուցած հրաշագան այն իրագործումն է, որ հայ ժողովուրդի լինելու քէ չլինելու հիմնահարցը վճռեց, հայուն փալով պետականութիւնն դրօշ քայլերգ եւ արժանապատուութիւն:

Հայաստանի Հանրապետութեան հասարակումէն անմիջապէս ետք, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները Հայաստանի կառավարութեան փափաք եւ պարտապահամութիւն ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ.ը ընդունելու իրքեւ Հայաստանի Հանրապետութեան զինուորագրուելու կամաւոր բանակ: Հայաստանի պետութիւնը ընդառաջեց եւ այնուհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ Հայաստանի Հանրապետութեան ընդմիջար ծառայելու պարտապահայրենասնուէր կազմակերպութիւնը:

Սկզբունքով Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ սկստութեան եւ մարզական կազմակերպութիւն, եւ իբր այդպիսին ջանաց Հ.Մ.Ը.Մ.ական սկստութ քէ մարզիկ անդամները կրթել ու մշակել առողջ միտք՝ առողջ մարմինի մէջ համամարդկային այդ նշանաբանով, բայց ըլլալով նաեւ հայ ժողովուրդի բարօրութեան ազգային երազներուն նուիրուած կազմակերպութիւն, համաշխարհային այլ կազմակերպութիւններէն զանազանուցաւ այդ նշանաբանին վրայ դրոշմելով իր կնիքը՝ առողջ միտք, առողջ մարմին եւ ազնիւ հոգի երրորդութիւնը:

Հայրենիքի ծառայութեան մէջ մնալու սկզբունքով, այս նշանաբանին ոգիով Հ.Մ.Ը.Մ.ը հարիւր փորիներ շարունակ իր սկստութ, մարզիկը եւ հեղազային ազգային հասարակական կեանքի բոլոր մարզերուն մէջ իր ծառայութիւնը բերող անդամները դասփարակեց, անոնց յանձնելով ազգային նուիրական արժէքներ եւ զանոնք յարգելու եւ պահելու կարգա-

պահական գիտակցութիւն: Հ.Մ.Ը.Մ.ը իր անդամները դասփարակեց ազգային սրբութիւններն ու արժէքները յարգելու:

«Արարարի սուրբ ճիւղի պէս բարձր ու վճիպ» պահեց Մայիսեան հերոսամարտերով շահուած Հայաստանի Հանրապետութեան Եռագոյն դրօշը՝ այդպիսով նուիրականացնելով Մայիս 28-ն ու անոր խորհուրդը:



Եռագոյնի դրօշի առաջնորդութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ական սերունդները բարչրանակապ ու խրոխպ, րողանցեցին ո՛չ միայն Մայիսեան փառաբաններու մարզադաշտերու մէջ, այլեւ՝ նոյն ոգիով գործեցին ազգային կեանքի ծառայութեան բոլոր մարզերէն ներս:

Հողմացրի աշխարհասփիւռ հայ ժողովուրդը վերընձիւղած իր գաղութներուն մէջ, բախարատութիւնը եւ հոգեկան գոհունակութիւնը ապրեցաւ հոն, ուր Հ.Մ.Ը.Մ.ը իր բանակավայրը լարեց, դրօշը պարգեց եւ Հ.Մ.Ը.Մ.ական ազգային ազնուագոյն սկզբունքներով գործի լծուեցաւ: Այդ երանաւոր գաղութներէն մէկը եղաւ յունահայ գաղութը, որ 95 փարիներէ ի վեր կը շարունակէ վայելել Հ.Մ.Ը.Մ.ի կենսունակութիւնը եւ բարիքները: Լեւոն եւ Պետրոս Գայեան եղբայրները եղան այն անխոնջ երախտաւոր մշակները, որոնք հարիւրամեայ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան առաջին իսկ օրերէն՝ 1923-ին ապագայապետաիլ ազգային գիտակցութիւնը եւ պայծառապետութիւնը ունեցան Հ.Մ.Ը.Մ.ի լոյս սերմերը ցանելու եւ մշակելու Յունաստանի հայութեան բերրի հողին վրայ եւ արգասաբեր վար ու ցանի երկարամեայ ծառայութեամբ լիառապօրէն պարենատրել յունահայոց ազգային կեանքի շարեմարանները:

ԳԵՂԱՄԱՐՔ. ԽԱԶԵՐԵԱՆ
Առաջնորդ Յունաստանի Հայոց Թեմի

(Շար.ը Գ. կողք)

ԱՌԱՋՆՈՐԳԱԿԱՆ ՊԱՏԳԱՄ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ



Սիրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ և քոյրեր,

Ողջո՞յն իր հիմնադրութեան փառապանծ 100-ամեակը նշող Հ.Մ.Ը.Մ.ին:

Ողջո՞յն Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով մեր հաւաքական իր-էայններուն լծուած բոլոր հայրդիհներուն:

Ողջո՞յն Հ.Մ.Ը.Մ.ը իբրև հայակերպումի ջախ

վառ պահող և սերունդէ սերունդ փոխանցող բոլոր նուիրեակներուն:

100 փարի առաջ հայ ժողովուրդի ծոցէն ծնած և 100 փարի հայ ժողովուրդին ծառայած Հ.Մ.Ը.Մ.ը օրէ օր յարանուն ընթացքով Հայաստանի և աշխարհասփիռ հայութեան կեանքին մէջ կը շարունակէ գործել իբրև պապանեկան և երիպասարդական սկաուրական և մարգական աշխոյժ միութիւն:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակը եզակի առիթ է յարգելու յիշատակը այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք անցեալին փրկեցան և այսօր, իբրև հանգուցեալ կամ վերերան, հանգիստ խիղ-

ճով և գոհունակութեամբ կը հրճուին Հ.Մ.Ը.Մ.ի անկասելի վերելքով:

Առաւել, Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակը այն հանգրուանն է, երբ այսօրուան պապասխանապուները Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեայ վաստակին դիմաց աւելի կուռ պապրասպակամութեամբ ներկան կ'ապրին և աւելի յստակ փեսիլքով ապագան կը ծրագրաւորեն:

Երբ Հ.Մ.Ը.Մ. կ'ըսենք, մեր աչքերուն դիմաց կը պարզուին Հ.Մ.Ը.Մ.ական մեր քոյրերուն և եղբայրներուն խիտ շարքերը, որոնք «Բարչրացի-բարչրացո՛ւր» և «Միշտ պապրասպ» վարքագիծով ո՛չ միայն մարգադաշտին վրայ կը փողանցեն, այլև մեզի կը ներշնչեն այն վարահոսիւնը, որ այս մապրդաշ փղաքը վաղը նաև մեր ազգային կեանքի մայրողիին վրայ իրենց գործօն մասնակցութիւնը պիտի բերեն:

Նոր դարադարչներ կը մաղթենք Հ.Մ.Ը.Մ.ին՝ Նասասարդեան առաւօպներու լուսածագով...:

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱՅԼԵՄԵՉԵԱՆ
Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի





100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՒԻՆՆԵՐՈՒՆ ԵԶՐԱՓԱԿՈՒՄԸ ՎԱՍՏԱԿԱՇԱՏ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄՈՎ

**Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ**

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի աշխարհասփիլոս տօնակատարություններուն եզրափակումը կատարուեցաւ պարգեւատրման հանդիսութեամբ մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 10 Մարտ 2019-ի երեկոյեան ժամը 6-ին, Լիբանանի Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան:

**ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ
ԲԱՅՈՒՄԸ**

Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայերգներէն ետք, ներկաները

մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգեցին մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ.ականներուն յիշատակը:

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեց եւ յայտագիրը վարեց Հուրի Փափազեան-Էմմիեան, որ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեայ երթը նկատեց ո՛չ միայն յարգանք պարտադրող փորձառութեան ու վաստակի ցուցանիշ, այլեւ՝ համայն հայրութիւնը գօտեպնդող ու ներշնչող պատգամ՝ շարունակելու հայ ժողովուրդի սերունդներու ինքնութեան պահպանման եւ անոնց միտքի ու մարմինի առողջ զարգացման սրբազան գործը:

Հանդիսութեան նպատակին մասին խօսելով, ան ըսաւ, թէ հանդիսութիւնը կը նպատակադրէ երախտագիտութիւն յայտնել այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն, որոնք հասկցած են ծառայել բառին ամբողջական իմաստը՝ չվարանելով վճարելու անոր պահանջած անխու-

սափելի գինը՝ երկարատեւ տարիներու աշխատանք եւ նիւթաբարոյական ներդրում, նաեւ՝ այն կառույցներուն, որոնք նեցուկ կանգնած են միութեան՝ խորապէս հաւատարմով անոր առաքելութեան կարեւորութեան:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԷՐԸ**

Հանդիսութեան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Հայկ Թապազեան: Ան կարեւոր նկատեց Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ տրուած դաստիարակութիւնը, որ կը կեդրոնանայ ազգասիրութեան, հայրենասիրութեան, չարքաշութեան եւ արիութեան վրայ՝ միշտ իբրեւ նշանաբան ունենալով «Բարձրացի՛ր բարձրացուր»ը: Եղբ. Թապազեան շեշտեց, որ այս բոլորին իրագործումը կը պահանջէ յարատեւ ճիգ, անշահախրդիր գոհողութիւն, անխախտ ու անսա-



սան հաւատք, որոնց շնորհիւ Հ.Մ.Ը.Մ. 100 տարի շարունակ հարթեց իր ճամբուն վրայ ցցուած խոչընդոտները, իր քայլերը ուղղեց դէպի լաւն ու բարին, յոյս ու ինքնավստահութիւն ներշնչեց իրերայաջորդ սերունդներու՝ միշտ ի մտի ունենալով զանոնք հեռու պահել օտար ազդեցութիւններէ: Եղբայրը լուսարձակի տակ առաւ այն, որ այս բոլորը կը կատարուին ջանքերովը նուիրեալ ու վաստակաշատ երախտաւորներու, որոնց նուիրուած է այս հանդիսութիւնը:

**ՏԵՍԵՐԻԶԻ
ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ**
Այս առիթով ցուցադրուեցաւ տես-

**«ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ»
ՇՔԱՆՇԱՆԻ
ՏՈՒՉՈՒԹԻՒՆ**

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան որոշումով, «Ծառայութեան» շքանշան ստացան եղբայրներ Գօգօ Մկրտիչեան, Ասատուր Սրապեան (ի բացակայութեան), Համբիկ Մխաբեան, Պերճ Բալուչեան, ինչ-

պէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան առաջարկով՝ հալեպահայ եղբայրներ Վահէ Բիւրքճեան եւ Դաւիթ Դաւիթեան:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ**

Հանդիսութեան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը արտասանեց ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան ըսաւ, որ իր հիմնադրութենէն 100 տարի ետք, Հ.Մ.Ը.Մ. աշխարհասփիւռ 26 հազար հաւատաւոր անդամներով, արդար հպարտութեամբ, ճակատաբաց, հայոց պատմութեան նորագոյն հատորին մէջ ոսկեայ տառերով կ'արձանագրէ իր իրազրօծումներուն երկար ցանկը՝ միշտ հաւատարիմ միութեան հիմնադիրներու կտակին ու տեսլականին: «Տեսլական մը, որ միութեան տուաւ առանցքային եւ յառաջատար դերակատարութիւն այն բոլոր տարա-





ծաշրջաններուն մէջ, ուր հայեր ապրած ու գոյատեւած են: Ո՛ւր որ Հ.Մ.Ը.Մ. գոյութիւն ունեցաւ եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշն

ու Եռագոյնը կողք-կողքի ծածանեցան, հոն հայրենիքէն հեռու փոքրիկ Հայաստան մը ստեղծուեցաւ: Ո՛ւր որ սկառուները շեփորախումբերու կշռոյթներով եւ հայկական բանակի վճռակամութեամբ առաջնորդուեցան, հոն ներկաներուն սրտերը արցունքախառն երջանկութեամբ եւ հպարտութեամբ տրոփեցին: Ո՛ւր որ Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները յաղթանակի բաժակներ եւ մետալներ բարձրացուցին, հոն Հայկեան եւ Մամիկոնեան խիզախութիւնը արձագանգեց», հաստատեց եղբ. Մկրտիչեան:

Լորենք ու կր պարգեւատրենք միութեան վաստակաշատ կարգ մը անդամներ, անշուշտ, առանց մոռնալու այլ միութենականներ, որոնք իրենց ժամանակն ու քրտինքը դրած են ի սպաս միութեան, պատեհ առիթով մը գիրենք եւս ըստ արժանւոյն գնահատելու խոստումով, ըսաւ ան:



Ապա, ատենապետ եղբայրը անդրադարձաւ Յուլիա 2018-ին Հայաստանէն ընթացք առած Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ձեռնարկներուն, որոնց շղթան երկարեցաւ Սփիւռքով մէկ, իսկ եզրափակիչ հանդիսութիւնը պարգեւատրման այս ձեռնարկն է, որուն ընթացքին կ'արժե-

ցըբ. Մկրտիչեան այս առիթով շնորհակալութիւն յայտնեց հայրենի պետութեան՝ 100-ամեակի նախաձեռնութիւններուն անվերապահ աջակցութեան համար, Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսներուն՝ կեդրոնական ձեռնարկներու հովանաւորութեան համար, Արամ Ա. Կաթողիկոսին՝ միութեան շնորհած Հայրապետական կոնդակին եւ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանին համար, Հ.Յ.Դ.ի մեծ ընտանիքին՝ հոգատար հօր վերաբերումին եւ մնայուն նեցուկին համար:



Վերջապէս, եղբ. Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւններուն համար ջանք չինսպած միութեան յանձնախումբերուն եւ մասնաճիւղերու վարչութիւններուն՝ հաստատելով, որ այս հսկայական նուաճումին եւ իրագործումին գաղտնիքը կը կայանայ Հ.Մ.Ը.Մ.ի ուժականութեան մէջ, որ ծնունդ առած է միութեան հայրենասէր հիմնադիրներուն պայծառատեսութենէն, իսկ այսօր աւելի կ'առնէ միութենականներու միասնականութենէն:

Եզրափակելով իր խօսքը, եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ միութիւնը



հպարտալի բազմաթիւ նուաճումներ եւ ձեռքբերումներ ունի, իսկ անոնք իր թան են ուխտերու, որ Հ.Մ.Ը.Մ.ի վաղուան սերունդը փայլուն ձեռով պիտի ցույցընէ միութենական իր կազմաւորումը եւ պիտի շարունակէ առօրեայ ապրումի վերածել «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանախօսքը:

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ ԽՕՍՔԸ

Իր սրտի խօսքը արտասանեց Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Վահագն Աթաբէկեան: Ան նշեց, թէ հայ ժողովուրդի վերջին դարու պատմութիւնը կու տայ բազմաթիւ պատգամներ: Արդարեւ, վերջին տարիներուն նշուեցան տարբեր ամեակներ, որոնց կարգին ամէնէն դառնը Հայոց Ցեղասպանութեան 100-ամեակն էր, իսկ ամէնէն յուսաւորը՝ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 100-ամեակը: Դեսպանը շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը եւս ունի իր ուրոյն տեղն ու արժէքը, որովհետեւ միութիւնը ծնունդ առաւ այնպիսի փուլի մը մէջ, երբ հայ ժողովուրդը ընկրկած էր: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրները բարձրացան ու բարձրացուցին հայութիւնը, իսկ յաջորդող սերունդները՝ հայ մանուկները, պատանիներն ու երիտասարդները կրթեցին նոյն ոգիով՝ բարձրանալու, բարձրացնելու, ամրանալու ու ամրացրնելու:

Դեսպան Աթաբէկեան նշեց, որ ներ-

կայիս, երբ արդէն կայ Հայաստանի Հանրապետութիւնը, հայ ժողովուրդը ոտքի է: Արդ, մեկնելով Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներուն պատգամէն պէտք է ըսել, որ հայրենիքը բարձրացնելով Սփիւռքը կը բարձրանայ, իսկ Սփիւռքը բարձրացնելով հայրենիքը կը բարձրանայ, իսկ նման միութիւններուն շնորհիւ հայութիւնը այլեւս ընկրկում չ'ապրիր:

«ԱՐՏԱԿԱՐԳ» ԵՒ «ԱՐԺԱՆԵԱՑ» ԾՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ


Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպանին խօսքէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութիւնը կատարեց միութեան «Արտակարգ» եւ «Արժանեաց» շքանշաններու տուչութիւն բազմապատակ եօթը եղբայրներու: Այսպէս, եղբ. Բաֆֆի Եսայեան ստացաւ

Հ.Մ.Ը.Մ.ի «Արտակարգ» պատուանշան, իսկ «Արժանեաց» շքանշանի արժանացան Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական



ԵՂՐ. ՍՏԵՓԱՆ ՏԵՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Եղբ. Սյրեփան Տեր Պետրոսեան Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցած է 1978-ին, իբրև մարզիկ մասնակցելով պասքեթբոլի փողոց ներկայացուցչական խումբին: Միաժամանակ, ան եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրուքի մասնաճիւղի անդամ:



1994-ին նշանակուած է Ծրջանային Վարչութեան ֆուրբոլի յանձնախումբի արեւնապետ:

1995-1996 ընկրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Ծրջանային Վարչութեան անդամ:

1997-1999 ընկրուած է Ծրջանային Վարչութեան արեւնապետ:

1999-2003, 2003-2007 եւ սպաւ 2011-2015 ընկրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եւ մարզական պատասխանատու:

1999-էն մինչեւ օրս, իբրև Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացուցիչ, ան կը վարէ Համահայկական Մարզախաղերու Համաշխարհային Կոմիտէի փոխ նախագահի պաշտօնը:

2011-ին ան պարգևատրուած է Համահայկական Մարզախաղերու Համաշխարհային Կոմիտէի շքանշանով:

2015-ին պարգևատրուած է Հայաստանի Հանրապետութեան «Երախտագիտութեան» շքանշանով:

Հ.Մ.Ը.Մ.ական իր գործունէութեան զուգահեռ, եղբ. Սյրեփան քեղուն գործունէութիւն ունեցած է ազգային կեանքի մէջ, իբրև Լիբանանի քեմի ազգային երեսփոխանական ժողովի անդամ: Այժմ ան կը վարէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Կեդրոնական Վարչութեան արեւնապետի պաշտօնը:

ԵՂՐ. ՊԵՏԻԿ ՍԱՊՈՒՆՃԵԱՆ

Եղբ. Պետիկ Սապունճեան Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցած է Հալէպի մէջ, իբրև զայիկ եւ սպաւ սկաուտ ասփիճանատու: Եղած է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի արլէք:



1970-ին մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի մասնաճիւղի հիմնադրութեան աշխատանքներուն:

1973-ին ընկրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի վարչութեան անդամ 10 յաջորդական տարիներ եւ սապարած է զանազան ֆերերասիոններու անոր անդամակցութեան:

1980-ին դերակատարներէն մէկը եղած է «Հ.Մ.Ը.Մ.-Աղբալեան» մարզաձախորային կեդրոնի զնման եւ կառուցման:

Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանի բազմաթիւ Ծրջանային Ներկայացուցչական Ժողովներուն:

Մաս կազմած է Ծրջանային Վարչութեան ֆուրբոլի եւ կազմակերպական յանձնախումբներուն: 1988-1991 եւ 1993-1995 ընկրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Ծրջանային Վարչութեան անդամ, շրջան մըն ալ վարելով անոր արեւնապետութիւնը:

Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի չորս Պարգաւատրական Ժողովներու:

1999-2003 ընկրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:



Վարչութեան նախկին անդամներ՝ եղբայրներ Գրիգորիա Պողարեան, Ստեփան Տէր Պետրոսեան, Կարպիս Գապասազարեան, Յարութ Զէքիճեան, Պետիկ Սապունճեան եւ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Յակոբ Խաչերեանի, որ երկրէն բացակայ ըլլալով շքանշանը ստանձնեց կինը՝ քոյր Կասիկ Խաչերեան (Պարգաւատրելներուն կենսագրական ծանօթութիւնները տեսնել առանձին):

ՅՈՒՇԱՆՈՒՅՐՆԵՐՈՒ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Կատարուեցաւ նաեւ 100-ամեակի յուշանուէրներու տուչութիւն՝ միութեան 100-ամեակի քայլերգին երաժշտութիւնը յորինած Վահրամ Էմմիեանին եւ միութեան երիցագոյն անդամներէն, բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ.ական-



Photo by Markos



ներ եղբայրներ Ժազ Պոյաճեանի եւ Պատրիկ Կիւլպէնկեանի:

Միւլթեան իրենց մնայուն աջակցութեան համար 100-ամեակի յուշանուէրներ յանձնուեցան նաեւ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէին՝ յանձինն Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բազրատունիի, Հ.Յ.Դ. Բիւրոյին՝ յանձինն Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեանի, ինչպէս նաեւ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Նարեկ Արք. Ալլեմեղեանին:

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ ԽՕՍԲԸ

100-ամեակի յուշանուէրի ստանձնումէն ետք խօսք առաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան: Ան հաստատեց, որ Հ.Յ.Դ.ն եւ Հ.Մ.Ը.Մ.ը անքակտելի են՝ ընդամենը սերունդներու դաստիարակութեան մեծ աշխատանքին, ուր արդէն բաւական արդիւնք ապահոված են: Ան ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ.ը իբրեւ 100-ամեայ երիտասարդ իր առաջին քայլերը առաւ, երբ յարութիւն կ'առնէր հայկական պետականութիւնը, իր քայլերը առաւ Սփիւռքի մէջ արեւմտահայոց կարեւորագոյն օճախ ու հնոց Պոլիսէն, ուր շատ կարեւոր բաներ խմորուեցան եւ տիրաններ ծնունդ առին: «Այդ ընդհանուր միջնորդութիւն մէջ էր, որ ծնունդ կ'առնէր այս մեծ կազմակերպութիւնը, որ թէեւ ծնաւ հայրենիքէն դուրս, բայց

ԵՂՔ. ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆ



Եղբ. Կարպիս Գապասագայեան Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի սկստութեան շարքերուն անդամակցած է 1971-ին, իբրեւ Արի: Եղած է Խմբապետ, Միաւորի խմբապետ, Մասնաճիւղի խմբապետ, այսպէս Շրջանային խմբապետ եւ Շրջանային ընդհանուր խմբապետ:

Հեղինակուած է սկստութեան գիտելիքներու եւ յայտագիրներու զարգացման եւ մեծ ներդրում ունեցած է միութեան սկստութեան բաժնի դաստիարակչական-հրատարակչական աշխատանքներուն մէջ:

1980-ական թուականներուն նախաշեռնած, կազմակերպած եւ յաջողցուցած է Լիբանանէն սկիզբ առած սկստութեան Վկայեալ կարգը:

Գլխաւոր խմբագիրն է սկստութեան եօթը կարգերու գիրքերուն, որոնք հրատարակուած են Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ 1987-ին մշակուած է երէցական կարգերու գիտելիքները:

1991-էն 1995, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ նշանակուած է Կեդրոնական Սկստութեան Յանձնախումբի անդամ: Գործուղուած է Պուլկարիա եւ Փարիզ, իբրեւ դաստիարակ խմբապետ:

1994-ին, առաջին անգամ ըլլալով Հայաստանի մէջ տեղի ունեցած Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ե. Բանակումին նշանակուած է ընդհանուր խմբապետ:

1995-1997 եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ, սկստութեան պարասխանատու:

1996-1998 միութիւնը ներկայացուցած է Լիբանանի սկստութեան ֆեդերասիոնին մօտ եւ սրանհետեւ է զանազապահի պաշտօնը:

1982-ին մասնակցած է համազարդութեան առաջին սկստութեան խորհրդաժողովին, ուր մշակուած է միութեան սկստութեան կանոնագիրը:

1980-ական թուականներուն յիշատակելի ներդրում ունեցած է Լիբանանի սկստութեան ներքին կանոնագիրի վերամշակման մէջ:

1988-ին, իբրեւ Լիբանանի Շրջանային ընդհանուր խմբապետ, մասնակցած է համազարդութեան խմբապետական Բ խորհրդաժողովին, իսկ 1996-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նշանակումով վարած է խմբապետական Գ խորհրդաժողովին աշխատանքները: Իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, 2008-ին եւ 2012-ին գլխաւորած է Համա-Հ.Մ.Ը.Մ.ական խմբապետական Ե. եւ Չ. խորհրդաժողովներու աշխատանքները:

Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի 6 Պարզամատարական Ընդհ. Ժողովներու:

2006-ին նշանակուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, իբրեւ արեւմտադարի եւ սկստութեան ներկայացուցիչ:

2007-2011 եւ 2011-2015 ընկրուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան արեւմտադարի եւ սկստութեան ներկայացուցիչ:

Կեդրոնական Վարչութեան անդամի հանգանակումով վարած է միջ-ցամաքամասային խմբապետներու վերատրակարման դասընթացները:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան սկստութեան ներկայացուցիչի հանգանակումով մօտէն հետեւած է Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ը., Թ. եւ Ժ. բանակումներու կազմակերպչական աշխատանքներուն:

2010-ին առաջին անգամ ըլլալով կը կազմակերպէ «Արարարեան» կարգը, որ վերապահուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ կը նկատուի միութեան սկստութեան բարձրագոյն կարգը:

2014-ին եւ 2018-ին կրկին կը կազմակերպէ «Արարարեան» կարգի դասընթացները:

Եղբ. Գապասագայեան կրթական մշակ է աւելի քան 38 տարիներէ ի վեր: 21 Գեղերէնքեր 2001-ին, ան Լիբանանի սկստութեան ֆեդերասիոնին կողմէ կը պարգևատրուի «Ծառայութեան» շքանշանով:

ԵՂՔ. ԳՐԻԳՈՐԻՍ ՊՈՂԱՐԵԱՆ

Եղբ. Գրիգորիս Պողարեան 1970-ական թուականներու սկիզբը անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրոսի մասնաճիւղին եւ յաջորդական փարիներ քաղմիցս մաս կազմած է մասնաճիւղի յանձնախումբերուն եւ վարչութիւններուն:

2007-2011 ան ընկերուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան արեւնապետ:

2014-2015 նշանակուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, իբրեւ գանձապահ:

2007-էն սկսեալ ան աշխատակցած է միութեան «Մարգիկ» պաշտօնաբերքին եւ մինչեւ օրս սիրայօժար սրահնչուած է «Մարգիկ»ի խմբագրականներուն անգլերէնի թարգմանութիւնը:

**ԵՂՔ. ՅԱՐՈՒՅ ԶԷՔԻՃԵԱՆ**

Եղբ. Յարութ Զէքիճեան Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցած է 1958-ին, Պէյրոս Բ. Էշրէֆիէի մասնաճիւղին, իբրեւ սկսույր եւ շարունակած է սկսույրական շարքերու մէջ գործել մինչեւ 1971: Եղած է Աքելլա, ապա Խմբապետ: Իբրեւ միութեան անդամ, ան կը բոլորէ 61-րդ փարին:

1964-ին ան կը մասնակցի արարական 6-րդ ճէմպորիին՝ Ապոսիր, Եգիպտոս, հանդիսանալով Լիբանանի լաւագոյն սկսույր:

1973-1977, եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մեկուսի վարչութեան անդամ, իբրեւ երիտասարդականի պատասխանատու:

1982-1984, երկու անգամ Պէյրոսի մասնաճիւղի վարչութեան անդամ, իբրեւ արեւնադպիր եւ սկսույրականի ներկայացուցիչ:

1988-1993, երկու անգամ Լիբանանի Շրջանային Սկսույրական Խորհուրդի անդամ, իբրեւ արեւնապետ:

1985-1988 եւ 1993-1995, երեք անգամ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ, իբրեւ արեւնադպիր եւ սկսույրականի ներկայացուցիչ:

Բեզուն գործունէութիւն ունեցած է Լիբանանի թեմի ազգային կեանքին մէջ:

1999-2003, ընկերուած է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ, իբրեւ արեւնադպիր եւ սկսույրականի պատասխանատու:

Աշխատակցած է Հ.Մ.Ը.Մ.ի «Մարգիկ» պաշտօնաբերքին, որուն էջերուն լոյս ընծայած է շուրջ 30 յօդուած:

1998-2003 մաս կազմած է Համահայկական Մարգարադերու Համաշխարհային Կոմիտէի Հ.Մ.Ը.Մ.ի եռանդամ պատուիրակութեան, յարկապէս զբաղելով Կոմիտէի նոր կանոնագիրքին մշակումով:

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առիթով եւ Կեդրոնական Վարչութեան առաջարկով պատրասարած է «Հ.Մ.Ը.Մ.ի գործունէութիւնը մայր հայրենիքի՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ, 1918-1927» պարմական անփոխ աշխատասիրութիւնը:



իր կիզակէտը դարձուց հայրենիքը: Որքա՛ն լաւ, գեղեցիկ ու պատուաբեր իրողութիւն էր այն, որ ծնող կամաւոր բանակը եկաւ օգնելու հայկական բանակին, որ կը ծաղկէր, կը զարգանար Հայաստանի միւս կողմը՝ արեւելեան, յայտնեց Տէր Խաչատուրեան:

Շարունակելով, Տէր Խաչատուրեան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը մասնակից դարձաւ մեր վերջին հարիւրամեակի էական բոլոր դրուագներուն, ան միայն դիտող չեղաւ, այլ իր մասնակցութիւնը կարեւորեց ամբողջական նուիրումով, մեր սերունդներու դաստիարակութեամբ եւ հանդիսացաւ մեր առաջին մեծագոյն պատանեկան եւ երիտասարդական կազմակերպութիւնը, որ շատ մը երկիրներու մէջ ո՛չ միայն տարածեց «Առողջ միտք առողջ մարմինի մէջ» հասկացողութիւնը, այլեւ՝ հայ պատանիին ու երիտասարդին մէջ դրոշմեց իր էութեան գիտակցութիւնը, զարգացուց գիրենք իբրեւ պատասխանատու հայեր՝ ո՛չ միայն իբրեւ իտէալ քաղաքացի, այլեւ իբրեւ հայեր, որոնք տալիք ունին իրենց ժողովուրդին, նուիրուած են իրենց ազգին, ամբողջական պատրաստակամութիւն ունին մասնակցելու հայ ժողովուրդի վերջին 100-ամեակի բոլոր դէպքերուն:

«Մենք բոլորս, Սփիւռքի մէջ ծնած, մեծցած պատանիներս ու երիտասարդներս, մեր քայլերը առած ենք Հ.Մ.Ը.Մ.ի մէջ, որ հայրենիքի անկախութեան կորուստէն ետք, երբ կրկին կեդրոնացաւ



Սփիւռքի վրայ, հոն կենդանացուց մեր անցեալի փառքն ու պատիւը, յիշեցուց սովորութիւններն ու ավանդները, միջին արեւելեան շրջաններուն մէջ հսկայական համախմբումներ կազմակերպեց, սկստուներուն հպարտութիւններ շնչող երոյթներ իրականացուց, եւ նոյնիսկ ժամանակի մեծագոյն գրագէտները յատուկ նախաձեռնութեամբ երգեր նուիրեցին Հ.Մ.Ը.Մ.ին», հաստատեց Տէր Խաչատուրեան՝ աւելցնելով, որ միութենականները կոչուած են հայ պատանիին ու երիտասարդին գիմազի՝ ծր ներկայացնելու յաջա աշխարհին:

«Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ մեր պարծանքը, մեր հպարտութեան աղբիւրը եւ Սփիւռքի այն մեծ կազմակերպութիւնը, որ իր մեծաթիւ անդամներով իր ազդեցու-



ԵՂԲ. ՅԱԿՈԲ ԽԱՉԵՐԵԱՆ

Եղբ. Յակոբ Խաչերեան եօթը տարեկանին Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցած է Հալէպի մէջ, իբրեւ զայլիկ ու մարզիկ:

1968-էն սկսեալ ան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղին:

1970-ին մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի պատերազմի առաջին խումբին:

1978-1984 Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի պատերազմի խումբին խմբապետն է: 1979-1997 մարզած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի աղջկանց պատերազմի խումբը, որ 18 տարի անընդմէջ փրացած է Լիբանանի ախոյեանութեան առաջնութեան փոփոխութիւն:

1987-1997 մարզած է Հ.Մ.Ը.Մ.ի փոքր պատերազմի առաջին խումբը, նաեւ եղած է խումբին պատասխանատուն:

1996-1999 եղած է Լիբանանի պատերազմի ֆերերասիոնի անդամ: Եղած է Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի վարչական եւ երկու շրջան Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ:

Մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Պարզամատրական Ժողովներուն: 1998-էն մինչեւ օրս վարած է զանազան պաշտօններ՝ պատերազմի միջազգային ֆերերասիոնին, շրջանային, ասիական եւ միջ-ցամաքամասային մակարդակներու վրայ:

2012-էն մինչեւ օրս պատերազմի միջազգային ֆերերասիոնին գործադիր փնտրէն է եւ Ասիոյ ցամաքամասին ընդհանուր բարփուղարը:

Ան միակ հայն է, որ նուաճած է միջազգային մարզական աշխարհի վարչական պաշտօններու այս բարձրագոյն մակարդակը:



«ԱՐՏԱԿԱՐԳ» ՊԱՏՈՒԱՆՇԱՆԻ ԱՐԺԱՆԱՅԱԾ ԵՂԲ. ԲԱՅՅԻ ԵՍԱՅԵԱՆ

Եղբ. Բա.Ֆ.Ֆի Եսայեան Հ.Մ.Ը.Մ.ի Գիւնիի մասնաճիւղին անդամակցած է 1950 թուականին, իբրեւ զայլիկ, ապա Արի:

Մասնակցած է միջ-մասնաճիւղային բանակումներու:

1959-էն սկսեալ մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Գիւնիի պատերազմի խումբին: 1970-ական թուականներուն եղած է մասնաճիւղի Սկսուրական Խորհուրդի անդամ եւ ապա՝ արեւնապետ:

1985-էն մինչեւ օրս մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի Գիւնիի մասնաճիւղի յաջորդական վարչական կազմերուն:

24 տարի շարունակ ունեցած է ազգային բեղուն գործունէութիւն: 1994-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը զինք պարզեալարած է «Ծառայութեան» շքանշանով:

2001-էն մինչեւ օրս անդամ է Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան «Վարդգէս Տէր Կարապետեան» բանկարանի յանձնախումբին, իբրեւ ժրագան եւ բժախնդիր աշխատող:

2019-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Գիւնիի մասնաճիւղը, իբրեւ երախտագիտութիւն իր երկարամեայ ծառայութեան, ակումբին ժողովարար անուանեց եղբ. Բա.Ֆ.Ֆի Եսայեանի անունով:





Թիւնը կարողացաւ տարածել 1980-ական թուականներէն սկսեալ նաեւ աշ-

խարհի մեր միւս համայնքներուն մէջ, ուր տակաւին չկար Հ.Մ.Ը.Մ., բայց կար

մարգասէր հասարակութիւն, կար կարգապահութեան գիտակից պատանեկութիւն եւ երիտասարդութիւն, ան ներշնչեց սերունդներ Հ.Մ.Ը.Մ.ի տեսլականով՝ միութիւնը վերածելով համաշխարհային կառույցի: Հ.Յ.Դ. Բիւրոն ամուր թիկունք կանգնեցաւ Հ.Մ.Ը.Մ.ին, որպէսզի ան ստանայ համահայկական այդ հանդամանքն ու դերակատարութիւնը», եզրափակեց Բիւրոյի ներկայացուցիչը:



ԼԻՐԱՆԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋԵՆՈՐԴԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Հանդիսութեան աւարտին, հայրական իր պատգամը ուղղեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Նարեկ Արք. Այլեմեղեան: Ան ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը առիթ մըն է նայելու դէպի պատուաբեր անցեալ, պատրաստակամ ներկայ եւ յաղթական ապագայ, ինչ որ լաւագոյնս արտացոլաց այս ձեռնարկին ընթացքին, ինչ որ կը յուշէ նաեւ, որ տակաւին 100 տարի եւս պէտք է ապրիլ ու նշել միութեան 200-ամեակը: «Այս կը նշանակէ, որ մարդիկ կու գան ու կ'երթան, բայց Հ.Մ.Ը.Մ.ը կը մնայ, թուականները, վայրերը իմաստ կ'ունենան մարդոցմով. Պոլիսէն Փարիզ, Փարիզէն Արարատ լեռ, Ծիծեռնակաբերդ, Սարդարապատ, այսօր Լիբանան, եւ մանաւանդ Պուրճ Համուտ՝ կու գանք ըսելու, որ Հ.Մ.Ը.Մ.ը իր բազմաթիւ Հ.Մ.-





Ը.Մ.ականներով 100 տարեկան ըլլալով հանդերձ, կը նայի ապագային՝ ներկային իր պարտաւորութիւններուն լուծը գիտակցաբար կրելով: Հ.Մ.Ը.Մ.ը անցեալին չի պատկանիր, այլ կը պատկանի ներկային, եւ որքան ուրախ ենք, որ երբ կը նայինք ձեզի, լիբանանահայ մեր ակումբներուն, հոն կ'անդրադառնանք, որ Հ.Մ.Ը.Մ.ականները լոկ մարդիկ ու սկստու չեն, այլ կր տղանցեն ու կը գործեն մեր հաւաքական կեանքի մայր էջին վրայ: Ամէն տեղ են Հ.Մ.Ը.Մ.ականները, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը գործեց ու կերտեց ամէնուրեք՝ Հայաստան, Արցախ եւ Սփիւռքի ամբողջ տարածքին»:

Ապա, Առաջնորդը իր յուշերուն ընդմէջէն անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատրաստ ու կարգապահ շարքերուն, որոնք միշտ քայած են ծառայութեան ուղիէն: Ան ռսաւ, թէ իրեն յանձնուած 100-ամեակի յուշանուէրը կը նուիրէ համայն լիբանանահայութեան, որպէսզի բոլորս միշտ Հ.Մ.Ը.Մ.ին հետ ըլլանք, ծառայենք ու հպարտանանք անոր հետ, ինչպէս նաեւ պատրաստուինք նոր ամեակներու նշումին՝ յաղթահարելով ամէն տեսակի մարտահրաւէր: Իր պատգամը եզրափակելով՝ Առաջնորդը բոլորին անունով ուխտեց միշտ ընթանալ Հ.Մ.Ը.Մ.ին հետ ու անոր յաղթական ընթացքով:

ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՓԱԿՈՒՄԸ

Հանդիսութեան աւարտին հնչեց Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի քայերգը, որուն բառերը կը պատկանին Ներսէս Լիպարեանին, երաժշտութիւնը՝ Վահրամ Էմմիեանին:

Յայտնենք, որ հանդիսութեան գեղարուեստական բաժինին իրենց մասնակցութիւնը բերին քոյր Յոյեր Աւագեան՝ ասմունքով եւ Լուի Պիլալեան՝ ֆլութով:





100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ՝

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ ԿԸ ՀՆՈՐՀԷ «ՄԵՍՐՈՊ ՄԱՀՏՈՑ» ՀՔԱՆՀԱՆ

22 Ապրիլ 2018-ին, Անթիլիասի մայրավանքէն ջահավառութեամբ ընթացք առած Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի յոբելեանական փոճակադարութիւնները, Հայաստանի եւ զանազան երկիրներու փառաշուք շեղանարկներով, իրենց ասարտին հասան 10 Փետրուար 2019-ին, Պուրճ Համուրի «Յակոբ Տէր Մերժնեան» քարտէսարահին մէջ կազմակերպուած հանդիսութեամբ մը, որուն պատկուծը եղաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ «Մեսրոպ Մաշտոց» շքանշանին փոշութիւնը Հ.Մ.Ը.Մ.ին:

նանի Հայոց Թեմի Առաջնորդ Նարեկ Արք. Ալլեմեգեանին: Հանդիսութիւնը կազմակերպեց Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը: Հանդիսութիւնը սկիզբ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին եւ սկառուսներուն տպաւորիչ մուտքով, որմէ ետք Հ.Մ.Ը.Մ.ական տարագաւորներ երգեցին Լիբանանի, Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին եւ սկառուսներուն տպաւորիչ մուտքով, որմէ ետք Հ.Մ.Ը.Մ.ական տարագաւորներ երգեցին Լիբանանի, Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի եւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգները:

100-ամեակի տօնակատարութիւններուն պաշտօնական փակումը կատարող Հանդիսութիւնը վալելեց բարձր հովանաւորութիւնը Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին, հովանաւորութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ նախագահութիւնը Լիբա-



ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Հայկ Թապազեան: Ան բաւ, որ Հ.Մ.Ը.Մ. եղաւ անսպառ աղբիւրը մարմնակրթանքի, եղաւ Ֆիզիքական, իմացական եւ բարոյական դաստիարակութիւն ջամբող իւրայատուկ միութիւն մը:

Միութեան դերն ու վաստակը արժեւորելով, եղբ. Թապազեան շեշտեց, որ դար մը ամբողջ սերունդներ դաստիարակուեցան Հ.Մ.Ը.Մ.ի մէջ: Սերունդներ սորվեցան ու սորվեցուցին, գործեցին ու անցան, իբրեւ աւանդ իրենց փոխանցուած Հ.Մ.Ը.Մ.ի անմար ջահը պահեցին ու պահպանեցին, ամէն կարողականութիւն՝ յուսով, քրտինք ու աշխատանք նուիրաբերելով այս վեհ միութեան:

Ապա, 100-ամեակի մարտահրաւէրներուն անդրադառնալով, եղբ. Թապազեան նշեց, որ այսօր մարզական աշխարհի մէջ սկսած են տիրել նիւթապաշտութիւնն ու արհեստավարժութիւնը: Կազմակերպական աշխատանքները ըսկսած են դժուարանալ եւ սպիտակ ջարդը բազմաթիւ դժուարութիւններու դէմ յանդիման կը դնէ միութիւնը: Հետեւաբար, ան կոչ ուղղեց Հ.Մ.Ը.Մ.ին տալու անսակարկ ու անհաշիւ, որպէսզի անաղարտ մնան մեր ազգային դիմագիծը, միութեանական ոգին ու հաւաքական կամքը:



ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Գեղարուեստական յայտագիրը ընդգրկեց 100-ամեակի տեսանլթի ցուցադրութիւն, Համազգայինի «Տաւր» համոյթի ելոյթ եւ խումբ մը սկաուտներու երգ ու նուագ:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Գաւնիկ Մկրտիչեան: Իր պատգամին սկիզբը, ան դիտել տուաւ, որ 100 տարի առաջ, երբ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հիմնադիրները Պոլսոյ մէջ հիմը կը դնէին հայ իրականութեան մարզական եւ սկաուտական մեծագոյն միութեան, դժուար թէ կարենային երեւակայել, որ 100 տարի ետք, իրենց հիմնած միութիւնը աշխարհով մէկ 100-ամեակ պիտի տօնէր պետական, ազգային եւ ժողովրդային մեծ շուքով:

Ապա, միութեան 100-ամեայ երթին արժեւորումը կատարելով, եղբ. Մկրտիչեան յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ. երբեք դիւրին պայմաններու մէջ չգործեց: «Հ.Մ.Ը.Մ. մարզախաղեր կիրարկեց առանց մարզադաշտ ունենալու: Հ.Մ.Ը.Մ. սկաուտութիւն կազմակերպեց առանց անհրաժեշտ յարմարութիւններ

ունենալու: Սակայն Հ.Մ.Ը.Մ. գործեց եւ շատ լաւ գործեց, որովհետեւ կամաւոր բանակի սկզբունքով, անոր անդամներէն իւրաքանչիւրը իր միտքն ու բազուկը ի սպաս դրաւ հաւաքականին, ազգին ու հայրենիքին: Հ.Մ.Ը.Մ. գործեց, մեծցաւ, ուռճացաւ եւ հզորացաւ՝ բացառաբար ապաւինելով իր անդամներու կամաւոր աշխատանքի գիտակցութեան, պատրաստակամութեան եւ զոհողութեան ոգիին: Այսպէս է, որ քանի մը մասնաճիւղերը դարձան քանի մը տասնեակ մասնաճիւղեր, մասնաճիւղերը վերածուեցան շրջաններու, շրջանները՝ համազգայնութային կառոյցի, իսկ համազգայնութային կառոյցն ալ՝ համահայկական կազմակերպութեան, որ այսօր իր հովանիին տակ կը համախմբէ աշխարհի 26 շրջաններէ 110 մասնաճիւղեր եւ միաւորներ: Հ.Մ.Ը.Մ. գործեց ամէնուրեք: Գործեց բոլորին համար: Բոլորին հետ»:

Շարունակելով, եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան յոբելեանական այս հանդիսութեամբ իրենց աւարտին կը հասնին միութեան աշխարհասփիւռ մասնաճիւղերուն 100-ամեակի ձեռնարկները: Այլ խօսքով, 100-ամեակի տօնակատարութիւններուն եզրափակումն է, որ կը կատարուի այսօր, բարձր հովանաւորութեամբ եւ ներկա-





յութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսին:

«Ու պատահական չէ,- շարունակեց եղբ. Մկրտիչեան,- որ 100-ամեակի եզրափակիչ փուլին ալ վերապահուի սիրելի վեհափառ Հօր, որ 100-ամեակի Հայաստանի կեդրոնական ձեռնարկները հովանաւորեց, 100-ամեակի կոնդակ շնորհեց եւ այսօր, ահաւասիկ, իր ներկայութեամբ եւ քիչ ետք արտասանելիք Հայրապետական պատգամով, միութեան առաջին 100-ամեակի էջը պիտի փակէ եւ երկրորդ էջը պիտի բանայ»:

«Շատերու խոստովանութեամբ, Արամ վեհափառ Հ.Մ.Ը.Մ.ականէ մը աւելի լաւ գիտէ Հ.Մ.Ը.Մ.ը: Հ.Մ.Ը.Մ.ականէ մը աւելի լաւ կը խօսի Հ.Մ.Ը.Մ.ի մասին եւ Հ.Մ.Ը.Մ.ականէ մը աւելի նախանձախնդիր է Հ.Մ.Ը.Մ.ի դերակատարութեան եւ առաքելութեան անշեղ կերպով շարունակման: Վեհափառ Հօր պատգամները, քաջալերանքները, երբեմն նաեւ տեղին նկատողութիւնները բաց սրտով կ'ընդունուին բոլորիս կողմէ, որովհետեւ անոնք կը բխին հոգիէն ու մտքէն Հայ Եկեղեցւոյ արժանաւոր Հայրապետէ մը, որուն բովանդակ կեանքը՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդական ծառայութեանէն մինչեւ Կաթողիկոսութեան տարիներ, շողկապուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ին հետ: Վեհափառ Հօր քարոզներով ու կոնդակներով այս միութիւնը ապրեցաւ իր 70-ամեակը, 80-ամեակը, 90-ամեակն ու 100-ամեակը: Մեր սրտագին մաղթանքն է, որ այդ

ամեակները շարունակուին անվերջ եւ վեհափառ Հօր պատգամները միշտ հնչեն՝ իրբեւ ուղեցոյց ներկայ եւ գալիք սերունդներուն», ըսաւ եղբ. Մկրտիչեան:

Իր խօսքին յաջորդ բաժինով, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական վարչութեան ատենապետը խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի շրջանին մասին: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը Լիբանանի մէջ ունի 95 տարուան կեանք, սակայն անոր դերն ու վաստակը երբեք չի սահմանափակուիր տարիներու այդ թիւով: Շրջանին կատարած մարդակերտումի եւ հայակերտումի աշխատանքը անգնահատելի է: Լիբանանի շրջանին 10 մասնաճիւղերը իրենց մարդական փայլուն յաջողութիւններով եւ սկառուտական օրինակելի գոր-

ծունէութեամբ ազգային ոգի եւ նկարագիր տուած են հազարաւոր տղոց եւ աղջիկներու:

Եղբ. Մկրտիչեան հաստատեց, որ Լիբանանի շրջանի յաջողութիւնները ազգային խանդավառութիւն եւ հպարտութիւն պարգեւած են ո՛չ միայն լիբանանահայութեան, այլեւ՝ աշխարհասփիւռ հայութեան, որոնք մինչեւ այսօր անհամբեր կը հետեւին այս շրջանի միութեանական նուաճումներուն: «Տակաւին, առանց մոռնալու այն փաստը, որ Լիբանանէն սփիւռքեան այլ շրջաններ եւ Հայաստան մեկնած Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրներն են, որոնք այսօր կենսունակ կը պահեն միութեան աշխարհասփիւռ բազմաթիւ մասնաճիւղերը», ընդգծեց ան:



Այնուհետև, եղբ. Մկրտիչեան իր պատգամը եզրափակեց նշելով, որ 100-ամեակի իր նշանաբանին հաւատարիմ, Հ.Մ.Ը.Մ. այսօր պատուաբեր անցեալէն կ'ուղղուի յաղթական ապագայ: «Մենք լաւատես ենք մեր միութեան ապագայով ու ապագայի մեր յաղթանակներով: Մեր լաւատեսութիւնը բարի ցանկութիւններէ չի բխիր սակայն, այլ՝ մեր աշխատանքէն, կամքէն եւ համոզումէն, միշտ երիտասարդութեան ի սպաս գործելու մեր պատրաստակամութենէն, հայրութեան եւ Հայաստանին անմնացորդ ծառայելու մեր երզումէն: Չմոռնանք, որ մեր ժողովուրդը Հ.Մ.Ը.Մ.ին տուած է «Կամաւոր քանակ»ի կոչում եւ պարտականութիւն: Այդ կոչումն ու պարտականութիւնը մեզի կը թելադրեն միշտ զգօն ու պատրաստ ըլլալ՝ դիմազրբաւելու համար մեր ժողովուրդին սպառնացող ամէն տեսակի մարտահրաւէրները», ըսաւ եղբ. Մկրտիչեան:

**ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻՆ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՍԸ**

100-ամեակի հանդիսութիւնը եզրափակուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին պատգամով:

Հ.Մ.Ը.Մ.ի նկատմամբ իր սէրն ու դնահատանքը վերահաստատելով, Արամ Ա. ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ի մասին խօսիլ կը նշանակէ խօսիլ Յեղասպանութենէն ետք ցիրուցան դարձած մեր ժողովուրդի վերակազմակերպման մասին,

որովհետեւ ըսփիւռքի հայութեան վերակազմակերպման մէջ Հ.Մ.Ը.Մ. ունեցաւ իր առանցքային դերը: Հ.Մ.Ը.Մ.ի մասին խօսիլ կը նշանակէ խօսիլ հայ եկեղեցւոյ մասին, որովհետեւ հայ եկեղեցւոյ առաքելութեան հիմքը դարձած մեր հոգեւոր ու բարոյական արժէքներու կենսագործման մէջ Հ.Մ.Ը.Մ. բերաւ իր կարեւոր ներդրումը: Հ.Մ.Ը.Մ.ի մասին խօսիլ կը նշանակէ խօսիլ հայ դպրոցին մասին, որուն հայակերտման առաքելութեան մասնակից դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ը՝ ինք եւս դառնալով մարդակերտումի եւ հայակերտումի նորահիմն դպրոց: Հ.Մ.Ը.Մ.ի մասին խօսիլ կը նշանակէ խօսիլ ազգային պահանջատիրութեան մասին. մեր պահանջատիրական պայքարին Հ.Մ.Ը.Մ.ը բերաւ իր գործօն, աշխոյժ մասնակցութիւնը ի սփիւռս աշխարհի: Հ.Մ.Ը.Մ.ի մասին խօսիլ կը նշանակէ խօսիլ Հայաստանի մասին, որովհետեւ



Photo by Markar

Հ.Մ.Ը.Մ.ը Հայաստանէն դուրս Հայաստանը ապրեցաւ ու Հայաստանը, մեր երազած ազատ, անկախ ու ամբողջական Հայաստանը ապրեցաւ ու ապրեցուց մեր ժողովուրդի կեանքին մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի մասին խօսիլ կը նշանակէ խօսիլ վերջին 100 տարիներու հայոց պատմութեան մասին, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը մեր ժողովուրդի կեանքի լուսանցքին վրայ չեղաւ երբեք, այլ իր իւրայատուկ դերակատարութեամբ ներկայութիւն դարձաւ մեր կեանքի մայր էջին վրայ՝ ազգակերտումի իր առաքելութեամբ:

«Այս բոլորը եղաւ, այս բոլորը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ը: Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.ը ինձի համար քանակ չէ, մասնաճիւղ չէ, որակ է իր հարազատ հուսկութեամբ, եւ Հ.Մ.Ը.Մ.ի որակը իր ոգին է, իր նուիրումն է, իր յանձնառութիւնն է, իր յարատեւ պայքարը՝ ի ինձի մեր ժողովուրդի գերագոյն ու ընդհանրական արժէքներուն եւ իտէալներուն»:

Շարունակելով, Արամ Ա. շեշտեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան մօտեցումը Հ.Մ.Ը.Մ.ի նկատմամբ երբեք պարագայական կամ շահադիտական չեղաւ, այլ՝ եղաւ սիրով լի, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ ան տեսաւ



Photo by Markar



Photo by Markar

այս բոլորէն վեր ու վեհ մեր ժողովուրդի գերագոյն արժէքներուն նկատմամբ ամուր հաւատարմութիւն, անկեղծ կապուածութիւն, ամբողջական ու գիտակից յանձնառութիւն:

Արամ Ա. գնահատանքով արտայայտուեցաւ այն բոլոր անձերուն մասին, այս աշխարհէն հեռացած թէ ապրող, որոնք Հ.Մ.Ը.Մ-ի նուիրական ծառայական գանձանակին մէջ իրենց միտքէն, հոգիէն, ժամանակէն անջնջելի բան մը դրին, որպէսզի Հ.Մ.Ը.Մ-ը մեր ժողովուրդի կեանքին մէջ միշտ մնայ նուիրական կազմակերպութիւն՝ իր սրբազան առաքելութեամբ:

Ապա, 100-ամեակէն ետքի հանգրուանին մասին խօսելով, Արամ Ա. Վեհափառ դիտել տուաւ, որ «100 տարիները պատմութեան կը պատկանին, եւ Հ.Մ.Ը.Մ-ի առջեւ կը բացուի նուիրումի, ծառայութեան, յանձնառութեան եւ հաւաքական պայքարի նոր շրջան մը, երբ այսօր ունինք ազատ, անկախ Հայաստան, ունինք ազատ, անկախ Արցախ: Հայաստանի հզօրացումը, Արցախի անկախութեան ամրապնդումը պէտք է Հ.Մ.Ը.Մ-ի կեանքին ու առաքելութեան օրակարգին վրայ մնան առաջնահերթ, միաժամանակ Սփիւռքի հայութեան վերակազմակերպումը, Սփիւռքի հայութեան

վերակենսաւորումը դարձեալ պէտք է Հ.Մ.Ը.Մ-ի ծառայութեան օրակարգին վրայ մնան՝ իբրեւ առաջնահերթ մտահոգութիւն»:

Արամ Ա. նշեց, որ «Հ.Մ.Ը.Մ. իր առջեւ ունի ծառայութեան նոր դաշտեր, պէտք է բացուի կեանքի ու ծառայութեան նոր հորիզոններու: Հետեւաբար, ես կ'ուզեմ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերդին բառերը եւ նշանաբանը ուղենիշը դառնան Հ.Մ.Ը.Մ-ին, ուր կ'ըսուի-

«Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ,

«Յառա՛ջ, յառաջ անսասան,

«Յառա՛ջ անդեղեւ

«Դէպի յաղթանակ, յաղթանակ»:

«Մեր ժողովուրդին երթը Հայաստան, Արցախ եւ ի սփիւռս աշխարհի ուրիշ նպատակ չի կրնար ունենալ, եթէ ոչ յաղթանակ:

«Եկէ՛ք, հետեւաբար, սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ ի սփիւռս աշխարհի, այս գիտակցութեամբ մասնակից դարձէք մեր ժողովուրդի հաւաքական երթին՝ ի խնդիր մեր ժողովուրդի յաղթական ու պայծառ ապագային», եզրափակեց Արամ Ա. Վեհափառ:

ՇՔԱՆՇԱՆԻ

ՇՆՈՐՀՈՒՄ

Հայրապետական իր պատգամին աւարտին, Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ «Մերոպ Մաշտոց» շքանշանը շնորհեց Հ.Մ.Ը.Մ-ին՝ շքանշանը յանձնելով Կեղրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին:

Շքանշանին շնորհումին առիթով Արամ Ա. յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ-ին «Մերոպ Մաշտոց» շքանշանը կը տրուի, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. եղաւ նաեւ հայ

դպրոց: Սփիւռքի մէջ, պայմաններու բերումով ուր որ դպրոց չունեցանք, Հ.Մ.Ը.Մ. դարձաւ դպրոց՝ տանելով մարդակերտումի, հայակերտումի եւ ազգակերտումի առաքելութիւն: Արամ Ա. յոյս յայտնեց, որ 100-ամեայ Հ.Մ.Ը.Մ-ը վերանորոգ հաւատքով եւ նուիրումով կը շարունակէ հայակերտումի իր առաքելութիւնը:



Photo by Markar



Photo by Markar

«ՀԱՅ ՍԿԱՈՒՏԻ ՕՐ» ` ՆՈՒԻՐՈՒԱԾ Հ. Մ. Ը. Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ

Ողթակից ՊԵՅՐՈՒԹ

Կազմակերպութեամբ Հ.Մ.-Ը.Մ.Ի Լիբանանի Երջանային Սկսուսական Խորհուրդին եւ Երջանային Խմբապետութեան, Կիրակի, 24 Փետրուար 2019-ի կէսօրէ ետք ժամը 4-ին, Ազգային Եղիշէ Մանուկեան Քոլէճի «Սիրան Մանուկեան» սրահին մէջ հանդիսաւոր կերպով նշուեցաւ «Հայ սկսուսի օր»:

Հ.Մ.-Ը.Մ.Ի շեփորախումբին կողմէ Լիբանանի եւ Հայաստանի քայրերգնրուն կատարումէն ետք, բացման խօսքը արտասանեց Երջանային ընդհանուր խմբապետուհի քոյր Վարդուկ Ֆրոնրդյեան: Ան նկատել տուաւ, որ հայ սկսուսի կեանքին մէջ իւրայատուկ տեղ կը դրաւ «Հայ սկսուսի օր»ը՝ աւելցնելով, որ Հ.Մ.-Ը.Մ.Ի սկսուսները, Վարդանանց սերունդի ազատատենչ ոգիէն ներշնչուած, Վարդանանքը յայտարարած են «Հայ սկսուսի օր», որ ո՛չ միայն հպարտանքի եւ ուրախութեան օր է, այլեւ՝ Վարդանանց հերոսներու յիշատակութեան եւ սկսուսական դաւանանքի

խոստումին հաւատարիմ մնալու ու մեր ուխտը վերանորոգելու օր:

«Հ.Մ.-Ը.Մ.Ի հիմնադիրները որբանոցներու մէջ կորսուած եւ անտէր որբերէ կազմեցին սկսուսական խումբեր: Անոնք վերապրելու յոյս ներշնչեցին ու պատրաստեցին ամուր նկարագրի եւ բարոյապէս բարձր արժանիքներու տէր հաւատաւոր եւ անձնուէր հայեր», շեշ-

տեց քոյր Վարդուկ Ֆրոնրդյեան՝ հաստատելով, որ ամբողջ դար մը, Հ.Մ.-Ը.Մ.Ի իրերայաջորդ սերունդները հպարտ, խրոխտ եւ հաստատ քայրերով կը շարունակեն իրենց երթը: Քոյր Ֆրոնրդյեան յայտնեց, որ Հ.Մ.-Ը.Մ.Ի կամաւոր բանակէն անցած են Վարդան Բախշեան, Վիգէն Զաքարեան եւ ուրիշներ, որոնք եղած են ազատ, անկախ եւ



Photo by Markar



միացեալ Հայաստանի պաշարի ճամբուն վրայ նուիրեալ ու անձնագոհ հայեր: Եզրափակելով իր խօսքը, քոյր Ֆրոնդզեան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ. իր «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբա-

նով պիտի շարունակէ իր յաղթական երթը՝ դէպի լուսաւոր ապագայ:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտական Խորհուրդին պատրաստութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի ըս-

կառուները ներկայացուցին սկաուտական կեանքէն առնուած թատրոն մը, ուր կ'արտացոլար, թէ ի՞նչ կը սորվին Հ.Մ.Ը.Մ.ի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց Շրջանային Վարչութեան սկաուտականի ներկայացուցիչ եղբ. Յակոբ Չպլաքեան: Ան ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ.ը նորահաս սերունդները կը դաստիարակէ յանուն հաւատքի եւ հայրենիքի, անոնց մէջ կը ներարկէ Վարդանանց հերոսամարտի գոյատեւման ոգին, նաեւ Արցախի ազատամարտիկներու աննկուն կամքն ու եռանդը: Այս բոլորը կը փոխանցուին սկաուտական գաղափարախօսութեամբ եւ դաստիարակութեամբ օժտուած նորահաս սերունդներուն, որոնց համար առաջնահերթ են հայրենիքի պահպանումը, ազգային արժէքները, լեզուն, մշակոյթը, աւանդութիւնները, որոնց



Photo by Markar



Photo by Markar



Photo by Markar

կը միանան համամարդկային արժեքները՝ ծառայասիրութիւն, օգնութիւն, բնապահպանում, մարդասիրութիւն: Ան նկատել տուաւ, որ այս առաքինութիւններով օժտուած եւ դժուար առաքելութիւններու յանձնառութիւնը ստանձնած սկաուտները հաստատ քայլերով կը դիմաւորեն Հ.Մ.Ը.Մ-ի 101-ամեակը, հզօր թափով ուղղուելու դէպի նոր 100-ամեակ՝ պահպանելով ազգային ու մարդկային արժեքները, հայրենասիրութիւնն ու մարդասիրութիւնը, հաւատքն ու կրօնը:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամ եղբւոր Հայկ Թապագեան Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի յուշանուէրը յանձնեց Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած համա-Հ.Մ.Ը.Մ-ական 11-րդ բանակումի ընդհանուր խմբապետուհի քոյր Թալին Օրտողլեանին:

«Հայ սկաուտի օր»ուան եզրափակիչ խօսքը արտասանեց Լիբանանի Հայոց Թեմի քարոզիչ Անանիա Մ. Վրդ. Գուճանեան: Ան ուրախութիւն եւ պատիւ նկատեց Հ.Մ.Ը.Մ-ի դրօշին ետին կանգնելու եւ խօսիլ, ինչ որ կ'ենթադրէ մեծ պատասխանատուութիւն, հաւատարմութիւն եւ վստահութիւն՝ աւելցնելով, որ տարիներու ընթացքին Հ.Մ.Ը.Մ-ը այդ վստահութիւնը, յարգանքն ու սէրը ներշնչեց իւրաքանչիւր հայորդիի: Անանիա Մ. Վրդ. Գուճանեան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը այսօր տարիներ միայն մարմնակրթական միութիւն չէ-



ղաւ, այլ նաեւ եղաւ դպրոց, հայակերտումի, ծառայութեան, նուիրումի դարբնոց եւ պատրաստեց նուիրեալ հայ երիտասարդներ:

«Մէկ դար եւ աւելի Հ.Մ.Ը.Մ-ը միայն բարձրացուց, որովհետեւ ինք բարձրանալու պէտք չունէր, արդէն բարձր էր», շեշտեց Անանիա Մ. Վրդ. Գուճանեան՝

գնահատելով Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը, որ անշահախնդրօրէն կը շարունակէ բարձր պահել Հ.Մ.Ը.Մ-ի անունն ու գաղափարը եւ բարձրացնել հայ պատանիին, երիտասարդին եւ հայորդիին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի առաքելութիւնը, որն է՝ նուիրում ազգին, ժողովուրդին, Հայ Դատին եւ հայրենիքին: Եզրափակելով իր խօսքը, ան կոչ ուղղեց ներկաներուն Հ.Մ.Ը.Մ-ի դրօշին եւ անոր հիմնադիրներու նկարներուն առջեւ ուխտելու, որ յաւիտեան մեր

առաքելութիւնը պիտի ըլլայ յաղթանակ եւ միայն յաղթանակ: Հայր սուրբը «Պահպանիչ»ով փակեց հանդիսութիւնը, որ իր աւարտին հասաւ «Յաւազ նահատակ» քայլերգով՝ կատարողութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին:



Photo by Markar



by Markar

100 ՀԱԶԱՐ ՏՈՒԱՐԻ ՆՈՒՐԱՀԱԲԱՔ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ԿԱԼԱ-ԸՆԹՐԻՔԻՆ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

Շաբաթ, 15 Դեկտեմբեր 2018-ին, «Ֆենիսիա» պանդոկի «Կրանտ պլորում» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 100-ամեակի կալա-ընթրիքը, նախագահութեամբ Վարուժան Պարսումեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, ներկայութեամբ՝ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Նարեկ Արք. Ալեէմեգեանի, Լիբանանի Կաթողիկէ Հայոց Պէպրութի Պատրիարքական Թեմի օգնական եպիսկոպոս Գէորգ Ասատուրեանի, Հայ Աւետ. Եկեղեցիներու Կեդրոնական Մարմինի ատենապետ եւ Հայկազեան Համալրասարանի նախագահ Վերապատուեյի դոկտ. Փոյ Հայտոսթեանի, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի եւ անդամներու, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ եւ պապեթպոլի միջազգային ֆետերասիոնի գործադիր տնօրէն եւ Ասիոյ ցամաքամասի ընդհանուր քարտուղար Յակոբ Խաչերեանի, Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի



Photo by Markar

անդամ Վիգէն Աւագեանի, Լիբանանի զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեանի, Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանի, Պէպրութի քաղաքապետ Ժամալ Իթանիի, Այնճարի քաղաքապետութեան ներկայացուցիչ Պետրոս Ֆէսիեանի, լիբանանեան քաղաքապետութիւններու անդամներու, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան բարձրաստիճան պաշտօնեաներու, Լիբանանի զանազան ֆետերասիոններու նախագահներու եւ անդամներու:

Կալա-ընթրիքին սկիզբը Հ.Մ.Ը.Մ.Ի շեփորախումբը հնչեցուց Լիբանանի, Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ.Ի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի քայլերգները:

Հ.Մ.Ը.Մ.Ի Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Հայկ Թապաղեան, իսկ արաբերէնով խօսք առաւ քոյր Սիլվա Սաղրեան: Եղբ. Թապաղեան իր խօսքին մէջ ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.Ի չարիւր տարիներու ընթացքին եղաւ հայ պարմանին ու պարմանուհիին հոգեկան ու ֆիզիքական կրթութեան ամենավառ օճախը, դարձաւ անոնց երկրորդ ծնողքը՝ ծառայութեան, մարդակերտումի եւ հայակերտումի դարբնոցը: Ան ըսաւ. «Սփիւռքի մէջ ծաղկած եւ միացեալ,



Photo by Markar



ագատ ու անկախ Հայաստանի իրազործման համար Ֆիզիքական տոկոսն եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ պատրաստելու Հ.Մ.Ը.Մ-ի նպատակը Լիբանանի մէջ ի դորձ կը դրուի 1924-էն ի վեր: Հ.Մ.Ը.Մ- իր սկառուաներով, մարզիկներով եւ անդամներով սերունդներ դաստիարակած է եւ աշխարհի չորս ծագերուն տարածուած իր անդամներով միութեան բազմաթիւ մասնաճիւղերուն մղիչ ուժը հանդիսացած է: Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքը 100-ամեակի այս առիթով յանձնառու է շարունակելու հիմնադիրներուն առաքելութիւնը՝ պատրաստելու առողջ, ինքնուրաց եւ պարտականութեան գիտակից արի եւ վեհանձն սերունդներ»:

Այս առիթով ցուցադրուեցաւ Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին պատրաստած տեսերիզը, որ կը ներկայացնէր միութեան 100-ամեայ երթը:

Եւրոպական երգերով ելոյթ ունեցաւ լիբանանահայ երգչուհի Շաքէ Պաղտասարեան:

Այնուհետեւ տեղի ունեցաւ յուշանուէրներու տուչու-

թիւն՝ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Յակոբ Խաչերեանին, Կեդրոնական Կոմիտէի անդամ Վիգէն Աւագեանին, զբօսաշրջութեան նախարար Աւետիս Կիտանեանին, Պուրճ Համուտի քաղաքապետ Մարտիկ Պօղոսեանին, Այնճարի քաղաքապետութեան ներկայացուցիչ Պետիկ Ֆէսլեանին, Պէյրութի քաղաքապետ Ժամալ Իթանիին, ձեռնարկի նախագահ Վարուժան Պարսումեանին, ողիմպիական դասախօս Ժիհատ Սալամէին, երիտասարդութեան նախարարութեան ներկայացուցիչին եւ Ֆետերասիոններու նախագահներուն:

Տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի կարկանդակի հատում:

Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան առիթով եղաւ աւելի քան 100 հազար ամերիկեան տղարի նուիրահաւաք, որմէ ետք ելոյթ ունեցաւ հայրենի վաստակաւոր երգիչ Վարդան Պատալեան:

**100-ԱՄԵԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ
ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԻՍԸ**

Երկուքուկէս ամիս ետք, Շաբաթ, 2 Մարտ 2019-ի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի «Երջօ Սամուէլեան-Եռագոյն» սրահին մէջ տեղի ունեցաւ 100-ամեակի ժողովրդային ճաշկերոյթ-պարահանդէսը, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային Սկառուական Խորհուրդին եւ խմբապետական կազմին, ներկայութեամբ աւելի քան 200 Հ.Մ.Ը.Մ-ականներու եւ համակիրներու:

Ճաշկերոյթը խանդավառեցին լիբանանահայ երգիչներ Վիգէն Տիշչէքէնեան եւ Շաքէ Պաղտասարեան, երգեհոնի ընկերակցութեամբ Սեդօ Պաղտասարեանի:



Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԱՐԽԻՒԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ ` ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան Մամուլի Ցանձնախումբ ՅԱԼԷՊ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ 100-ամեակի շրջանային յանձնախումբին, Կիրակի, 28 Հոկտեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 6-ին, «Ա.Մանուկեան» ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ տեղի ունեցաւ միութեան 100-ամեակին նուիրուած արխիւային նիւթերու ցուցահանդէսը:

Ցուցահանդէսին բացման հանդիսութեան ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան, Սուրիոյ Հայ Աւետարանական համայնքի համայնքապետ Վեր. Յարութիւն Սեյիմեան, Հ.Հ. Հայկալի գլխաւոր հիւպատոս Արմէն Սարգսեան, Հ.Մ.Ը.Մ.Ի հոգեւոր հովիւ Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան, Ազգային երեսփոխանական ժողովի անդամներ, Սուրիոյ խորհրդարանի երեսփոխան Ժիրայր



Ռէխեան, Ազգ. իշխանութեան, հալէպահայ միութիւններու, կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անդամներ, Հ.Մ.Ը.Մ.Ի ականներ եւ հոծ թիւով բազմութիւն մը:

Պաշտօնական բացումէն ետք, հրաւիրեալները շրջեցան սրահէն ներս եւ մեծ հետաքրքրութեամբ դիտեցին միութեան 100-ամեայ պատմութիւնը ներկայացնող սկաուտական եւ մարզական

նկարներ, անդամաքարտեր, յայտագիրներ, Զատիկուան շնորհաւորական քարտեր, վկայագիրներ, շքանշաններ, յաղթանակի բաժակներ, դրօշներ, ըսկաուտական տարագներ, յուշանուէրներ, փողային եւ հարուածային գործիքներ, մարզական եւ Հ.Մ.Ը.Մ.Ի ականներու անհատական գոյքեր, հրատարակութիւններ, միութեան գրամբեան, տպագրական կաղապարներ եւ հետաքրքրական շարք մը իրեր:





Մրահին ուշագրաւ բաժինը «Մառաշուկեան» շքանշանակիրներու ծառն էր, որուն վրայ, շքանշանի նմանակով զետեղուած էին անունները բոլոր անոնց, որոնք պատիւը ունեցած են ստանալու յիշեալ շքանշանը՝ առ ի գնահատանք Հ.Մ.Ը.Մ.ի մէջ իրենց ունեցած երկար տարիներու ծառայութեան:

Օրուան հանդիսավարն էր Հ.Մ.Ը.Մ.ի Հայկալի մասնաճիւղի խմբապետ եղբ. Յովիկ Փամբալեան: Ան ներկայներուն բարի գալուստ մաղթելէ ետք, հրաւիրեց 100-ամեակի յանձնախումբի ատենապետ եղբ. Կարպիս Թովմասեանը, որ հակիրճ ձեւով ներկայացուց 100-ամեակ Հ.Մ.Ը.Մ.ի դերը՝ սերունդներու



հայեցի դաստիարակութեան մէջ: Ապա, ան անդրադարձաւ ցուցահանդէսին կարեւորութեան, որովհետեւ ան կը ցուցնէ միութեան հարիւրամեայ անխոնջ աշխատանքն ու նուաճած պատւաբեր արդիւնքները:

Այնուհետեւ, Առաջնորդը եզրափակիչ խօսքով բարձրօրէն գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակին առիթով կատարուած նախաձեռնութիւնները, որոնք մէկը միւսը գերազանցեցին: Ան անդրադարձաւ միութեան դերին եւ անոր անկիւնադարձային կարեւորութեան՝ կերտելու այն հայր, որ նուիրումով կը ծառայէ իր ազգին, եկեղեցոյ եւ հայրենիքին: Առաջնորդը բարի երթ մաղթեց Հ.Մ.Ը.Մ.ին, ղէպի նոր հարիւրամեակներ:

Յուցահանդէսը մէկ շաբթուան ընթացքին առիթը ընծայեց հալկաճառութեան մօտէն տեսնելու Հ.Մ.Ը.Մ.ի պատմական յաղթանակներն ու Սուրբոյ շրջանին անցած պատուաբեր ճանապարհը:



ԿՐԿՆԱԿԻ ԲԱՑՈՒՄ ԿՄ.Ը.Մ.Ի ԱՐԽԻՒԱՅԻՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ

Թղթակից
ՀԱԼԷՊ

Ուրբաթ, 2 Նոյեմբեր 2018-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքը- Հալեպի մայր գաղութին մէջ, պատիւը ունեցաւ հիւրընկալելու միութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը:

Նոյն օրը, երեկոյեան ժամը 6:00-ին, «Լեւոն Շանթ» սրահին մէջ կրկնակի բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան եւ 100-ամեակի յանձնախումբին կազմակերպած արխիւային ցուցահանդէսին, ձեռամբ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի հոգեւոր հովիւ Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեանի, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանի, պատկան մարմինի ներկայացուցիչին, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան եւ 100-ամեակի յանձնախումբին, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի ականներու եւ հոծ թիւով բազմութեան մը:

Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մա-



նուկ Քէօզկէրեան իր բացման խօսքին մէջ անդրադարձաւ միութեան դերին, հիմնադրութեան օրերէն սկսեալ, երբ 1918-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեամբ թուրքի եսթաղանէն փրկուած մատղաջ սերունդը վերակազմակերպուեցաւ ֆիզիքական ու բարոյական դաստիարակութեամբ: Հարիւր տարի առաջ ընդմիջումի, Հ.Մ.Ը.Մ. նուիրումով գործեց եւ կը շարունակէ գործել

հայրենիքի եւ Սփիւռքի մէջ: Ան յարգանքի տուրք մատուցեց բոլոր նուիրեալներուն, որոնք անսակարկ աշխատեցան նոր սերունդին մարմինները մարզելու եւ հոգեկան անունդ ջամբելու: Եղբ. Քէօզկէրեան այս ցուցահանդէսը առիթ մը նկատեց միութեան պատմութեան ոգեկոչումին:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկր-



տիչեան խօսք առնելով բարձր գնահատեց միութեան հիմնադրութեան 100-ամեակին առիթով բժախնդրութեամբ կազմակերպուած ցուցահանդէսը, նշելով, որ Հայկ պատերազմական ծանր տարիներ դիմագրաւելով հանդերձ կը մնայ պատենչի վրայ, իրագործելով միութեան պատմութիւնը անմահացնող բովանդակալից ցուցահանդէս մը, այնպիսի մանրամասնութեամբ, որ որեւէ այլ գաղութի մէջ կարելի չէ տեսնել: Եղբ. Մկրտիչեան փափաք յայտնեց, որ այս արխիւները ցուցադրուին նաեւ Հայաստանի մէջ: Այս առիթով, եղբ. Գառնիկ Հայկ պատմական Սփիւռքի բարախող սիրտը եւ մաղթեց իրագործուած տեսնել իւրաքանչիւր հայու երազը՝ Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանը, Եռագոյնն ու Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը ծածանած Արարատի գագաթին՝ սահմանին միւս կողմը:

Հ.Մ.Ը.Մ.ի հոգեւոր հովիւ Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան իր սրտի խօսքին մէջ յիշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը եղած է մարդակերտումի դպրոց: Ան նշեց, թէ ո՛չ մէկ միութիւն ունի այսքան մեծ թիւով մասնաճիւղեր եւ անդամներ: Քահանայ Հայրը Հայկ պէն դաղթած աշխարհացրիւ Հ.Մ.Ը.Մ.ականներուն դերը բարձր գնահատեց՝ նոր մասնաճիւղեր հիմնելու, ճոխացնելու եւ զարգացնելու իմաստով: Ան բարի երթ մաղթեց միութեան՝ դէպի երկրորդ հարիւրամեակ:



100-ԱՄԵԱԿԻ ՅՈՒՇԱՔԱՐԻ ԲԱՅՈՒՄ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԵՍԱՊԻ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒԹՅՈՒՆ ԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջ. Վարչութեան Մամուլի Յանձնախումբ ՅԱԼԷՊ

Կիրակի, 12 Օգոստոս 2018-ին, հովանաւորութեամբ եւ ներկայութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, ներկայութեամբ Հայ Աւետարանական համայնքի համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեանի եւ հրաւիրեալներու, Հ.Մ.Ը.Մ.ի Հայկ պի մասնաճիւղի տարեկան բանակումի խարուկահանդէսին նախօրեակին, միութեան Քեսապի բանակավայրին մէջ բացուած կատարուեցաւ միութեան 100-ամեակին նուիրուած յուշաքարին:



Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան խօսք առնելով ըսաւ, որ Շրջանային Վարչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առիթով յուշաքար մը գետեղելու գաղափարը յղացաւ էքիզօլուի վերանորոգուած բանակավայրին մէջ՝ աւելցնելով որ Հ.Մ.Ը.Մ.ը 100 տարիներու ընթացքին դարձաւ բովանդակ հայութեան երիտասարդական մեծագոյն կազմակերպութիւնը՝ իր աւելի քան 110 մասնաճիւղերով եւ 26 հազար անդամներով, տարածուած աշխարհի հինգ ցամաքամասերուն վրայ: Միութիւն մը, որ իր յարատեւութեամբ, զոհողութեամբ եւ հաւաքական աշխատանքով սատարեց եւ կը շարունակէ իր կարելիութեան սահմաններուն մէջ սատարել նորահաս սերունդներու կերտման եւ մեր ազատ ու անկախ հայրենիքի հզօրացման:

Այնուհետեւ, եղբ. Քէօշկէրեան հրաւիրեց Առաջնորդը՝ կատարելու համար Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած յուշաքարին բացումը: Առաջնորդը Տէրունական աղօթքով օրհնեց նորակերտ յուշաքարը, ապա իր սրտի խօսքը արտասանեց ըսելով, որ այսօր յուզումնախառն զգացումներով կը վերադառնանք այս տարածաշրջանը, որ կը կոչուի բանակավայր: Ան Սուրիոյ տաղանապին ընթացքին վերածուեցաւ վաւերական բանակավայրի եւ այսօր, Հ.Մ.Ը.Մ.ին վերադարձուելէ ետք, իբրեւ դաստիարակչական, կրթական, մշակութային, մարզական, ազգային եւ գաղափարական դաստիարակութեան վայր, իր դռները կը վերաբանայ մեր նոր սերունդին դիմաց:

Առաջնորդը դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը սովորական միութիւն մը չէ, այլ՝ դպրոց մըն է, որ ինքզինք դերազանցած է, երբ հարիւրէ աւելի մասնաճիւղեր հիմնած է աշխարհի բոլոր անկիւններուն մէջ: Դպրոց մը, որ կը պատրաստէ հայ արի նոր սերունդ, կը պատրաստէ կարգապահ սերունդ, կը պատրաստէ ազգին, եկեղեցւոյ, հայրենիքին, մշակոյթին եւ լեզուին նուիրուող այն անձնուրաց երիտասարդները, որոնք իրենց կեանքին ընթացքին այս աշխարհի թոհուրէն մէջ կը մնան հայութեամբ շնչող երիտասարդներ-երիտասարդուհիներ, այլեւ ու մասնաւանդ՝ քոյրեր եւ եղբայրներ: Առաջնորդը ողջունեց բանակավայրի 100-ամեակի այս նախաձեռնութիւնը, 100-ամեակի սերունդը, ապա շնորհաւորեց ներկաները Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնին առիթով:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱԿԻՆ ՀՐԶԱՆԸ ՅՈՒԲԵԼԵՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՄԸ ՏՕՆԵՑ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԴԻՐՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան Սամուլի Յանձնախումբ ՅԱԼԷՊ

Գառնիկ Մկրտիչեանի, մշակութային, մարզական, բարեսիրական միութիւններու եւ կրթական հաստատութիւններու ներկայացուցիչներու եւ հոծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներու:

ԲԱՑՈՒՄԸ

Հանդիսութիւնը սկսաւ բացման պատկերով մը: Քոյր Ռիթա Կաղեան-Տիբալթեանի ձայնով հնչեց Հ.Մ.Ը.Մ.ի նուիրուած «Ուխտ Արարատին» եւ «Կու

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը, Հալէպի վարչութեան մասնակցութեամբ, կազմակերպեց միութեան հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած յրեկենական հանդիսութիւն մը Շարաթ, 3 Նոյեմբեր 2018-ի երեկոյան ժամը 7-ին, «Գ. Եսայեան» սրահին մէջ, ներկայութեամբ հայ երեք համայնքապետներուն, Հ.Հ. Հալէպի գլխաւոր հիւպատոսին, պատկան մարմինի ներկայացուցիչին, Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Վարչութեան եւ Կրօնական Ժողովի անդամներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ.



գա՛ն, կու գա՛ն» ոտանաւորները, որոնց ընթացքին տարազաւոր Հ.Մ.Ը.Մ.ականներ Հ.Մ.Ը.Մ.ի վահաններով մէկ առ մէկ մուտք գործեցին սրահ: Իւրաքանչիւր վահան կը ներկայացնէր Սուրիոյ պատմական 24 մասնաճիւղերէն մէկը, իր հիմնադրութեան թուականով: Անոնք տեղադրուեցան բեմին վրայ, ապա սրահին մէջ հնչեցին Սուրիոյ, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի քայերգները, կատարողութեամբ՝ եղբ. Եղիա Քիլէճեանի, քոյր Մարիա Չիչեանի եւ եղբ. Արամ Խաչատուրեանի: Բեմին յարդարանքն ու սկաուտներուն արի կեցուածքը ոգեւորեցին ներկաները:

ԲԱՅՄԱՆ ԽՕՄԲԵՐԸ

Արարեբէնով եւ հայերէնով բացման խօսքեր արտասանեցին օրուան հանդիսավարներ եղբ. Ծերուն Գահուէճեան եւ քոյր Մարինա Չիլ Աբոշեան-Պօղիկեան:

Եղբ. Ծերուն ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը: Միութիւն մը, որ ծնունդ առաւ խումբ մը գիտակից հիմնադիրներու կողմէ, սկզբնական շրջանին հոգեպէս եւ մարմնապէս խնամելով Հայոց Յեղասպանութենէն ճողոպրած հայ որբերը: Ան երախտապարտութեամբ յիշեց սուրիական հայրենիքին եւ արաբ ժողովուրդին հիւրընկալ մօտեցումը հայ ժողովուրդին նկատմամբ, աւելցնելով որ Սուրիոյ հայ գաղութը սուրիական հողին վրայ հիմնեց կազմակերպութիւններ, սկաուտական եւ մարզական միու-



թիւններ, որոնցմէ մէկն է Հ.Մ.Ը.Մ.ը: Քոյր Մարինա դիտել տուաւ, որ 100-ամեակի յօբելենական հանդիսութիւնը նոր հորիզոններ կը բնայ մեր առջեւ՝ վերարժեւորելու անցեալը, ուրուագծելու ներկայ հրամայականները եւ որդեգրելու ժամանակի պահանջներուն, արդի մտածելակերպին ու մանաւա՛նդ արհեստագիտութեան նորութիւններուն համապատասխան ծրագիրներ, Հ.Մ.Ը.Մ.ը դարձնելու համար ո՛չ միայն աւանդական, այլ՝ արդի, երիտասարդ եւ ժամանակակից կազմակերպութիւն մը:

ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Գեղարուեստական յայտագիրով ներկայացուեցաւ «Գուսանի երգ»ը՝ կա-

տարողութեամբ եղբ. Եղիա Քիլէճեանի, դաշնամուրի ընկերակցութեամբ Բաֆֆի Պալեանի:

Եղբ. Յակոբ Տըլտըլեանի հեղինակած «Մեր սրտերու Հ.Մ.Ը.Մ.» ոտանաւորը տպաւորիչ առողանութեամբ մը արտասանեց քոյր Ռիթա Կաղեան-Տիբպիքեան, ապա Կոմիտասի «Կայի երգ»ը եւ «Հոռովեղ»ը հնչեցին եղբ. Եղիա Քիլէճեանի եւ եղբ. Արամ Խաչատուրեանի բարձրորակ կատարումով: Երեւանի հիմնադրութեան 2800-ամեակին առիթով «Երեւան էրբօւնի»ն երգեցին քոյր Մարիա Չիչեան, եղբայրներ Եղիա Քիլէճեան եւ Արամ Խաչատուրեան:

Ապա, ցուցադրուեցաւ միութեան 100-ամեակին նուիրուած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատրաստած տեսերիզը:

ՕՐՈՒԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Օրուան պատգամաբօսն էր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ան դիտել տուաւ, որ 100 տարին երկար ժամանակ է մարդու մը կեանքին համար, սակայն կա՛րճ, շա՛տ կարճ ժամանակ է ազգային հաւաքականութեան մը համար, սովահար, գաղթական եւ որբացած սերունդներէ միտքով ու մարմինով առողջ, ազգային իրենց ինքնութեամբ հպարտ եւ արժանապատիւ սերունդներ կերտելու համար: Եղբայրը պարզեց, թէ ինչպէ՛ս Հ.Մ.Ը.Մ.ը ծնունդ առաւ Հայոց Յեղասպանութեան արհա-





Լիրքի օրերուն, գործեց ոչ սովորական պայմաններու մէջ եւ 100 տարի մնաց իր առաքելութեան վրայ:

Հանդիսականները մեծ ուրախութիւն ապրեցան, երբ եղբ. Գառնիկ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեանը պարգեւատրեց միութեան «Արտակարգ» պատուանշանով, իբրեւ իսկական Առաջնորդ լաւ ու վատ օրերուն Հ.Մ.Ը.Մ.ի կողքին մնալու եւ ամէն ձեւով հալէպահայութեան օժանդակելու իր յանձնառութեան համար:

ՊԱՏԿԱՆ ՄԱՐՄԻՆԻՆ ԽՕՍՔԸ

Պատկան մարմինին խօսքը արտասանեց Կարօ Իւզպաշեան, յայտնելով, որ Հ.Մ.Ը.Մ.ը գրասեղաններու ետեւ զաղափարական միութիւն մը ըլլալով հանդերձ՝ դաշտերու վրայ ներկայութիւն է իր մարզական կեանքով եւ կամաւորական գունդերով, որուն հեռանկարին մէջ կը պսպղայ հայ ժողովուրդի համազգային խոհարար Ազատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանը: Իւզպաշեան կոչ ուղղեց միութեան շարքերուն մէջ յաւելեալ ուշադրութեան առարկայ դարձնելու երիտասարդ տարրը եւ վստահելու անոր:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ ԵՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒՄԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան: Ան

անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի սրբազան առաքելութեան, յայտնելով, որ Սուրբոյ մէջ Հ.Մ.Ը.Մ.ը հայ դպրոցին եւ հայ եկեղեցւոյ կողքին եղաւ ազգային դարբնոց, հայ պատանիին եւ երիտասարդին համար եղաւ մարզական, սկստական եւ մարզակերտումի մեծ դպրոց, իսկ Սուրբոյ պատերազմին հետեւանքով զաղթած Հ.Մ.Ը.Մ.ականները իրենց ներդրումը բերին միութեան նորաստեղծ մասնաճիւղերու ստեղծման:

Ապա, եղբ. Քէօզկէրեան ներկաները հրաւիրեց երկրորդ հարիւրամեակին ընդառաջ միասնական աշխատանքով գործնականի վերածելու Հ.Մ.Ը.Մ.ի խորիմաստ նշանաբանը՝ «Բարձրացիր բարձրացուր»ը:

Իր խօսքին աւարտին, եղբայրը բեմ հրաւիրեց Առաջնորդը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, Շրջանային Վարչութեան ատենադպրուհի քոյր Գարօյին Քիւրքլեան-Առոյեանը եւ Հայլալի վարչութեան ատենապետ եղբ. Գէորգ Մամեանը «Մառաշտի» շքանշանով պարգեւատրելու տարիներու ծառայութիւն ունեցող հետեւեալ Հ.Մ.Ը.Մ.ականները.- Տաթև Ա. Քհնյ. Միքայէլեան, Մանօ Տէր Մանուկեան, Սեպուհ Մուրատեան, Մակար Մակարեան, Վահէ Պօզկէզէեան, Գէորգ Ապահունի եւ նահատակ եղբ. Ռաֆֆի Պչաքճեան (յետմահու): Պարգեւատրեալ եղբայրներուն ամփոփ կենսագրականներն ու միութե-





նէն ներս ստանձնած պարտականութիւնները ներկայացուց քոյր Գարօյին Քիւրքեան-Առոյեան:

Այս առիթով, Շրջանային Վարչութեան կողմէ առ ի երախտագիտութիւն միութեան Կեդրոնական Վարչութեան՝ ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին փոխանցուեցաւ յուշանուէր մը:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՊԱՏԳԱՍԸ

Հանդիսութեան եզրափակիչ պատգամը փոխանցեց Առաջնորդ Շահան Արք. Սարգիսեան, դիտել տարով որ անցնող հարիւրամեակին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Վեհափառ Հայրապետներուն ուշադրութեան առարկան մնաց Հ.Մ.Ը.Մ.ը, անոր

ներկայութիւնը, գործունէութիւնը, ծառայութիւնը, հայրենանուէր, ազգանուէր եւ եկեղեցանուէր աշխատանքը: Երջանկայիշատակ Զարեհ Սքանչելին Հ.Մ.Ը.Մ.ը կը բնորոշէ իբրեւ նկարագիր կերտող իրականութիւն, երջանկայիշատակ խորէն Վեհափառ զայն կը բնորոշէ մեր ազգի կեանքին մէջ տեսչական ունեցող իրականութիւն, երջանկայիշատակ Գարեգին Կաթողիկոս զայն կը ներկայացնէ որպէս դաստիարակչական դարոց, իսկ Արամ Ա. Վեհափառ Հայրապետը 100-ամեակի իր սրբատառ կոնդակին մէջ Հ.Մ.Ը.Մ.ը կը բնորոշէ որպէս հայկականութեան հոգին եւ այն միջնորդը, որուն մէջ սերունդներ թրծուեցան այսօրուան Հա-

յաստանին, վաղուան ամբողջական Հայաստանին եւ ամբողջական հայութեան գիտակցութեամբ:

Առաջնորդին պատգամէն ետք, հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով եւ «Պահպանիչ»ով:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Հանդիսութեանէն ետք, «Ա. Մանուկեան» ժողովրդային Տան «Անի» ճաշասրահին մէջ տեղի ունեցաւ յղթանակի պարահանդէս: Երեկոյին հանդիսավարներն էին քոյր Բայրիկ Աւագեան եւ եղբ. Խաթակ Տրիպէրեան, որոնք Հ.Մ.Ը.Մ.ականներու յուշերը պատմելով խանդավառեցին ներկաները:

Հուսկ, տեղի ունեցաւ 100-ամեակի կարկանդակի հատում՝ ձեռամբ հայ երեք համայնքապետներուն, Հ.Հ. Հայէպի գլխավոր հիւպատոսին, պատկան մարմինի ներկայացուցիչին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան ատենապետին: Յատուկ կարկանդակ մըն ալ կտրուեցաւ «Մառաշտեան» շքանշանի արժանացած եղբայրներուն ձեռամբ:

Ճաշկերոյթին Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան կողմէ յիշատակի նուէրով մը գնահատուեցաւ միութեան 100-ամեակի յանձնախումբի անդամներէն եղբ. Յակոբ Տրտրեանը՝ միութեան 100-ամեակին «Մեր սրտերու Հ.Մ.Ը.Մ.» ոտանաւորը նուիրելուն համար:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ, ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ԼԱԹ-ԱՔԻՈՅ ՄԷՋ

Թղթակից ԼԱԹԱՔԻԱ

Ուրբաթ, 30 Նոյեմբեր 2018-ին, Լաթաքիոյ «Գանձասար» սրահին մէջ կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակին նուիրուած ցուցահանդէսին բացումը, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան անդամներու, քոյր միութիւններու ներկայացուցիչներու եւ Հ.Մ.Ը.Մ.ական մեծաթիւ համակիրներու:

Ցուցահանդէսին բացումը կատարեց Մաշտոց Ա. Քհնյ. Արապաթիւն, շնորհախոսման մասնակցութեամբ: Այս առիթով ցուցադրուած էին Հ.Մ.Ը.Մ.Ի Լաթաքիոյ մասնաճիւղի մարզական եւ սկաուտական արխիւներէն նկարներ, բաժակներ, սկաուտական ձեռագիրներ, կայմ եւ աշտարակ: Ներկա-

ները բարձր գնահատեցին սկաուտներուն կատարած աշխատանքը եւ զոհունակութեամբ հեռացան սրահէն, Հ.Մ.Ը.Մ.ին մաղթելով նորանոր նուաճումներ:

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Ցուցահանդէսը դիտելէ ետք, ներկաները բարձրացան «Արարատ» սրահ՝ ներկայ գտնուելու մասնաճիւղի վարչութեան եւ Սկաուտ. Խորհուրդին կազմակերպած 100-ամեակի ժողովրդային հանդիսութեան:

Հանդիսութեան բացումը կատարուեցաւ Սուրբոյ եւ Հայաստանի քայլերգներով, որմէ ետք սկաուտական երգչախումբը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի քայլերգը, «Ազգ փառապանծ» եւ «Հայրողիք» երգերը:

Օրուան հանդիսավար քոյր Ալին Թոփալաքեան-Գաբրիէլեան շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 100-ամեակը եւ ներկաները հրաւիրեց դիտելու Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կողմէ պատրաստուած 100-ամեակի յատուկ տեսերիզը:

Ապա բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Գաբրիէլեան: Ան իր խօսքին մէջ նշեց, թէ Յեղասպանութենէն ետք ծնունդ առած Հ.Մ.Ը.Մ.ը կարողացաւ զօրացնել Սփիւռքը եւ եղաւ սփիւռքահայութեան մարմնակրթական նախարարութիւնը:

Եղբոր խօսքէն ետք, կիրարկուեցաւ





գեղարուեստական յայտագիր: Յաջորդաբար ներկայացուեցան ասմունք՝ «Ուխտ Արարատին» քոյր Դայար Սեփէթճեանի կատարումով եւ հայկական պար («Քոչարի»)՝ Համազգայինի «Վահան Նաւասարդեան» մասնաճիւղի «Գեղարդ» պարախումբին կատարողութեամբ:

Այնուհետեւ, բեմ հրաւիրուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան հանդիսութեան ներկայ անդամները եւ մասնաճիւղի վարչութեան ատենապետը՝ կատարելու զնահատագիրներու բաշխում: Գնահատագիրներ ստացան միութեան երկար տարիներու ծառայութիւն ունեցող քոյրեր եւ եղբայրներ, որոնք վարած են վարչական զանազան պաշտօններ: Սկստական յատուկ փողկապներով զնահատուեցան տարիներու ընթացքին խմբապետի պաշտօն ստանձնած քոյրեր եւ եղբայրներ:

Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօչկերեան փոխանցեց 100-ամեակի պատգամը: Ան հաստատեց, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը անցնող 100 տարիներուն ո՛չ միայն Ֆիզիքապէս կրթեց հայ սերունդներ, այլեւ՝ անոնց հոգիներուն մէջ դրոշմեց Աստուծոյ, ազգին եւ հայրենիքին հանդէպ սէր եւ հաւատարմութիւն: Եղբ. Քէօչկերեան հրաւիրեց ներկաները Հ.Մ.Ը.Մ-ի երկրորդ 100-ամեակի սեմին խոստանալ կամաւորապէս զործնականի վերածել միութեան նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»ը, միասնաբար հասնելու մեր մարդկային եւ համազգային տեսլականներուն ու նպատակներուն, միութեան դրօշին անմիջական հովանիին ներքեւ:

Յայտագրի վերջին բաժինով դայլիկներ, սկստներ եւ մարզական խումբեր մեծ խանդավառութիւն ստեղծեցին իրենց կատարած մարզական շարժումներով:

Աւարտին, Մաշտոց Ա. Քհնյ. Արապաթեան փոխանցեց իր սրտի խօսքը եւ «Պահպանիչ»ով փակեց հանդիսութիւնը:



Շաբաթ, 1 Նոյեմբեր 2018-ին տեղի ունեցաւ պարահանդէս՝ նուիրուած Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին: Յայտագիրը ճոխացուց հայկազայ երգիչ Սաչիկ Աչճեան: Աւարտին կատարուեցաւ կարկանդակի հատում:



Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՄՐՑԱՀԱՐՔ

**Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ
Շրջանային
Վարչութեան
Սամուլի Յանձնախումբ
ՀԱԼԷՊ**



րուծիւնը եւ շարադրութիւնը ներկայացնողները պարգեւատրեց «Հայաստանի Աշխարհագրութիւն» գիտելիքներու խաղով:

Սկսուտ. Խորհուրդը Լաթաքիոյ եւ Քեսապի մասնաճիւղերու հաստատագիրերն ու լաւագոյններուն նրկէրները փոխանցեց շրջաններու մասնաճիւղերու Սկսուտ. Խորհուրդներուն, որպէսզի իրենց կարգին գանոնք փոխանցեն մասնակիցներուն: Ապա, 9 Սեպտեմբեր 2018-ին, Շրջանային Սկսուտ. Խորհուրդը այցելեց

100 տարի շարունակ, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան առաքելութիւնը եղած է պատրաստել չարքաշ, արի, մաքուր նկարագիրի, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքներու տէր հայ պատանիներ եւ երիտասարդներ, ինչպէս նաեւ զօրացնել ու զարգացնել մանուկներուն երեւակայութիւնը եւ մտային կարողութիւնները:

Արդ, միութեանս 100-ամեակին առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Սկսուտ. Խորհուրդը կազմակերպեց գծագրութեան-շարադրութեան մրցաշարք մը, նպատակ ունենալով նշել միութեան 100-ամեակը եւ յայտնաբերել անդամներուն ձիրքերը:

Սուրիոյ երեք մասնաճիւղերու՝ Լաթաքիոյ, Քեսապի եւ Հայկապի գայլիկ-արծուիկները մեծ խանդավառութեամբ իրենց մասնակցութիւնը բերին այս մրցաշարքին:

Առ ի գնահատանք մրցաշարքին մասնակցող քոյր-եղբայրներուն, Շրջանային Սկսուտ. Խորհուրդը յանձնեց հաստատագիրներ, իսկ իւրաքանչիւր մասնաճիւղի լաւագոյն գծագ-

Հայկապի մասնաճիւղ եւ կիրակնօրեայ գործունէութեան ընթացքին բաժնեց յիշեալ հաստատագիրներն ու նուէրները:

Գծագրութեան մրցաշարքին լաւագոյնները հանդիսացան:-

Լաթաքիոյ մասնաճիւղէն՝ քոյրեր Հուրիկ Սարգո եւ Դար-Դուրի Նազարեան:

Քեսապի մասնաճիւղէն՝ եղբ. Սերոբ Ղազարեան:

Հայկապի մասնաճիւղէն՝ եղբայրներ Զաւէն Ճուհարեան եւ Կարո Մալեան:

Շարադրութեան մրցաշարքին լաւագոյնները հանդիսացան Հայկապի մասնաճիւղէն՝ քոյր Լար Սիսեռեան եւ եղբ. Մայք Գեւոյեան

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՆՆՋԵՑԵԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ՊԱՀՏՈՆ՝ ՀԱԼԷՊԻ ՄԷՋ

**Ռոյթակից
ՀԱԼԷՊ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը միութեան հիմնադիրներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ական ննջեցեալներուն ու նահատակներուն յիշատակին, Կիրակի, 25 Սոյեմբեր 2018-ին, Ազգային գերեզմանատան մէջ կազմակերպեց հոգեհանգստեան պաշտօն: Արարողութեան նախագահեց Մաշտոց Քհնյ. Արապաթեան: Ներկայ էին Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ պատկան մարմինի ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային

Սկսուտ. Խորհուրդը, Շրջանային Խմբապետութիւնը, Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկապի մասնաճիւղին վարչութիւնը, Սկսուտ. Խորհուրդը, մասնաճիւղին շեփորախումբը, մասնաճիւղին խմբապետը, աստիճանաւորական եւ խմբապետական տարագաւոր կազմերը եւ Հ.Մ.Ը.Մ.Ի դամբարանին մէջ թաղուած Հ.Մ.Ը.Մ.ականներու հարազատները:

Հոգեհանգստեան պաշտօնէն ետք, Հայկապի մասնաճիւղի շեփորախումբին առաջնորդութեամբ, ներկաները ուղղուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի նուիրեալներու դամբարան, ուր քահանայ հօր առաջնորդութեամբ արօթք բարձրացուցին առ Աստուած: Այնուհետեւ, երեք ծաղկեպսակներ զետեղեցին Հ.Մ.Ը.Մ.Ի

Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկալի մասնաճիւղի վարչութեան ատենապետները, Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Սկաուտ- Խորհուրդի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկալի մասնաճիւղի Սկաուտ- Խորհուրդի ատենապետները, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկալի մասնաճիւղի շեփորախումբին խմբավարը, քոյրերն ու եղբայրները:

Ծաղկեպսակներու գեղեղունմէն ետք, շեփորախումբին նուագակցութեամբ, բոլորը երգեցին Հ.Մ.Ը.Մ.Ի «Յառաջ, նահատակ» քայլերգը, որմէ ետք անոնք ուղղուեցան «Սիմոն Վրացեան» կեդրոնի «Լուտեր Մասպանաճեան» սրահ, ուր տեղի ունեցաւ սուրճի հիւրասիրութիւն:

Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրբոյ Շրջանային Վարչութեանէն եղբ. Արմէն Քէօզկէրեան ողջունեց բոլոր քոյրերուն եւ եղբայրներուն ներկայութիւնը, ապա հրաւիրեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեանը՝ արտասանելու Շրջանային Վարչութեան խօսքը: Եղբ. Քէօզկէրեան ըսաւ. «Հակառակ բոլոր դժուարութիւններուն, ձեռք-ձեռքի տալով, «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը ուղեցոյց ունենալով, Հ.Մ.Ը.Մ.ը պիտի շարունակէ իր յաղթական երթը, պատրաստելով արի, գիտակից հայ նոր սերունդներ:

«Հաստատ քայլերով միասնաբար ընթանանք դէպի լուսաւոր հարիւրամեակներ, միշտ յիշելով միութեան ռահվիրա-



ները ու այն բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականները, որոնք իրենց անվերապահ ներդրումը ունեցան միութեան ամման, զարգացման եւ համահայկական կառույցի վերածման:

«Յիշատակը անմեռ մնայ բոլոր անոնց, որոնք գործեցին ու անցան Հ.Մ.Ը.Մ.Ի շարքերէն»:

Ապա, Մաշտոց Քհնյ. Արապաթեան եզրափակեց հանդիպումը՝ գնահատելով Հ.Մ.Ը.Մ.ականներուն վաստակը: Ան յայտնեց, որ միութեան ննջեցեալները յարգելով, օրհնութիւն եւ ուժ կը ստանանք՝ շարունակելու մարդակերտ այս միութեան առաքելութիւնը:

Յարգանքի հանդիպումը փակուեցաւ «Պահպանիչ»ով:

Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՅԱՀԱՐՔ՝ ԳԱՄԻՇԼԻԻ ՄԷՋ



Մարի Մելքոն ԳԱՄԻՇԼԻ

Հովանաւորութեամբ ձեգիրէի Հայոց Առաջնորդական Փոխանորդ Ռուբէն Աբղ. Նալպանտեանի, նախաձեռնութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Գամիշլիի մասնաճիւղի վարչութեան եւ կազմակերպութեամբ մարզական յանձնախումբին, 9 Օգոստոսէն 14 Սեպտեմբեր 2018 երկարող հինգ շաբթուան ընթացքին, Գամիշլիի մէջ տեղի ունեցաւ Փութպոլի մրցաշարը՝ նուիրւած Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 100-ամեակին:

Մրցաշարքի առաջին փուլին մասնակցեցան կրտսերներու հետեւեալ խումբերը- «Մասիս Ախաուիէ» եւ «Մար Քրիաքըս»: Իւրաքանչիւրը բաժնուեցաւ երկու խմբակի՝ տարիքներու համաձայն: Կրտսերներու առաջին խմբակին ախոյեան հանդիսացաւ «Մար Քրիաքըս» խումբը: Երկրորդ խմբակին բաժակին տիրացաւ Հ.Մ.Լ.Մ.ի «Մասիս» խումբը:

Երկրորդ փուլին մասնակցեցան հանգստեան կոչուած երէց մարզիկներու ութ խումբեր: Մրցաշարքի ախոյեան հանդիսացաւ «Ալփիհաս» խումբը, իսկ վերջին մրցաշարքին՝ երէց խումբեր- «Մասիս Ա.», «Մասիս Բ.», «Ախաուիէ Ա.», «Ախաուիէ Բ.», «Մար Քրիաքըս Սուլթորո», «Աքսլա Թաթամոն Վասիհի»:

Աւարտական խաղը տեղի ունեցաւ 14 Սեպտեմբեր 2018-ին, ներկայութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Զաւէն Գասպարեանի, պատկան մարմինին, ազգային եւ միութենական մարմիններու ներկայացուցիչներուն: 7-2 արդիւնքով «Մասիս» խումբը ախոյեան հանդիսացաւ: Ներկաները մեծ խանդավառութեամբ հետեւեցան խաղին՝ կանչերով եւ ծափողոյններով զնահատեցին խաղին բարձր մակարդակը, որուն ընթացքին կը տիրէր եղբայրական ջերմ մթնոլորտ:

Աւարտին, Գամիշլիի վարչութիւնը յատուկ յուշանուէրներով պարգեւատրեց երէց եւ երիտասարդ Հ.Մ.Լ.Մ.ականներ, որոնք իրենց աշխատանքով սատարած են միութեան վերելքին:

Այս առիթով սրտի խօսքեր արտասանեցին մասնաճիւղի ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան, մարզական յանձնախումբի պատասխանատու եղբ. Կարպիս Շիրիքեան եւ Գամիշլիի մարզական կեանքին մէջ երկարամեայ վաստակ ունեցող մարզիկ եւ երկար տարիներու մարզիչ Ճորճ Խազում: Վերջինը բարձրօրէն զնահատեց մրցաշարքը կազմակերպող յանձնախումբը եւ Հ.Մ.Լ.Մ.ի մեծ ընտանիքը, որ միշտ եղած է Գամիշլիի մարզական աշխոյժակումբը, իսկ Հ.Մ.Լ.Մ.ի «Մասիս» խումբը իր կարեւոր դերը ունեցած է Գամիշլիի մարզական կեանքին մէջ:



Մարի Մելքոն ԳԱՄԻՇԼԻ

Կիրակի, 25 Նոյեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 6-ին, Գամիշլիի «Կիւլպէնկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւնը, հովանաւորութեամբ Ճէզիրէի Հայոց Առաջնորդական Փոխանորդ Ռուբէն Աբդ. Նալպանտեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի վարչութեան եւ Սկառուստորհուրդին, ներկայութեամբ հայ կաթողիկէ համայնքի Տէր Յովսէփ Քհնյ. Պետոյեանի, պատկան մարմինին, ազգային եւ միութենական մարմիններու ներկայացուցիչներուն:

Թղթակից ԳԱՄԻՇԼԻ

Շարաթ, 8 Դեկտեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 8-ին, Գամիշլիի «Կիւլպէնկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւններուն եզրափակիչ հանդիսութիւնը, հովանաւորութեամբ Ճէզիրէի Հայոց Առաջնորդական Փոխանորդ Ռուբէն Աբդ. Նալպանտեանի, ներկայութեամբ Պսակ Քհնյ. Պէրպէրեանի, հայ կաթողիկէ համայնքի Տէր Յովսէփ Քհնյ. Պետոյեանի, Հ.Մ.Լ.Մ.ի Սուրբոյ Շրանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Զաւէն Գասպարեանի, պատկան մարմինի եւ միութիւններու ներկայացուցիչներուն:

Օրուան հանդիսավարներ՝ քոյրեր Անի Սարգիսեան եւ Սօսէ Խաչատուր-

Օրուան հանդիսավարներ եղբ. Գէորդ Նազարեան եւ քոյր Մերի Սարգիսեան տօնակատարութիւնը բացուած յայտարարելով ներկաները հրաւիրեցին մէկ վայրկեան յոտնկայս լուրթեամբ յարգելու յիշատակը Հ.Մ.Լ.Մ.ի հին ու նոր ննջեցեալներուն, ի մասնաւորի՝ նորոգ հանգուցեալ, վաստակաւոր եղբ. Յարութիւն Պարսամեանի:

Ապա հնչեցին Սուրբոյ եւ Հայաստանի քայլերգները, որոնցմէ ետք բացման խօսք արտասանեց Գամիշլիի մասնաճիւղի խմբապետուհի քոյր Եւա Մանուկեան-Սեյրմեան: Ան նախ անդրադարձաւ Հ.Մ.Լ.Մ.ի ծնունդին եւ հիմնադրութեան տարիներուն ու ըսաւ. «1918-ը բախտորոշ թուական մըն է հայ

եան-Մանուկեան ներկաները հրաւիրեցին մէկ վայրկեան յոտնկայս լուրթեամբ յարգելու յիշատակը մեզմէ յաւատ բաժնուած Հ.Մ.Լ.Մ.ական ննջեցեալներուն եւ նահատակներուն: Ապա, հնչեցին Սուրբոյ եւ Հայաստանի քայլերգները:

Բացման խօսքը արտասանեց մասնաճիւղի ատենապետ եղբ. Անդրանիկ Սարգիսեան: Ան ընդհանուր գիծերով ներկայացուց Հ.Մ.Լ.Մ.ի 100-ամեակին նուիրուած ձեռնարկները, յայտնելով որ միութեան 100-ամեակին նուիրուած ոգեկոչական նախաձեռնութիւնները անկրկնելի առիթներ կը հանդիսանան մարմնակրթական այս ռահվիրայ կազմակերպութեան մէկդարեայ պատմութեան էջերը թերթատելու, ուսանելի դասեր քաղելու, ապա վերանորոգ ուխտով հաստատաքայլ շարունակելու դէ-

Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՓԱՌ-ԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԳԱՄԻՇՂԻԻ ՄԷՁ

ժողովուրդի գոյապայքարին մէջ, ազգային պատերազմ ու պայքար՝ ի խնդիր ազատութեան եւ անկախութեան: Այդ պայքարին արդիւնքն էր 28 Մայիսին հռչակուած Հայաստանի առաջին Հանրապետութիւնը, որմէ ետք նոյն տարին, եւ յատկապէս Նոյեմբերին, մարմին ու հոգի կը ստանար հայրենիքի մէջ իր արմատները նետած, անոր ծառայելու համար ստեղծուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.՝:

«Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութիւնը պատահական կամ պարագայական խանդավառութիւն մը չէր, այլ՝ կարիք էր ու պահանջ, երբ հայրենագուրդ ու Յեղափոխութենէ ճողոպրած հայ երիտասարդութիւնը երազ ու տեսիլք ունէր վերակազմակերպելու իր շարքերը, նոր շունչ ու աւել տալու հայ պարմանին: «Հ.Մ.Ը.Մ.՝ կը հաւաքէր գանոնք մէկ դրօշի տակ՝ ի խնդիր հայութեան վերելքին եւ անոր ողնայարը կազմող երիտասարդ սերունդներու առողջ դաստիարակու-

թեան ու գաղափարական դարբնումին»:

Ապա, քոյրը անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.Ի վսեմ առաքելութեան ու գաղափարին ըսելով. «Հ.Մ.Ը.Մ.ը կոչուած է ըլլալու հայ ժողովուրդի երազներուն եւ իղձերուն արտայայտիչը: Կոչուած է ըլլալու հայ ժողովուրդի անկորնչելի իրաւունքներու հետապնդման ուղիին վրայ անխոնջ ջանակիրը, ազգի ու հայրենիքի բարձրացումին ու վերելքին ռահիւրան»:

Իր խօսքը եզրափակելով քոյր Սեյիմեան ըսաւ. «Փա՛ռք ու պատիւ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակին, փառահեղ անցեալին, կենսաբոլոր ներկային եւ լուսաշող ապագային: Ապրի՛ Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքը: Ապրի՛ ազատատենչ հայ ժողովուրդը: Կեցցե՛ն ազատ, անկախ, միացեալ եւ ամբողջական Հայաստանի իրականացման հաւատքն ու պայքարը»:

Գեղարուեստական յայտագիրով նախ ելոյթ ունեցան գայլիկները, որոնք ներկայացուցին Մոկլիին պատմու-

թիւնը, խորապէս տպաւորելով ներկաները: Ապա, սկսուածները յաջորդաբար հանդէս եկան հայկական եւ զինուորական պարերով, խանդավառ եւ տպաւորիչ պատկերներ ներկայացնելով ու բուրգեր կազմելով: Այնուհետեւ, խումբ մը սկսուածներ արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ը դրուատող քերթուածներ, որմէ ետք Բաֆֆի Օհանեան ազգային երգերով ոգեւորեց ներկաները:

Յայտագրի յաջորդ բաժինով ելոյթ ունեցաւ սկսուածական երգչախումբը՝ ազգային-հայրենասիրական երգերով, խմբավարութեամբ Եւա Մանուկեան-Սեյիմեանի, երգահանի ընկերակցութեամբ Քրիստափոր Միքայէլեանի:

Հուսկ, Ռուբէն Աբղ. Նալպանտեան իր հայրական օրհնութեանը ողջունեց Հ.Մ.Ը.Մ.Ի հարիւրամեակը, միութեան մաղթելով յարատեւ վերելք ու նորանոր յաջողութիւններ:

Հանդիսութիւնը աւարտին հասաւ «Պահպանիչ»ով եւ «Յառաջ, նահատակ» քայլերգով:

100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԳԱՄԻՇՂԻԻ ՄԷՁ

պի նոր հորիզոններ բացուող անոր յաւերժական երթը՝ նոյն հաւատքով ու վճռակամութեամբ:

Հ.Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան խօսքը արտասանեց եղբ. Զաւէն Գասպարեան: Ան նախ շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ը իր 100-ամեակ երթին համար, անոր մաղթելով նորանոր ամեակներու նուաճում: Ապա, եղբ. Գասպարեան շեշտեց հետեւողական աշխատանքի անհրաժեշտութիւնը եւ ըսաւ. «Այսօր, աւելի քան երբեք, Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներէն կ'ակնկալուի յաւելեալ աշխատանք, յաւելեալ նուր-



րում եւ յաւելեալ ստեղծագործութիւն՝ յաղթահարելու միութեան դէմ ցցուող բոլոր դժուարութիւններն ու մարտահրաւէրները»:

Ազգային-հայրենասիրական փունջ մը երգերով ելոյթ ունեցան քոյր Եւա Մանուկեան-Սեյրմեան, եղբայրներ Ատուր Ադամեան եւ Բաֆֆի Օհանեան:

«Քայլէ՛, գայլի՛կ» քերթուածը ասմունքեց քոյր Մարի Մելքոնեան-Պետրոսեան, որմէ ետք եղբ. Արիկ Քեհեայ-

եան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնն ու առաքելութիւնը, անդրադառնալով անոր խորիմաստ նշանաբանին ու վսեմ գաղափարին:

Փակման խօսքը արտասանեց եղբ. Խաչիկ Մելքոնեան: Ան նախ բարձրօրէն գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի վարչութեան միամեայ աշխատանքը, ապա շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը՝ անոր մաղթելով նորանոր նուաճումներ:

«Պատուաբեր անցեալէն յաղթական

ապագայ» կարգախօսով ծառայելու, պայքարելու եւ գոյատեւելու վճռակամութեամբ, օրհնութեամբ յեցուն, յուսաւոր ճանապարհ կը մաղթենք Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին», ըսաւ ան:

Աւելցնենք, որ հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ կարկանդակի հատում: Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ, նահատակ» քայլերգով:

Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՄԻ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Ողթակից ԴԱՄԱՍԿՈՍ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղի վարչութեան, 7 Դեկտեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 7.30-ին, հայ կաթողիկէ «Ամինեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած պաշտօնական տօնակատարութիւն:

Զեռնարկը ընթացք առաւ Սուրբոյ եւ Հայաստանի քայլերգներով կատարողութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին, ապա ներկաները հրաւիրուեցան մէկ վայրկեան յոտնկայս յուռութեամբ յարգելու 7 Դեկտեմբեր 1988-ի Սպիտակի երկրաշարժի զոհերուն անթառամ յիշատակը:

Բացման խօսքը կատարեց վարչութեան ատենապետ եղբ. Միհրան Ղազարեան: Ան հաստատեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը չեղաւ սոսկ մարզական միութիւն, ո՛չ այ՛ սկստական միութիւն, այլ եղաւ դպրոց՝ իր մարդակերտիչ եւ հայակերտիչ ծրագրով, եղաւ առաքելութիւն՝ իր վեհ սկզբունքներով ու ազնուագոյն իտէալներով: մեծցաւ եւ ուռճացաւ՝ աշխարհի հինգ ցամաքամասերու 26 երկիրներու մէջ ծնունդ տալով 110 մասնաճիւղերու:

Գեղարուեստական յայտագիրը սկսաւ «Հայ ենք մենք» եւ բարի գալուստի խմբերգներով՝ ներկայացուած գայլիկներու կողմէ: Ապա, Սերի Առաքելեան դաշնամուրի վրայ նուագեց Արամ Խաչատուրեանէն երաժշտական կտոր մը, Մարալ Սեւերեկեան ասմունքեց «Հայոց յեզուն», Արէն Սեթիկեան ջութակի վրայ նուագեց «Ազգ փառապան»ը, Ալին Հարենցեան ասմունքեց «Ուխտ Արարատի»ն, Մարին Գաթգեան մենբեգեց «Մենք ենք մեր սարերը», Սերժ Պոյաճեան ջութակի վրայ նուագեց «Սարգարապատ»ը, Միրեյա Խալիլ ասմունքեց «Մասունցիների պարը» եւ Ռիթա Մահսէրէճեան դաշնամուրի վրայ նուագեց Խաչատուրեանէն այլ կտոր մը: Զեռնարկը ձոխացուցին կակուղ թաթիկները, գայլիկներն ու սկստաները՝ գեղեցիկ պարերով, բուրգերով եւ խմբային երգերով:



Հետաքրքրական էին Հ.Մ.Ը.Մ.ի Դամասկոսի մասնաճիւղին պատմական նկարները՝ հիմնադրութենէն մինչեւ օրս: Դալար Հարենցեանի պատրաստութեամբ, նկարները ցուցադրուեցան յատուկ տեսերիզով:

Օրուան պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուկ Քէօշկէրեան: Ան ամփոփ գիծերով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի պատմականը՝ շեշտելով միութեան դաստիարակիչ դերը: Ան շեշտեց, որ այսօր 26 հազարի կը հասնի թիւը Հ.Մ.Ը.Մ.ի աշխարհասփիւռ մեծ ընտանիքի անդամներուն, որոնք կը գոհաբերեն իրենց անձը՝ բարձր բունելու համար այն դրօշը, որ իրենց աւանդ ձգուած է միութեան հիմնադիրներուն կողմէ՝ իբրեւ նահատակներու ձեռքէն փոխանցուած անմար ջահ:

Տեղի ունեցաւ յուշանուէրներու բաշխում՝ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ երկար տարիներ ծառայած 14 եղբայրներու, որոնք «կամաւոր բանակ»ի զինուոր եղած են եւ նուիրումով ծառայած են միութեան մարզական թէ՛ սկստական շարքերուն:

Զեռնարկը փակուեցաւ «Յառաջ, նահատակ» քայլերգով՝ Հ.Մ.Ը.Մ.ի սկստաներու եւ տօնակատարութեան ներկաներու երգեցողութեամբ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՂՏԱՏԻ ՄԱՍՆԱԾԻԴԻՆ ՀՐԶԱՆԱՅԻՆ 36-ՐԴ ՄԱՐԶԱՀԱՆԴԵՍԸ

ՆՈՒԻՐՈՒԱԾ՝ ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ Հ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
100-ԱՄԵԱԿԻ ԶՈՅԳ ՏԱՐԵԴԱՐՁՆԵՐՈՒՆ

Անիթա
Իշխանեան-Թովմասեան
ՊԱՐՏՍՏ

6-9 Սեպտեմբեր 2018-ին, Հ.Մ.-Ը.Մ.Ի Պաղտատի մասնաճիւղը կազմակերպեց Շրջանային իր 36-րդ մարզահանդէսը, նուիրուած՝ միութեան եւ Հայաստանի Հանրապետութեան հիմնադրութեան 100-ամեակի զոյգ տարեդարձներուն:

Մարզահանդէսին իրենց մասնակցութիւնը բերին Իրաքի հայաքնակ բոլոր քաղաքներէն՝ Զախոյէն, Էրպիլէն,

Աւզրուկէն, Քերբուկէն եւ Հաւրէզքէն աւելի քան 100 մարզիկ-մարզիկուհիներ, առանց հաշուելու Պաղտատի խումբերն ու սկաուտները:

Մարզահանդէսին բացման հանդիսութեան, 6 Սեպտեմբերին, ներկայ գտնուեցան Պաղտատի Հայոց Առաջնորդ Աւագ Արք. Ասատուրեան, Իրաքի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Կարէն Գրիգորեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներ, քոյր միութիւններու ներկայացուցիչ-

ներ, ծնողներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ հոծ թիւով բազմութիւն մը:

Բացումը կատարուեցաւ Նարեկ Ա. Քհնյ. Իշխանեանի «Տէրունական» աղօթքով, որմէ ետք ներկաները վարկեան մը յոտնկայս լուծեամբ յարգեցին յիշատակը մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.-Ը.Մ.ականներուն:

Բացման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.-Ը.Մ.Ի Պաղտատի մասնաճիւղի քարտուղար եղբ. Վարդան Ս. Սարգիսեան: Յաջորդեց դրօշակի արարողութիւնը: Իրաքի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգներուն հետ բարձրացան երեքին դրօշները՝ արցունքի կաթիլներ հոսեցնելով ներկաներու այտերէն:

Դրօշակի կայմը կը ներկայացնէր Պաղտատի Առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, Մարդարայատի յուշարձանին զանգերը եւ Հ.Մ.-Ը.Մ.Ի վահանը:

Դրօշակի արարողութենէն ետք, նըրազով եւ հանդիսաւոր տողանցքով դաշտ մուտք գործեցին մարզախաղերուն մասնակից մարզիկներն ու մարզիկուհիները: Տողանցքը առաջնորդեց դրօշակակիրներու խումբը, որուն հետեւեցան Հ.Մ.Ը.Մ.Ի Պաղտատի մասնաճիւղին սկաուտական շարքերն ու մար-





զական խումբերը՝ իրենց քաղաքներուն անունները կրող ցուցանակներով:

Այնուհետեւ, մասնաճիւղին վարչութեան խօսքը արտասանեց Սկաուտ-Խորհուրդի ատենապետ, մասնաճիւղի ընդհանուր խմբապետ եղբ. Բաֆֆի Թովմասեան: Ան բարի գալուստ մաղթեց Իրաքի զանազան քաղաքներէն ժամանած պատուիրակութիւններուն եւ օրուան պատգամաբեր, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին, որ այս առիթով Լիբանանէն ժամանած էր Պաղտատ:

Իր խօսքին մէջ, եղբ. Թովմասեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի հայապահպան դերը գաղութին մէջ: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը անցնող տասնամեակներուն հսկայական գործ կատարեց նորահաս սերունդներուն մարզական ոգի, հայեցի եւ հոգեւոր առողջ դաստիարակութիւն փոխանցելու համար: Եղբ. Թովմասեան յատուկ շնորհակալութիւն յայտնեց ծնողներուն, որոնք իրենց զաւակները Հ.Մ.Ը.Մ.ին կը վստահին, որպէսզի անոնք դառնան տիպար քաղաքացիներ ու լաւ հայեր, պահպանելով իրենց լեզուն, մշակոյթը, ազգային նկարագիրը եւ հայկական օրհնեալ օճախը:

Օրուան զեղարուեստական յայտագիրը եղաւ բաւական հարուստ: Քայլիկները ներկայացուցին արտասանութիւններ եւ երգեր, մոկլիները՝ պարեր եւ

մարզական ցուցադրութիւններ: Տեղի ունեցաւ 100-ամեակի տեսանիւթի ցուցադրութիւն, որուն յաջորդեց ջահավառութիւն: 100-ամեակի ջահ բոցավառեցին վեթերան Հ.Մ.Ը.Մ.ականներ եղբ. Յակոբ Թիւֆէնկճեան, քոյր Սոնա Իշխանեան-Սարոյեան, նոր սերունդէն գայլիկ Արիս Մինասեան եւ միջին ու հարաւային Իրաքի թենիսի ախոյեան՝ 10-ամեայ քոյր Շողեր Թովմասեան:

Մարզահանդէսին փակման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան՝ բնաբան ունենալով «Ազքատ եկայ, բայց հարուստ կը վերադառնամ»:

Իր խօսքին աւարտին, եղբ. Մկրտիչեան մասնաճիւղին կողմէ պատրաստուած եւ 100-ամեակի յատուկ յուշանուէրները յանձնեց ներկայ պատուոյ հիւրերուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պաղտատի վեթե-

րան քոյրերուն եւ եղբայրներուն: Հուսկ, մարզահանդէսը փակուեցաւ «Յառաջ, նահատակ» քայլերգով:

ԱՅՑՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարզահանդէսի մրցումներուն երկրորդ օրը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը այցելեց Ազգային Առաջնորդարան եւ տեսակցութիւն մը ունեցաւ Առաջնորդ Աւագ Արք. Ասատուրեանին եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան անդամներուն հետ:

Նոյն օրը, եղբ. Մկրտիչեան հանդիպում մը ունեցաւ մարզահանդէսին մասնակցութեան համար Իրաքի զանազան շրջաններէն ժամանած մարզիկներու եւ սկաուտներու հետ: Ան բոլորին թելադրեց անսահման նուիրումով եւ անհաճախնդիր կերպով ծառայել բոլորին, մայրենի լեզուն եւ մշակոյթը վառ պահելով Իրաքի ամբողջ տարածքին:

Յաջորդ օր, եղբ. Մկրտիչեան այցելեց Հայաստանի Հանրապետութեան դեսպանատուն եւ մտերմիկ զրոյց մը ունեցաւ դեսպան Կարէն Գրիգորեանին հետ:

Յետմիջօրէին, եղբ. Մկրտիչեան այցելեց Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան կեդրոն, ընկերակցութեամբ մասնաճիւղի վարչութեան անդամներուն: Ան այցելեց նաեւ Պաղտատի Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոն եւ հանդիպում մը ունեցաւ վարչութեան հետ:

Երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրո-





նական Վարչութեան ատենապետը ներկայ գտնուեցաւ Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակին նուիրուած գծաբոլորեան ցուցահանդէսին, որ տեղի ունեցաւ մարզական փակ սրահին մէջ: Յուզահանդէսին աշխատանքները ընթացք առած էին մասնաճիւղին վարչութեան նախաձեռնութեամբ, ամրան շրջանին, Անդրանիկ Օհաննէսեանի գլխաւորութեամբ, որ նկարչութեան յատուկ դասեր տուած էր արուեստով հետաքրքրուած խումբ մը տղոց եւ աղջիկներու:

Ազգային Կեդրոնական Վարչութիւնը, որուն շնորհակալ պէտք է ըլլալ անպաման: Շնորհակալութեան խօսք նաեւ մասնաճիւղի տիկնանց յանձնախումբին, որ չորս օր հիւրասիրեց երկրին զանազան շրջաններէն ժամանած խումբերը:

Վերջապէս, երախտիքի խօսք՝ մարզական յանձնախումբին, որ ժրջան աշխատանքով լաւապէս կազմակերպեց Հ.Մ.Ը.Մ.-ի եւ Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակին նուիրուած այս մարզախաղերն ու մարզահանդէսը:

**ՄԱՐԶԱՀԱՆԴԵՍԻՆ
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՓԱԿՈՒՄԸ**

Երեք օրուան մրցումներէ ետք, Շաբաթ, 8 Սեպտեմբերի երեկոյեան տեղի ունեցաւ 36-րդ մարզահանդէսին փակումը: Այս առիթով կատարուեցաւ ախոյեան խումբերու եւ մրցանակակիր մարզիկներու բաժակներու եւ մետալներու տուչութիւն:

Հանդիսութեան պաշտօնական բաժինին յաջորդեց 100-ամեակի խրախմբանքն ու տօնախմբութիւնը՝ Լիբանանէն ժամանած երգիչ Յակոբ Մկրտիչեանի հետ:

Անմոռանալի երեկոյէն ետք, յաջորդ օր դժուար եղաւ ներկաներու բաժանումը իրարմէ: Մխիթարութիւնը, սակայն, եղաւ այն, որ յառաջիկայ տարի, անգամ մը եւս իրարու տեսնելու առիթը պիտի ստեղծուի Շրջանային 38-րդ մարզահանդէսին:

Կ'արժէ նշել, որ մարզահանդէսին բոլոր ծախսերը յանձն առաւ Պաղտատի





100-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԲՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ՔՈՒԷՅԹԻ ՄԷՋ

Թղթակից
ՔՈՒԷՅԹ

Հ ով անաւորութեամբ Քուէյթի եւ շրջակայից թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեանի, նախագահութեամբ տէր եւ տիկին Կիրակոս Գուլումճեաններուն, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյ-

թի մասնաճիւղի վարչութեան, Ուրբաթ, 16 Նոյեմբեր 2018-ին, Քուէյթի մէջ հանդիսաւոր կերպով նշուեցաւ միութեան պանծարի 100-ամեակը, ներկայութեամբ Հայաստանի Հանրապետութեան լիազօր եւ արտակարգ դեսպան Սարմէն Պաղտասարեանի, դեսպանատան Ա. քարտուղար եւ հիւպատոս Վարդգէս Յովսէփեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վաչէ Նա-

ճարեանի, Քուէյթի ազգային մարմիններու ներկայացուցիչներու, Հ.Մ.Ը.Մ.ականներու եւ համակիրներու հոծ բազմութեան մը:

Հանդիսութեան բացման խօսքը արտասանեցին քոյր Ալինա Քէօզկէրեան եւ եղբ. Շանթ Թադոյեան: Հ.Մ.Ը.Մ.ի Քուէյթի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սիմոն Օզճեան ներկայացուց վարչութեան խօսքը, որուն աւարտին՝ տէր եւ տիկին Կիրակոս Գուլումճեանները բեմ հրաւիրելով կատարեց նախագահական պաշտօնի տուչութիւն:

Այս առիթով իր սրտի խօսքը արտասանեց սոնակատարութեան նախագահ Կիրակոս Գուլումճեան: Օրուան պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վաչէ Նաճարեան:

Սկաուտները ներկայացուցին գեղեցկօրէն պատրաստուած դեղարուեստական յայտագիր մը: Նախ, կակուղ թաթիկի եւ միաստղի անդամները հանդէս եկան խմբերգներով՝ իրենց մանկական թոթովանքին շողախելով ազգային ոգին: Արենոյչները, իրենց կարգին, ներկայացուցին լաւապէս պատրաստուած չափական պարեր: Սկաուտները



մեծ հմտութեամբ եւ ճկունութեամբ բուրգեր կազմեցին եւ սկսուտական բարեւոյ մը ներկաները ողջունեցին:

Տօնակատարութեան ընթացքին, իրենց երկարամեայ ծառայութեան համար, պարգևատրուեցան նախկին Սկսուտ-Խորհուրդի, խմբապետական կազմի, ինչպէս նաեւ Մարզական Խորհուրդի անդամներ: Միութեան «Մառաշուութեան» շքանշանին արժանացան վաստակաշատ եղբայրներ Անդրանիկ Գոճապաշեան եւ Քեռի Սարգիսեան:

Յոսնկայս յարգուեցաւ յիշատակը ննջեցեալ Հ.Մ.Լ.Մ.ականներուն: Երգման արարողութիւնը կատարուեցաւ՝ կնքահայրութեամբ Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վաչէ



Նաճարեանի: Արդիական ոճով եւ լուսաւորութեամբ ներկայացուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի համաշխարհային կառույցը: Ապա, Քուէյթի եւ Լիբանանի շեփորախումբէն խումբ մը սկսուտներու ուղեկցութեամբ, Հ.Մ.Լ.Մ.ի գայլիկներն ու արծուիկները, իբրեւ ապագայի լուսաւոր ջահեր, տողանցելով, սրահէն բարձրացան բեմ:

Տօնակատարութեան աւարտին, հայրական իր փոխանցեց տուաւ Քուէյթի եւ շրջակայից թեմի Առաջնորդ Մասիս Եպս. Զօպուեան:

Յայտագիրը աւարտեցաւ Հ.Մ.Լ.Մ.ի քայլերգով:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԸ ԳԱՀԻՐԷԻ ՄԷՁ

Թղթակից ԳԱՅԻՐԷ

Շաբաթ, 24 Նոյեմբեր 2018-ին, Գահիրէի «Ինթեր-քոնթինենթալ» պանդոկին մէջ, ճաշկերոյթ-պարահանդէսով եւ մեծ շուքով նշուեցան Հայաստանի Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի զոյգ հարիւրամեակները, հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեանի եւ Եգիպտոսի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան:

Ներկայ էին Եգիպտոսի մէջ Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Արմէն Մելքոնեան, Գահիրէի թեմական ժողովի եւ Աղեքսանդրիոյ քաղաքական ժողովի ատենապետները, ազգային երեսփոխաններ, Հայ Կաթողիկէ Համայնքի առաջնորդ Գրիգոր-Օգոստինոս Եպս. Գուսան, Հայ Առաքելական Թեմի ներկայացուցիչ՝ Դերենիկ Աբղ. Սահակեան, մարզական, մշակութային եւ բարեսիրական միութիւններու ատենապետներ եւ ներկայացուցիչներ, 20 նուիրատուներ, հիւրեր եւ աւելի քան 250 հայորդիներ:

Սեղաններուն վրայ գետեղուած էին նուռով զարդարուն զամբիւղներ, Հայաստանի Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի զինանշաններով:



Օրուան հանդիսավարն էր Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութեան անդամ քոյր Նանօր Գասարճեան:

Մինչեւ առաւօտեան առաջին ժամերը, հայերէն եւ օտարալեզու ճոխ երգերով երեկոն խանդավառեց յատկապէս Լիբանանէն հրաուիրուած երգիչ Յակոբ Մկրտիչեան:

Շրջանի ներկայացուցիչ Արմէն Մազյուլմեան եւ Հ.Մ.Ը.Մ.-«Արարատ»ի վարչութեան ատենապետ եղբ. Լեւոն Դերիբեան յաջորդաբար ողջունեցին ներկաները:

Մազյուլմեան իր խօսքին մէջ վերաւառ Առաջին Հանրապետութեան կա-






րեւորութիւնը, իբրեւ հիմք Խորհրդային Հայաստանին յաջորդած արդի անկախ Հայաստանին:

Իր կարգին, եղբ. Դեյվեան շնորհակալութիւն յայտնեց օրւան հովանաւորներուն, Հայաստանի դեսպանին եւ Թեմի Առաջնորդ Աշոտ Եպս. Մնացականեանին, ամփոփ կերպով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին դերը աշխարհի գանազան գաղութներուն մէջ, բարձր պահելով «Բարձրացի՛ր»

բարձրացուր» նշանաբանը:

Մեծապէս գնահատելի էր ակումբի երիտասարդներու բոլորանուէր մասնակցութիւնը կազմակերպչական աշխատանքներուն եւ ձեռք բերուած յաջողութեան:

Հանդիսութեան աւարտին հատուեցաւ հարիւրամեակի կարկանդակը եւ հովանաւորներու հետ առնուեցան յիշատակի նկարներ:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controlled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



*Feel at home,
away from home...*

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am

Reservations

JUNDOVICKEN ZANDS FRANS



ՀՈՎԱՆԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ
ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՊԱՏՐԻԱՐՔԻՆ՝

Հ.Մ.Ը.Մ.Ի
100-ԱՄԵԱԿԻ
ՓԱՌԱՇՈՒՔ
ՏՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԷՋ

Թղթակից
ԵՐՈՒՍԱՂԵՄ



ՈՎԱՆԱԼՈՐՈՒԹԵԱՄԲ
ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Հայոց
Նուրհան Արք. Մանուկեան
Պատրիարքին, նախագահութեամբ Պատրիարքութեան լուսարարապետ Սեւան

Արք. Ղարիպեանի եւ կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Երուսաղէմի վարչութեան, Ուրբաթ, 16 Նոյեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 7.30-ին, Ժառանգաւորաց վարժարանի ընծայարանի սրահին մէջ, մեծ շուքով նշուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 100-ամեակը:
Հանդիսութիւնը սկիզբ առաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 11-րդ ընդհանուր

բանակումի խորուկահանդէսներու լաւագոյն յայտագիրը հանդիսացող, Հ.Մ.Ը.Մ.Ի Աւստրալիոյ շրջանի ներկայացուցած շուքի խաղերու պատկերով, որ կը ներկայացնէր միութեան հիմնադրութիւնը եւ 100-ամեայ ուղին: Ապա, տեղի ունեցաւ 100-ամեակի ջահափառութիւն, ձեռամբ մասնաճիւղի երէց անդամ եղբ. Վիգէն Գրիգորեանի եւ իր



Թոռնուհիին: Ջահալառութեան յաջորդեց եօթը նորընծաներու խոստման արարողութիւն, ներկայութեամբ եւ մասնակցութեամբ մասնաճիւղի արիներու եւ արենոյճներու:

Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերդներու երգեցողութենէն ետք, մասնաճիւղի ատենապետուհի քոյր Նոյեմի Նալպանտեան արտասանեց բացման խօսքը: Ապա, բեմ բաժրացաւ քոյր Սօսէ Գրիգորեան եւ կատարեց «Սարգարապատ» երգը:

Հ.Յ.Դ. Երուսաղէմի կոմիտէութեան խօսքը փոխանցեց Սերոբ Սահակեան: Խօսքէն ետք, քոյր Անժելա Տիքպիքեան ասմունքեց Պարոյր Սեւակի «Ապրել» բանաստեղծութիւնը:

Օրուան հանդիսավարներն էին եղբ. Յարութ Պաղամեան եւ քոյր Սեւանայ Հէքիմեան:

100-ամեակի պատգամը փոխանցեց եղբ. Միհրան Տէր Մաթոսեան: Ան խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի դադափարախօսութեան, գաճն առաջնորդող արժէքներուն եւ նպատակին մասին:

Այնուհետեւ, ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ պատրաստուած միութեան 100-ամեակի տեսերիզը: Եղբայրներ Յարութ Պաղամեան, Արօ Սահակեան եւ Զոհրապ Տէմիրճեան ներկայացուցին երկու երգ՝ «Վարդան Բախչեանի յիշատակին» եւ «Կեանքս հայրենիքիս»:

Այս աւելիով, մասնաճիւղին վարչու-



թիւնը Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի յուշանրէներով պատուեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը, Հայաստանի Հանրապետութեան պատուոյ հիւպատոսութիւնը, ժառանգաւորաց վարժարանը եւ ընծայարանի տեսչութիւնը, Սրբոց Թարգմանչաց վարժարանի տեսչութիւնն ու ուսուցչական կազմը, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ-ի Հայֆայի վարչութիւնը:

Հոսկ, Սեւան Արք. Ղարիպեանի փակման խօսքով եւ Տէրունական աղօթքով հանդիսութեան պաշտօնական բաժինը հասաւ աւարտին:

Յաջորդեցին 100-ամեակի կարկանդակին հատուածն ու հիւրասիրութիւնը:

Հանդիսութենէն ետք տեղի ունեցաւ ընթրիք՝ «Պուլըուրճի» ճաշարանին մէջ:





Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՒԻՒՆԸ ԵՐԵՒԱՆ

Պղբակից ԵՐԵՒԱՆ

Հայաստանում՝ հիմնականում Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի բոլոր անդամների ջանքերով, 19-ից 29-ը Յուլիա 2018, Երևանում, Բիւրականում եւ Կիւմրիում նշուեց մեր սիրելի կազմակերպութեան հիմնադրման 100-ամեակը եւ այդ յորեկանին նուիրուած 11-րդ համա-Հ.Մ.Ը.Մ-ական բանակումը: Բոլոր ձեռնարկները կայացան ամենաբարձր պետական մասշտաբով եւ մինչ այժմ ներգրաւուած սկաուտների եւ Հ.Մ.Ը.Մ-ական քոյրերի եւ եղբայրների ամենամեծ թուով 26 երկրներից:

Հետեւաբար, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի Կենտրոնական Վարչութիւնն որոշեց Նոյեմբերի 18, 2018-ին, Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրման 100-ամեակը նշել ընկերային միջնորդութեամբ:

Առիթը պատեհ համարելով որոշուեց նաեւ աստիճաններ շնորհել Ա. կարգի գործնական եւ տեսական փուլերը յաջողութեամբ յաղթահարած սկաուտներին:

Հ.Մ.Ը.Մ-ի «Մառաշտ» շքանշանով Հ.Մ.Ը.Մ-



Հ.Ա.Ս.Կ-ի Կենտրոնական Վարչութիւնը պարգեւատրեց եղբ. Հրաչեայ Շմաւոնեանին:

Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան որոշմամբ հայրենիքում Հ.Մ.Ը.Մ-ի վերահիմնադրման ակունքներում կանգնած եւ մինչ օրս իր անվերապահ ծառայութիւնն մատուցող եղբ. Մանուկ Մանուկեանին՝ շնորհուեց «Արտակարգ» պատուանշան:

Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրոնական Վարչութեան որոշմամբ՝ յետ-նահատակութեան եղբ. Վարդան Բախչեանը

պարգեւատրուեց «Արժանեաց» շքանշանով:

Պաշտօնական բաժնից յետոյ միջոցառումը շարունակուեց ներկաների ուրախ եւ ազգային պարերով:





Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ԵՒ ՄՈՍԿՈՒԱՅԻ ՀՐԶԱՆԻ 10-ԱՄԵԱԿԻ ՃԱՀԿԵՐՈՅԹ

Թղթակից ՄՈՍԿՈՒԱ

2018 թուականի նոյեմբերի 16-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Մոսկովայի մասնաճիւղի վարչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշկերոյթ՝ նուիրուած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան 100-ամեայ, ինչպէս նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի Մոսկովայի մասնաճիւղի 10-ամեայ խորհրդանշական տարեդարձին: Ծաշկերոյթը սկսուեց Քահանայի օրհնանքով եւ շնորհաւորական խօսքով, այնուհետեւ մեկնարկեց ազգային, մշակութային տարաբնոյթ համարներով յագեցած երեկոյի ծրագիրը: Կային հրաւիրեալներ, որոնց թուում էին Հ.Մ.Ը.Մ-ի Կենտրո-



նական Վարչութեան անդամ եղբարացաւ Եսայեանը, Հայ Դատի Ռուսատանեան գրասենեակի տնօրէն՝ Ներսէս Ներսէսեանը, Հ.Յ.Դ. Ռուսաստանեան կառույցի Պատասխանատու Մարմինի եւ կոմիտէի ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ Ռուսաստանի Դաշնութեան տարբեր շրջանների հայկական համայնքների ներկայացուցիչներ: Հիւրերի ընդհանուր թիւը կազմում էր մօտաւորապէս 220 հոգի:

Երեկոն խորհրդանշուեց Մոսկովայի, Մերձմոսկովեան շրջանների եւ Ռուսաստանի Դաշնութեան այլ շրջաններից ժամանած 48 հայ սկաւտանների երգման հանդիսաւոր արարողութեամբ: Նշենք, որ Հ.Մ.Ը.Մ-ի Մոսկովայի մասնաճիւղի պատմութեան



մէջ միջոցառումը աննախադէպ էր իր տարողութեամբ: Հիւրերը տպաւորուած էին միջոցառման ծրագրով եւ ստեղծուած ազգային, հայրենական մըթնոյրատով:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌ-Ք ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՄՆԵՐՈՒՄՆ ՆՈՒՐՈՒԹՄԸ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ

Թղթակից ՊԸՐՊԵՆՔ

ՀՄ.Ը.Մ.Ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն բացումը կատարեց Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն նուիրուած երիտասարդական խորհրդաժողովով մը, որ տեղի ունեցաւ Շարաթ, 23 Յունիս 2018-ին, «Վուտպըրի» համալսարանի «Ֆլեյշըր Ճոնզ» սրահին մէջ:

Խորհրդաժողովին ներկայ գտնուեցան համայնքային կազմակերպութիւններու ղեկավարներ, զանազան մարզերու մասնագէտներ, քաղաքական պաշտօնատարներ, ինչպէս նաեւ հարիւրաւոր երիտասարդներ, որոնք ամբողջ օր մը քննարկեցին ընդհանրապէս երիտասարդութեան եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.Ի-ին, Հայաստանին եւ հայ համայնքին առնչուող հարցեր:

Խորհրդաժողովին առաջին նիստը՝ «Ապագան զօրաշարժի ենթարկել. դատի մը ջատագովումը՝ ժողովրդային ջանքերով» խորագիրով, իրեւել համադրող ունէր Ազգ. Շամլեան վարժարանի տնօրէն դոկտ. Թալին Քարկոտորեանը: Քննարկումին մասնակցեցան Ճոզէֆ Քասքանեան (Արեւմտեան Մ. Նահանգներու ՀԵՂ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ), Վարանդ Աւանէսեան (Հ.Մ.Ը.Մ.Ի երիտասարդական յանձնախումբի հիմնադիրներէն), Մհեր Խաչատուրի («Միացեալ



Հայեր» կազմակերպութեան հիմնադիրներէն), Ռապըթ Աղավերդեան («Առողջութեան կամուրջ» կազմակերպութեան նախագահ) եւ Հռիփսիմէ Բիազեան (Համահայկական Ուսանողական Միութեան վարչութեան խորհրդատու):

Քննարկումին մասնակիցները շեշտեցին զանազան ծրագիրներու իրականացման մէջ երիտասարդութեան գործօն մասնակցութիւնը ապահովելու կարեւորութիւնը՝ նշելով, որ նոյնիսկ ամէնէն բազմազբաղ անձերը կրնան իրենց ներդրումը ունենալ համայնքի բարգաւաճման ջանքերուն, օրինակներ բերելով իրենց կազմակերպութիւններու փորձառութիւններէն:

«Ապագայի տեսլականը. երիտասարդութիւն, քաղաքականութիւն եւ ուժ» խորագիրով երկրորդ քննարկումին մասնակցեցան Քայլֆորնիոյ Նահանգային Ծերակոյտի անդամ Էնթրի Փորթանթինօ եւ Կլեմտէյլ քաղաքի քարտուղար Արտաշէս Քասախեան: Նիւթին համադրողն էր Արեւմտեան Մ. Նահանգներու Հայ Դատի յանձնախումբի վարչութեան անդամ Անահիտ Օշական: Անոնք ներկաներուն հետ քննեցին քաղաքական կեանքի ծալքերը, ինչպէս նաեւ երիտասարդութեան մասնակցութեան զանազան կարելիութիւնները՝ դարձեալ իրենց անձնական փորձառութիւններէն հետաքրքրական օրինակներ վկայակոչելով:

Ապա տեղի ունեցաւ ճաշի դադար, որմէ ետք սկսաւ երրորդ նիստը՝ «Ապագայի հզօրացում. դերակատարութիւնը՝ աւելի՛ հզօր Հայաստան մը ստեղծելու ջանքերուն մէջ» խորագիրով:



Այս քննարկումին հեռակապով իր մասնակցությունը բերաւ Հայաստանի Սփիւռքի նախարար Մխիթար Հայրապետեան, որ նախ պատասխանեց իրեն ուղղուած կարգ մը հարցումներու, որոնք կեդրոնացած էին Հայաստանի ապագային մէջ Սփիւռքի դերակատարութեան վրայ:

Նախարարը շնորհակալութիւն յայտնեց Սփիւռքի ցուցաբերած զօրակցութեան՝ Հայաստանի մէջ տեղի ունեցած խաղաղ իշխանափոխութեան, եւ վստահեցուց. «Երիտասարդ ենք, խանդավառ ենք եւ խենթ ենք, ու վերադարձ չկայ»:

Քննարկումին իրենց մասնակցութիւնը բերին նաեւ «Սօսէի եւ Ալէնի ժառանգութեան» հիմնարկի հիմնադիր Վաչէ Թոմասեան եւ Հայաստանի գիւղական շրջաններու մէջ կրթական կարելիութիւններ մատչելի դարձնող «Հիտըն Ռոտ» կազմակերպութեան համայնքային յարաբերութիւններու համակարգող Մարկարիթա Պաղտասարեան: Նիստին համադրողն էր «Սթարք» խմբակի հիմնադիր եւ Արեւմտեան Մ. Նահանգներու Հայ Դատի յանձնախումբի նախկին գործադիր վարիչ Էլէն Ասատրեան:



Խորհրդաժողովին վերջին քննարկումը նուիրուած էր լրատուամիջոցներու եւ ընկերային ցանցերու դերակատարութեան: Քննարկումը վարեցին «Նիւ Միչիկըն Միտիս»-ի հիմնադիր եւ վարիչ Հայկ Օշական եւ «Էմի» մրցանակի թեկնածու դարձած՝ Լոս Անճելըսի KTLA-5 պատկերասփիւռի կայանի լրագրող Էլինա Աբովեան: Անոնք ներկայացուցին արդի լրատուութեան մարտահրաւէրներն ու առաւելութիւնները՝ շեշտելով պատասխանատու լրատուութիւն ներկայացնելու կենսական կարեւորութիւնը:

Հ.Մ.Լ.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԸ ՔԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԾԵՐԱԿՈՅՏԻՆ ՄԷՋ

Թղթակից
ՍԱՔՐԱՍԵՆԹՕ

Հինգշաբթի, 9 Օգոստոս 2018-ին, ծերակուտական էնթրնի Փորթմանթիմո Քալիֆորնիոյ նահանգային ծերակոյտին մէջ հետեւեալ ձեւով ներկայացուց 100-ամեայ Հ.Մ.Լ.Մ.ը:

«Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ Հ.Մ.Լ.Մ.ը հիմնուած է 1918-ին եւ մինչեւ օրս դաստիարակած է աւելի քան 800 հազար պատանիներ աշխարհի հինգ ցամաքամասերուն մէջ:

«2018 թուականը յատկանշական է այս կազմակերպութեան համար, որովհետեւ ան կը գուզադիպի անոր հիմնադրութեան 100-ամեակին:

«Հ.Մ.Լ.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու շրջանի առաջին մասնաճիւղը հիմնուեցաւ 1968-ին, Լոս



Անճելըսի մէջ: Այսօր, Հ.Մ.Լ.Մ.ը դարձած է Միացեալ Նահանգներու մարզական եւ սկստական հայկական մեծագոյն կազմակերպութիւնը, որ կը համախմբէ ամերիկահայ երիտասարդութիւնը՝ անոր փոխանցելով մարմնակրթական եւ ընկերային առողջ դաստիարակութիւն, ինչ որ կ'ամրապնդէ նոր սերունդին կապերը հայկական ժառանգութեան եւ մշակոյթին հետ:

«Հ.Մ.Լ.Մ.ի սկստանները ամէն տարի, Հայոց Յեղապանութեան ոգեկոչման օրը, Քալիֆորնիոյ նահանգային խորհրդարանին մէջ դրօշակի արարողութիւն կը կատարեն:

Այս կազմակերպութիւնը անցնող 100-ամեակին միշտ կառչած մնաց «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին,



պատրաստելով տիպար քաղաքացիներ, կերտելով անոնց անզուգական նկարագիրը»:

Փորթանթիմո իր խօսքին մէջ դրուատեց «Հրաշք» նախաձեռնութիւնը եւ հաստատեց. «Իրեն եւ համընդհանուր կերպով եւ համագաղութային երիտասարդական կազմակերպութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ հիմնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի «Հրաշք» միաւորը, որ կը համախմբէ յատուկ կարիքներ ունեցող մարզիկներ, որոնք իրենց մասնակցութիւնը կը բերեն զանազան մարզախաղերու: Անձնագէտ ներկայ գտնուեցայ իրենց խաղերու փակման հանդիսութեան եւ ակնատեսը դարձայ տողանցող 30 կարիքաւոր երեխաներու եւ ծնողներու, որոնք ցնծութեան եւ մանաւանդ յուզումի ալիք մը ստեղծեցին ներկաներու հոգիներուն մէջ»:

Իր խօսքին աւարտին, ծերակուտական էնթընի Փորթանթիմո ներկաներուն ներկայացուց եւ ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանը, Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Արմանտ Գիլիեանը, Ուոլնամթ Քրիքի «Կարս» մասնաճիւղի վարչութեանէն եղբ. Արամազդ Մասիսը եւ Հիւսիսային Քալիֆորնիոյ մասնաճիւղերէն այդ օր ներկայ սկսողները: Ապա, Փորթանթիմո անոնց նուիրեց Քալիֆորնիոյ նահանգային ծերակուտային հոգակազմը, որ կը կրէ ծերակուտական էնթընի Փորթանթիմոյի, Քեւըն Տէ Լէոնի եւ Աքոթ Ուիլքի ստորագրութիւնները:

Ամերիկահայութեան հետ սերտ յարաբերութիւններ ունեցող ծերակուտական Փորթանթիմոյի Հ.Մ.Ը.Մ.ի ներկայացումը ծափողջոյններով ընդունուեցաւ ներկաներուն կողմէ:



**Թղթակից
ԿԼԵՆՏԷՅԼ**

Ուրբաթ, 14 Սեպտեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Կլենտէյլի կեդրոնական հանրային գրադարանին մէջ բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանային իրերու երկշաբաթեայ ցուցահանդէսին:

«Բարձրացիր» ընդհանուր խորագիրը կրող ցուցահանդէսը կազմակերպուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեակի ձեռնարկներու ծիրէն ներս: Թէ՛ ցուցադրութեան դրուած նիւթերուն ընտրութիւնը (լուսանկարներ, մարզական եւ սկսողական պատմական արժէք ունեցող իրեր) եւ թէ՛ անոնց ցուցադրման գեղագիտական դասաւորումը կատարած էին հանրածանօթ արուեստագէտներ ու այս բնագաւառի մասնագէտներ Լեոն Փարեան, Հերի Որբերեան, Վահագն Թովմասեան, Մհեր Դաւիթեան, Արա եւ Անահիտ Օշական:

Ցուցահանդէսին բացման ներկայ եղան Հայց. Եկեղեցւոյ զոյգ թեմերու առաջնորդներ Մուշէղ Արք. Մարտիրոսեան եւ Յովնան Արք. Տէրտէրեան, Հայ Աւետարանական համայնքի ներկայացուցիչ վեր. Յովսէփ Կարապետեան, Կլենտէյլի քաղաքապետական խորհուրդի անդամներ՝ Վարդան Ղարապետեան, Փօլա Տրվայն եւ Արա Նաճարեան, ինչպէս նաեւ քոնկրէտականներու, նահանգային եւ տեղական պաշտօնատարներու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Դաւթեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի անդամ Կարօ Իսբէնձեան, ուղեկից եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան անդամներ, Նաւասարդեան խաղերու պատուոյ նախագահներ, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, վեթերան միութեանականներ եւ մարզիկներ (ոմանք շատոնց արդէն ալիհեր ու երբեմն ալ... գաւազանով), բայց մանաւանդ՝ խումբ մը դեռատի արի-արեւոյշներ, իրեն



Հ.Մ.Ը.Մ.Ի ԹԱՆՔԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՄ ԿԼԵՆՏԷՅԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

100-ամեայ այս կազմակերպութեան գործին շարունակակա-
նութիւնը փաստող վկաներ:

Գրադարանի անձնակազմէն Նիքի Ուինսլոյի բացման
խօսքէն ետք, Հ.Մ.Ը.Մ.Ի Լոս Անճելըսի մասնաճիւղի սկաուտ-
խմբապետ քոյր Թամար Ղարիպեան բարի գալուստ մաղթեց
ներկաներուն ու ապա վարեց յայտագիրը:

Քոյրը թուեց հարիւրամեակի ընթացքին ծրագրուած աշ-
խատանքները եւ յայտարարեց, որ փակման պաշտօնական
հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Կլենտէյլ Հայ սքուլի
սրահին մէջ:

Միացեալ աղօթքէ ետք, խօսք առին զոյգ Առաջնորդները:
Յովնան Արք. Տէրտէրեան իր սրտի խօսքին մէջ յայտնեց, թէ
տպաւորուած է օրուան հանդիսավար երիտասարդ Հ.Մ.-
Ը.Մ.ականով, որ իւրաքանչեւ ներկայացուցիչն է 100-ամեայ
այս միութեան: Ան նշեց,
որ իր ծնողները, որոնք
Ցեղասպանութենէն ետք
ծնած են, վայելած են
Հ.Մ.Ը.Մ.Ի դաստիարա-
կութիւնը, որուն նշանա-
բանը՝ «Բարձրացի՛ր-
բարձրացու՛ր»ը ներշնչու-
մի աղբիւր դարձած է յա-
ջորդական սերունդնե-
րու: Ան աւելցուց, որ
Հ.Մ.Ը.Մ.ը մեր աւան-
դութիւններուն տիրու-

թիւն ըրած է յարգանքով եւ անոր համար ալ ան արժանի է
պատիւի:

Իր կարգին, Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդգծեց Հ.Մ.-
Ը.Մ.Ի պատմութեան փառահեղ բնոյթը, շեշտեց յաջորդական
սերունդներու ազգային դաստիարակութիւն ջամբած ըլլալու
փաստը եւ դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ը մանուկներն ու երի-
տասարդները կրթած է Հայց. Եկեղեցւոյ նկատմամբ սիրով
եւ նուիրումով: Այս իմաստով ալ, շարունակեց ան, մենք կը
շարունակենք մեր գործակցութիւնը Հ.Մ.Ը.Մ.ին հետ, յա-
նուն ազգին եւ եկեղեցւոյ պայծառացման:

Օրուան հանդիսավարը այնուհետեւ բեմ հրաւիրեց տղթ-
Շահէ Ենիգոմշեանը: Ան իր անգլերէն խօսքին մէջ նշեց կարե-
ւորութիւնը Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակին, որ ցուցանիչն է այս
կազմակերպութեան կենսունակութեան: Այսօրուան յարա-



Photo By: Berjam ©



փոփոխել և արհեստագիտութեան հսկայաքայլ յառաջդիմութեան օրերուն, Ենիգոմշեան Հ.Մ.Ը.Մ.ը նմանցուց ամերիկեան երիտասարդական-սկառուտական բազմատեսակ առաքելութիւնները մէկ յարկի տակ համախմբող միութեան մը՝ այս անգամ հայկական միջավայրի մէջ: Ան դիտել տուաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքային առանցքը երիտասարդութիւնն է, որուն վրայ կ'աւելնայ կամաւոր աշխատանքի սկզբունքը:

Տոքթ. Ենիգոմշեան այս անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի դիմադրաւած մարտահրաւէրներուն: Ան ակնարկ մը նետեց միութեան պատմութեան վրայ, թէ ինչպիսի՞ դժուար հանգրուաններէ անցած է ան իր հիմնադրութենէն մինչեւ օրս: Արդարեւ, միութիւնը տեսած է տեղահանութիւն: Հայաստանի խորհրդայնացումէն ետք ան հարկադրաբար դուրս եկած է իր բնօրրանէն: Սփիւռքի մէջ զբաղած է ինքնակազմակերպումով: Հ.Մ.Ը.Մ.ը, շարունակեց ան, - 1989-էն ի վեր դարձեալ կը գործէ հայրենիքի եւ 26 երկիրներու մէջ. ան ունի 110 մասնաճիւղեր: Իսկ Մ. Նահանգներու մէջ, 1921-ին սկիզբ առած ներկայութիւնը վերջ գտաւ 1929-ի տնտեսական փլուզումի եւ այսպէ՛ս: Աշխարհամարտի պատճառով: Սակայն, 1968-ին, Լոս Անճելըսի մէջ ան ունեցաւ իր առաջին մասնաճիւղը եւ այսօր, Արեւմտեան Ամերիկայի տարածքին, Հ.Մ.Ը.Մ.ը ունի 19 մասնաճիւղեր, իսկ Արեւելեանի մէջ՝ 12:

Այս, Ենիգոմշեան անդրադարձաւ համայնքին մէջ Հ.Մ.Ը.Մ.ի ունեցած դերակատարութեան եւ այս յաջողութիւնը ան վերագրեց հաւաքական գործակցութեան ոգիին: Անցնող 100 տարիներուն Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ գործած, անդամակցած եւ շարքերէն անցած են շուրջ կէս միլիոն հոգի, սակայն անոր ամենամեծ յաջողութիւնը եղած է երիտասարդութիւնը արժէքային համակարգով դաստիարակելը, ինչ որ մեծագոյն բարիքը եղած է համայնքին համար:

Իր խօսքին վերջին բաժինով, բանախօսը ըսաւ, թէ աչքի առջեւ ունենալով միութեան 50 տարուան աշխատանքները համայնքի երիտասարդութեան հետ, կարելի է ամերիկեան դաշնակցային, նահանգային իշխանութիւններուն եւ Հ.Մ.Ը.Մ.ին միջեւ գործակցութիւն մը առաջարկել: - Լոս Անճելըսի

մէջ կառուցել մարզական-համայնքային կեդրոն մը, իր բոլոր յարմարութիւններով: այն հասկացողութեամբ, որ հողամասը տրամադրեն իշխանութիւնները, իսկ Հ.Մ.Ը.Մ.ը կառուցէ մարզական համայնքը: Ան լաւատեսութիւն եւ յոյս յայտնեց նման ծրագրի մը իրականացման համար:

Շրջանային Վարչութեան խօսքը անգլերէնով արտասանեց փոխ ատենապետ եղբ. Սաբո Կարապետեան: Ան շեշտեց 100-ամեակը պատշաճ շուքով նշելու Հ.Մ.Ը.Մ.ի յանձնառութիւնը, իբրեւ առանցք ունենալով «Բարձրացիր-բարձրացուր» նշանարանը: Ան ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.ի իւրաքանչեւ դերը, իբրեւ համայնքի տարբեր օղակները իրարու զօդող կազմակերպութիւն, Հայաստանի եւ Սփիւռքի բոլոր ծագերուն: Այս, ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ շնորհակալութիւն յայտնեց ցուցահանդէսը իրականութիւն դարձուցած արուեստագէտներուն:

Այնուհետեւ, ամփոփ խօսքեր արտասանեցին ցուցահանդէսը ձեւաւորած արուեստագէտներ Արա Օշական եւ Հերի Որբերեան, որոնք բացատրեցին, թէ ինչպէ՛ս մարզական, սկառուտական եւ այլ աշխատանքներու վերաբերող իրեր ու լուսանկարներ կարողացած են համադրել, որպէսզի գեղազիտական ձեւաւորումի ընդմէջէն ներկայացուի Հ.Մ.Ը.Մ.ի պատմութիւնը:

Ապացոյցը մեր չորս դին էր, Կլենտէյլի հանրային գրադարանին մէջ... Հայկ Դեմոյեանի կողմէ տրամադրուած լուսանկարներուն ընդմէջէն մեզի հետ «կը խօսէին» Պոլսոյ մէջ 1900-ականներու սկիզբները հիմնուած մարզական խումբերը՝ «Տորք», «Արաքս», «Վասպուրական»: Անոնց մարզիկները ներկայ էին իրենց գնդակներով եւ մինչեւ իսկ... պէյսպոլի բիրերով ու գնդակներով: Ներկայ էին եւ մեզի իրենց սիրանքները կը պատմէին 1912-ին Հեյսինքիի ողիմպիականին մասնակցած հայ մարզիկները: Հոն էին Հ.Մ.Ը.Մ.ի հրատարակութիւնները՝ Ծաւարչ Քրիսեանի խմբագրած «Մարմնամարզ»ը, հին, բայց ոչ հինցած սկառուտական իրերը՝ գօտիներ, «պէճ»եր, զարդասեղներ եւ շահուած բաժակներ: Պատին վրայէն մեզի հետ «կը խօսէին» 1929-ին Անգլիոյ միջազգային ճամպորիին մասնակից Ժիրայր Պէյլերեանի սկառուտական տարագն ու Հ.Մ.Ը.Մ.ի անդամատետրը: Անդին, սկառուտներու կողմէ կառուցուած էր «կախուած կամուրջ մը», իբրեւ ձեռքային աշխատանք: Ներսը, սենեակի մը մէջ, պատին վրայէն Հ.Մ.Ը.Մ.ի փառքին մասին մեզի «կը պատմէին» բազմաթիւ սերունդներ՝ սկսելով 101-ամեայ Յոլակ Յովսէփեանէն, անոր տարեկիցներ Սամուէլ Մկրտիչեանէն եւ Զաքար Չորպաճեանէն, հասնելով մինչեւ 1960-ականներու Ֆութպոլի աստղերէն Անդո Մալեանը, ու այսպէ՛ս պատանի մարզիկն ու արեւոյշը, իրենց գեղադիր, բայց մանաւանդ խօսուն լուսանկարներով:

Յայտնենք, որ այս իւրաքանչեւ ցուցահանդէսը բաց մնաց մինչեւ 30 Սեպտեմբեր 2018:



100-ԱՄԵԱԿԻ ՏՈՂԱՆՅՔ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆ ԿԼԵՆՏԵՅԼԻ ՄԷՋ

Թղթակից ԿԼԵՆՏԵՅԼ

Կիրակի, 16 Մեպտեմբեր 2018-ին, Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին առիթով, Կլենտեյթի մէջ տեղի ունեցաւ սկաուտական տողանցք եւ ժողովրդային փառատուն՝ երգ-երաժշտութեամբ, որ տեւեց մինչեւ երեկոյեան ժամը 7.30:

Տողանցքը սկսաւ կէսօրին, Կլենտեյթի հանրային գրադարանին դիմացի պուրակէն, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին առաջնորդութեամբ, ապա անցնելով Հարվըրտ-Պրանս-Գոլորատո փողոցներէն, վերադարձաւ գրադարանի կողքին գտնուող հանրային գրասպիտին: Հոն տեղադրուած էին կրպակ-վրաններ, որոնք կր վաճառէին յուշանուէրներ, գիրքեր, հայտնութեան եւ հայկականութեան առնչուող զանազան իրեր: Մէկ խօսքով, հայկականութեան միջնորդաւ մը կը տիրէր գրասպիտին մէջ:

Հոն, օրուան հանդիսավարներ դուրս. Սիւզի Օհանեան անդերէնով եւ Բարբէկ Պարսամեան իրենց բացման

խօսքին մէջ ողջունեցին ներկաները, բացատրեցին օրուան խորհուրդը եւ փառատունին նպատակը: Ապա, շեփորախումբը կատարեց սկաուտական «Ով հայ արի» քայլերգը, որմէ ետք Շրջանային խմբապետուհի քոյր Շարլին Գէօզարեանսի գլխաւորութեամբ տեղի ունեցաւ դրօշակի արարողութիւն:

Նուագուեցան Մ. Նահանգներու եւ Հայաստանի քայլերգները: Փառատունի կազմակերպիչ յանձնախումբին կողմէ խօսք առաւ եղբ. Կարօ Ղազարեան, որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ ծերունագարդ Հ.Մ.Ը.Մ-ական եղբ. Յուլի Յովսէփեան: Յայտնապէս յուզուած, ան

ողջունեց իր շատ սիրած կազմակերպութեան՝ Հ.Մ.Ը.Մ-ի հարիւրամեակը, մաղթեց, որ ներկայ արի-արեւոյշները վաղը դառնան այս կազմակերպութեան ղեկավարները եւ զայն առաջնորդեն նորանոր յաջողութիւններու:

Ներկաներուն ողջոյնի խօսք ուղղեց նաեւ Շրջանային Վարչութեան փոխատենագետ եղբ. Սազօ Կարապետեան, որ ընդգծեց ժողովուրդին եւ յատկապէս երիտասարդութեան ազգային դաստիարակութեան մէջ Հ.Մ.Ը.Մ-ի ըստանձնած դերակատարութիւնը:

Այնուհետեւ, գաղութի հանրածանօթ երգիչներ յաջորդաբար բեմ բարձրացան եւ ազգային-հայրենասիրական երգեր մեկնաբանեցին:

Ներկայ բազմութիւնը, յատկապէս յետմիջօրէի աւելի նպաստաւոր եղանակին, մեծ խանդավառութեամբ հետեւեցաւ բոլոր երգիչներու ելոյթներուն: Յարմարութեան օգտուելով, շատեր առիթը ունեցան այցելելու գրասպիտին կից գտնուող հանրային գրադարանը, ուր վայելեցին 100-ամեակի ցուցահանդէսը:





100-ԱՄԵԱԿԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀՔԵՂ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԿԼԵՆՏԵՅԻՆ ՄԷՋ

**Թղթակից
ԿԼԵՆՏՅՅԼ**

րոյի անդամներ Վիգէն Եագուպեան եւ Յակոբ Խաչերեան (օրուան բանախօս),

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Դաւթեան եւ Օշին Փիրումեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի անդամներ Կարօ Իսպէնճեան եւ Ռազմիկ Շիրինեան, «Նաւասարդեան» մարզախաղերու պատուոյ նախագահներ, «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական»ներ, ուղեկից կազմակերպութիւններու ներկայացուցիչներ, հրաւիրեալներ եւ մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականներ ու համակիրներ:

Կիրակի, 28 Հոկտեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 5-ին, Կլենտէյլ հայ սքուլի հանդիսասրահին մէջ մեծ շուքով տեղի ունեցաւ Արեւմտեան Մ. Նահանգներու մէջ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած բազմաթիւ նախաձեռնութիւններուն եզրափակիչ հանդիսութիւնը:

Հանդիսութեան ներկայ էին թեմի Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, նահանգային ծերակուտական էնթընի Փորթանթինօ, Լոս Անճելլոս գաւառի վերահսկիչ Քեթրին Պարճըր, Կլենտէյլի քաղաքապետ եւ խորհուրդի անդամներ Զարեհ Սինանեան, Փօլա Տրվին եւ Վարդան Ղարաբեան, Հ.Յ.Դ. Բիւ-



Հանդիսութիւնը սկսաւ դրօշակի արարողութեամբ, ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին եւ գլխաւորութեամբ Շրջանային խմբապետուհի քոյր Շարլին Գէօզալեանսի:

Մրահ մուտք գործեցին նաեւ դրօշները այն բոլոր երկիր-



նութենէն ետք մեր ժողովուրդի վերականգնումի կամքին: Այս հարիւրամեակը հանդիսացաւ պատուաբեր դարաշրջան մը եւ նոյն ոգիով կը թեւակոխենք նոր հարիւրամեակը, եզրափակեց Առաջնորդը եւ Աստուծոյ օրհնութիւնը հայցեց Հ.Մ.Ը.Մ-ին համար:

Ապա, Քեթրին Պարճըր բեմ բարձրանալով շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ-ը եւ դրուատեց երիտասարդութեան դաստիարակութեան մէջ անոր ունեցած մեծ դերը, յատկապէս հայաշատ Լոս Անճելըս գաւառին մէջ: Պարճըր այս առիթով պաշտօնական գնահատագիր մը յանձնեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեանին:

Այնուհետեւ, սրահին

մէջ ստեղծուեցաւ իւրայատուկ «մարզական» միջնորդութիւն, երբ մուտք գործեցին դեռատի մարմնամարզիկներ եւ սկաուտներ, որոնք բեմին վրայ ցուցադրեցին իրենց մարզական ճկունութիւնները՝ ընկերակցութեամբ պատանի մարզիկներու գնդակներու կշռոյթին:

Շրջանային Վարչութեան խօսքը

ներուն, ուր կը գործէ Հ.Մ.Ը.Մ-ը իր 110 մասնաճիւղերով: Շեփորախումբը կատարեց Մ. Նահանգներու, Հայաստանի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ հարիւրամեակի քայլերդները, սկաուտական պատիւներով:

Օրուան հանդիսավար, Հ.Մ.Ը.Մ-ի երիտասարդական բաժանմունքէն քոյր Սօսի Պեքարեան - Սեթի, իր բացման խօսքին մէջ ողջունեց ներկաները, ապա ընդգծեց Հ.Մ.Ը.Մ-ի բազմաշերտ դերը՝ աշխարհասփիւռ հայ երիտասարդութեան առողջ դաստիարակութեան մէջ: Խօսքին աւարտին, ան հրաւիրեց Առաջնորդը, իր սրտի խօսքը փոխանցելու:

Առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան նախ ողջունեց եւ գնահատեց Հ.Մ.Ը.Մ-ի աշխատանքը, որ ամբողջ 100 տարի կանգ չէ առած: Այդ աշխատանքը, - ըսաւ ան, - կանգ չառաւ Շաւարշ Քրիսեանի նահատակութեամբ, այլ՝ շարունակուեցաւ, ընդարձակուեցաւ եւ նոր մակարդակներ նուաճեց: Ան նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ-ի ծնունդը կարիքի մը արդիւնքն էր, ու այդ մէկը ցուցանիչն էր Ցեղասպա-

անգլերէնով փոխանցեց եղբ. Արմանտ Քրիլճեան: Ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի սկզբունքներուն՝ հայ երիտասարդները դաստիարակել ֆիզիքայէս եւ հոգեպէս, որպէսզի դառնան յանձնառու հայեր: Ան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը տարածուած էամբողջ հայկական աշխարհին մէջ: Այսօր, - շարունակեց ան, - մենք կը տօնախմբենք հարիւրամեակը աշխարհի չորս կողմը գործող մեր քոյրերուն ու եղբայրներուն հետ եւ ասիկա մեծ պատիւ է:

Ապա, եղբ. Արմանտ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի իրագործումներուն, ներառեալ չրջանին նորագոյն նախաձեռնութեան՝ «Հրաշք»ին եւ աւելցուց, թէ այս բոլորը մէկ օրուան մէջ չիրականացան, այլ՝ ամբողջ սերունդներու հետեւողական ու անհաշիւ զոհողութիւններով: Այս բոլորին մղիչ ուժը հանդիսացաւ միութեան նշանաբանը՝ «Բարձրացի՛ր բարձրացու՛ր»ը, որ իւրայատուկ մեծ ընտանիքի վերածած է մեր միութիւնը: Եզրափակելով, եղբ. Արմանտ Քրիլճեան անգամ մը եւս ողջունեց ներկաները հարիւրամեակի այս ձեռնարկին համար:

Շրջանային Վարչութեան խօսքին յաջորդեց «Արտակարգ» պատուանշանի տուգումները: Բեմ հրաւիրուեցաւ տասնամեակներով Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական շարժման մէջ մեծ դեր ունեցած եղբ. Վարուժան Միրզայեանը: Ան իր սկաուտական տարագով բեմ բարձրացաւ եւ ներկաներու գնահատական ծափահարութիւններով, միութեան երկարամեայ իր վաստակին առ ի գնահատանք, «Արտակարգ» պատուանշան ստացաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անգամ եղբայրներ Վիգէն Դաւթեանի եւ Օշին Փրլումեան կողմէ (եղբօր միութենական վաստակին մասին տեսնել էջ 70-71):

Յաջորդեց սահիկներով Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան ներկայացումը: Խումբ մը արի-արեւնոյններ, հայերէնով եւ անգլերէնով, փոխն ի փոխ, ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ-ի անցեալի





Ուլաբեր Անցեալէն Յաղթական Ապագայ Imphant Future Built Upon An Honorable Past



իրագործումները, հասնելով մինչև քա-
նի մը ամիս առաջ համա-Հ.Մ.Ը.Մ.ական
11-րդ ընդհանուր բանակումը, Հայաս-
տանի մէջ:

Հուսկ, բեմ հրաւիրուեցաւ օրուան
բանախօս եղբ. Յակոբ Խաչերեան՝ ման-
կութենէն ի վեր Հ.Մ.Ը.Մ.ական, ըս-
կառու, մարզիկ, վարչական եւ այժմ
Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ:

Ան իր խօսքը սկսաւ մանկութեան
յուշերէն, երբ առաջին անգամ գայլիկի
տարազով մուտք գործած էր Հ.Մ.Ը.Մ.ի
ակումբ, Հալէպի մէջ:

Եղբ. Խաչերեան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ի
անդամակցութեան իր յուշերը յար եւ
նման են սրահին մէջ հաւաքուածներու
մեծամասնութեան անգուգական այս
միութեան անդամակցութեան պատ-
մութեան: Միութիւն մը, որ դար մը ամ-
բողջ իր պատասխանատուութիւնը
նկատեց հայ մարդ կերտելը: Միութիւն
մը, որ իր հիմնադրութենէն մինչև յաղ-
թական տողանցքներ կատարելը ազատ
ու անկախ հայրենիքի մայրաքաղաք
Երևանի «Հանրապետութեան» հրա-
պարակին մէջ եւ բանակելը Բիւրականի
մէջ, կտրեց երկա՛ր ու տագնապայից
ճամբայ:

Ան շարունակեց ըսելով, որ Հ.Մ.-
Ը.Մ.ը կազմեց մարզական խումբեր,
սկառուական շարքեր ու հոն դաստիա-

րակեց հայ մանուկը, պատանին ու երի-
տասարդը թէ՛ մարզական եւ թէ՛ ազգա-
յին առողջ ոգիով: Ան շեշտեց, որ Հ.Մ.-
Ը.Մ.ի «սկառու ու արեւոյշը կամ գայ-
լիկն ու արծուիկը կամ երէցն ու պար-
մանուհին բնաւ չտողանցեցին կատարե-
լու համար սկառուական վարժութիւն,
այլ՝ կուռ շարքերով ու խրոխտ քայլե-
րով Սփիւռքի տարածքին ցիրուցան հայ
ժողովուրդի հարիւր հազարաւոր գա-
ւակներու մտքին, սրտին ու հոգիին մէջ
կենդանի պահեցին հայոց ազգային բա-
նակ ունենալու երազը»: Հ.Մ.Ը.Մ.ը
դարձաւ համահայկական կազմակեր-
պութիւն՝ բառին բուն իմաստով, սա-
կայն «այս համահայկականացումը ծա-
ռայեց մէկ ազգի գաղափարին առաւել
զարգացման ու կերտման: Այո՛, Հ.Մ.-
Ը.Մ.ը իր կառուցով, գործադաշտով եւ
առաջադրած նպատակներով լիովին
եղաւ հիմնական գործօններէն մէկը
մէկ ազգի գաղափարի շուրջ միաւոր-
ման», ընդգծեց ան:

Բանախօսը ապա ընդգծեց Հ.Մ.-
Ը.Մ.ի հայրենիք վերադառնալու հան-
գամանքը. «Վերադարձ հողին, հայրե-
նիքին, արմատներուն: Այնտեղ, ուրկէ
վտարանդի դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ը, Հա-
յաստանի Հանրապետութեան կերտիչ-
ներուն հետ, քաղաքական պայմաննե-
րու շրջադարձային փոփոխութիւննե-

րուն իրրեւ հետեւանք: Եւ պատահական
չէ, որ Հայաստանի Հանրապետութեան
եւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեայ յորեկանները
կը նոյնանան ժամանակի իմաստով:
Հայկական Պոլսոյ մէջ ստեղծուած
Հ.Մ.Ը.Մ.ը շուտով, նոյն տարին իսկ,
կ'արմատաւորուէր անկախ հայրենիքի
մէջ եւ անկէ կը հեռանար ակամայ,
խորհրդային իշխանութիւններու հաս-
տատման պատճառով: Դարձեալ ամէ-
նէն գերադասելի միջավայր վերադառ-
նալու համար, երբ հայրենիքը հազիւ
անկախացման գործընթացներ ցոյց կու
տար: Անմնացորդ կերպով հայրենիքին,
Արցախի ազատագրութեան դատին ծա-
ռայելու համար, առաջին Հ.Մ.-
Ը.Մ.ականներու արիւնը կը խառնուէր
Արցախեան ազատամարտին ինկած նա-
հատակներու արեան: Մինչ Սփիւռքի
մէջ կազմաւորուած Հ.Մ.Ը.Մ.ականը կը
փութար հասնելու Շուշիի ազատագ-
րութեան գործին եւ ապա հանգչելու
Եռաբլուրի մէջ հանգչող հայրենի Հ.Մ.-
Ը.Մ.ականի կողքին: Այսպէս էր դաստ-
իարակութիւնը, ըսաւ Խաչերեան:

Շարունակելով, ան հաստատեց, որ
նոյն գաղափարախօսութեան հանդէպ
ցուցաբերուած հաւատքն էր, որ Հ.Մ.-
Ը.Մ.ի բոլոր շրջանները առաջնորդեց
հայաստանեան բանակավայր, այնտեղ
նաեւ պատուի կանգնելու ազատօրէն



Թեան վերածուելով, յատկապէս մեր գաղութային կեանքին նոր աւել, նոր մարդուժ, նոր կենսունակութիւն ապահովէ: Ազգային, միութեանական, հոգեւոր ու մարդկային դաստիարակութեամբ կերտուած մարդոց այս շտեմարանը անհրաժեշտ է, որ միութեան կառուցային վերամշակումով եւ նոր գործադաշտի-նոր գործառոյթներու սահմանագծումով տրամադրուի ու տրամադրէ նաեւ իր վեթերան քոյրերու եւ եղբայրներու տասնեակ հազարաւոր մարդուժը մեր ազգային հաւաքական կեանքի հետզհետէ ահագնացող մարտահրաւէրներուն դիմակայման:

2. Այսօրուան աշխարհի ներկայ գործընթացները, համաշխարհայնացման հսկայական ալիքները մեր ժողովուրդը կը հեռացնեն իր աւանդական բարքերէն, կը միտին կազմաքանդել կառույցները, չէզոքացնել գաղափարները: Այսօրուան աշխարհի տրամաբանութիւնն ու զարգացումի եղանակները ամբողջ աշխարհի երիտասարդութեան վրայ նաեւ կը ձգեն իրենց ազդեցութիւնը՝ ազգային ինքնութենէ պարպելով դայն:

Զուտ սկառուտական եւ մարզական առաքելութեան առընթեր, այսօր նաեւ երիտասարդութիւնը համախմբելու, մեզմէ հեռու երիտասարդ խաւը ներգրաւելու ու դէպի հայկական-ազգային արմատներ ուղղելու ինդիլը եւ հրամայական դրուած է Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդութեան առջեւ: Աւելի ճիշդը,

«Արի արանց» երիտասարդական շարքերու կողքին ու նոյն գաղափարական ենթահողով գործող ամէնէն երիտասարդ միութեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի տարազաւոր միաւորներու առաքելութիւնն է մեր նորահաս սերունդներն ու երիտասարդութիւնը համաշխարհայնացման ալիքէն փրկելը՝ ազգային աւանդներու պահպանումով եւ թերեւս ամէնէն արդիական միջոցները որդեգրելով: Հարկւրամեայ այս աւանդապահ եւ արժէքապահ միութեան վստահուած է նորօրեայ այս առաքելութիւնը: Առաքելութիւն, որ պիտի նպատակադրէ մեր ազգային ու հոգեւոր ոտնահարուած եւ ամէն օր ոտնահարուող սրբութիւնները՝ կրօն, մշակոյթ, լեզու, բարքեր, աւանդ ու ժառանգութիւն վերադարձրնել իրենց պատուանդանին, գուրգուրալ անոնց եւ շարունակել անոնց խորհուրդները փոխանցել ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.ական, այլեւ՝ ընդհանրապէս հայոց երիտասարդ սերունդներուն:

3. Ազգային տեսլականները վառ կը մնան, կը բոցավառին, մինչեւ այն ատեն, որ գանոնք առաջնահերթ կարեւորութեամբ ժողովուրդներու հաւաքական յիշողութեան եւ հաւաքական ապրումներուն մաս կազմել տուող միութիւններ եւ համախումբ ու կազմակերպուած կառույցներ կը հետապնդեն:

Հ.Մ.Ը.Մ.ը մնայուն եւ հետեւողական կերպով պահակը եղած է ազատ ու անկախ Հայաստանի խորհուրդներուն:

Ծածանող հայոց Եռագոյնին դիմաց: Այնտեղ կազմակերպելու համար համա-Հ.Մ.Ը.Մ.ական մարզախաղեր՝ այդպիսով նաեւ հայաշխարհի երիտասարդութիւնը ազատ ու անկախ հայրենիքի մէջ համախմբելու, կողք-կողքի մրցելու եւ միասին յաղթելու համար»:

Այնուհետեւ, ան ընդգծեց այն գաղափարը, որ անհրաժեշտ է այս բոլոր իրազործումներէն անդին նայիլ ու աչքերը յառել դէպի յաղթական ապագայ: Առ այս, անհրաժեշտ են հետեւեալ ըկզբունքները.-

Նկատի ունենալով Հ.Մ.Ը.Մ.ի յատկանիշներուն համայն հայութեան կողմէ ընդունելի եղած ըլլալը, հարիւր տարուան ընթացքին իր հարգատուութեամբ եւ անշահախնդրութեամբ, կամաւոր ծառայութեամբ ամէնէն ժողովրդական այս կազմակերպութիւնը մեր բոլորին զանգուածային յենասիւնին վերածուած է, հետեւաբար.-

1. Հ.Մ.Ը.Մ.ը, որ ազգային արմատներու կառչած միութիւն է եւ հովին այդպէս դաստիարակած է իր անդամները, այսօր, իր գործունէութիւնը չի կրնար եւ պէտք չէ սահմանափակէ միայն միութենէն ներս սկառուտական կամ մարզական կարգալիճակներով: Այսօր, աւելի քան անհրաժեշտ է, որ Հ.Մ.Ը.Մ.ը աւելի կազմակերպ միու-



ԴԷՄՔԵՐՈՒ ՀԵՏ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ ՎԱՍՏԱԿԱՒՈՐՆԵՐԷՆ ԵՂՔ. ՎԱՐՈՒԺԱՆ ՄԻՐԶԱՅԵԱՆ



Կիրակի, 28 Յոկտեմբեր 2018-ին, 100-ամեակի պաշտոնական ձեռնարկին ընթացքին, Հ.Մ.-Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչությունը միութեան «Արտակարգ» պատուանշանով պարգևատրեց եղբ. Վարուժան Միրզայեանը, որուն կ'արժէ ծանօթանալ անպայման:

Եղբ. Վարուժան Միրզայեանի Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի սկաուտական շարքերուն միացած է 11 տարեկանին, Թեհրանի «Արարատ» մարզամշակութային միութեան ճամբով: Ապա, իբրև ուսանող Մ. Նահանգներ փոխադրուել է ետք, բնական կարգով ան շարունակած է սկաուտական իր աշխատանքները Հ.Մ.Ը.Մ.Ի Արևմտեան Մ. Նահանգներու շրջանին մէջ:

Եղբ. Վարուժան Միրզայեանի Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտի կենսագրութիւնը եղած է բաւական հարուստ: Արդարեւ, ան եղած է Խմբապետ, մասնաճիւղի Խմբապետ, Շրջ. Սկաուտ. Խորհուրդի անդամ, Շրջանային Խմբապետ: Միաժամանակ, ան ստանձնած է վարչական այլ պաշտօններ եւ մասնակցած է միութեան Ե. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին: Ձուգահեռաբար, շնորհիւ իր հետեւողական ծիգերուն եւ սկաուտութեան նկատմամբ ունեցած հաւատքին, ան տիրացած է սկաուտական բազմաթիւ տիտղոսներու եւ վկայականներու, ներառեալ՝ Wood Badge, Boy Scouts of America-էն պատուանշաններու:

Եղբ. Վարուժան Միրզայեանի համոզումով, Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիք մըն է, բառացիօրէն՝ աշխարհատարած, եւ բնականաբար նաեւ՝ համահայկական: Ինք կը վկայէ, թէ շատ բան կը պարտի այս մեծ ընտանիքին, սկսելով իր անձնական կեանքէն, աշխատանքի ասպարէզէն, հասնելով Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտի իր մտահորիզոնի եւ մտածելակերպի կազմաւորման, իբրև յանձնառու հայ:

Այս բոլորին մասին իր հետ գրուցելու առիթը ունեցանք վերջերս, իր տան մէջ: Բնակարան եւ գրասենեակ-աշխատանոց կողք-կողքի, պատերը զարդարած սկաուտական վկայականներով, պատուոյ գիրերով եւ լուսանկարներով:

ՍԿՁԲՆԱԿԱՆ ՔԱՅՆԵՐ. ԹԵՅՐԱՆ. «ԱՐԱՐԱՏ»

Մեր առաջին հարցումին, թէ ե՞րբ անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքին, ան պատասխանեց. «1967

թուականին, երբ 11 տարեկան էի, հայրս ձեռքէս բռնելով զիստ արաւ «Արարատ»

եւ սկաուտ եղայ: Եղած եմ Փոխ Առաջնորդ, Առաջնորդ, Վարիչ Առաջնորդ, Խմբապետ: 1976-ին բանակ գացի. մեր զօրագունդը տեղադրուած էր Խոռամապատ կոչուած հեռաւոր քաղաքը. հոն, ազատ ժամերուս օգնած եմ տեղական, իրանեան սկաուտական շարժումին՝ դասախօսութիւններով, միօրեայ արշաւներով, բայց միշտ կապերս պահած եմ «Արարատ»ին հետ: Օրինակի համար, «Արարատ»ը դէպի Սպահան սկաուտական արշաւ մը կազմակերպած էր. կարողացայ դասաւորել, որպէսզի իրենց հանդիպիմ հոն: Նոյն շրջանին էր նաեւ, որ «Արարատ»ը սկաուտական բանակում կազմակերպած էր Ս. Թադէի վանքը եւ Սուրիայէն ու Լիբանանէն հրաւիրած էր Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտներ, 1976-ին կամ 1977-ին էր: Անոնք ալ ընդառաջած էին: Թէեւ ես չկարողացայ մասնակցիլ բանակումին (բանակային էի...), բայց կը յիշեմ քոյր Մարօ Քէշիշեանը, Լիբանանէն: Քրոջ հետ մեր գործակցութիւնը շարունակուեցաւ նաեւ հոս: Յալէպէն ներկայ էր եղբ. Սուրիկը: Ուրեմն, կը տեսնէ՞ք, Հ.Մ.Ը.Մ.Ի մեր երիտասարդութեան համար հանդիսացած է այն բնական միջավայրը, ուր միութեանական գործի բերումով իրարու կը ծանօթանայինք, ամուր կապ մը կը ստեղծուէր մեր միջեւ»:

Իսկ թէ որո՞նք եղած եմ «Արարատ»ի մէջ իր պատասխանատուները, եղբ. Վարուժան Միրզայեան կը նշէ անունները հանգուցեալ Հրայր Տէր Գրիգորեանի (խումբիս առաջնորդը եղած է), Ժոռա Մելիք Աբրահամեանի (խմբապետս), Արա Ղազարեանի (մասնաճիւղի խմբապետ էր), Թերի Մելիք Աբրահամեանի, Ռուբէն Նիազիի եւ ուրիշներու:

Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐ

Իբրև ուսանող Մ. Նահանգներ եկայ: Ամիս մը չանցած, արդէն զգացի որ կեանքիս մէջ բան մը պակաս է: Հանդիպեցայ «Արարատ»ի հին ծանօթներուս, նաեւ

հանդիպեցայ Ռուբեն Գիրջեանին, որ «Արարատ»ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղած էր: Ինք մեզի ուղղութիւն տուաւ, թէ հոս, Լոս Անձելըս, ի՞նչ կարելիութիւններ կան Բ.Ս.Ը.Ս.ի մէջ գործելու: Լոս Անձելըսի մէջ մասնաճիւղ կար, սակայն Կլենտլի մէջ՝ ոչ: Հանդիպեցայ այդ օրերու խմբապետներ Ռազմիկ Շիրինեանին, Ջարեհ Սողանալեանին եւ Կարոյին հետ: Գործակցաբար, Կլենտլի մէջ ունեցանք Լոս Անձելըսի երիցական փաղանգ: Ապա, անդամները բազմացան եւ 15 Դեկտեմբեր 1978-ին, Շրջանային Վարչութեան վաւերացումով, տեղի ունեցաւ «Արարատ» մասնաճիւղի մեր առաջին, հիմնադիր անդամական ժողովը:

Բ.Ս.Ը.Ս.ի Արեւմտեան Ս. Նահանգներու շրջանին մէջ, եղբ. Վարուժան Միրզայեան եղած է Սկաուտ. Խորհուրդի անդամ, Շրջանային Խմբապետ, Ընդհանուր Խմբապետ, բազմաթիւ բանակումներու խմբապետ, «Արարատ» մասնաճիւղի «Պատուոյ անդամ» եւ Բ.Ս.Ը.Ս.ի «Արարատեան կարգ»ի վկայեալ: Ան մասնակցած է Բ.Ս.Ը.Ս.ի Ե. Պատգամաւորական ժողովին (1991), իբրեւ Արեւմտեան Ս. Նահանգներու Պատգամաւորական կազմի անդամ: Գործունեայ եղած է նաեւ Boy Scouts of America-ին մէջ, ստանալով բազմաթիւ գնահատագիրներ:

Մեր խօսակցութիւնը ապա կեդրոնացաւ Բ.Ս.Ը.Ս.ի սկաուտութեան դաստիարակչակա՛ն երեսին վրայ: Եղբ. Վարուժան Միրզայեան համոզուած է, որ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանը մեծ դեր խաղացած է իր կեանքին մէջ: «Ես իմ երէցներէս շատ բան սորված եմ. անոնք զիս բարձրացուցած են: Ես մեծցայ «ընտանիք»ի մը մէջ, որ Բ.Ս.Ը.Ս.ն էր: Երբ հասակ առի սկաուտական շարքերուն մէջ, զգացի, որ իմ կարգիս ես ալ պատասխանատուութիւնը ունիմ ուրիշներո՛ւն, ինձմէ կրտսերներուն փոխանցելու իմ գիտելիքներս: Հետեւաբար, այս անգամ ե՛ս դարձայ օգնողը, սորվեցընողը: Եւ, ահաւասիկ, սորվելու եւ սորվածը փոխանցելու, բարձրանալու եւ բարձրացնելու ամբողջ գործընթաց մը կայ Բ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիքին մէջ», կ'ըսէ ան, աւելցնելով, որ ինք հազուադիւս օրինակ չէ. իր բոլոր գործակիցներն ալ, հազարաւոր ուրիշներ եւս, նոյն գործընթացին մէջ եղած են՝ սորված, ապա սորվեցուցած են Բ.Ս.Ը.Ս.ի մէջ: «Երբ ակումբ կու գանք, կը միանանք իրարու, կ'ապրինք միասին», կ'ըսէ ան:

Իսկ այն հարցումին, թէ ներկայիս ի՞նչ է գործունեութեան ծիրը: Եղբ. Վարուժան Միրզայեան կ'ըսէ, թէ վերջին տարիներուն թէեւ գործնապէս դադրած է սկաուտութեան մէջ աշխատելու, սակայն ան կը շարունակէ մնալ Բ.Ս.Ը.Ս.ի սկաուտութեան ջերմ գորակցող, օգնող ու քաջալերող մը: «Բ.Ս.Ը.Ս.ի մէջ ինչ գործ ալ ընես, ատիկա կ'օգնէ միութեան եւ ներկայիս «Արարատ» մասնաճիւղին մէջ ինչ աշխատանք որ առաջարկուի ինձի, կը կատարեմ»:

Եղբ. Վարուժան Միրզայեանի հետ մեր գրոյցին ընթացքին անդադար չեշտուեցաւ Բ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիք մը ըլլալու հանգամանքը: Այն աստիճան, որ ինք

իր կեանքի ընկերոջ՝ Մարիքա Սուշեղեանին ծանօթացած է Բ.Ս.Ը.Ս.ի շարքերուն մէջ, սկաուտական բանակումի մը ընթացքին: «Ոչ միայն այդ, այլեւ ի՞նչ աշխատանք որ կատարած եմ, յատկապէս Բ.Ս.Ը.Ս.ի սկաուտութեան մէջ, ի՞նչ վկայականներու կամ տիտղոսներուն որ արժանացած եմ, այդ բոլորը եղած են կնոջ՝ Մարիքային ուժեղ գորակցութեան շնորհիւ», կ'աւելցընէ ան:

Իր զաւակները եւս աշխոյժ են Բ.Ս.Ը.Ս.ի սկաուտական շարժումին մէջ: «Բայց ներկայի սերունդը աւելի բախտաւոր է... Մեր ատեն համա-Բ.Ս.Ը.Ս.ական բանակումներ տակաւին չկային: Հիմա զաւակներս կը մասնակցին այդ բանակումներուն: Բազմիցս մասնակցած են Հայաստանի մէջ կայացող համա-Բ.Ս.Ը.Ս.ական սկաուտական բանակումներուն: Հոն նոր ընկերներ ձեռք կը ձգեն: Կը տեսնեմ տան մէջ, համակարգիչին դիմաց նստած, արդի արհեստագիտութիւնը օգտագործելով, կը յարաբերին աշխարհի միւս ծայրը գտնուող իրենց սկաուտ քրոջ կամ եղբօր հետ, որուն ծանօթացած են բանակումներու ընթացքին եւ մտերմութիւններ ստեղծած են: Աղջիկս դպրոց, համալսարան, յարակից մարզական գործունեութեան մասնակցած է լայն միջավայրի մէջ, սակայն ինձի ըսած է՝ «Հայրի՛կ, իմ լաւագոյն ընկերներս սկաուտ ընկերներս են»... Սա հրաշալի պատեհութիւն է մեր երիտասարդութեան համար, որ մենք ունինք շնորհիւ Բ.Ս.Ը.Ս.ին: Այս միութիւնն է, որ այդ ընտանեկան մեկութեան գաղափարը ամրապնդած է մեր երիտասարդութեան մէջ»:

Նոյնիսկ համակարգիչներու աշխարհին մէջ, իր սեփական գործին մէջ, Բ.Ս.Ը.Ս.ի շնորհիւ է, որ ան գաղափարը յղացած է համակարգիչի հայերէն տառեր ստեղծելու, որպէսզի անոնցմով կարելի ըլլայ Բ.Ս.Ը.Ս.ի անդամական տուեալներուն շտեմարանը կազմել:

Բ.Ս.Ը.Ս.ի սկաուտութեան մէջ կէս դարու կեանք մըն է, որուն մասին կը զրուցենք եղբ. Վարուժան Միրզայեանին հետ: Ինք յիշեց, յուզումով պատմեց Բ.Ս.Ը.Ս.ի սկաուտութեան մէջ իր ապրած կէս դարու պատմութենէն պատառիկներ, որոնց խտացումն է այս հարցազրոյցը: Ան բազմիցս շեշտեց Բ.Ս.Ը.Ս.ի մեծ ընտանիք մը ըլլալու հանգամանքը, որ իրականութեան մէջ հայ երիտասարդութեան համար կը հանդիսանայ առողջ միջավայր մը, որպէսզի հաւաքական մեր կեանքին մէջ իրենք եւս ստանձնեն յանձնառութիւններ, իրենց սորվածը, իրենց կարգին, սորվեցնեն կրտսերներուն: Մէկ խօսքով, կեանքի վերածեն Բ.Ս.Ը.Ս.ի նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը:

Կէս դարու սկաուտական բեղուն գործունեութիւն մը, որուն համար Բ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութիւնը զինք պարգեւատրեց միութեան «Արտակարգ» պատւանշանով:

Պատիւ ու յարգանք Բ.Ս.Ը.Ս.ի սկաուտութեան այսքան ծառայած եղբ. Վարուժան Միրզայեանին:

Անվերապահօրէն իր պահակի հանգամանքը Հ.Մ.Ը.Մ-ը պատուով կատարած է, ահաւասիկ, հարիւր տարիէ ի վեր: Այսօր, սակայն, քաղաքական պայմաններու բերումով, Հայաստանի Հանրապետութեան իրերայաջորդ իշխանութիւններուն եւ ընդհանրապէս հայաշխարհի մէջ գործող աւանդական եւ նորաստեղծ քաղաքական ուժերուն կողմէ երկրորդ կարգ մղուած է միացեալ Հայաստանի տեսլականը: Հայ ժողովուրդին համար Ուիլյամսոնի սահմաններով ամբողջական (իմա՝ միացեալ) Հայաստանը է՛ր, է՛ եւ պիտի մնայ իրականանալի եռանկատակ տեսլական:

«Ամբողջական Հայաստանի տեսլականը երիտասարդութեան մէջ վառ պահելու եւ ժողովուրդին ազգային-քաղաքական մտածողութիւնը դէպի այդ տեսլականը հունակորելու դերը այսօր եւս իր ուսերուն պէտք է վերցնէ առաջին հերթին Հ.Մ.Ը.Մ-ը», շեշտեց ան:

Եղբ. Խաչերեան իր խօսքը եզրափակեց յայտարարելով, թէ Հ.Մ.Ը.Մ-ը Անդրանիկ Մառուկեանի կողմէ բանաձեւուած ուխտը՝ Արարատի կատարին հասնելու ուխտը վերանորոգելու հրամայականին դիմաց կը գտնուի: «Ու այդ խոստումին հաւատարիմ, Հ.Մ.Ը.Մ-ական իրերայաջորդ սերունդներ պէ՛տք է ու պիտի՛ շարունակեն իրենց առաքելութիւնը մինչեւ այն օր, երբ Բագաւանի շրջապատը մեր մարզիկները վերակենդանացնեն «գԱռաւօտն Նաւասարդ»ին ու մեր սկառուտական շարքերը վառեն ՄԵՄ խարոյկը, սահմաններէն անդին,



Սրբազան լերան լանջերուն, կանչեն Հայկ Նահապետը, Մեսրոպ Մաշտոցը, Բաջն Վարդանը, Հայաստանի Հանրապետութեան կերտիչ Արամ Մանուկեանը ու բոլոր՝-բոլոր՝ մեր անցեալի այրերն ու Հ.Մ.Ը.Մ-ականները, ու իրենց աչքերը յառած Արարատի գագաթին բարձրագոյն կերպէն: Յառա՛ջ, յառա՛ջ, յաղթական ցեղի անմահներ»:

Օրուան բանախօսին ելոյթէն ետք, Շրջանային Վարչութիւնը «Մառայութեան» շքանշանով պարգևատրեց խումբ մը վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ Մարո Քէշիշեան, Վաչիկ Սարգիսեան, Արա Քէրքէզեան, Սարգիս Թաթիկեան, Արմիկ Աբրահամեան, Պաղտիկ Օհանեան, Ստեփան Պաղպուտարեան, Արթ Խաչատուրեան, Թով-

մաս Թոքմաճեան, Սարո Ղազարեան, Ճէք Գասամանեան, Անահիտ Գասպարեան եւ Ալին Աղբաբեան:

Հանդիսութեան ընթացքին նաեւ մէկ առ մէկ ոգեկոչուեցան անցնող տարուան ընթացքին շրջանէն յաւելտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ-ականները, յարգանքի եւ յուզումի մթնոլորտ մը ստեղծելով սրահին մէջ: Անոնք էին: Ճորճ Ժամկոչեան, Վարդգէս Մեսրոպեան, Աւետիս Ժամկոչեան, Ռոպէրթ Սարգիս, Ժորժ Ահարոնեան, Սերժիկ Իսաղուլեան եւ Գէորգ Խամիսեան:

Աւարտին, ազգային-հայրենասիրական փունջ մը երգերով ելոյթ ունեցաւ Քրիստափոր Արապեան, իսկ հանդիսութիւնը փակուեցաւ Վարանդ Աւաննիսեանի կողմէ Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի քայլերգին կատարումով: Հանդիսութիւնը «աւարտ» մը չէր, սակայն, այլ պարգապէս՝ ցտեսութիւն ըսելու առիթ մը, երբ պաստառին վրայ երեւցին Հ.Մ.Ը.Մ-ին գրեթէ «տարեկից» երեք վաստակաշատ, բայց... միշտ առոյգ Հ.Մ.Ը.Մ-ականներ՝ Աբելլա Յակոբ Կարապետեան, Ժիրայր եւ Խաթակ Սարգիսեաններ, որոնք միասնաբար երգեցին սկառուտական բանակումներու ողջերթի յուզիչ երգը՝ «Յտեսութիւն կ'ըսենք եղբայր, միայն ցտեսութիւն, դարձեալ իրար կը հանդիպինք...»:

Այնպէս որ, Հ.Մ.Ը.Մ-ի երթը կը շարունակուի... Յտեսութիւն:



100-ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՒԻՆ՝ ՄԱՆ ՖՐԱՆՍԻՍՔՈՅԻ ՄԷՋ

Նուպար Տեմիրճեան ՄԱՆ ՖՐԱՆՍԻՍՔՈ

Նախաձեռնութեամբ Հ.Մ.-Լ.Մ.Ի Սան Ֆրանսիսքոյի մասնաճիւղի եւ Սանթա Բարայի «Անի» եւ Ուոլնաթ Բրիքի «Կարս» մասնաճիւղերուն, միութեան 100-ամեակի տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Սան Ֆրանսիսքոյի «Խաչատուրեան» Հայ Կեդրոնի «Սարոյեան» սրահին մէջ, ներկայութեամբ շուրջ 400 հանդիսականներու, որոնք եկած էին զօրավիզ կանգնելու համահայկական այս մեծ միութեան, որ հարիւրամեակ մը ամբողջ՝ 1918-2018, շարունակ ծառայած է, հասցուցած է տասնեակ հազարաւոր պատանիներ ու երիտասարդներ, նաեւ՝ ազգային ղեկավարներ, որոնցմով այսօր կը հպարտանայ մեր ժողովուրդը:

1918-ին, երբ Հ.Մ.-Լ.Մ.Ի հիմնադիրները սկզբնական քայլեր կ'առնէին, արդեօք կրնային գուշակել, թէ իրենց ցանած սերմերը 100-ամեայ ժամանակաշրջանի ընթացքին, աշխարհի տարածքին պիտի դառնային հազարաւոր անդամներով, սկառսներով եւ մար-

զիկներով հսկայական կազմակերպութիւն մը: Նաեւ, արդեօք կրնային գուշակել, թէ 100-ամեակի առիթով, միութեան սկառսական կամաւոր բանակը հարիւրներով պիտի սողանցէր Հայաստանի մայրաքաղաք Երեւանի մէջ, պանծալի Եռագոյնով եւ Հ.Մ.-Լ.Մ.Ի դրօշակով:

ԲԱՑՈՒՄԸ

Տօնակատարութեան բացումը կատարուեցաւ Հայաստանի եւ Հ.Մ.-Լ.Մ.Ի քայլերդներուն կատարումով եւ Հ.Մ.-Լ.Մ.Ի արի-արենոյններու դրօշակի արարողութեամբ:

Տօնակատարութեան ներկայ էին Առաջնորդ Յովնան Արք. Տէրտէրեան, Առաջնորդական փոխանորդ Թորգոմ Եպս. Տոնոյեան, Պարոյր Վրդ. Շէրնէզեան, Տաթև Ա. Քհնյ. Յարութիւնեան, Մեսրոպ Քհնյ., Յովել Քհնյ. Օհանեան, Հ.Մ.-Լ.Մ.Ի Կեդրոնական եւ Շրջանային Վարչութիւններու անդամներ, Հ.Յ.Դաշնակցութեան «Բրիտտափոր» եւ «Սարգարապատ» կո-



միտէութիւններու եւ շրջանին մէջ գործող քոյր միութիւններու ներկայացուցիչներ:

Տօնակատարութիւնը ձեռնհասօրէն վարեցին հանդիսավարներ Թամար Տէիրմէնճեան եւ Կարէն Տէր Խաչատուրեան, որոնք փոխն ի փոխ ելոյթ ունեցան հայերէնով ու անգլերէնով եւ բարի գալուստի խօսքերով դիմաւորեցին ներկաները՝ ըսելով. «Մեզի համար իսկապէս ուրախութիւն է ձեր բոլորին ներկայութեամբ տօնել Հ.Մ.-Լ.Մ.Ի հիմնադրութեան 100-ամեակը Սան Ֆրանսիսքոյի, Սանթա Բարայի «Անի» եւ Ուոլնաթ Բրիքի «Կարս» մասնաճիւղերուն անունով, բարի գալուստ կը մաղթենք բոլորիդ»:

Ապա, անոնք հրաւիրեցին Յովնան Արք. Տէրտէրեանը, Թորգոմ Եպս. Տոնոյեանը եւ Պարոյր Վրդ. Շէրնէզեանը, որպէսզի իրենց օրհնութեամբ եւ աղօթքով սկսի տօնակատարութիւնը:

ՕՐՈՒԱՆ ԲԱՆԱԽՈՍԸ

Օրուան բանախօսն էր վաստակա-





չատ Հ.Մ.Ը.Մ.ական, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Ժիրայր Սարգիսեան: Եղբայր Ժիրայր փոքր տարիքին միացած է Հ.Մ.Ը.Մ.ի սկստական շարքերուն եւ արժանացած է անոր բոլոր աստիճաններուն: Ան իր ամբողջ կեանքը նուիրած է Հ.Մ.Ը.Մ.ին եւ «Բարձրացիւր-բարձրացուր» նշանաբանը եղած է իր կեանքի ուղին: Ան մասնակցած է Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային եւ Ընդհանուր Ժողովներու եւ բազմիցս ընտրուած է այդ ժողովներէն յառաջացած մարմիններու անդամ: Եղբ. Ժիրայր միշտ քաջալերած է երիտասարդութիւնը: Հայապահպանման եւ կրթական նպատակներով ան միշտ նեցուկ կանգնած է Ազգային վարժարաններուն եւ հայկական բոլոր կազմակերպութիւններուն: Եղբայր Ժիրայր Սարգիսեան ամբողջ կեանքին ընթացքին իր հոգին ու վաստակը տրամադրած է հայ ժողովուրդի վերելքին եւ ի մասնաւորի՝ Հ.Մ.Ը.Մ.ի բարելւման եւ զարգացման աշխատանքին:

Այս առիթով խօսք առնելով, եղբ. Ժիրայր Սարգիսեան փոխանցեց իր սրտի խօսքը, իր ապրումներն ու պատգամները՝ ներկաներուն եւ մասնաւորաբար երիտասարդ սերունդին՝ ըսելով. «Հ.Մ.Ը.Մ.ը կեանքի կոչուեցաւ մեր պատմութեան ամէնէն բախտորոշ ժամանակաշրջանին՝ 1918-ին, Պոլսոյ մէջ, ուր Շաւարշ Գրիսեանի, Արայր Յակոբեանի եւ Յովհաննէս Հինդլեանի նման

ազգասէր, ուսեալ ու նուիրեալ դաստիարակներ, նկատելով բարենպաստ օգտակարութիւնը մարմնամարզի եւ սկստական արիական շարժումին, ներառելով նաեւ իզական սեռը, Օսմանեան խաւարամիտ միջավայրին մէջ: Յեղասպանութեան զոհ գացած Շաւարշ Գրիսեանի համախոհները լայն շրջանակ կազմելով հիմնեցին Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ը, «Բարձրացիւր-բարձրացուր» խորհմաստ նշանաբանով:

Շարունակելով, եղբ. Ժիրայր ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ը իր գոյութեան 100-ամեակը բոլորած՝ այսօր կը յատկանշուի «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ» կարգախօսով եւ մեր ազգային կեանքին մէջ երկար տարիներու արժանավայել ներկայութիւն մըն է, օժանդակելով նորահաս սերունդներու հոգեմտաւոր եւ ազգային ապրումներու զարգացման եւ մղելով, որ այդ սերունդի ներկայացուցիչները ըլլան Ֆիզիքապէս առողջ ու կայտառ, արի ու վեհանձն մարդիկ, ծառայող Աստուծոյ եւ հայրենիքին եւ միշտ օգնող ուրիշին»:

Ապա, վերջին դարաշրջանի մեր ազգային պատմութեան անդրադառնալով, եղբ. Ժիրայր Սարգիսեան աւելցուց. «Յայտնութիւն մը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի ստեղծումը. այսօր բազմահազար անդամներու իր կամաւոր բանակով, 110 մասնաճիւղերու երկար շղթայով, որոնց երեք օղակները կը կազմեն Սան

Ֆրանսիաքոյի շուրջ՝ «Կարս», «Անի» եւ Սան Ֆրանսիաքոյի մասնաճիւղերը:

Եղբ. Ժիրայր անդրադարձաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի Հայաստանի կառույցին եւ գործունէութեան: Ան ըսաւ. «Հայաստանի վերանկախացումով Հ.Մ.Ը.Մ.ը դարձեալ վերահաստատուեցաւ հայրենիքի մէջ, եւ այսօր ներկայութիւն ըլլալով՝ օրէ օր բազմացող իր շարքերով, լծուած է հայրենիքին տիպար քաղաքացիներ պատրաստելու վեհ աշխատանքին: Դարձեալ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակում է, որուն նախօրեակին տասնեակ մը երկսեռ աստիճանաւորներ Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեակին նուիրուած իրենց ուխտագնացութիւնը կը կատարեն, մագլցելով մեր ազգային խորհրդանիշը հանդիսացող Արարատ լեռան գագաթը, վերանորոգելով իրենց ըսկառտական ուխտը, հոն պարզելով Եռագոյնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը: Արարատի նուաճումին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի «Կարս» մասնաճիւղի անդամներէն քոյր Անի Էմմէքճեան: Մասնաւոր յիշատակութեան արժանի էր նաեւ Օփերայի շքեղ սրահին մէջ տեղի ունեցած Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեակին նուիրուած պաշտօնական հանդիսութիւնը, ուր խոսուեցան բազմութիւն մը ջերմօրէն դիմաւորեց Հայաստանի Հանրապետութեան նախագահ Արմէն Սարգիսեանը եւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանը: Վարչապետ Փաշինեան խօսք առնելով գնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի ազգանուէր ու շինիչ դերը հարիւրամեակ իր պատմութեան ընթացքին, ընդգծելով խոր իմաստը Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբան «Բարձրացիւր-բարձրացուր»ին: Այս առիթով, Հայաստանի նամակատունը յատուկ դրոշմաթուղթ մը հրապարակեց Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեակին նուիրուած»:

Հ.Մ.Ը.Մ.ի ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Տօնակատարութեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անունով խօսք առնելով, ատենապետ եղբ. Մանուէլ Մարսէլեան ըսաւ. «Յեղասպանութեան ծնունդ առած Հ.Մ.Ը.Մ.ը 100 տարեկան երիտասարդ կազմակերպութիւն մըն է, որ կը գործէ հայկական բոլոր գաղութներու

մէջ, իր շուրջ համախմբելով հայ պատանիներն ու երիտասարդները: 19 մասնաճիւղերով եւ աւելի քան 6500 անդամներով, Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը 50 տարուան ընթացքին կարողացաւ կազմակերպուիլ եւ իր հաստատուն տեղը ունենայ Հարաւային եւ Հիւսիսային Քալիֆորնիոյ մէջ: Հիւսիսային Քալիֆորնիոյ շրջանը իր մասնաճիւղերուն՝ Սան Ֆրանսիսքոյի, Սանթա Բարբարայի «Անի», Ուոյնսթ Բրիքի «Կարս» եւ Սաքրամենթոյի «Լոուի» միաւորի անցեալի ու ներկայի վարչութիւններու եւ անդամներու անսակարկ նուիրումով ու անվերապահ օժանդակութեամբ, բեղուն աշխատանք կը տանի շրջանի հայկական գաղութին մէջ: Այս առիթով, Շրջանային Վարչութիւնը իր երախտագիտութիւնը կը յայտնէ հետեւեալ քոյր-եղբայրներուն, որոնք իրենց վարչութեան կողմէ պիտի արժանանան Հ.Մ.Ը.Մ.ի «Մառաշտեան» շքանշանին.- Սան Ֆրանսիսքոյէն՝ եղբ. Վահիկ Սարգիսեան, «Անի» մասնաճիւղէն՝ եղբ. Արդ Սաչատուրեան, «Կարս» մասնաճիւղէն՝ քոյր Ալին Աղաբաբեան:

Այնուհետեւ, եղբ. Մարտէրեան հրաւիրեց յիշեալ մասնաճիւղերու վարչութիւններուն ատենապետները՝ քոյրեր Թամար Քրիճեանը, Արմինէ Ժամկոչեանը եւ եղբ. Վահէ Պարոնեանը ստանալու Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին նուիրուած յուշատախտակները:

Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԽՕՍԲԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վրդէն Դաւթեան



խօսք առնելով հոգեկան իր գոհունակութիւնը յայտնեց՝ ի տես ներկայ բազմութեան, խանդավառութեան եւ հարիւրամեակի ձեռնարկին բացառիկ յաջողութեան: Ան ըսաւ. «Մեծ հաճոյք է տեսնել Հիւսիսային Քալիֆորնիոյ մեր մասնաճիւղերէն այսպիսի աշխոյժ եւ մեծ խումբ մը, որ կը սօսնէ Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեակը: Հ.Մ.Ը.Մ.ը հիմնական ժողովուրդային կազմակերպութիւն մըն է, որուն գործերուն մեծ մասը կը կատարուի մասնաճիւղերու ճամբով, ուղղութիւն ստանալով Շրջանային եւ Կեդրոնական Վարչութիւններէ: Ուստի, մասնաճիւղերը ունին յատուկ պատասխանատուութիւն՝ ուսուցանելու եւ մարզելու մեր երիտասարդ անդամները, եւ ըստ այնմ, ուրախ ենք այս իրողութեամբ: Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան շրջանը ամէնէն զօրաւոր եւ աշխոյժ շրջաններէն մէկն է աշխարհի, եւ օրինակ կը դառնայ միւսներուն: Նաեւ հմայուած եմ տեսնելով այսպիսի ընտանեկան միջնորդա եւ մասնաւորապէս՝ մեծ խումբ մը երիտասարդ անդամներ: Երիտասարդները ապագան են մեր կազմակերպութեան, ինչպէս նաեւ հիմքը՝ դեկավարութեան յաջորդ սերունդին: Հ.Մ.Ը.Մ.ը կը թեւակոխէ իր երկրորդ դարը, զինուած ու կայուն ռազմավարական ծրագիրով, որ ուշադրութեամբ պատրաստուած է վերջին հինգ տարուան ընթացքին, ներդրումով մեր աշխարհատարած անդամներուն, հիմնուած՝ կազմակերպական եւ նիւթական հզօր սկզբունքներու վրայ, ուղղուած ճշգրիտ օրէնսդրութեամբ: Հպարտ եմ, որ մասնակից եղած եմ իմ յարգելի ընկերոջս՝ եղբայր Շահէ Ենիգոմճեանին հետ, այս ծրագիրին զարգացումներուն»:

Տօնակատարութեան պաշտօնական բաժինի աւարտէն ետք, ներկաները մինչեւ ուշ գիշեր խանդավառութեամբ վայելեցին հանրաձայնօթ երգիչ Յարութ Փամպուքճեանի կատարումները, սօսելով Հ.Մ.Ը.Մ.ի հարիւրամեակը:





100-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՀԱՆԴԷՍ ԵՒ «ԾԱՌ-ԱՅՈՒԹԵԱՆ» ՀՔԱՆՇԱՆԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ՝ ՊԸՐԼԻՆԿԹԸՆԻ ՄԷՋ

Թղթակից ՊԸՐԼԻՆԿԹԸՆ

Հ.Մ.Բ.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ, Շաբաթ, 27 Հոկտեմբեր 2018-ի երկրոյեան տեղի ունեցաւ Հ.Մ.Բ.Մ.ի 100-ամեակի ճաշկերոյթ-պարահանդէսը, Պրըիսկիթընի «Մարիոթ» պանդոկի շքեղ սրահին մէջ, ներկայութեամբ 300 Հ.Մ.Բ.Մ.ականներու եւ համակիրներու:

Ճաշկերոյթին բացումը կատարուեցաւ սկառուս դրօշակակիրներու եւ պատուոյ հիւրերու մուտքով, քոյրեր Մեղրի Տէր Վարդանեանի եւ Անի Զարբարեանի կողմէ Մ. Նահանգներու եւ Հայաստանի քայլերգներու կատարողութեամբ:

Օրուան յայտագիրին պաշտօնական բաժինով, հանդիսավար եղբ. Վահէ Թանաշեան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ ներկայացուց ներկայ պատուոյ հիւրերը՝ թեմի Առաջնորդ Անուշահան Եպս.

կան Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Ժանօ Աւետիսեան, Հ.Մ.Բ.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Արամ Գալսէրեան, Պոսթընի մասնաճիւղի ատենապետ եղբ. Սեակ Սաչատուրեան եւ 100-ամեակի Շրջանային յանձնախումբի ատենապետ եղբ. Վահէ Թանաշեան:

Պաշտօնական յայտագիրին ընթացքին խօսքեր արտասանեցին Հ.Մ.Բ.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Արամ Գալսէրեան եւ Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Եղբայրները շնորհակարտեցին ներկաները՝ Հ.Մ.Բ.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակին առիգեւոր հովիւ Վարչութեան Սահակ Մ. Վրդեամիչեան, Հ.Մ.Բ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնա-



ներ.- Ալյընիի մասնաճիւղէն Հայտի Կիւլէսէրեան, Պոսթընի մասնաճիւղէն Յարութ Արապեան, Աւօ Պարմաքեան, Արա Պարսումեան, Աւօ Պետրոսեան, Պետիկ Տէր Վարդանեան, Չեփիւռ Գահ-վէճեան, Մարսէլ Գարեան, Լեոն Խաչատուրեան, Հեղիկ Մարկոսեան, Լինտա Մարսուպեան, Միսաք Ուրֆալեան, Սարգիս Ուրֆալեան, Սարգիս Ոսպիկեան, Թորոս Ոսպիկեան, Շիքակոյի մասնաճիւղէն Վարուժան Գուգուգեան, Ֆիլատելֆիոյ մասնաճիւղէն Էլիզապէթ Դրամիդեան եւ Ուաշինկթընի մասնաճիւղէն Յովիկ Աբգարեան:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցան ճաշկերոյթին պատուոյ հիւրերը, շքանշանակիրները, նուիրատու «իշխան»ները, նախկին շքանշանակիրներն ու պատուոյ նախագահները, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետին հետ հատեցին միութեան 100-ամեակի կարկանդակը: Նախկին շքանշանակիրներէն ներկայ էին եղբայրներ Օհան Օհանեան, Սարգիս Ստեփանեան, Ռազմիկ Փանոսեան, Ճան Ճէրիքեան, Սարգիս Կիւլէսէրեան, Յակոբ Խաչատուրեան եւ քոյր Ռիթա Օհանեան: Նախկին



պատուոյ նախագահներէն ներկայ էին եղբայր Օհան եւ քոյր Ռիթա Օհանեաններ, եղբայր Սամիկ եւ քոյր Վարդենի Ճարեաններ, տէր եւ տիկին Ժան-Ժազ Հաժար եւ Նիքոլ Հաժար-Պապիկեան: Ճաշկերոյթի «իշխան»ներն էին եղբայրներ Պետիկ Տէր Վարդանեան, Թորոս Ոսպիկեան, Արա Պարսումեան, Ջարեհ Գարակիւլէեան եւ Արա Սվաճեան:

Յայտագիրի պաշտօնական բաժինի աւարտին, ներկաները Թորոնթոյէն ժամանած երգիչ Գօգօ Ասալեանի եւ իր նուագախումբին ճոխ երգերով ու պարերով խանդավառ պահեր ապրեցան մինչեւ առաւօտեան կանուխ ժամեր, մանաւանդ երբ յեղափոխական երգերը թնդացուցին սրահը:

ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի նախաձեռնութիւններու ծիրին մէջ, Շաբաթ, 27 Հոկտեմբերի առաւօտեան ժամը 9-էն սկսեալ, «Հայրենիք» հաստատութեան շէնքին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու մասնաճիւղերու խմբապետներու համագումարը, նախաձեռնութեամբ Շրջանային Սկառու. Խորհուրդին եւ ղեկավարութեամբ Շրջանային խմբապետներուն: Համագումարին ներկայ եղան Շրջանային Սկառու. Խորհուրդի ատենապետուհի քոյր Արշօ Գանթարճեան, անդամ եղբ. Յովսէփ Մինասեան, Շրջանային խմբապետուհի քոյր Թամար Սամուէլեան, Շրջանային խմբապետ եղբ. Ալէքս Ուրֆալեան եւ զանազան մասնաճիւղերէ 11 խմբապետներ:

Համագումարին ընթացքին արծարծուեցան եւ քննարկուեցան հետեւեալ հարցերը:-

- Շրջանի սկառուական դաստիարակչական ծրագիրը:
- Անցեալի եւ ապագայի սկառուական բանակումներ եւ սեմինարներ:
- Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական 11-րդ բանակումը:
- Ապագայ պատասխանատու սկառուներ պատրաստելու միջոցներ:

Համագումարին խմբապետի աստիճան ստացան հետեւեալ քոյրերն ու եղբայրները.- Ալէքս Ուրֆալեան, Մարիա Օվասաբեան, Նինա Ոսպիկեան եւ Մեղրի Տէր Վարդանեան:

Համագումարը այցելեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Արամ Գալսէրեանի, Շրջանային Վարչութեան անդամ եղբայրներ Վիգէն Խաչատուրեանի եւ Սիմոն Պարտիզպանեանի:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը ողջոյնի խօսք ուղղեց խմբապետներուն, անդրադարձաւ սկառու խմբապետներու կարեւոր դերին՝ պատրաստելու ապագայ ղեկավարներ, որոնք պիտի երաշխաւորեն միութեան յառաջիկայ տասնամեակներու յաղթական երթը: Հանդիպումին աւարտին, եղբ. Գառնիկ պատասխանեց ներկայ խմբապետներու հարցումներուն:



100-ԱՄԵԱԿԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՄԷՋ

ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԴՐՕՇԻ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ, ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ, ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔ ԵՒ ԶԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակի ոգեկոչումները Արևելեան Մ. Նահանգներու շրջանին մէջ եղան բաւական հարուստ: Այսպէս, Կիրակի, 28 Հոկտեմբեր 2018-ի առաւօտեան, Ուոթերթաունի Ս. Ստեփանոս Առաքելական եկեղեցոյ մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի դրօշի օրհնութեան, ձեռամբ Սահակ Ծ. Վրդ. Եմիշեանի եւ Ս. Ստեփանոս եկեղեցոյ հոգեւոր հովիւ Անդրանիկ Ա. Քհնյ. Պալճեանի: Յաւարտ Սուրբ Պատարագի, հոգեհանգստեան արարողութիւն կատարեցաւ ի յիշատակ Հ.Մ.Ը.Մ.Ի մեծ ընտանիքի հիմնադիրներուն եւ ննջեցեալներուն:

Եւ համակիրները, Պոսթընի մասնաճիւղի սկաուտներուն եւ շեփորախումբին առաջնորդութեամբ, տողանցեցին դէպի Ուոթերթաունի Հայ Մշակութային

եւ Կրթական Կեդրոն, ուր տեղի ունեցաւ 100-ամեակի պաշտօնական հանդիսութիւնը: Տողանցքը մեծ խանդավառութիւն ստեղծեց Ուոթերթաունի հա-



ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՏՈՂԱՆՑՔ
Հոգեհանգստեան արարողութեան աւարտին, ներկայ Հ.Մ.Ը.Մ.ականները

յուժեան սրտերուն մէջ, որոնք ծափող-
ջոյններով քաջալերեցին Հ.Մ.Ը.Մ.ական
նոր սերունդը:

**ՊԱՏՄԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐՈՒ
ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՁԵՌԱՅԻՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ
ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ**

100-ամեակի պաշտօնական հանդի-
սութեան սրահը այդ օր զարդարուած
էր Հ.Մ.Ը.Մ.ի Պոսթընի մասնաճիւղի
սկառուտներուն ձեռնային աշխատանքնե-
րով եւ 100-ամեակի Շրջանային յանձ-
նախումբին պատրաստած պատմական
յուսանկարներով:

**ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ**

Ուղեորթառուների թաղերուն մէջ կա-
տարուած տողանցքէն ետք, սկառուտա-
կան շարքերը դրօշակներով մուտք գոր-
ծեցին Հայ Մշակութային եւ Կրթական
Կեդրոն: Անոնց հետեւեցան օր մը առաջ
«Մառաշուժեան» շքանշան ստացած
Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները:

100-ամեակի հանդիսութեան հանդի-
սավարն էր եղբ. Յակոբ Խաչատուր-
եան: Ան ներկայացուց հիւրերը եւ բեմ
հրաւիրեց Անի Զարքարեանը, որպէսզի
մեներգէ Մ. Նահանգներու եւ Հայաս-
տանի քայլերգները:

Հանդիսավար Խաչատուրեան ներ-
կայացուց նաեւ շրջանի 12 մասնաճիւ-
ղերը:

Գեղարուեստական յայտագիրով
երոյթ ունեցաւ «Սայաթ Նովա» պարա-



խումբը: Փունջ մը տոհմիկ երգեր ներ-
կայացուցին Մեղրի Տէր Վարդանեան եւ
Յովիկ Խաչերեան:

Հանդիսութեան առաջին խօսքը ար-
տասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Պոսթընի մասնա-
ճիւղի ատենապետ եղբ. Սեւակ Խաչա-
տուրեան: Ան ըսաւ, որ նոր սերունդին
պարտականութիւնն է աշխատանքը շա-
րունակել եւ միշտ «Բարձրացիր- բարձ-
րացուր» նշանաբանին հաւատարիմ՝
կերտել փայլուն ապագայ:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգ-
ներու Շրջանային Վարչութեան ատե-
նապետ եղբ. Արամ Գալսէրեան բեմ
բարձրանալով յայտնեց, որ նոր մար-

տահրաւէրներու առջեւ է Հ.Մ.Ը.Մ.ը եւ
այս գծով երիտասարդութեան պարտա-
կանութիւն տրուած է աշխատանքը շա-
րունակել, պայքարելով մեր ժողովուր-
դին եւ միութեան անյարիր սովորու-
թիւններուն դէմ:

Ապա, Շրջանային Վարչութեան ան-
դամ եղբ. Շանթ Ժամկոչեան ներկայա-
ցուց օր մը առաջ, 100-ամեակի ճաշկե-
րոյթին «Մառաշուժեան» շքանշան ըս-
տացած, Հ.Մ.Ը.Մ.ական վաստակաշատ
18 քոյրերն ու եղբայրները:

Հ.Յ.Դ. Արեւելեան Մ. Նահանգներու
Կեդրոնական Կոմիտէի անդամ Ժան
Աւետիսեան իր խօսքին մէջ յայտնեց, թէ
այսօր, հարիւր տարի ետք, այն կամա-
ւոր բանակը, որուն մաս կը կազմէք նա-
եւ դուք, կը գործէ աշխարհի չորս ծա-
գերուն, կառչած մնալով իր հիմնադիր-
ներուն հաստատած սկզբունքներուն,
առողջ միտքը պատրաստելով առողջ
մարմինին մէջ:

Աւետիսեան աւելցուց, որ ազգային
եւ գաղափարական դաստիարակու-
թիւնը Հ.Մ.Ը.Մ.ականին համար ո՛չ թէ
առաջնահերթ է, այլ՝ սուրբ է, փաստ՝
Արցախի ազատագրութեան համար
պայքարած նահատակները, որոնք այ-
սօր անմահացած են Եւաբլուրի մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-
թեան ատենապետ եղբ. Գառնիկ
Մկրտիչեան ներկայացուց օրուան





ՃԱՆՉՆԱՆՔ

ԵՂՔ. ՍԱՐԳԻՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ



Եղբ. Սարգիս Ստեփանեան ծնած է Զալէպ եւ Զ.Ս.Ը.Ս.ի սկաուտական շարքերուն անդամակցած է Սուրիոյ մէջ, 1947-ին: Եղած է ըսկաուտ խմբապետ:

Արեւելեան Մ. Նահանգներ հաստատուելով, Եղբ. Սարգիս երեք շրջան եղած է Զ.Ս.Ը.Ս.ի Պոսթընի մասնաճիւղի Սկաուտական Խորհուրդի անդամ: Երեք շրջան մաս կազմած է Զ.Ս.Ը.Ս.ի Պոսթընի մասնաճիւղին, իսկ

երեք շրջան ալ (վեց տարի)՝ Զ.Ս.Ը.Ս.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան: 1995-ին, միութեան Զ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, ան ընտրուած է Զ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան անդամ:

Զ.Ս.Ը.Ս.ական իր գործունէութեան առընթեր, Եղբ. Սարգիս մաս կազմած է նաեւ Զամագայինին: Երեք շրջան ան եղած է Զամագայինի Պոսթընի մասնաճիւղի վարչական եւ շրջան մըն ալ՝ Զամագայինի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ: Զալէպի մէջ, երկու շրջան ան եղած է Ազգային Վարժարաններու հոգաբարձու:

Եղբ. Սարգիս Զ.Ս.Ը.Ս.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան կողմէ արժանացած է միութեան «Ծառայութեան» շքանշանին:

պատգամը: Ան յայտնեց, որ 100-ամեակի յորեկանն է այսօր Հ.Մ.Ը.Ս.ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանին մէջ: Շրջան մը, որուն մասնաճիւղերը աշխարհագրական հեռաւորութեամբ կը գործեն տարբեր նահանգներու մէջ, սակայն միշտ Հ.Մ.Ը.Ս.ական դաստիարակութեամբ եւ Հ.Մ.Ը.Ս.ական նուիրումով: Շրջան մը, որ մեր միութեան տուած է Կեդրոնական Վարչութեան անդամներ, հաւատաւոր ու նուիրեալ Հ.Մ.Ը.Ս.ականներ եւ տակաւին կը շարունակէ գործել նոյն հաւատքով եւ նոյն պատրաստակամութեամբ: Շնորհաւորութեան խօսք՝ Հ.Մ.Ը.Ս.ի Արեւելեան Մ. Նահանգներու շրջանին եւ միութեան 26 հազար անդամներուն, որոնք առիթն ու բախտը ունեցան միութեան 100-ամեակին ժամանակակիցները ըլլալու եւ անոր տօնակատարութիւններուն մասնակից դառնալու:

Այս առիթով, Հ.Մ.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութիւնը «Արժանեաց» շքանշանով պարգեւատրեց Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ Եղբ. Սարգիս Ստեփանեանը՝ միութեան իր երկարամեայ ծառայութեան համար:

Այնուհետեւ, հայրական իր խօսքը փոխանցեց Սահակ Ծ. Վրդ. Եմիչեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Ս.ի երթը սկսաւ Հայոց Յեղասպանութենէն անմիջապէս

ետք, անտէր ու անտիրական որբեր խնամելու եւ հայրենիքի օժանդակութեան աշխատանքներով: Ան եղաւ կրթական հաստատութիւն մը՝ դպրոց մը, ուր սերունդէ սերունդ փոխանցուեցան ազգային գաղափարաստութիւն եւ պատուի զգացողութիւն:

Ան եզրակացուց, որ շնորհիւ Հ.Մ.Ը.Մ-ին, հայապահպանման առաքելութիւնը կը շարունակուի հաստատ քայլերով:

Հուսկ, կատարուեցաւ փակման աղօթք եւ Անի Զարքարեան մեներգեց Հ.Մ.Ը.Մ-ի քայլերը:

Աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՄԻՆԸ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀՐՁԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւններուն մասնակցելու համար, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Սկրտիչեան 22-29 Յոկտեմբեր 2018 այցելեց Արեւելեան Մ. Նահանգներու շրջան, ուր շարք մը հանդիպումներ ունեցաւ ազգային կառոյցներու պատասխանատուներու եւ Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու վարչական կազմերու հետ:

Ստորեւ՝ Կեդրոնական Վարչութեան ատենապետին այցելութիւններուն ամփոփ տեղեկատուութիւնը:

ՈՒԱՇԻՆԿԹՐՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ԳՐԱՍԵՆՆԱԿ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԱՏՈՒՆ ԵՒ ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԳՐԱՍԵՆՆԱԿ

Երեքշաբթի, 23 Յոկտեմբերին, Եղբ. Գառնիկ Սկրտիչեան այցելեց Ուաշինկթընի Հայ Դատի գրասենեակը՝ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Շանթ Ժամկոչեանի, Հ.Մ.Ը.Մ-ի Ուաշինկթընի մասնաճիւղի վարչութեան անդամ քոյր Հուրի Քէօրքիւնեանի եւ 100-ամեակի Շրջանային յանձնախումբի ատենապետ



եղբ. Վահէ Թանաչեանի ընկերակցութեամբ: Հանդիպումին ներկայ էին Հայ Դատի գրասենեակի գործադիր տնօրէն Արամ Համբարեան եւ գրասենեակի հաղորդակցութեան տնօրէն Եղիաբէթ Զուլճեան:

Նոյն օրը, Հ.Մ.Ը.Մ-ի պատուիրակութիւնը այցելեց Ուաշինկթընի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատուն եւ տեսակցեցաւ Հայաստանի Հանրապետութեան փոխ դեսպան Արա Մարգարեանի հետ: Աւելի ուշ, պատուիրակութիւնը այցելեց Արցախի Հանրապետութեան ներկայացուցչական գրասենեակ եւ հանդիպեցաւ Արցախի ներկայացուցչի Ռոպէրթ Աւետիսեանի հետ:

Աւետիսեանի հետ:

ՈՒԱՇԻՆԿԹՐՆԻ ՄԱՍՆԱՃԻՂ

Նոյն օրը, երեկոյեան, եղբ. Գառնիկ Սկրտիչեան հանդիպում մը ունեցաւ Ուաշինկթընի մասնաճիւղի անդամներուն եւ համակիրներուն հետ: Հանդիպումին բացումը կատարեց մասնաճիւղի վարչութեան փոխ ատենապետ եղբ. Յովիկ Աբգարեան: Ան բարի գալուստ մաղթելէ ետք, ներկաները հրաւիրեց մէկ վայրկեան յոտնկայս լուսնութեամբ յարգելու յիշա-



տակը վերջերս մահացած, Հ.Մ.Ը.Մ-ի «Մառաշուկեան» շքանշանակիրները եղբայրներ Լեւոն Պալեանի եւ Համօ Սարտարպէկեանցի:

Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Շանթ Ժամկոչեան գեկուցեց շրջանի գործունէութեան եւ յաջորդող օրերուն տեղի ունենալիք 100-ամեակի ձեռնարկներուն մասին: Եղբ. Մկրտիչեան իր խօսքին աւարտին յատուկ յուշանուէրով պատուեց Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրէն Տիգրան Ա. Քհնյ. Խոյեանի դուստր՝ Սեղա Կելլէնեանը: Եղբ. Շանթ Ժամկոչեան, իր կարգին, Սեղա Կելլէնեանին յանձնեց Շրջանային Վարչութեան յուշանուէրը:

ՆԻՒ ԵՈՐՔԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Զորեքշաբթի, 24 Հոկտեմբերին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, 100-ամեակի Շրջանային յանձնախումբի ատենապետ եղբ. Վահէ Թանաշեանի ընկերակցութեամբ, այցելեցին Արեւելեան Մ. Նահանգներու թեմի Առաջնորդ Անուշաւան Եպս. Դանիէլեանին: Հանդիպումը տեղի ունեցաւ Նիւ Եորքի Ազգային Առաջնորդարանին մէջ:

ՆԻՒ ԵՈՐՔԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

Նոյն օրը, երեկոյեան, եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան եւ Հրաչ Մեսրոպեան հանդիպում մը ունեցան Նիւ Եորքի մասնաճիւղի անդամներուն եւ համակիրներուն հետ: Հանդիպումին բացումը կատարեց մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Յովհաննէս Մաշէվէճեան: Բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, ան կարգ մը տեղեկութիւններ փոխանցեց մասնաճիւղին մօտակայ անցեալի եւ ապագայի ծրագիրներուն մասին: Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Սիմոն Պարտիզպանեան գե-

կուցեց շրջանի գործունէութեան եւ յաջորդող օրերուն տեղի ունենալիք 100-ամեակի ձեռնարկներուն մասին: Այս առիթով, իր սրտի խօսքը փոխանցեց Նիւ Եորքի հոգեւոր հովիւ Մեսրոպ Քհնյ. Լաքիսեան: Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը իր խօսքին աւարտին պատասխանեց ներկաներու հարցումներուն:

ՆԻՒ ՃԸՐՁԻՒ ՄԱՄՆԱՃԻՒՂ

Հինգշաբթի, 25 Հոկտեմբերի երեկոյեան, եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան եւ Հրաչ Մեսրոպեան հանդիպում մը ունեցան Նիւ Ճրոգիի մասնաճիւղի անդամներուն եւ համակիրներուն հետ: Հանդիպումին բացումը կատարեց մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Մարք Թորոսեան: Հանդիպումին իր սրտի խօսքը փոխանցեց Նիւ Ճրոգիի հոգեւոր հովիւ Յովնան Քհնյ. Պողոյեան: Եղբ. Մկրտիչեան իր խօսքին աւարտին պատասխանեց ներկաներու հարցումներուն:

ՄԱՍԱԶՈՒՍԷՑ ՆԱՀԱՆԳԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏՈՒՆ

Ուրբաթ, 26 Հոկտեմբերի առաւօտեան, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Հրաչ Մեսրոպեան, ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Արամ Գայսէրեանի, Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Խաչատուրեանի, Պոսթընի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Սեւակ Խաչատուրեանի եւ 100-ամեակի յանձնախումբի ատենապետ եղբ. Վահէ Թանաշեանի, այցելեցին Մ. Նահանգներու Մասաչուսէց նահանգի Ներկայացուցիչներու Տուն եւ հանդիպում ունեցան նահանգի հայ երեսփոխան Դաւիթ Մուրատեանի հետ:



Հանդիպումին աւարտին, Երեսփոխան Մուրատեան պատուիրակութեան յանձնեց Մասաչուսէց նահանգի Ներկայացուցիչներու Տան հռչակագիրը՝ Հ.Մ.-Ը.Մ.-ի 100-ամեակին առիթով:

Հռչակագիրը կը փոխանցէ Մասաչուսէց նահանգի Ներկայացուցիչներու Տան անկեղծ շնորհաւորութիւնները Հ.Մ.-Ը.Մ.-ին, ճանչնալով անոր 100 տարիներու նուիրումը դեկալարելու եւ կազմաւորելու հայ երիտասարդութեան նկարագիրը, դիմագրաւելով մեր հայ համայնքներու կարիքները: Ներկայացուցիչներու Տան անդամները այս առիթով կը փոխանցեն իրենց լաւագոյն բարեմաղթութիւնները՝ յաղողութեամբ շարունակելու միութեան 100-ամեայ երթը:



Հանդիպումին աւարտին, հայ երեսփոխանին յանձնուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.-ի 100-ամեակի յուշանուէրը:

ՊՈՍԹ-ԸՆԻ ՄԱՄՆԱՃԻԻՂ

Նոյն օրը, Երեկոյեան, եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան եւ Հրաչ Մեսրոպեան հանդիպում մը ունեցան Պոսթընի մասնաճիւղի անդամներուն եւ համակիրներուն հետ: Հանդիպումին բացումը կատարեց մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Սեւակ Խաչատուրեան:

Այս առիթով, Շրջանային վարչութեան ատենապետ եղբ. Արամ Գայտերեան զեկուցեց շրջանի գործունէութեան եւ յաջորդող օրերուն տեղի ունենալիք 100-ամեակի ձեռնարկներուն մասին: Եղբ. Մկրտիչեան իր խօսքին աւարտին պատասխանեց ներկաներու հարցումներուն:

Արամ Գայտերեան զեկուցեց շրջանի գործունէութեան եւ յաջորդող օրերուն տեղի ունենալիք 100-ամեակի ձեռնարկներուն մասին: Եղբ. Մկրտիչեան իր խօսքին աւարտին պատասխանեց ներկաներու հարցումներուն:

Յայտնենք, որ մասնաճիւղերու հետ իր հանդիպումներուն ընթացքին, եղբ. Գառնիկ Մկրտիչեան ընդհանուր գիծերով ներկայացուց Հ.Մ.-Ը.Մ.-ի համաշխարհային կառույցը, Կեդրոնական վարչութեան կազմը եւ միութեան 100-ամեակին նուիրուած տօնակատարութիւններուն շարքը, որ տեղի ունեցաւ 20-29 Յունիս 2018-ին, Հայաստանի մէջ:

ՊՈՍԹ-ԸՆԻ «ՀԱՅՐԵՆԻՔ» ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Արեւելեան Մ. Նահանգներու շրջանայցելութեան վերջին օրը, Երկուշաբթի, 29 Հոկտեմբերին, եղբայրներ Գառնիկ Մկրտիչեան եւ Շրջանային վարչութեան անդամ Շանթ Ժամկոչեան, ընկերակցութեամբ Հ.Մ.-Ը.Մ.-ի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետուհի քոյր Լիոնի Սարմազեանին, այցելեցին «Հայրենիք» հաստատութիւն եւ հանդիպում մը ունեցան Հ.Յ.Գ. Արեւելեան Մ. Նահանգներու Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Ճորճ Աղճայեանի, անդամներ Ժանօ Աւետիսեանի, Կրէկ Պէտեանի, «Հայրենիք» շաբաթաթերթի խմբագիր Զաւէն Թորիկեանի, «Արմինիըն Ուիքլի»-ի խմբագիր Կարինէ Վանի եւ փոխ խմբագիր Լիզա Երէցեան-Առաքելեանի հետ:





Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԸ ԳԱՆԱՏԱՅԻ ՕՆԹԱՐԻՑ ՆԱՀԱՆԳԻՆ ՄԷՋ

Ցուրեր Փանոսեան-Սկրտիչեան ԸԷՄՊՐԻՃ

Բարձր հովանաւորութեամբ Գանատայի Հայոց Թեմի Աւագնորդ Բարգէն Արք. Չարեանի, հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան, նախագահութեամբ տէր եւ տիկ. Արթօ եւ Ալիա Մարգարեաններու, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի Շրջանային Վարչութեան, Շաբաթ, 24 Նոյեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 6.30-ին, Թորոնթոյի Համազգայինի թատերասրահին մէջ, պատկառելի հանդիսութեամբ մը նշուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակը:

Հանդիսութեան բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Թորոնթոյի ըսկառաններու մուտքով, որոնք դրօշակներով բեմ բարձրացան: Տեղի ունեցաւ դրօշակի պաշտօնական արարողութիւն, որմէ ետք Թորոնթոյի շեփորախումբը յաջորդաբար հնչեցուց Գանատայի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայ-

լերգները: Ապա, ներկաները յոտնկայ լուսթեամբ յարգեցին մեզմէ յաւատարմութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական քոյր-եղբայրներուն յիշատակը:

Օրուան հանդիսավարներն էին քոյր Ցուրեր Սկրտիչեան եւ եղբ. Արմէն Պալեոզեան: Բացման խօսքով Հ.Մ.Ը.Մ.Ի ներկայացուցաւ իբրեւ այն միութիւնը, որ իր յարկին տակ հաւաքած է

հայ մանուկն ու երիտասարդը, սատար հանդիսանալով անոնց մարմնակրթութեան եւ հայեցի դաստիարակութեան:

Բացման խօսքէն ետք ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի մասնաճիւղերուն կողմէ պատրաստուած տեսերիկ մը, որուն միջոցով Հ.Մ.Ը.Մ.Ի Գանատայի շրջանի սկառաններ, մարզիկներ եւ անդամներ հաւաքաբար իրենց շնոր-



հաւորական խօսքերը կը փոխանցէին 100-ամեակի առիթով: Բեմ հրաւիրուեցաւ քանոնահար Մատիանա Թորոսեան, որ ներկաներուն հրամցուց հայկական երաժշտական քանի մը կտորներ: Ապա, անոր միացան խումբ մը սկաուտներ՝ քոյրեր Անի Յովհաննէսեան, Լորա Տոնոյեան, Մարիա Գալուստեան, Միէլ Բնածեան եւ եղբ. Արամ Խաչիկեան, որոնք ասամուսնեցին Յակոբ Նալպանտ Տրյարեանի «Մեր սրտերու Հ.Մ.Ը.Մ.» ոտանաւորը՝ ընկերակցութեամբ քանոնի:

Բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետուհի քոյր Լիոնի Սարմազեան, որ մեծ հպարտութեամբ ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը եւ յայտնեց, թէ վերջին քանի մը տարիներուն ականատեսը ըլլալով Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանի անդամական թիւի աճման եւ աշխոյժ գործունէութեան, պարտք կը զգայ Շրջանային Վարչութեան անունով իր երախտագիտութիւնը յայտնելու բոլոր անոնց, որոնք իրենց ներդրումը ունեցած են շրջանի վերելքին: Քոյր Սարմազեան ըսաւ. «Պահ մը կանգ առնելով ու ետ նայելով 100-ամեայ, բայց միշտ երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան, կը զիտակցինք, որ այս միութիւնը հաստատ ու սոսկուն կանգնած, իր ծննդեան օրէն մինչեւ օրս կը գործէ նոյն թափով»:

Շրջանային Վարչութեան խօսքէն ետք, «Մառայութեան» շքանշան ստացան բազմապատասակ Հ.Մ.Ը.Մ.ական-



ներ՝ Թորոնթոյի մասնաճիւղէն եղբայրներ Միհրան Խաչերեան, Արթո Խաչերեան, Վահագ Եղոյեան, Վաչէ Պոյաճեան, Արի Քէսքինեան, Սէնթ Գէթրինգի մասնաճիւղէն եղբ. Սարգիս Քէշիշեան

եւ Գէմպրիճի մասնաճիւղէն եղբ. Մանաս Ղազարեան: Այս առիթով, Սուրբոյ Շրջանային Վարչութեան որոշումով, «Մառայութեան» շքանշան ստացաւ վերջերս շրջան հաստատուած եղբ. Վիգէն Գէորգեան:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի սկաուտներէն խմբակ մը ներկայացուց գաւազանի յատուկ խաղը: Յուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին պատրաստած 100-ամեակի տեսերիզը, որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ յատկապէս Հայաստանէն հրաւիրուած երգչուհի Կապի Կալոյեան եւ իր քաղցրահունչ ձայնով մեկնաբանեց Հայրենասիրական երկու երգ:

Օրուան պատգամաբերն էր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Եղբ. Մկրտիչեան իր խօսքին սկիզբը յայտնեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ը գործած է բոլորին





համար եւ բոլորին հետ, թէեւ 68 տարի գործած է հայրենիքէն դուրս, բայց միշտ գործած է հայրենիքին համար: Ան իր երախտագիտութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանին, որ իր նիւթական եւ բարոյական լայն աջակցութիւնը ցուցաբերեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան 100-ամեակի ձեռնարկներուն, նշելով որ այդ աջակցութեան շօշափելի փաստը կը հանդիսանայ շրջանին բարերարութեամբ կերտուած եւ Կիւմրիի մէջ կանգնեցուած Վահան Չերազի արձանը:



պարտականութիւնը կը թելադրեն այսուհետեւ ըլլալ աւելի պատրաստ՝ դիմագրաւելու մեր ժողովուրդին ու հայրենիքին սպառնացող բոլոր տեսակի մարտահրաւէրները»:

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առիթով, «Արտակարգ» շքանշան ստացան բազմապատակ ու հաւատաւոր երկու Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ Թորոնթոյի մասնաճիւղէն եղբ. Վահան Չալիքեան եւ Գէմպրիճի մասնաճիւղէն եղբ. Սամսոն Քահքէճեան, իսկ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին արժանացաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Արմէն Կէտիկեան:

Եղբ. Մկրտիչեան իր խօսքին մէջ շեշ-

տեց, որ «Մեր ժողովուրդը Հ.Մ.Ը.Մ.ին տուած է կամաւոր բանակի կոչում եւ պարտականութիւն, այդ կոչումն ու

Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Արմէն Կէտիկեան:

Հնչեց Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի քայլերդը եւ բեմ բարձրացաւ Վարդան Վրդ. Թաշճեան, որ իր սրտի խօսքով եւ «Պահպանիչ»ով փակեց հանդիսութեան պաշտօնական բաժինը:

Պաշտօնական հանդիսութենէն ետք, Թորոնթոյի Հայ Կեդրոնի սրահին մէջ տեղի ունեցաւ ճաշկերոյթ-պարահանդէս: Միջոցառումը ճոխացուց յատկապէս Հայաստանէն հրաւիրուած սիրուած երգչուհի Կապի Կարոյեան:





100-ԱՄԵԱԿԻ ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ՝ ՔԷՊԷՔԻ ՄԷՁ

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի 100-ամեակի Յանձնախումբ ԲԷՊԷՔ

Կազմակերպված է ամբողջ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային վարչութեան, Կիրակի, 25 Նոյեմբեր 2018-ի երեկոյան ժամը 6-ին, Ս. Յակոբ Ազգ. վարժարանի «Հաճէթեան» մարզարանին մէջ տեղի ունեցաւ միութեան հիմնադրութեան 100-ամեակին պաշտօնական հանդիսութիւնը:

Հանդիսութեան ներկայ եղան Գանատայի թեմի Առաջնորդ Բարգէն Արք. Չարեան, Սուրէն Արք. Գաթարոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտչեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թօփուզեան, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի Գանատայի տօնակատարութիւններու նախագահ տէր եւ տիկ. Արթո

եւ Ալիս Մարգարեաններ, Հ.Յ.Դ. Բիւրոյի անդամ Յակոբ Տէր Խաչատուրեան, Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Բաֆֆի Տօնապետեան, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային վարչութեան անդամներ, քոյր միութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ի ակաւն քոյրեր, եղբայրներ եւ համակիրներ:



Հանդիսութիւնը սկսաւ Մոնթրէալի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» եւ Լաւալի մասնաճիւղերուն սկաւտներուն տողանցքով: Մարիա Հապիպ բեմ բարձրանալով մենեզեց Գանատայի եւ Հայաստանի քայլերգները, ապա սկաւտներն ու ներկայները միասնաբար երգեցին Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգը:

Օրուան հանդիսավարներն էին եղբ. Ասատուր Արամեան եւ քոյր Թալին Ապրազեան: Եղբ. Ասատուր բարի գալուստ մաղթեց ներկայներուն եւ խնդրեց վարկեան մը յոտնկայս լուծեամբ յարգել միութենէն յաւէտ բաժնուած քոյրերուն եւ եղբայրներուն յիշատակը: Առաջին հերթին ցուցադրուեցաւ



տեսերիզ մը, որուն պատրաստութեան մասնակցած էին Գանատայի բոլոր մասնաճիւղերէն սկաուտներ եւ մարզիկներ: Անոնք իրենց սրտի ջերմ մաղ-

թանքները եւ շնորհալորական խօսքերը փոխանցեցին ներկաներուն:

Բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատե-

նապետ քոյր Լիոնի Սարմազեան: Քոյրը ներկայացուց շրջանին մէջ Հ.Մ.Ը.Մ-ի կատարած աշխատանքները եւ արձանագրած յաջողութիւնները: Ապա, ան բարի երթ մաղթեց Հ.Մ.Ը.Մ-ական իր քոյր-եղբայրներուն: Նաեւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց օրուան նախագահ տէր եւ տիկ. Արթօ եւ Ալիա Մարգարեաններուն, որոնք ստանձնեցին Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակի Գանատայի շրջանի ձեռնարկներուն նախագահութիւնը: Ան շեշտեց, որ նուիրումով գործող ազգայիններով է, որ կը զօրանան մեր միութիւնը եւ հայրենիքը: Ապա, եղբ. Գառնիկ Մկրտիչեան փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ պատրաստուած յուշանուէրը՝ Մարգարեան ամուլին:

Ելոյթ ունեցաւ «Պանծախի» նուագախումբը, ղեկավարութեամբ քոյր Լուսին Փամկոչեանի: Ան ներկայացուց ազ-



գային-յեղափոխական շարք մը երգեր՝ արժանանալով ներկաներու բարձր գնահատանքին:

Յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին պատրաստած տեսերիզին ցուցադրութիւնը: Տեսերիզը կը ներկայացնէր միութեան մէկ դարեայ պատմութիւնը՝ իր յաղթանակներով ու դժուարութիւններով, միշտ պատնէշի վրայ պահելով հայ պատանին եւ երիտասարդը, պատրաստելով Ֆիզիքսպէս տոկոն, իմացական եւ հոգեկան բարձր արժանիքի տէր հայեր եւ տիպար քաղաքացիներ:

Տեսերիզի ցուցադրութեան յաջորդեց «Գաւազանի խաղը», պատրաստուած՝ խումբ մը սկաուտներու կողմէ:

Այս առիթով, Շրջանային Վարչութիւնը նպատակադրմար գտաւ պարգեւատրել Հ.Մ.Ը.Մ.ական վաստակաւոր խումբ մը քոյրեր եւ եղբայրներ, որոնք տարիներ շարունակ գործած են բոլորին հետ, բոլորին համար, բարձրացած են ու բարձրացուցած, իրենց ջանքերով դառնալով միութեան հաւատարիմ նուիրեալներ:

Առ այդ, «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրուեցան քոյրեր էլիզ Պողոսեան, Թինա Ղազէլեան, Արշօ Դերձակեան, Հուրի Լիպարեան, եղբայրներ Արթօ Պասմաճեան, Գէորգ Պրիմճեան, Զաւէն Արթինեան, Գօգօ Օհաննէսեան, Վաչէ Ակոբեան եւ Սուրբոյ Շրջանային Վարչութեան Կողմէ առաջարկուած եղբ. Սեպուհ Գապագեան:



Պարգեւատրման արարողութենէն ետք բեմ հրաւիրուեցաւ օրուան պատգամաբեր, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ յատկապէս հրաւիրուած էր Գանատա՝ 100-ամեակի տօնա-

կատարութիւններուն մասնակցելու համար: Եղբ. Մկրտիչեան շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերն ու եղբայրները եւ գնահատեց շրջանին կատարած բոլոր աշխատանքները, ըլլան անոնք շրջանէն ներս եւ կամ համա-Հ.Մ.Ը.Մ.ական մա-

ԽՕՍՔ՝ ԵՐԱՆՏԻՔԻ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Գանապայի Շրջանային Վարչութիւնը իր երախտագիտութիւնը կը յայտնէ բոլոր անոնց, որոնք նիւթապէս թէ բարոյապէս օժանդակեցին Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի Գանապայի բոլոր շեռնարկներուն եւ փոստախմբութիւններուն: Յարուկ շնորհակալութիւն շեռնարկներու նախագահ Կրի եւ Կրիկ Արթօ եւ Ալիս Մարգարեաններուն, որոնք սիրալոյսով, Հ.Մ.Ը.Մ.ականի բարձր գիտակցութեամբ, կատարեցին իրենց նիւթակալ նուիրատւութիւնը:

Շնորհակալութիւն Գանապայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարգէն Արթ. Չարեանին, որ սրանչեց շեռնարկներուն բարձր հովանաւորութիւնը:

Շնորհակալութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ արեւմտապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին, որուն ներկայութիւնը փայլք փոստա 100-ամեակի պաշտօնական շեռնարկներուն եւ փոստախմբութիւններուն: Շնորհակալութիւն նաեւ անոր բոլոր այցելութիւններուն Գանապայի մասնաճիւղեր, վարժարաններ եւ Ազգային հասարակութիւններ:

Շնորհակալութիւն լրատուամիջոցներու բոլոր սփռումներուն, որոնց միջոցով 100-ամեակի շեռնարկները արձագանգ ունեցան:

Վերջապէս, շնորհակալութիւն բոլոր սկաուտներուն, մարզիկներուն եւ 1000-է աւելի հաշուող Հ.Մ.Ը.Մ.ական այն բոլոր քոյր-եղբայրներուն եւ համակիրներուն, որոնք հաւարուեցան միասնաբար նշելու իրենց սիրելի միութեան 100-ամեակը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՍՅԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ





կարգակի, բոլորին խրախուսելով նոյն թիվով շարունակել իրենց աշխատանքը:

Խօսքէն ետք, եղբ. Գառնիկ Մկրտիչեանի միացաւ եղբ. Մոսիկ Թօփուզեան եւ անոնք միասնաբար կատարեցին «Արժանեաց» շքանշանի տուչութիւն: Միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին արժանացան եղբայրներ Սեդրակ Պուրսայեան, Լեւոն Պէնկեան եւ Գէորգ Մանկէլեան (յետ մահու): «Արտակարգ» շքանշանով պարգեւատրուեցան եղբայրներ Տիրան Շահինեան, Գրիգոր Գուլյումեան եւ Բարդէն Կարապետեան:

Խօսք առաւ Առաջնորդ Բարդէն Արք. Չարեան: Ան ողջունեց բոլորը եւ իր ուրախութիւնը յայտնեց, որ կը գտնուի պատկառելի միութեան մը 100-

ամեակի հանդիսութեան: Ան իր ջերմագին բարեմաղթութիւնները փոխանցեց ներկաներուն: Առաջնորդը իր խօսքին մէջ շեշտեց, որ այսօրուան հաւաքը,



Հ.Մ.Ը.Մ.ի դրօշին ներքեւ, կը պարտինք միութեան հիմնադիր եղբայրներուն, որոնք օրին մարգարէութիւնը ունեցան կռահելու, թէ իրենց ժամանակի երեխաները ապագային զօրաւոր եւ տուկուն նկարագիրով օժտուելու համար կրնան հոգեւոր ու Ֆիզիքական անուող տուող միութեան մը կարիքը ունենալ: Առաջնորդը ոյժ, կորով եւ բարի երթ մաղթեց բոլորին ու «Պահպանիչ»ով աւարտեց իր խօսքը:

Հնչեց Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած քայլերգը եւ սրահ մուտք գործեցին ապագայ սերունդի փոքրիկները՝ իրենց ձեռքերուն բարձրացուցած Եռագոյն փուշիկներ:

Հանդիսութեան յաջորդեց խրախուսանք:

Խրախուսանքը վարեցին եղբայրներ Վարդգէս Քիւլիշեան եւ Բաֆֆի Դաւիթեան: Այս առիթով, Լոս Անճելըսէն հրահարուած երգիչ Քրիստափոր Արապեան բեմ բարձրացաւ ազգային-հայրենասիրական երգերով՝ ճոխ մթնոլորտ մը ստեղծելով եւ ներկաները խանդավառելով: Տօնական մթնոլորտը տեւեց մինչեւ ուշ գիշեր: Ներկաները իրենց հետ ո՛չ միայն 100-ամեակի զեղեցիկ պահերը տուն տարին, այլեւ՝ իւրաքանչիւր սեղանի վրայ զետեղուած միութեան գործունէութեան զանազան առիթներու պատկերները, որպէսզի անգամ մը եւս մտաբերեն եւ վերակենդանացնեն բոլորին ապրած քաղցր յուշերը այս հարգատ միութեան մէջ:



100-ԱՄԵԱԿԻ ՊԱՀՏՕՆԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ՝ ՕԹԱՌԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԻ ՀԷՆՔԻՆ ՄԷՁ

- ԳԱՆԱՏԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԿԸ ՇՆՈՐՀԱԽՈՐԷ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԸ

Շողիկ Ազարիկեան ՕԹԱՌԻԱ

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակի տօնակատարութիւններու ծիրէն ներս, Գանատայի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, Երկուշաբթի, 26 Նոյեմբեր 2018-ի կէսօրէ ետք ժամը 2.30-ին, Օթաուայի խորհրդարանի շէնքին մէջ տեղի ունեցաւ 100-ամեակի պաշտօնական ընդունելութիւն, ներկայութեամբ խորհրդարանի անդամներ Պրայան Մէյի, Հարոլտ Ալպրէիսթի, Կենկ Թանի, Պոպ Սարոյայի, Ֆայսալ Նուրիի, Ռամէշ Սանդայի, Ֆրէնք Պէյլիսի եւ երեսփոխան Ժան Եիփի օգնականին, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարգէն Արք-Չարեանի, Ազգային Վարչութեան անդամներու, Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Ժիրայր Զաքարեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական, Շրջանային Վարչութիւններու եւ մասնաճիւղերու ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ Օթաուայի մէջ գործող քոյր միութիւններու ներկայացուցիչներու եւ հրաւիրեալներու: Ընդունելութեան բացու-

մը կատարեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան նախկին անդամ եղբ. Ժանօ Սարխանեան: Ան բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ հրաւիրեց եղբ. Տանի Սարկորեանը՝ փոխանցելու Շրջանային Վարչութեան խօսքը: Ապա, ցուցադրուեցաւ այս առիթով պատրաստուած տեսերիզ մը:

Տեսերիզէն ետք, «Պանծալի» նուագախումբը հանդէս եկաւ յեղափոխական երգերու նուագով, որմէ ետք բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտչեան: Ան իր գոհունակութիւնը յայտնեց Գանատայի շրջանին մէջ կատարուող Հ.Մ.Ը.Մ.ական աշխատանքներուն համար եւ քաջալերեց, որպէսզի նոյն թափով շարունակուի երթը՝ հայ պատանիին ու երիտասարդին ջամբելու հոգեմտաւոր սնունդ եւ ֆիզիքական առողջ դաստիարակութիւն:

Ընդունելութեան ընթացքին խօսքեր արտասանեցին գանատացի երեսփոխանները եւ Հայաստան-Գանատա խորհրդարանական բարեկամութեան խումբին ատենապետը, որ նաեւ ընթերցեց Գանատայի վարչապետ Ճասթին Թրոտտոյի խօսքը (տեսնել էջ ..): Այնուհետեւ, Հայաստան-Գանատա խորհրդարանական բարեկամութեան խումբի



փոխ նախագահը եւ Հայաստանի դեսպանատան խորհրդականը հանդէս եկան Հ.Մ.Ը.Մ.ը դրուատող խօսքերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

Նոյն օրը, աւելի կանուխ, ազգային պատուիրակութիւն մը այցելեց Օթաուայի մէջ Հայաստանի դեսպանատունը: Պատուիրակութիւնը գլխաւորեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարգէն Արք. Չարեան: Պատուիրակութեան մաս կազմեցին Ազգային Վարչութեան անդամներ, Հ.Մ.Ը.Մ.ի

Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ քոյր Լիոնի Սարմազեան եւ վարչութեան անդամներ, ինչպէս նաեւ՝ Հ.Յ.Դ. Գանատայի Կեդրոնական Կոմիտէի անդամ Ժիրայր Չաքարեան: Հիւպատոսին հիւրընկալութեամբ, պաշտօնական խօսքերու փոխանակումէն ետք, եղբ. Գառնիկ Մկրտիչեան Հ.Մ.Ը.Մ.ին կողմէ յուշանուէր մը փոխանցեց հիւպատոս Արա Մկրտչեանին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ՀԱՆԴՈՒՄՆԵՐԸ՝ ԳԱՆԱՏԱՅԻ ՄԱՍՆԱԾԻՂԵՐՈՒ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐՈՒՄՆ ՀԵՏ

Թղթակից ԹՈՐՈՆԹՕ

Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութիւններուն առիթով Գանատա ժամանած Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան Օթաուայի, Մոնթրէլի, Լաւալի, Գէմպրիճի, Սէնթ Գաթրիէի եւ Հէմիլթընի մէջ այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղերու կեդրոններ եւ գաղութի ազգային կառույցներ: Այսպէս՝

● Երկուշաբթի, 26 Նոյեմբեր 2018-ին, եղբ. Մկրտիչեան բազմանդամ պատուիրակութեամբ մը այցելեց Օթաուայի մէջ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատուն:

Դեսպանատան այցելութենէն ետք, Օթաուայի խորհրդարանի շէնքին մէջ տեղի ունեցաւ պաշտօնական ընդունելութիւն՝ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակին առիթով (Այս մասին տեսնել էջ 91):

● 27 Նոյեմբեր, 2018-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու-



թեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մոսիկ Թոփուզեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային

Վարչութեան ատենապետ Քոյր Լիոնի Սարմազեանի եւ Շրջանային Վարչութեան անդամներու, այցելութիւն մը տուաւ Մոնթրէլի Ս. Յակոբ ամէնօրեայ վարժարան, ուր դիմաւորուեցաւ վարժարանի տնօրէնուհի Լոուի Ապրաքեանի եւ վարժարանի աշակերտներուն կողմէ, որոնք այդ օր հազած էին Հ.Մ.Ը.Մ.ի սկստական եւ մարզական իրենց տարագները: Եղբ. Գառնիկ իր սրտի խօսքը ուղեց աշակերտներուն:

Երեկոյեան, ան հանդիպում մը ունեցաւ Մոնթրէլի Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի վարչութեան եւ անդամներուն հետ: Ապա, տեղի ունեցաւ ընդունելութիւն:





Մոնթրեալ

●28 Նոյեմբերին, եղբ. Մկրտիչեան այցելեց Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդարան, ուր տեսակցեցաւ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Բարգէն Արք. Չարեանին հետ: Ապա, ան այցելեց «Հորիզոն» շաբաթաթերթի խմբագրատուն, ուր հանդիպեցաւ խմբագիր Վահագն Գարագաշեանին հետ եւ հարցազրոյց մը տուաւ թերթին:

Երեկոյեան, ան հանդիպում մը ունեցաւ Լաւալի մասնաճիւղի վարչութեան հետ, ապա տեղի ունեցաւ ընդունելութիւն, ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ական անդամներու եւ քոյր միութիւններու ներկայացուցիչներու:

●30 Նոյեմբերին, եղբ. Մկրտիչեան հանդիպում մը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղի վարչութեան հետ, որմէ ետք Հ.Մ.Ը.Մ.ական քոյր-եղբայրներ եւ համակիրներ հաւաքուեցան Գէմպրիճի Կեդրոն՝ դիմաւորելու Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը: Այս առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Գէմպրիճի մասնաճիւղի վարչութիւնը յուշանուէրներով պատուեց եղբ. Մկրտիչեանը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ատենապետ Քոյր Լիոնի Սարմազեանը:

●2 Դեկտեմբերի առաւօտեան, եղբ. Մկրտիչեան այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի սկաուտներուն, որմէ ետք ան ուղղուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Սէնթ Գաթրինայի եւ Հէմիլթընի մասնաճիւղեր:

●3 Դեկտեմբերին, եղբ. Մկրտիչեան հարցազրոյց մը ունեցաւ Թորոնթոյի «Հայ Հորիզոն» պատկերասփիւռի կայանէն,



Գէմպրիճ

որմէ ետք ան այցելեց Հ.Մ.Ը.Մ.ի Թորոնթոյի մասնաճիւղի վարչութեան եւ անդամներուն: Ան հանդիպումներ ունեցաւ նաեւ պատկան մարմիններու ներկայացուցիչներուն հետ:

Իր բոլոր այցելութիւններուն ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետը մանրամասնօրէն զեկուցեց Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի ձեռնարկներուն մասին, որոնք մեծ շուքով տեղի ունեցան Հայաստանի մէջ: Եղբայրը նաեւ իր երախտագիտական խօսքը ուղղեց Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի շրջանին, որ ստանձնեց Կիւմրիի մէջ Վահան Չերազի արձանին կառուցման «Կնքահայրութիւնը»:



Լաւալ



Սէնթ Գաթրինա
եւ Հէմիլթըն



Թորոնթո

Իր խօսքին մէջ, եղբ- ձիւպէյեան յայտարարեց այս առիթով միութեան ստացած շնորհաւորական նամակները: Ապա, Շրջա- նային Վարչութեան եւ Պուէնոս Այրէսի մասնա- ճիւղի վարչութեան ան- դամները գաղութի հայ- կական վարժարաններու ներկայացուցիչներուն յանձնեցին յուշատախ- տակներ, առ ի գնահա- տանք՝ հայեցի կրթու- թեան եւ ազգային ինքնու- թեան պահպանման ի խնդիր անոնց տարած անխոնջ աշխա- տանքին:

Առ ի երախտագիտութիւն ժան եւ Գարմէն Աբգարեան հիմնարկին մնայուն օժանդակութեան, եղբայրներ Արմանտօ Թորգոմեան եւ Օրասիօ Թերգեան յատուկ յուշատախտակ մըն ալ յանձնեցին Աբգարեան ամուլին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Ձեռնարկին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատ- գամը փոխանցեց Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ- Արմանտօ Թորգոմեան: Եղբայր արտայայտուեցաւ հայերէն լեզուով: Ան յիշեց հայ ժողովուրդի Ցեղասպանութենէն հոք հիմնուած միութեան 100-ամեայ պատմութիւնն ու իտէալները: «Հ.Մ.Ը.Մ.ը հիմնուեցաւ ծառայելու համար հայ ժողո- վուրդին եւ այս աշխատանքը կը կատարուի 100 տարիէ ի վեր», յայտնեց եղբ. Թորգոմեան: «Այսօր Հ.Մ.Ը.Մ. կը տօնէ 100-ամեակը, յաղթահարելէ հոք իր դէմ ցցուած բոլոր մար- տահրաւէրները: ...Ցեղասպան թուրքը երբեք չերեւակայեց, որ երբ հայ ժողովուրդը բնաջնջէ եւ իր հողերէն դուրս քշէ, հայերը աշխարհի տարածքին, Սփիւռքի մէջ, պիտի հիմնեն



հարիւրաւոր փոքր Հայաստաններ, ուր Հ.Մ.Ը.Մ.ը պիտի դառնայ անոնցմէ ամէն մէկուն հիմնական սիւներէն մէկը: 100 տարուան պայքար, 100 տարի շարունակ մեր ինքնութեան պաշտպան, 100 տարի արդարութեան ի խնդիր պայքար, 100 տարուան ընթացքին նպատակներու եւ հիմնական արժէքնե- րու համահունչ պահպանում, 100 տարիէ ի վեր կ'ապացու- ցենք որ աւելի արթուն եւ հաստատ ենք՝ քան երբեք... Թուրք- իոյ եւ անոր դաշնակից Ազրպէյճանի նպատակները ձախողե- ցան եւ պիտի շարունակեն ձախողիլ, այնքան ատեն որ հազա- րաւոր երիտասարդներ կը շարունակեն աշխատիլ Հ.Մ.Ը.Մ.ի մէջ», շարունակեց եղբայրը:

Շարունակելով, եղբ. Թորգոմեան յիշեց միութեան հիմ- նադիրները եւ հաստատեց, որ ամէնօրեայ աշխատանքը յստակ ապացոյց է, թէ մարգախաղերու, սկառտութեան եւ ընկերային գործունէութեան միջոցով կ'իրագործուի Հ.Մ. Ը.Մ.ի հիմնադիրներուն երազը:

«Կը փոխանցեմ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչութեան ող- ջոյնները լուսանկարներու այս ցուցահանդէսին, որ կ'ամփո- փէ Հ.Մ.Ը.Մ.ի ամբողջ պատմութիւնը», յայտնեց եղբայրը:

Իր խօսքը աւարտելէ առաջ, եղբ. Թորգոմեան շնորհակա- լութիւն յայտնեց «Արմենիա» թերթին՝ «մեր գործունէու- թեան իր գնահատելի ներդրումին, իբրեւ պատմական ար- խիւներու անհրաժեշտ աղբիւր մը»: Ան նաեւ իր երախտագի-





տուեթիւնը յայտնեց աշխարհի հայկական դպրոցներուն եւ յատկապէս շրջանի վարժարաններուն, որոնք հական դեր կը կատարեն հայ լեզուի եւ մշակոյթի պահպանման ի խնդիր:

«100-ամեակի նշանաբանն է՝ «փառաւոր անցեալէն յաղթական ապագայ»: Այս նշանախօսքով կոչ կ'ուղղեմ բոլորիս, ուս-ուսի շարունակելու մեր աշխատանքը, որպէսզի մեր միութիւնը եւ հայութիւնը ունենան արժանաւոր ապագայ մը», եզրափակեց եղբ. Արմանտո Թորգոմեան:

Փակման խօսքով, իր օրհնութիւնները փոխանցեց Գիսակ Արք. Մուրատեան: Ան շնորհաւորական խօսքեր արտասանեց եւ ներկաները քաջալերեց շարունակելու ցարդ կատարուած աշխատանքը. «Չմանք անցեալի եւ հիմնադիրներու յիշատակով... դիտանք ի՞նչ է մեր առաքելութիւնը եւ նոր սերունդներուն փոխանցենք մեր մեծերուն պատգամը»: Այս խօսքերէն ետք, Առաջնորդը օրհնութեամբ եւ «Հայր մեր»ով փակեց ձեռնարկը:

**100-ԱՄԵԱԿԻ ՄՆԱՅԵԱԼ
ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակը պատշաճ կերպով նշելու համար, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւնը Օգոստոս 2017-ին կազմեց 100-ամեակի յատուկ յանձնախումբ մը, որուն մաս կազմեցին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամներ եւ պատասխանատու այլ եղբայրներ, ատենապետութեամբ՝ եղբ. Աբրահամ Ահարոնեանի:

100-ամեակի յանձնախումբին գլխաւոր իրազործումը եղաւ լուսանկարներու ցուցահանդէսին կազմակերպումը: Կ'արժէ նշել, սակայն, որ 100-ամեակի տօնակատարութիւնները սկիզբ առին 2018-ի Շրջանային բանակումով, որ տեղի ունեցաւ Գորտոպայի մէջ, մասնակցութեամբ Հարաւային Ամերիկայի շրջանի 150 սկաուտներու: 100-ամեակը յատուկ ընթերցող նշուեցաւ նաեւ Մոնթէվիտէոյի մէջ կատարուած 2018-ի Նաւասարդեան խաղերուն ընթացքին:

Ցուցահանդէսէն ետք, 23 Նոյեմբեր 2018-ին, տեղի ունեցաւ երիտասարդութեան համար յատուկ հանդիսութիւն մը, որուն ընթացքին յուշամետալներ յանձնուեցան միութեան ապագան հանդիսացող մարզիկներուն եւ սկաուտներուն:



**Լիւսի Գործալեան
ՍԻՏԻ**

Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութիւնը միութեան 100-ամեակը նշեց ժողովրդային տօնակատարութեամբ մը, որ տեղի ունեցաւ Կիրակի, 18 Նոյեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 6-ին, Չիլիմոնտէյի Սէյմուր Սենթրի ամփիթատրոնը, ներկայութեամբ հայ քաղաքական, ազգային, եկեղեցական մարմիններու ներկայացուցիչներու եւ շուրջ 500 հանդիսականներու: Ներկաներու շարքին էին Աւստրալիոյ եւ Նոր Զելանտայի Հայոց Առաջնորդ Հայկազուն Եպս. Նաճարեան, Նիւ Սաութ Ուէյլզի նահանգապետ Կլաութիս Պէրէճիքլ-



Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԱՖՍՏՐԱԼԻՈՅ ՄԷՁ

եան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, որ այս առիթով ժամանած էր Պէյրութէն:

Տօնակատարութեան բացումը կատարուեցաւ շեփորահարմարով եւ սկաուտական տողանցքով: Աւստրալիոյ, Հայաստանի եւ սկաուտութեան քայլերգներու կատարումէն ետք, ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգեցին յիշատակը մեզմէ յաւերժ բաժնուած Հ.Մ.Ը.Մ ականներուն:

Բացման խօսքը արտասանեց քոյր Զարմիկ Քէյվանեան: Ան յիշեց, որ Հ.Մ.Ը.Մ-ը ամբակուռ երաշխիքն է հայ ժողովուրդի գոյատեւման եւ յառաջդիմութեան, մեր բոյորին լուսաւոր եւ անխորտակի խարխիւնն է, հզօր վկայութիւնը մեր ցեղային հանճարի յաւերժական տոկունութեան:

Յաջորդեց 100-ամեակի տեսերիզին ցուցադրութիւնը, որմէ ետք Հ.Մ.Ը.Մ-ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Վահրատեան փոխանցեց Շրջանային Վարչութեան խօսքը: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակը սովորական երեւոյթ մը չէ, այլ՝ յարգանքի ու երախտագրութեան արտայայտութիւն մըն է:




Այնուհետեւ, օրուան հանդիսավարը բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը, որպէսզի փոխանցէ օրուան պատգամը:

Իր պատգամին մէջ, եղբ. Մկրտիչեան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ-ական երիտասարդ-երիտասարդուհիները ամբողջ կամքով պատրաստ են շարունակելու աշխատանքը՝ յանուն հայրենական արդար դատին յողթանակին:

Եղբ. Մկրտիչեանի խօսքէն ետք, բեմ հրաւիրուեցաւ Նիւ Սառլի Ուէյլի նահանգի եւ խորհրդարանի անդամ Կլաւիս Պէրէճիքեանը, որուն յանձնուեցաւ 100-ամեակի յուշանուէրը եւ դրոշմաթուղթը: Պէրէճիքեան յայտնեց, որ ինք երախտապարտ է Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին եւ անոր տարած բո-





ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ՝ ԱՄՍՏՐԱԼԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

100-ամեակի փոսակապարտքեան մասնակցելու համար Միսրի այցելող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան արեւնապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կիրակի, 18 Նոյեմբեր 2018-ին, այցելեց Աւստրալիոյ Ազգային Առաջնորդարան, ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վիգէն Քորթեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան արեւնապետ եղբ. Տիրան Վահրապետանի եւ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գոյոզոսեանի: Աւստրալիոյ եւ Նոր Զելանդիայի Հայոց Առաջնորդ Հայկազուն Եպս. Նաճարեանի կողքին, այցելութեան ներկայ գրանուցան քննական խորհուրդի արեւնապետ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Սարգիս Տէր Պեպրոսեան, Ս. Յարութիւն եկեղեցւոյ ծխական խորհուրդի արեւնապետ Պեպրոս Զօրլու, ծխական խորհուրդի անդամ Վազգէն Ամիրզայեան եւ Առաջնորդարանի դիւանապետ Նշան Պասմաճեան:

Այս առիթով եղբ. Գառնիկ Մկրտիչեան շնորհատրեց Ազգային Առաջնորդարանի նոր շէնքը, շեշտեց կարեւորութիւնը Առաջնորդարանի կառոյցին եւ ընդգծեց Առաջնորդարաններու խաղացած դերը մեր հոգեւոր թէ ազգային կեանքին մէջ: Եղբայրը նաեւ իր զոհունակութիւնը յայտնեց նոյն օրը, առաւօպեան, Պարարագի ընթացքին, Առաջնորդ Սրբազանին արքայաւանսած հայրական պարգումին համար:

Իր կարգին, Առաջնորդը դրուարիքով խօսեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ շրջանին կարարած աշխարհաքննելուն, մեծցող սերունդին ջանքունող հայեցի դասարարակութեան եւ Ազգային Առաջնորդարանին հետ գործակցութեան մասին:

Շուրջ մէկ ժամ փեւսած այցելութեան ընթացքին քննարկուեցան Հայաստանը, հայ եկեղեցին եւ Հ.Մ.Ը.Մ.ը յուզող հարցեր:

Եւր աշխատանքներուն համար: Ան իր ջերմագին շնորհակալութիւնները յայտնեց հայերէնով եւ անգլերէնով:

Խօսքերէն ետք, բեմ բարձրացաւ հայրենի սիրուած երգիչ Ռազմիկ Ամեան եւ երեկոն ճոխացուց հայերէն ժողովրդային եւ ազգային երգերով:

Տօնակատարութեան երկրորդ բաժնով ցուցադրուեցաւ միութեան 100-ամեակի տեսերիզը, որմէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Տիրան Վահրապետան կրկին անգամ բեմ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանը՝ անոր նուիրելու միութեան 100-ամեակի յուշանուէրը:

Հուսկ, հայրական իր պատգամը փոխանցեց Աւստրալիոյ եւ Նոր Զելանդիայի Հայոց Առաջնորդ Հայկազուն Եպս. Նաճարեան: Ան շեշտեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը կազմակերպութիւն մը ըլլալէ առաջ ոգի մըն է, մարդկային, միութեանական, ազգային առողջ ու հարազատ ապրումներու հորիզոն մը:

Առաջնորդ Սրբազան հօր պատգամէն ետք, երգիչ Ռազմիկ Ամեան եւ նուագախումբը շարունակեցին օրուան գեղարւեստական յայտագիրը՝ ժողովրդային, աշուղական եւ ազգային-յեղափոխական երգերով: Ռազմիկ Ամեանի կարգ մը երգերուն ընկերակցեցաւ Համազգայինի պարախումբը:



ԿԻՊՐՈՍԻ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-Ի 100-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԲՈՐ ՁԵՌՆԱՐԿԸ

Յակոբ Գազանձեան ՆԻԿՈՍԻԱ

Նովանաւորութեամբ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Խորէն Արք. Տողրամաճեանի, Շաբաթ, 27 Հոկտեմբեր 2018-ի երեկոյեան ժամը 7-ին, Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի մարզադաշտին մէջ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակին նուիրուած հանդիսաւոր ձեռնարկ:

Ձեռնարկը սկսաւ սկառտական տողանցքով: Ապա, հնչեցին Կիպրոսի եւ Հայաստանի քայլերգները: Պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեան եւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի ատենապետ եղբ. Ճորճ Թորոսեան վառեցին սկառտական կայմին վրայ գտնուող զոյգ ջահերը: Բացման խօսքը կատարեց քոյր Վարդուկ Սարգսեան: Ողջունելէ ետք ներկաները, ան ըսաւ, որ տասնամեակներու ընդմէջէն, Հ.Մ.Ը.Մ-ը առատօրէն բարիք սերմանեց, առատօրէն ջրեց, գուրգուրաց, հաւատաց ու վստահեցաւ, որ 100-ամեակ թեւակոխելը իսկապէս կարելի է:

Յայտագիրի առաջին բաժինով ելոյթ ունեցան գայլիկ-արծուիկները, որոնք արտասանութեամբ ներկայացուցին Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեայ երթը: Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի ատենապետ եղբ. Ճորճ Թորոսեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ-ը իր զոյգ թեւով՝ մարզական եւ սկառտական, կը հանդիսանայ հայ իրականութեան մեծագոյն միութիւնը: Իր 110 մասնաճիւղերով ան հպարտութիւն կը ներշնչէ: Միութիւն մը, որ արժանի է յիշատակութեան: Ան տարեկից է Հայաստանի Ա. Հանրապետութեան: Ամբողջ դար մը ան դարձաւ ազգային առողջ գաղափարախօսութեան մը անլռելի ու ժրջան խօսնակը:

Ապա տեղի ունեցաւ սկառտական խոստման արարողութիւն: Գայլիկ-արծուիկներ իրենց խոստումը տուին հաւատարիմ մնալու Աստուծոյ, ազգին ու հայրենիքին: Յաջորդեց աստիճաններու տուչութիւն, ինչպէս նաեւ՝ պէճերու եւ վկայագիրներու բաշխում բոլոր այն սկառտներու, որոնք անցնող տարեշրջանին ընթացքին զանազան աշխատանքներու միջոցով յաջողութիւններ արձանագրեցին:

Ձեռնարկին աւարտին խօսք առաւ Սրբազան Հայրը եւ փոխանցեց իր պատգամը: Ձեռնարկը փակուեցաւ «Յառաջ, նահատակ» քայլերգով եւ «Պահպանիչ»ով: Յաջորդեց խրախճանք՝ Հ.Մ.Ը.Մ.-ՀԵՄ-ի սրբահին մէջ:





Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԲՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՒԻՆ՝ ԱԹԷՆՔԻ ՄԷՋ

Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի Շրջանային Վարչություն ԱԹԷՆՔ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչության հովանաւորութեամբ, Յունաստան թեմի Առաջնորդ Գեղամ Արք. Խաչերեանի բարձր նախագահութեամբ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Յունաստանի Շրջանային Վարչության

չունի կազմակերպութեամբ, միութեան հիմնադրութեան 100-ամեակի պաշտօնական տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 17 Նոյեմբեր 2018-ին, Աթէնքի «Աննա եւ Մարիա Գալուսիա» թատերասրահին մէջ:

Իրենց ներկայութեամբ տօնակատարութիւնը պատուեցին Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչության ատենադպիր եղբ. Բաֆֆի Կէօլօղլանեան, Յունաստանի մօտ Հայաստանի լիազօր եւ արտակարգ դեսպան Ֆաթէյ Չարչօղլեան, ազգային մարմիններու ներկայացուցիչներ, Յունաստանի մարզական եւ սկստական ֆետերասիոններու ներկայացուցիչներ եւ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական հոծ թիւով բազմութիւն մը:

Տօնակատարութեան սկիզբը սրահ մուտք գործեցին Յունաստանի եւ Հայաստանի ազգային դրօշները. հնչեցին

Տօնակատարութեան սկիզբը սրահ մուտք գործեցին Յունաստանի եւ Հայաստանի ազգային դրօշները. հնչեցին



երկու երկիրներու ազգային քայերգները:

Տօնակատարութեան բացման խօսքը արտասանեց եւ հանդիսավարութիւնը կատարեց քոյր Լոուի Պարագեան: Ան իր խօսքին մէջ նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ական բազմաթիւ մտաւորականներ, ղեկավարներ, սկաուտապետներ ու տեսաբաններ, տարբեր ժամանակներու մէջ փորձած են բնորոշել Հ.Մ.Ը.Մ.ական եղբոր ու քրոջ կերպարը, անոր միութենական, գաղափարական ու բարոյական յատկանիշները, մէկ խօսքով՝ անցեալի ու ներկայի դիմագիծը, որ ուղղակիօրէն շողկապուած է Հ.Մ.Ը.Մ.ական մարզու, հայ մարզու որակեալ գործօնին հետ, որ կը հետապնդէ պայքարի յստակ նպատակ ու թիրախներ, բոլոր ժամանակաշրջաններու հայ կեանքի պահանջներէն բխող մարտահրաւէրներով:

Ապա, ան աւելցուց, որ բազմաթիւ են Հ.Մ.Ը.Մ.ական նուիրեալները, որոնց մտքի, գրչի, գործի, ծառայութեան ու նուիրումի ազդեցութեան, որակաւորման ու վերանորոգումին փոխանցած շունչով Հ.Մ.Ը.Մ.ը ներկայութիւն է հայ կեանքի բոլոր մարզերուն մէջ՝ իր անփոխարինելի հետքը ձգելով: Անկասկած, սակայն, ամէնօրեայ պայքարի վերոյիշեալ բարոյական ու գաղափարական բոլոր յատկանիշներու գումարին գերազոյնը գլխադիր մարզն է, հայ մարզը, Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրը, որ անմիջականօրէն իր առաքելութեան ու



ՊԱՐԳԵԻԱՏՐԵԱԼՆԵՐԸ


ԵՂԲ. ԿԱՐՈ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Եղբ. Կարո Յովակիմեան ծնած է 9 Յուլիս 1946-ին, Փորէա: Դ.Ս.Ը.Մ.ին մաս կազմած է 1973-ին:

1973-էն սկսեալ ան ընտրուած է Դ.Ս.Ը.Մ.ի Գոքինիոյ մասնաճիւղի վարչութեան անդամ: 1984-էն ետք, ութը նստաշրջան ան մաս կազմած է Դ.Ս.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան յաջորդական կազմերուն, եօթը նստաշրջան՝ ատենապետի պաշտօնով:

Եղբ. Կարո մաս կազմած է նաեւ Յունահայոց Ազգային Վարչութեան եւ թեմական մարմնին: Ան եղած է Գոքինիոյ Չաւարեան Կեդրոնի շինարարական յանձնախումբի անդամ:

Միութենական իր երկարամեայ գործունէութեան առ ի գնահատանք, եղբ. Յովակիմեան 1990-ական տարիներուն Դ.Ս.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան կողմէ պարգեւատրուած է միութեան «Ծառայութեան» շքանշանով:



ԵՂԲ. ՊՊՂՈՍ ՉՈՒԱՔԵԱՆ

Եղբ. Պողոս Չոլաքեան ծնած է 11 Յունիս 1954-ին, Գոքինիա: Դ.Ս.Ը.Մ.ին մաս կազմած է շատ կանուխ տարիքէն, հազիւ հինգ տարեկանին, իբրեւ գայլիկ: Սկաուտական շարքերու անդամակցութենէ ետք, եղբ. Չոլաքեան եղած է Շրջանային ըՍկաուտ. Խորհուրդի անդամ եւ Շրջանային ընդհանուր խմբապետ: Այնուհետեւ, հինգ նստաշրջան ան ընտրուած է Դ.Ս.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան անդամ, երեք նստաշրջան՝ ատենապետի պաշտօնով:

Դ.Ս.Ը.Մ.ական սկաուտութեան առընթեր, եղբ. Պողոս Չոլաքեան մաս կազմած է Յունաստանի սկաուտութեան ղեկավար մարմնին, Դ.Յ.Դաշնակցութեան Յունաստանի Կեդրոնական Կոմիտէին եւ Յունահայոց Ազգային Վարչութեան:



կենսունակութեան շողկապած է հայ կեանքի ու հայրենիքի ձգտումներու շարունակականութեան հետ արտերկրի եւ վերջին տարիներուն Հայաստանի, Արցախի, Չաւախքի, Վրաստանի, Մոսկուայի հետզհետէ աճող մասնաճիւղերով, ամրապնդելով Հայաստան-Սփիւռք գործակցութիւնը, առանց հատուածական որեւէ խտրականութեան:

Քոյր Լոուի իր խօսքին աւարտին ներ-

կաներէն խնդրեց յօտնկալս յարգել յիշատակը ննջեցեալ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Վարչութեան խօսքը ներկայացուց ատենապետ եղբ. Յակոբ Եթիմեան: Իր խօսքին աւարտին, ան յուշանուէրներ յանձնեց շրջանի երեք մասնաճիւղերու՝ Աթէնքի, Գոքինիոյ եւ Սելանիկի վարչութիւններուն:



100 տարի առաջ միութեան գաղափարը յղացող հիմնադիր սերունդի կտակին եւ տեսլականին հաւատարիմ մնալն է»:

Եղբ. Կէօփօղլանեան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի Յունաստանի շրջանի դերակատարութեան եւ յայտնեց, որ շրջանը ունեցած է յատկանշական եւ պատկառելի դերակատարութիւն՝ համագաղութային եւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական նախաձեռնութիւններու մէջ: Արդարեւ, 1978-ին, Քալամոսի մէջ տեղի ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային Ա. Ընդհանուր Բանակումը: 1990-ին, Այա Մարինայի մէջ տեղի ունեցած է համագաղութային Դ. Ընդհանուր Բանակումը: Իսկ 2005-ին, Աթէնքի մէջ տեղի ունեցած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական 7-րդ մարզախաղերը:

Այս առիթով բեմ հրաւիրուեցան իրենց ողջօյնի խօսքերը փոխանցելու Հ.Յ.Դ. Կեդրոնական Կոմիտէի անդամ Յարութիւն Մանուկեան եւ Յունաստանի մօտ Հայաստանի լիազօր եւ արտակարգ դեսպան Ֆաթէյ Չարչօղլեան:

Յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեայ պատմութեան տեսերիզի ցուցադրութիւնը:

Օրուան պատգամը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Բաֆֆի Կէօփօղլանեան:

Եղբ. Կէօփօղլանեան իր խօսքին սկիզբը նշեց, որ «Իր հիմնադրութենէն ճիշդ 100 տարի ետք, այսօր, Հ.Մ.Ը.Մ. արդար հպարտութեամբ ու պարծանքով կը կանգնի, ճակատը բաց, ու հայ ազգի պատմութեան հսկայ հատորին մէջ, ոսկեայ տառերով կը ստորագրէ իր իրագործումներուն երկար ցանկը:

Հ.Մ.Ը.Մ. կը կանգնի հոգեկան մեծ գոհունակութեամբ: Այդ գոհունակութեան գլխաւոր պատճառներէն մէկը



Հ.Մ.Ը.Մ. ԼՈՆՏՈՆ ՄԻՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԸ ԿԸ ՆՇԷ ԱՐԺԱՆԱՎԱՅԵԼ ԿԵՐՊՈՎ

Թղթակից ԼՈՆՏՈՆ

ՀՄԸՄ Լոնտոն միութեան 100-ամեակը արժանավայել կերպով նշեց ճաշկերոյթով, ձեռնային աշխատանքներու ցուցահանդէսով եւ մեծ յոբելեանին նուիրուած բանակումով:

100-ԱՄԵԱԿԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԸ

100-ամեակի ճաշկերոյթը տեղի ունեցաւ Շաբաթ, 17 Նոյեմբերի 2018-ի երեկոյեան, «Հոյիտէյ ին Քենսինկթըն» պանդոկին մէջ, ներկայութեամբ գաղութի հոգեւոր առաջնորդին, Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան ներկայացուցիչին, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ալէք Խաչատրեանի, Հ.Յ.Դ. Լոնտոնի կառոյցին ներկայացուցիչին, պատուոյ հիւրերու, երեւելի դէմքերու եւ 250 Հ.Մ.Ը.Մ-ականներու ու համակիրներու:

Ճաշկերոյթին բացումը կատարեց եղբ. Նարպէյ Մինասեան: Ներկաներուն բարի գալուստ մաղթելով ան բեմ հրա-



ւրեց մասնաճիւղի առենապետուհի քոյր Ալեհոյզ Գրիգորեանսը՝ փոխանցելու վարչութեան խօսքը: Քոյրը բացատրեց Հ.Մ.Ը.Մ. անուան իւրաքանչիւր տառին իմաստը, ներկայացուց միութեան 100-ամեայ պատմութիւնն ու վաստակը՝ կազմութեան մինչեւ զարգացումն ու ճիւղաւորումը, մարդակերտման ու հայակերտման իր բոլոր-

անուէր աշխատանքներով:

Իր խօսքին մէջ, քոյր Ալեհոյզ յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ. ծնած ու մեծցած է հայ ժողովուրդի ծոցէն, կրթելու համար նորահաս սերունդին միտքն ու մարմինը: Ան ընդհանուր հայութեան միութիւնն է՝ առանց տարիքի ու սեռի խարութեան: Միութեան մէջ տիրապետող միութենական ոգին է, երիտասարդութիւնը կազմակերպելու ջանքն է՝ կերտելու համար քոյրեր ու եղբայրներ, որոնք պատրաստ պիտի ըլլան իրենց ընկերութեան, ժողովուրդին եւ հայրենիքին ծառայելու: Ան նաեւ աւելցուց. «Կ'ուխտենք հաւատարիմ մնալ մեր միութեան խորիմաստ նշանաբանին՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»-ին, 100-ամեակի ջահր հարագատօրէն փոխանցելու համար գալիք սերունդներուն»:

Ապա, խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Ալէք Խաչատրեան եւ ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ-ը հիմնուած է իր անդամներու նուիրումին եւ զոհաբերութեան ոգիին վրայ: Անոնց կամաւոր աշխատանքով ան կը շարունակէ գոյատեւել եւ սերունդներ կերտել:

100-ամեակի ծրագիրներուն Հայաս-






տանի մէջ փայլուն կերպով իրականացման մասին խօսելով, եղբ. Սաչատրեան «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ» նշանաբանով նոր 100-ամեակներ, նորանոր նուաճումներ եւ յաղթանակներ մաղթեց Հ.Մ.Ը.Մ-ին:

Այնուհետեւ, բեմ բարձրացաւ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան ներկայացուցիչ Հայրափի Դրմէեան, որ շնորհաւորեց միութեան բեղուն գործունէութիւնը եւ յարատեւ յաջողութիւն եւ յառաջդիմութիւն մաղթեց հայ ժողովուրդին անսակարկ կերպով ծառայող Հ.Մ.Ը.Մ-ին:

Խօսք առաւ գաղութի հոգեւոր Առաջնորդ Յովակիմ Եպս. Մանուկեան: Իր կարգին, ան շնորհաւորեց յրեւեար միութեան 100-ամեակը եւ քաջալերանքի ու օրհնութեան խօսք փոխանցեց



Հ.Մ.Ը.Մ-ին՝ շարունակելու համար նորահաս սերունդներու դաստիարակութեան նուիրական գործը:



Սրբազան Հօր խօսքին յաջորդեց Հ.Յ.Դ. Լոնտոնի կոմիտէի ներկայացուցիչ Հրաչ Պողոսեանի խօսքը: Պողոսեան անդրադարձաւ այսօրուան աշխարհի արագ զարգացման, յառաջդիմութեան եւ համաշխարհայնացման կապուած մարտահրաւէրներուն եւ նշեց, որ այս ընդհանուր ալիքին մէջ, Հ.Մ.Ը.Մ. մեծ դեր ունի կանխելու բացասական այն բոլոր երեւոյթները, որոնք կը միտին քանդել հաւաքական մեր կառույցները եւ կազմալուծել երիտասարդութեան հոգեկան եւ բարոյական ապրելակերպը: Այս առիթով, Պողոսեան շնորհաւորեց Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքն ու շրջանի մեկուսի մասնաճիւղը, մաղթելով միշտ վառ պահել հոգեւոր ու բարոյական մեր արժէքները, ծառայելու համար մեր ազգին ու հայրենիքին:

Խօսքերու աւարտին հատուեցաւ 100-ամեակի կարկանդակը:



Այս առիթով, վարչութիւնը յատուկ յուշանուէրներով պատուեց մասնաճիւղին պատուոյ անդամները՝ քոյրեր Վիլթ Թադևոսեանը, Սելլա Թնճուկեանը եւ եղբայր Ատոմ Թնճուկեանը:

Յայտագիրի պաշտօնական բաժինին յաջորդեց գեղարուեստական յայտագիրը, զոր ճոխացուցին յատկապէս Հայաստանէն հրաւիրուած «Երգանի» անսամպլը՝ Էտկար Խաչատրեան եւ Նագե-

լի Գրիգորեան: Անոնց աշուղական եւ ժողովրդական երգերով ու երաժշտութեամբ ներկաները մինչեւ ուշ ժամեր երգեցին ու պարեցին՝ ուրախ տրամադրութիւններով իրարու հրաժեշտ տալով:



100-ԱՄԵԱԿԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԸ

100-ամեակի ճաշկերոյթէն շաբաթ մը առաջ, 10 Նոյեմբեր 2018-ին, տեղի ունեցաւ Լոնտոնի մեկուսի մասնաճիւղին միութեան 100-ամեակին նուիրուած ձեռագիր աշխատանքներու ցուցահանդէսը, ուր ցուցադրուեցան Հ.Մ.-Ը.Մ-ի 110 մասնաճիւղերու քարտէսը, Հ.Մ.-Ը.Մ-ականներու յիշատակելի իրեր եւ ձեռագիր աշխատանքներ:

ԲԱՆԱԿՈՒՄԸ

100-ամեակի ձեռնարկները ընթացք առին սկաուտական տարեկան բանակումով: Այդ իսկ պատճառով բանակումին առաջին անգամ ըլլալով մասնակցեցան նախկին սկաուտներ եւ խմբապետներ: Անոնք իրենց ընտանիքներուն հետ մասնակցեցան բանակումին, ուր յայտագիրներ նախատեսուած էին բոլորին համար, առիթ տալով սկաուտներուն լսելու երէց սերունդին սկաուտական անցեալի օրերու գեղեցիկ յուշերը եւ անոնցմով գօտեպնդուած՝ աշխատանքի նոր թափով ու եռանդով նուիրուելու իրենց աշխատանքներուն:



Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Սեւան Նազարեան ՓԱՐԻՉ

Փառաջուք թուական, կշռող պատմութիւն, հաւատաւորներու փաղանդ, հազարաւորներու երազանք, մեծ ընտանիք՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը 100 տարեկան:

Այժմ, 2018 թուականին, Հ.Մ.Ը.Մ.Ի ամբողջ ընտանիքը եւ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական բերկրանքով տօնեց իր սիրելի միութեան 100-ամեայ վաստակն ու ձգած ազդեցութիւնը հայ մարդու, իրմով տրոփող անձերու հոգիներէն ներս:

Արդէն 40 դարուններ բոլորած Հ.Մ.Ը.Մ.Ֆրանսը, փոքր եղբայրներէն մէկը այս մեծ ընտանիքին, ինք եւս ամբողջ տարուան ընթացքին, իր կարելիութեան սահմաններուն մէջ, տարբեր առիթներով՝ մարզախաղ-մրցաշարք, պարահանդէս թէ այլ, տօնախմբեց այդ:

Սակայն, 100-ամեակի կարկանդակը հատուեցաւ միութեան ծննդեան ամիսը՝ 22 Նոյեմբերին, Ալֆրիդիլի շրջանին մէջ, տափանաւու վրայ:

Աւելի քան 150 հրաւիրեալներ՝ պաշտօնական անձնաւորութիւններ, միութիւններու ներկայացուցիչներ, Հ.Մ.Ը.Մ.ականներ ու բարեկամներ եկած էին միասնաբար տօնախմբելու այդ տօնը:

Երեկոյին բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի վարչութեան ատենապետ եղբ. Արամ Սիսեռեան: Ան ներկայացուց մասնաճիւղին գործունէութիւնը եւ թափած ճիգը՝ հայ երիտասարդութիւնը բարձրացնելու եւ յառաջ մղելու աշխատանքին մէջ:

Այնուհետեւ, իր սրտի խօսքը փոխանցեց Փարիզի Առաջնորդ Վահան Եպս. Յովհաննէսեան: Ան արժեւորեց Հ.Մ.Ը.Մ.ի դերը Յեղասպանութենէն ետք ազգը վերակազմակերպելու աշխատանքին մէջ: Ան նշեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը Միջին Արեւելքի երիտասարդութեան տուաւ ազգային ինքնութեան գիտակցութիւն, հաւատք, մշակոյթ եւ հպարտութիւն:

Ան աւելցուց նաեւ, որ «Հ.Մ.Ը.Մ.ը հայ երիտասարդութեան տունն է» եւ եկեղեցոյ նեցուկը կը վայելէ: Ապա, ելոյթ ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Յասմիկ Տորմաճեան: Ան ընդգծեց, որ 2018-ը հայ ժողովուրդի համար յորեկնական կարեւոր տարի մըն է. Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակն է:

Ան աւելցուց նաեւ, որ «Հ.Մ.Ը.Մ.ը հայ երիտասարդութեան տունն է» եւ եկեղեցոյ նեցուկը կը վայելէ:

Ապա, ելոյթ ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Յասմիկ Տորմաճեան: Ան ընդգծեց, որ 2018-ը հայ ժողովուրդի համար յորեկնական կարեւոր տարի մըն է. Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակն է:

Ապա, ելոյթ ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Յասմիկ Տորմաճեան: Ան ընդգծեց, որ 2018-ը հայ ժողովուրդի համար յորեկնական կարեւոր տարի մըն է. Հայաստանի Հանրապետութեան 100-ամեակն է:





րապետութեան 100-ամեակ, Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեակ: Ան մատնանշեց, որ երկուքին կապը «եթէ նոյնիսկ տեսանելի չէ, այդ կապը անբեկանելի է: Յեղասպանութենէն երեք տարի ետք, պետականութեան եւ երիտասարդութեան մասին մտածել, ուժ հաւաքել՝ ժողովուրդը օտքի հանելու համար: Հ.Մ.Ը.Մ-ի նշանաբանը մեր ազգի նշանաբանն է կարծէք՝

«Բարձրացի՛ր-բարձրացուր»: Տղմածեան շեշտեց Հ.Մ.Ը.Մ-ի կատարած դերը եւ մեծապէս արժեւորեց Հ.Մ.Ը.Մ-ի կատարած աշխատանքը՝ հայ երիտասարդութեան մօտ հայկական ոգիի պահպանման համար: Ան շնորհաւորեց եւ իր զօրակցութիւնը յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ին:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան 100-ամեակի խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան Եւրոպայի ներկայացուցիչ եղբ. Անդրանիկ Պահարեան: Եղբայրը շնորհաւորեց բոլորը, վերջիւստե՛ս չհռացած անդամներու նպաստը եւ խօսքը աւարտեց կարեւորելով միութենականի հպարտութիւնը:

Պաշտօնական խօսքերուն յաջորդեց պարգեւատրումը: Հ.Մ.Ը.Մ-Ֆրանսիի թէ Հ.Մ.Ը.Մ-ի մէջ բոլորանուէր ծառայութիւն ունեցող, երկար տարիներ վար-

չական պաշտօններ ստանձնած եղբայր Նազօ Նաճարեան տիրացաւ «Ծառայութեան» շքանշանի, մինչ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան կողմէ միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանին արժանացաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Լեւոն Պաղտասարեան:

Երեկոյին ընթացքին ցուցադրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կողմէ պատրաստուած 100-ամեակի տեսերիզը:

Տեղին է յիշել, որ Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիր սերունդի անդամ Հայկ Ճոլրեանի զաւակը՝ Փաթրիք Ճոլրեան այս առիթով Հ.Մ.Ը.Մ-Ֆրանսիի նուիրեց իր հօր արխիւէն լուսանկարներ, նամակներ եւ Հ.Մ.Ը.Մ-ի պատմութեան առնչուած իրեր:

Այդ օր, տափանաւուն «պատ»երը ծածկուած էին Հ.Մ.Ը.Մ-ի պատմութիւնը յուշող պատկերներով:

Հոն գտնուողները իրենց յուշերու մտերմութեան մէջ, ներկան ապրելու եւ ապագան կերտելու որոշումով, մտերմիկ զրոյցով շարունակեցին իրենց երեկոն:

Տափանաւը, ինքնին, այս առիթին համար կարծէք, դարձաւ միութեան 100-ամեակ կեանքը խորհրդանշող պատկեր՝ ծփալ, սահիլ, անցնիլ, շրջիլ ու վերադառնալ փունք՝ հաստատ հող, հայրենիք:

Բարի երթ Հ.Մ.Ը.Մ-ին:



100-ԱՄԵԱԿԻ ՊԱՐԱՆՑԻԿ ԵՐԵԿՈՅ՝ ՎԱՆԱՆՍԻ ՍԷՁ

Հ.Մ.Ը.Մ-ի Վալանսի մեկուսի մասնաճիւղը միութեան 100-ամեակը նշեց պարանցիկ երեկոյով մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 3 Նոյեմբեր 2018-ին:

Երեկոյին ընթացքին, մասնաճիւղին ներկայ ու նախկին ատենապետները, վարչութեան անդամներուն հետ, հատեցին 100-ամեակի կարկանդակը:





Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՀՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՒԻՆ՝ ՍԹՈՔՀՈՒՄԻ ՄԷՋ

**Թղթակից
ՍԹՈՔՀՈՒՄ**

Կիրակի, 9 Դեկտեմբեր 2018-ին, Շուշուի մայրաքաղաք Սթոքհոլմի Եչրֆելլայի «Երմնասիում» սրահին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Սթոքհոլմի եւ Սոտերթելոյ Մեկուսի վարչութիւններուն կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան 100-ամեակի պաշտօնական սօնակատարութիւնը, ներկայութեամբ քոյր միութիւններու ներկայացուցիչներու, հոգեւոր հայրերու, Հ.Մ.Ը.Մ.ական համակիրներու եւ անցեալի ու ներկայի քոյրերու եւ եղբայրներու:

Տօնակատարութեան բացումը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի շեփորախումբին խրախուսական նուագով եւ խմբապետ քոյրերն ու եղբայրները մեծ խանդավառութեամբ ու հպարտութեամբ սողանցելով մուտք գործեցին սրահ ու բարձրացան բեմ: Ապա, շեփորախումբը հնչեցուց Շուշուի եւ Հայաստանի քայլերգները, որմէ ետք բեմ բարձրացան օրուան հանդիսավարները՝ քոյր Փաթիլ Յակոբեան հայերէնով եւ քոյր Ռոզարիա Յարուսթիւնեան շուշուերէնով:

Տօնակատարութեան բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Սթոքհոլմի Մե-





կուսի վարչութեան ատենապետ եղբ. Յովսէփ Համամճեան: Ան իր խօսքին մէջ ներկայացուց սկաուտութեան պատմութեան ակնյի քան 100 տարիները, որոնք նպատակադրեցին կերտել մարդը, հայն ու սկաուտը: Եղբ. Յովսէփ Համամճեան իր խօսքին մէջ հանգամանաւոր կերպով նշեց Հ.Մ.Ը.Մ.ի պատուաբեր պատմութեան կարեւորագոյն հանգրուանները, յատկապէս շեշտը դնելով այն մեծ դերակատարութեան վրայ, զոր Հ.Մ.Ը.Մ. ունեցած է եւ ցարդ ունի հայ ժողովուրդի կեանքին մէջ ընդհանրապէս եւ նոր սերունդներու բարոյական եւ հոգեւոր դաստիարակութեան պատասխանատու գործին մէջ մասնաւորապէս:

Եղբ. Յովսէփ Համամճեան յայտնեց, որ անհրաժեշտ է լուսարձակի տակ առնել միութեան 100 տարուան բեղուն կեանքն ու հարուստ գործունէութիւնը՝ հաստատելով, որ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը ամբողջ դար մը հանդիսացաւ ազգային արժէքներու պահպան, ազգային սերունդներու կերտիչ եւ ազգային իրաւունքներու հետապնդման նուիրուած միութիւն, որուն սկաուտական եւ մարզական շարքերուն մէջ հասակ առին ու

կ'առնեն իրերաջաջորդ սերունդներ՝ այս համոզումով, այս դաստիարակութեամբ եւ «Միշտ պատրաստ» գործելու տրամաբանութեամբ:

Եղբ. Յովսէփ Համամճեան իր խօսքը եզրափակեց կոչ ուղղելով ներկաներուն, որ՝ «Եկէ՛ք, Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեակի տօնակատարութեան այս անուանալի օրը, բոլորս միասին ուխտենք հաւատարիմ մնալ 100-ամեակի նշանաբանին՝ «Պատուաբեր անցեալէն յաղթական ապագայ»ին: Շարունակենք մեր



ընթացքը, բանիւ ու գործով մեր ժողովուրդին գոյատեւումն ու երջանկութիւնը իւրաքանչիւրիս կեանքին մեկնակէտը դարձնելը եւ այդ ուխտով նուիրուինք փայլուն ապագայի մը կերտման ու յաջող ծրագիրներու իրագործման:

«Թո՛ղ մեր քոյրերն ու եղբայրները յաւելեալ կազմակերպուածութեամբ յառաջդիմեն, ծաւալին եւ ուռճանան: Զարկ տանք նոր ծրագիրներու իրագործման, մեր միութեան նշանաբանին վրայ հիմնուելով՝ միշտ բարձրանալով եւ մեզի հետ ուրիշներն ալ բարձրացնելով», ընդգծեց եղբ. Համամճեան:

Այնուհետեւ, շուէտերէնով տօնակատարութեան բացման խօսքը արտասանեց քոյր Ռոզարիա Յարութիւնեան, որ մէ ետք եղբայր Յարութ Երէցեան դաշնակի վրայ նուագեց իր յօրինումով երաժշտական գեղեցիկ ստեղծագործութիւն մը: Պահը հասած էր, որպէսզի Միւզան Խաչատրեան աշուղական երգերու շարքով մը ճոխացնէր միջնորդը: Տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի 100-ամեայ ուղին ներկայացնող տեսերիդի ցուցադրութիւն:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց ատե-



նապես եղբ. Գառնիկ Մկրտիչեան: Ողջունել է ետք ներկաները, ան խօսքը սկսաւ միութեան 100-ամեայ բեղուն կեանքն ու կարեւոր դերակատարութիւնը ներկայացնելով հայ ժողովուրդի պատմութեան մէջ:

Եղբ. Գառնիկ Մկրտիչեան յայտնեց, որ «Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հիմնադիրները Պոլսոյ մէջ հիմը դրին հայ իրականութեան մարզական եւ սկստական մեծագոյն միութեան: Անոնք դժուար թէ կարենային

երեւակայել, որ 100 տարի ետք իրենց հիմնադրած միութիւնը Հայաստանի մայրաքաղաքին մէջ 100-ամեակ պիտի տօնէր հայ քաղաքական, ազգային եւ եկեղեցական աւագանիին ներկայութեամբ: 100 տարի առաջ Պոլսոյ եւ արւարձաններուն մէջ քանի մը մասնաճիւղով գործող այս միութեան հիմնադիրները դժուար թէ երեւակայէին, որ 100 տարի ետք իրենց սիրելի միութիւնը համայնական իր կառուցով պիտի գործէր աշխարհի 110-ը քաղաքներու մէջ աւելի քան 25 հազար երկսեռ անդամներով՝ մարզական եւ սկստական ժիր շարքերով»:

Եղբ. Գառնիկ Մկրտիչեան իր խօսքին մէջ գեղեցիկ կերպով ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի ունեցած եւ ապրած պատմական կարեւորագոյն հանգրուանները, թէ ի՞նչպէս հազիւ չորս տարեկան Հ.Մ.Ը.Մ-ը հեռացուեցաւ իր հարազատ բնօրրանէն, սակայն շարունակեց ապրիլ ու գործել հայրենի հողէն հեռու՝ սփիւռքեան իր իւրաքանչիւր կտորը վերածելով հայրենի հողի մէկական կտորի: Ան հետաքրքրական ձեւով ներկայացուց, թէ ի՞նչպէս Հ.Մ.Ը.Մ-ը շարունակեց գործել առանց պետական հովանիի եւ ընդհակառակն՝ նոյնիսկ պատահեցաւ, որ ան հարածուեցաւ ու մերժուեցաւ կարմիր պատմուճան հագած իր հարազատ երկրի պետական վարիչներուն կողմէ: Բայց եւ այնպէս, Հ.Մ.Ը.Մ-ը գործեց կամաւոր բանակի ըսկզբունքով: Ան՝ ո՛չ միայն գործեց, այլեւ՝ մեծցաւ, ուճացաւ, հզօրացաւ եւ իր

հովանիին տակ կարողացաւ համախմբել աշխարհի 26 շրջաններէ 110 մասնաճիւղեր եւ միաւորներ:

Իր խօսքին մէջ, եղբ. Գառնիկ Մկրտիչեան ներկայացուց Հ.Մ.Ը.Մ-ի Մթոքհոլմի եւ Սոտերթեյիոյ Մեկուսի շրջաններու ստեղծման եւ շարունակութեան դժուարութիւնները, որոնք դարձան յարատեւ պայքար: Ան գնահատել է իւրախուսելէ ետք Շուէտի Մեկուսի զոյգ մասնաճիւղերու եւ Հ.Մ.Ը.Մ-ականներու աշխատանքն ու գործելաձեւը, խօսքը եզրափակեց ըսելով. «Հ.Մ.Ը.Մ-ը յաղթանակներու միութիւն է: Փա՛ռք 100-ամեայ Հ.Մ.Ը.Մ-ին: Բի՛ւր յարգանք Հ.Մ.Ը.Մ-ի պատուաբեր անցեալը կերտած անցեալի հաւատարմներուն: Պատի՛ւ այսօր պատնէշի վրայ կանգնած սերունդին, որ 100-ամեակի ջահը ձեռքին կը խոստանայ գայն առաջնորդել դէպի յաղթական ապագայ, դէպի մեր ժողովուրդին անկատար բոլոր իղձերուն իրականացումը, դէպի միացեալ հայութեամբ միացեալ ու արդար եւ հզօր Հայաստան»:

Իր խօսքին աւարտին, եղբ. Գառնիկ Մկրտիչեան Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան անունով, միութեան «Արտակարգ» պատուանշանով պարգևատրեց Հ.Մ.Ը.Մ-ի Մթոքհոլմի մասնաճիւղի հաւատարմ եղբայրներէն եղբայր Հրաչ Մարութեանը: Ապա, Հ.Մ.Ը.Մ-ի Մթոքհոլմի եւ Սոտերթեյիոյ Մեկուսի շրջաններու վարչութիւններու ատենապետներու ձեռամբ «Ծառայութեան» շքանշանով պարգևատրուեցան եղբայրներ Յակոբ Վարդանեան, Արա Առոյեան եւ Յակոբ Խաչերեան: Նաեւ, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան առաջարկին ընդառաջելով, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ճամբով «Ծառայութեան» շքանշանով պարգևատրուեցաւ եղբ. Աբիկ Պասմանեան:

Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակի տօնակատարութիւնը իր աւարտին հասաւ հայր սուրբերուն աղօթքով եւ «Պահպանիչ»ով, ներկաներուն միտքերուն եւ սրտերուն մէջ նորանոր 100-ամեակներ կերտելու եւ տօնելու վառ տեսլականով:





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԵՒ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՄԱՐԶԱՀԱՆԴԷՍ ` ԱՌՆՀԵՄԻ ՄԷՁ



Թղթակից ԱՌՆՂԵՄ

Հայաստանի անկախութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան 100-ամեակի առիթով, Հ.Մ.Ը.Մ.Ի Հորանտայի երեք մասնաճիւղերու՝ Առնհեմի, Ալմելոյի, Ալքմարի եւ Գերմանիոյ Միւնիխի մասնաճիւղին մասնակցութեամբ, Հ.Մ.Ը.Մ.Ի Առնհեմի շրջանը կազմակերպեց մարզահանդէս մը, որուն մասնակցեցան յիշեալ մասնաճիւղերու սկաուտական եւ մարզական խումբերը:

Մարզահանդէսին բացման ներկայ գտնուեցան Հայաստանի արտակարգ եւ լիազօր դեսպան Գարեգին Մելքոնեան, Հայաստանի հիւպատոս Անդրանիկ Գրիգորեան, Հ.Յ.Դ. «Արամ Մանուկեան» կոմիտէի անդամներ եւ մեծ թիւով համակիրներ:

Նախ, վայրկեան մը յոտնկայս լուծութեամբ յարգուեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան եւ Հ.Մ.Ը.Մ.Ի բոլոր նահատակներուն յիշատակը: Ապա, կատարուեցաւ դրօշակի արարողութիւն: Հնչեցին Հորանտայի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգները, որոնց հետ բարձրացան երեքին դրօշակները:

Բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.Ի Առնհեմի մասնաճիւղի ատենապետ եղբ. Լիպարիտ Սիմոնեան: Ան գնահատեց Հայաստանի Ա. Հանրապետութեան հռչակումը եւ հայոց պետականութեան կերտումը: Ան նչեց, որ գրեթէ միաժամանակ հիմնուեցաւ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը՝ նպատակ ունենալով հայ նորահաս սերունդները դաստիարակել ազգային ոգիով եւ հայրենասիրական տրամադրութիւններով:

Անկախութեան հռչակման եւ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութեան պայմաններուն մասին խօսելով, եղբ. Սիմոնեան շեշտեց





միասնականութեան կարեւորութիւնը եւ յայտնեց, որ միասնականութիւնը անպայման կ'առաջնորդէ յաղթանակի եւ բարգաւաճ ու հօգը երկիրի մը կերտման:

Այս առիթով, ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Հոլանտայի մէջ Հայաստանի դեսպան Գարեգին Մելքոնեան: Ան մաղթեց, որ Հ.Մ.Ը.Մ. 100-ամեայ նուիրումով ու ոգեւորութեամբ կը շարունակէ համահայկական իր կարեւոր առաքելութիւնը: Դեսպանը ընդգծեց Հ.Մ.Ը.Մ-ի դերակատարութիւնը հայ երիտասարդութեան դաստիարակութեան գործին եւ աշխարհի զանազան երկիրներու հայ համայնքներու պահպանման աշխատանքին մէջ:



Խօսքերէն ետք, խումբ մը քոյրեր եւ եղբայրներ ստացան սկաուտական կարգեր:

Յաջորդեց սպասուած տողանցքը: Իրարու ետեւէ տողանցեցին մարզահանդէսի մասնակից չորս մասնածիւղերու սկաուտներն ու մարզիկները: Հիւրերու առջեւէն անցնելով, անոնք բարեւեցին ներկաներուն եւ ինքնավստահ ու տպաւորիչ քայլերով շարունակեցին իրենց երթը:

Տողանցքէն ետք տեղի ունեցան ֆուլթսայի մրցումներ, որոնք իրարու դէմ հանեցին Հ.Մ.Ը.Մ-ի Առնհեմի, Ալ-

մերլոյի, Ալքմարի եւ Միւնիխի խումբերը: Մրցումներուն տիրապետեցին մարզական ոգին եւ Հ.Մ.Ը.Մ-ական մթնոլորտը: Յաղթող ու պարտուող չեղաւ: Այդ օր յաղթանակը յրեւեար Հ.Մ.Ը.Մ-ին եղաւ, որ յաջողեցաւ այդքան երիտասարդութեան հաւաքել ազգային երդիքի տակ, մէկ նպատակի համար, հայութեան եւ Հայաստանի համար:

Մրցակից խումբերէն փայլեցաւ Առնհեմի խումբը, որ տիրացաւ մրցաշարքի առաջնութեան, մասնակից մնացեալ խումբերու ջերմ զնահատանքին արժանանալով: Օրուան մթնոլորտը խանդավառութեան

զազաթնակէտին հասաւ Միւնիխէն ժամանած, ձայնի հաղորդավար եղբ. Սիմոն Սիմոնեանի սփռած երգերով:





Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻ ՆՀՈՒՄՆԵՐԸ ԱՄԵԼՈՅԻ ՄԷՋ

Թղթակից ԱՆՍԵԼՈ

ՀՄԸՄԻ Հղանտայի Ալմերո մասնաճիւղը միութեան 100-ամեակի տօնակատարութիւններուն իր մասնակցութիւնը բերաւ հետեւեալ նշումներով:-

Փետրուար 2018-ին, մասնաճիւղը Ալմերոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ «Գալուստ Կիւլպէնկեան» սրահին մէջ կազմակերպեց «Հայ սկաուտի օր»-ուան յատուկ տօնակատարութիւն մը, որուն ներկայ գտնուեցան Հղանտայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ: Տօնակատարութեան



ընթացքին փոխանցուեցաւ ՀՄԸՄԻ 100-ամեակի վկայութիւններ եւ ազգային-հայրենասիրական երգեր:

Մայիսին, Հղանտայի Լուսարը քա-

ղաքի Տը Վեյըըն սկաուտական բանակավայրին մէջ տեղի ունեցաւ միութեան 100-ամեակին նուիրուած սկաուտական 12-րդ բանակումը՝ մասնակցութեամբ 35 սկաուտներու:

Յուլիսին, մասնաճիւղին սկաուտական կազմէն 17 սկաուտներ իրենց մասնակցութիւնը բերին միութեան 100-ամեակին նուիրուած համա-ՀՄԸՄԻ-ական 11-րդ ընդհանուր բանակումին, Բիւրական, Հայաստան:

Նոյեմբերին, մասնաճիւղը իր 22-րդ սկաուտական եւ մարզական խաղերը նուիրեց միութեան 100-ամեակին: Խաղերուն եւ փակման հանդիսութեան ներկայ գտնուեցան Հղանտայի մէջ Հայաստանի լիազօր դեսպանը եւ Հղանտայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:





100-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԴԻՍԱԲՈՐ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹՅԱՆ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԷՋ

Թղթակից ՎԻԵՆՆԱ

Հ.Մ.Ը.Մ-ի Վիեննայի մեկուսի մասնաճիւղը միութեան 100-ամեակը արժանավայել կերպով տօնակատարեց հանդիսութեամբ մը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 24 Նոյեմբեր 2018-ին, Վիեննայի հանրային դպրոցներէն մէկուն հանդիսարահին մէջ, ներկայութեամբ Աւստրիոյ մէջ Հայաստանի Հանրապետութեան լիազօր դեսպան ղոկտ. Արման Կիրակոսեանի, Միսիթարեան միութեան Աբբահայր Պօղոս Արք. Գոճանեանի, զաղութի ազգային միութիւններու ներկայացուցիչներու, հիւրերու եւ մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ.ականերու:

Տօնակատարութեան, մասնաճիւղի վարչութեան անունով, բացման խօսքը արտասանեց քոյր Սիրուն Քէչիշեան: Ան ըսաւ, որ յաղթանակի եւ ցնծութեան օր է այսօր, որովհետեւ հաւաքուած ենք արդար հպարտութեամբ նշելու մեր սիրելի միութեան յոբելեանը:

Տօնակատարութեան զեղարուեստական յայտագիրը եղաւ բաւական ճոխ: Սկսուածներ ներկայացուցին իրենց առօրեային պատկերները: Ժանօ Յովսէփեան հանդէս եկաւ երգով: Պարախումբը ներկայացուց երկու պար, հանրածանօթ դաշնակահար՝ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Աւօ Գուլումճեան դաշնակի վրայ նուազեց Առնօ Պապաջանեանէն կտոր մը:

Օրուան պատգամը փոխանցեց եղբ.

Գրիգոր Հալլաճեան, որ անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ-ի 100-ամեայ դերին ու առաքելութեան մեր կեանքին մէջ: Ան դրուատեց միշտ երիտասարդ այս միութիւնը եւ նորանոր յաջողութիւններ մաղթեց անոր ապագայ ծրագիրներուն:

Տեղի ունեցաւ 100-ամեակի յուշանուէրներու փոխանցում Հայաստանի դեսպանին եւ Աւստրիոյ հայ համայնքի քաղաքական, կրօնական, մշակութային եւ մարզական միութիւններու ներկայացուցիչներուն:

Աւարտին, ներկաներուն ողջոյնի իր խօսքը փոխանցեց դեսպան ղոկտ. Արման Կիրակոսեան:

Տօնակատարութիւնը փակուեցաւ յիշատակի նկարով եւ շուրջպարով:



ՅԵՏԱԴԱՐՁ ԱԿՆԱՐԿՈՎ ՆՀՄԱՐ ՄԸ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Վարուժան Սերոբեան ՍՈՆԹՐԵԱԼ

Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ամեակին առիթով, երբ կը ջանամ յուշեր արձանագրելու խնդրանքի մը պատասխանել, 60 եւ աւելի տարիներու միութենական յիշատակներ շարժանկարի մը նման արագընթաց կը սահին ու կ'անցնին:

100-ամեակի այս պատմական հանգրուանին, երբ կը մտածենք ու կը խորհրդածենք, կ'անդրադառնանք որ տասնեակ հազարներով պատանիներ ու երիտասարդներ անցած են ու կ'անցնին Հ.Մ.Ը.Մ.Ի շարքերէն, ի սփիւռս աշխարհի:

Բնական է, որ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական ունի քաղցր յիշատակներ, վկայութիւններ կամ ապրումներ: Այդ յուշերէն շատերը մարզական կեանքէն՝ ֆութպոլի կամ պասքեթպոլի մրցումի մը յիշատակ են, կան նաեւ սկաուտական շարքերու մէջ արձանագրուած յիշատակներ՝ բանակումէ կամ արշաւէ մնացած պատահար մը:

Բայց կան նաեւ մէկ ուրիշ տեսակի միութենական ապրումներ: Անոնց համար, որոնք ունեցած են պատասխանատու պարտականութիւններով ժողովական կեանքի անցեալ:

Համոզուած եմ նաեւ, որ յուշեր եւ ապրումներ միշտ ալ կ'ունենան զգացական բաժին մը եւ այդ՝ երբեմն կ'առաջնորդէ պատմական վրիպումներու:

Երբ հարց տամ, թէ ո՞ւր են տպաւորիչ ապրումներս կամ ո՞ւր են գոհունակութիւն առթող յիշատակներս, կրնամ եզրակացնել, որ անոնք առաւելաբար կու գան սկաուտական կեանքէս, քանի մարզիկ չեմ եղած: Բայց միութենական յու-

շերս կու գան նաեւ ժողովական ու վարչական անցեալէս:

Հ.Մ.Ը.Մ.Ի նորագոյն պատմութեան, այլ խօսքով՝ վերջին 50-ամեակին, միութիւնը ունեցաւ անկիւնադարձային դրական փոփոխութիւն: Արդարեւ, համազարուած լայն կառուցող եւ հինգ ցամաքամասերու վրայ տարածուած մասնաճիւղերու շաղկապումով ան այսօր դարձած է հայ կեանքի մեծագոյն երիտասարդական կազմակերպութիւնը, եւ անոր հետեւող արդիւնքը եղան համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտական եւ մարզական իրերայաջորդ նախանձեղի համախմբումները:

Գանատայի Մոնթրէյլ քաղաքի մասնաճիւղը, հիմնուած 1968-ին, 2018-ին տօնեց իր 60-ամեակը: Մասնաճիւղի կազմութեան օրերուն փոքրաթիւ էր գաղութը, հազիւ 1000 կամ 1500 հայերով եւ միայն 1960-ական թուականներուն սկսաւ թուական աճ արձանագրել ան:

Այդ ժամակաշրջանին, Մոնթրէյլի մասնաճիւղը երիցագոյն մասնաճիւղն էր Հիւսիսային Ամերիկայի մէջ: Առաջինը եղած է, որ 1965-ին կապ հաստատած է Հ.Մ.Ը.Մ.Ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան հետ, այդ ժամանակներու մեծագոյնը իր մասնաճիւղերու ցանցով:

Նոյն շրջանին, նորակազմ գաղութներու մէջ սկսած էին յառաջանալ Հ.Մ.Ը.Մ.ական կորիզներ, որոնք կը կազմակերպուէին իբրեւ անջատ միաւորներ:

Երբ 1970-ին Մոնթրէյլի վարչութիւնը հրաւեր ստացաւ իր պատգամաւորով մասնակցելու Մերձաւոր Արեւելքի 19-րդ Շրջանային ժողովին, Պէյրութ: Որոշուեցաւ ընդառաջել հրաւերին, ի մտի ունենալով Հիւսիսային Ամերիկայի հայաշատ քաղաքներու նորակազմ մասնաճիւղերու իրավիճակը եւ

համոզուած, որ անհրաժեշտ է Հ.Մ.Ը.Մ.ը օժտել Կեդրոնական Վարչութեամբ մը, որ կամուրջ ստեղծէ մինչեւ հեռաւոր միաւորները եւ նոր կառուցող համադրէ մասնաճիւղերու այս ցանցը:

Մոնթրէյլի մասնաճիւղին այս հեռատես մտածումը իբրեւ ծրագիր ներկայացնելու պարտականութիւնը վիճակուեցաւ ինծի: 1971-ի Յունուարին գումարուեցաւ Մերձաւոր Արեւելքի 19-րդ Շրջանային ժողովը, Պէյրութի մէջ, ուր ինծի միացաւ եղբ. Սարգիս Յովսէփեան*:

Հոն էին Հ.Մ.Ը.Մ.Ի հեղինակաւոր դէմքերը: Ներկայ ժողովականներէն միայն քանի մը հոգիին ծանօթ էի. այդ օրերու Շրջանային Վարչութեան ատենապետ Յովհաննէս Շահինեանին, Սարգիս Զէյթիեանին եւ Սուրէն





Մուրատեանին: Ժողովին երիտասարդ պատգամաւորներէն մէկն ալ ես էի:

Անփորձ նման ժողովի մը գործընթացէն, տատամտումով ներկայացուցի մասնաճիւղիս դադափարը իբրեւ առաջարկ: Առաջին հերթին զգացի, որ անսպասելի էր ծրագիրը եւ վերապահութիւն նկատեցի: Կարծես անհասկնալի էր ժողովականներուն՝ օրակարգով ալ նախատեսուած չէր: Բայց լուսաբանական հարցումներով եւ հեռատես քանի մը հոգիի խանդավառ արտայայտութիւններով ժողովը բացառաբար սկզբունքով որդեգրեց առաջարկը եւ պարտականութիւն տուաւ նորընտիր Շրջանային Վարչութեան, կարելիութիւնները ուսումնասիրելու եւ իր եզրակացութիւնը ներկայացնելու երկու տարի վերջ՝ 20-րդ Շրջանային ժողովին:

Այսօր արդեօք քանի՞ վերապրողներ կան 19-րդ ժողովին մասնակցողներէն: Այդ օրերու վաստակաւոր ու հաւատաւոր միութենականներու փաղանգը մեկնած է արդէն անվերադարձ:

Յաջորդին, 1973-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի 20-րդ Շրջանային ժողովը լսեց եւ միաձայնութեամբ վաւերացուց ծրագիրը եւ գործնական աշխատելաձեւ որդեգրեց: Իսկ 1974-ին, Պէյրութի մէջ գումարուած ժողովը միութեան նոր կառուցով դարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան առաջին Պատգամաւորական Ընդհանուր ժողովը, ընտրելով անդրանիկ Կեղրոնական Վարչութեան կազմը քառամեայ շրջանի համար:

Հ.Մ.Ը.Մ.ի կառուցային այս բարեփոխութիւնը Մոնթրէալի մասնաճիւղին հեռատես նախաձեռնութիւնն էր: Հաստատելու համար այս նշմարը կ'արժէ կարդալ «Ազգակ» օրաթերթի 18 Յունուար 1971-ի թիւին մէջ լրյս տեսած մեր հարցազրոյցը, ուր կը պարզուի Մերձաւոր Արեւելքի 19-րդ

Շրջանային ժողովին Մոնթրէալի մասնաճիւղին մասնակցութեան դրդապատճառը: Այս նկատումը կարելի է հիմնաւորել նաեւ քանի մը պարբերութիւններ քաղելով Բիւզանդ Թորիկեանի «Պատմութիւն Հ.Մ.Ը.Մ.ի» Բ. հատորի էջերէն (278, 342 եւ 374):

Վերջերս է, որ պատմական վրիպում մը նշմարեցի, երբ «Մարգիկ» պաշտօնաթերթի հին թիւերը կը պրպտէի: «Մարգիկ»ի թիւ 37-38 միացեալ թիւին «Ինչպէ՞ս Հ.Մ.Ը.Մ. դարձաւ համադաշնութային կազմակերպութիւն մը» վերնագրեալ գրութիւնը («Մարգիկ», թիւ 37-38, 1984, էջ 96-99) կառուցային այս փոփոխութիւնը կը վերագրէր 20-րդ ժողովին Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Շրջանային Վարչութեան ներկայացուցած առաջարկին:

Յայտնեմ նաեւ, որ նոյնիմաստ տարբերակ մըն ալ լսած եմ անցեալին, Հ.Մ.Ը.Մ.ի տօնակատարութեան մը օրուան պատգամաբերէն:

Այսօր, 48 տարիներ վերջ, յետագարձ այս ակնարկով հոգեկան ապրում է գաղափար մը իրականացած տեսնելու գոհունակութիւնը եւ այս նշմարով հաստատելու Մոնթրէալի մասնաճիւղին ներգրումը Հ.Մ.Ը.Մ.ի նորագոյն պատմութեան անկլինադարձին:

* Երբ. Սարգիս Յովսէփեան ճախապէս եղած է Գ.Ս.Ը.Մ.ի Մոնթրէալի մասնաճիւղի վարչական: Ժողովի շրջանին ան ուսանող էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դպրեվանք, Լիբանան: Ապա, ան քահանայ կը ձեռնադրուի եւ կը ծառայէ Յունաստանի թեմին:

Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿ



Սելլա Թնձուկեան ԼՈՆՏՈՆ

28 Մայիս 1918. Երեւան, Հայաստանի անկախութեան հռչակում:

16 Նոյեմբեր 1918. Պոլիս, Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան հիմնադրութիւն:

Ապրիլ 2018. Ժողովուրդի պահանջով՝ ազատ ու արդար Հայաստան ունենալու շարժում եւ նոր տեսլական:

Թուականներ, որոնք կը ներկայացնեն 100 տարուան պատմութիւն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՆՊԱՏԱԿ

Զարմանալի կը թուի, որ Ցեղասպանութեան վայրագութիւններէ ճողոպրած անձինք, ամէն տեսակ կորուստի եւ մոխիրներու ականատեսը ըլլալով հանդերձ, պայծառ միտքը ունեցած են հիմներու ո՛չ որբանոց, ո՛չ կրօնական կամ ուսումնական դպրոց, ո՛չ բարեսիրական հաստատութիւն, այլ՝ հակառակ այդ դժուարին պայմաններուն, նախապատուութիւնը տուած են այլ տեսակի միութեան մը, որն է մարմնակրթական, գայն կոչելով Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն, Հ.Մ.Ը.Մ. կրճատումով:

Հարց կու տանք, թէ ի՞նչպէս Քրիսեաններ, Յակոբեաններ եւ Հինգլեաններ այդքան արդիական մօտեցում եւ հեռատեսութիւն ունեցան: Թէ ի՞նչպէս որոշեցին ամէն գնով թօթափել յուսահատ ժողովուրդի հալածական հոգեբանութեան բարդոյթը՝ ներշնչելով յոյսի եւ պատկանելիութեան զգացում:

Անոնք հեռատեսներ էին ու համոզուած, որ «Առողջ միտքը առողջ մարմինի մէջ» նշանաբանը մարմնակրթութեան

միջոցով ապագայ սերունդին պիտի տայ աննկուն կամք եւ դիմադրականութեան ոգի:

ԲԱՐԳԱՒԱՃՈՒՄ ԵՒ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ

Այսօր, 100 տարի ետք, համաշխարհային տարածում ունեցող սկստական եւ մարզական այս միութիւնը կտրած է մղոններ:

Պոլիսէն ետք, Հ.Մ.Ը.Մ. Միջին Արեւելքի մէջ ունեցաւ բեղուն գործունէութիւն, մասնաւորապէս՝ Սուրիոյ եւ Լիբանանի մէջ, ուր կառուցուեցան ակումբներ, մարզադաշտեր եւ հաւաքատեղիներ: Տարիներու ընթացքին, հայութեան բարգաւաճման գոլգահեռ, Հ.Մ.Ը.Մ. աւելի եւս ընդլայնեց իր գործունէութիւնը: Մարզական խումբերը բազմապատկուեցան, սկստական շարքերը խտացան, քաղաքական տեղաշարժերու պատճառով զանազան ցամաքամասերու վրայ նոր մասնաճիւղեր հիմնուեցան, եւ միութենական նոյն ոգին տիրեց Արեւելքէն Արեւմուտք:

Այսօր, իւրաքանչիւր մասնաճիւղ կը կազմակերպէ սկստական հաւաքներ, բանակումներ, տողանցքներ, բազմաթիւ մրցաշարքեր, դաստիարակչական հանդիպումներ եւ այլն: Մասնաւորապէս յիշատակելի են, Սփիւռքի մէջ, մինչեւ մեր մօտիկ անցեալի միջ-մասնաճիւղային խաղերը, որոնք տեղի կ'ունենային Հայէպի մէջ: Հ.Մ.Ը.Մ.ի անդամներու թիւի աճման եւ տարածման պատճառով, այսօր, իւրաքանչիւր շրջանի նախաձեռնութեամբ տեղի կ'ունենան առանձին մարզախաղեր Եւրոպայի եւ Մ. Նահանգներու մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ի անդամները ամէնուրեք, անոնք ըլլան վարչական, մարզիկ թէ սկստ, միաձուլուած՝ կը մասնակցին մրցաշարքերու եւ տողանցքներու, բազմահազար հայորդի-





ներու ներկայութեան պարզելով Եռագոյն դրօշը եւ թնդացը-
ներով Հայաստանի ու Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգները:

Այս միութիւնը այսօր ունի լայնատարած բնոյթ, կը գործէ 24 շրջաններու մէջ, 110 մասնաճիւղերով: Հ.Մ.Ը.Մ. րկ մարմնակրթական միութիւն մը ըլլալէ անդին ու անոր հետ՝ առաջին իսկ օրէն հայակերտումի, հայրենասիրութեան, կարգապահութեան դարբնոց մը հանդիսացաւ՝ ըլլալով Եռագոյն դրօշի երգուեալ պահապանը եւ Հայաստանի քայլերգին ջահակիրը:

Այսօր կ'ուզեմ յիշել, որ 1990-ի Լոս Անճելըսի Նաւասարդեան խաղերուն բախտաւորութիւնը ունեցանք ամուսնոյս՝ Ատոմին հետ Հայաստանի Հ.Մ.Ը.Մ.Ի առաջին սկաուտներուն կնքահայրութիւնը ստանձնելու:

Յուզիչ վայրկեաններ ապրեցանք, երբ Հայաստանի սկաուտները տուին երգում եւ ստացան իրենց փողկապները:

Այսօր այդ պատանիները արդէն պատասխանատուներ են եւ Հայաստանի սկաուտական շարքերը կազմաւորած՝ կը գործեն նոյն սկզբունքով, նոյն տեսլականով, կազմելով



ՉՕՆ Հ.Մ.Ը.Մ.ԻՆ

**Հ.Մ.Ը.Մ. փառք ու պարծանք,
Հարիրամեայ մե՛ծ աշխարհանք:
Պարուարեր ես քու անցեալով,
Վե՛հ յաղթական՝ ապագայով:**

**Աւագ սերունդ՝ դուք մե՛ծ խորհուրդ,
Ազգապահպան միպրով յագորդդ:
Մերունդներուն մապողաշ փափուկ,
Որքա՛ն և ջահեր վառեցիք դուք:**

**Միշտ բարչրացի՛ր ու բարչրացո՛ւր,
Գործով եղի՛ր ժիր ու ամուր:
Հազար օրհնանք ու պարծանք,
Հալա՛ւ լ է քեզ պապի ու փառք:**

**Առողջ միպրով առողջ մարմին,
Կը կերպես միշտ լաւ ու բարին:
Վե՛հ կը մնաս մեր սիրտին մէջ,
Որպէս անմար փարոս անշէջ:**

**ՏՈՔԹ. ՂԱԶԱՐ ՊՕՂՈՍ
Հալէպ**





ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄԻՈՒԹԵԱՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Սարգիս Մարութեան
ՀԱՄԵՊ

Ինչպես կարելի է Հ.Մ.Ը.Մ.՝ ակա՛ն ըլլալ եւ 100 տարին բոլորած միութեանդ շարքերուն մէջ անցուցած օրերդ եւ զգայացուց Վայրկեաններդ չիշել: Հ.Մ.Ը.Մ.՝ ակա՛ն կոչու՛մով հպարտ եմ եւ այսօր յառաջացած տարիքիս կը յիշեմ բոլոր այն պահերն ու աշխատանքները, որոնք սուրիահայութեան կեանքի պատմութեան մէջ ոսկեայ գրչով արձանագրուած են, եւ տարիներ շարունակ, հայ դպրոցին ու եկեղեցւոյ կողքին նպաստած են իրերայաջորդ սերունդներու պատրաստութեան գործին: Հ.Մ.Ը.Մ.՝ ակա՛ն ըլլալը որքան որ հպարտութիւն է, նոյնքան պատասխանատուութեան գիտակցութիւն եւ հայօրէն սպրեթու ընթացք է, յատկապէս Սփիւռքի մէջ:

Ո՞վ կրնայ մոռնալ 1950-1960-ական թուականներուն մեծ խանդավառութեամբ տեղի ունեցած միջ-մասնաճիւղային խաղերը, որոնց կը մասնակցէին Սուրբիոյ բոլոր մասնաճիւղերը, ինչպէս նաեւ՝ Լիրանանի շրջանը, անգամ մըն ալ Եգիպտոսն ու Պարսկաստանը: Մարգախաղերը տեղի կ'ունենային Նոր Գիւղի շրջանին մէջ, մետաղով պատուած «Նաւասարդեան» դաշտին եւ քաղաքապետարանի դաշտին մէջ: «Նաւասարդեան» դաշտին մէջ եղած տարիներուն, Հ.Մ.Ը.Մ.՝ ակա՛ն-

ները մարգախաղերու նախօրէին կամաւոր աշխատանքով գետնի քարերը կը մաքրէին եւ դաշտը կը պատրաստէին մրցումներուն համար: Հո՞ծ բազմութեան մը ներկայութեան կը կատարուէին մարգական մրցումները, ապա խիտ շարքերով կը տողանցէին բոլոր Հ.Մ.Ը.Մ.՝ ակա՛նները: Մարգախաղերու օրերուն էր, երբ Թիլէյի ակումբը հաւաքուած կը սպասէինք շրջաններու Հ.Մ.Ը.Մ.՝ ակա՛ններու ժամանումին, որպէսզի մեր տունները տանինք գիրենք: Մեծ ուրախութիւն էր հալէպահայ ընտանիքներուն համար Հ.Մ.Ը.Մ.՝ ակա՛ններ հիւրընկալել իրենց բնակարաններուն մէջ: Արծուիկ մը մէկ անկիւն քաշուած կու լար: Մօտենալով հարցուցինք, թէ ի՞նչ ունի քոյրը: Անկեղծօրէն արտայայտուելով ըսաւ. «Հիմա երբ տուն երթամ ծեծ պիտի ուտեմ, քանի որ մայրս պատուիրեց չորս քոյր բերել մեր տան մէջ իջեւանելու համար, բայց ինձի երկու քոյր վիճակուեցաւ»: Մարգախաղերու օրերուն հալէպահայ ընտանիքներուն այդ սիրալիր մօտեցումը ո՞վ կրնայ ուրանալ...:

Պատիւը ունեցանք վայելելու գորավար Դրոյին ներկայութիւնը Հալէպի մէջ, երբ ան ներկայ գտնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.՝ միջ-մասնաճիւղային խաղերուն եւ Ազգ. Չաւարեան վարժարանին մէջ երիտասարդներուն դասախօսեց:

Մեր օրերու Հ.Մ.Ը.Մ.՝ ակա՛ն պատասխանատուներն էին եղբ. Լուտեր Մասպանաճեանը, որ արհեստով կերպասավաճառ էր, հետագային «Արեւելք» թերթի պատասխանատու

կազմէն եղաւ եւ «Արեւելք Մարզաշխարհ» մարզական շաբաթաթերթին մէջ, եղբ. Զաւէն Սապունճեանին հետ աշխատելով, խմբագրականներով խրախուսեց Հ.Մ.Լ.Մ.ականները: Եղբ. Պարզեւ Մխարեանը, որ Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի հաշուապահն էր եւ Հ.Մ.Լ.Մ.ի մարզական թէ սկաուտական կեանքին մէջ իր ներդրումը ունեցաւ: Եղբ. Նշան Թիւսիւզեանը, նոյնպէս, Հ.Մ.Լ.Մ.ի Հալէպի սիւներէն էր: Մտաւորական դեկավար Հ.Մ.Լ.Մ.ականներ էին, որոնք իսկական դաստիարակներ ըլլալով յարգանք կը պարտադրէին բոլորին:

Խումբի խմբագրատներս եղած են փոխ խմբագրատ եղբ. Տիրան Սահակեանը եւ խմբագրատ եղբ. Առաքել Թերզեանը: 1945-ին, ներգաղթի օրերուն, թիւի նուագումի պատճառով, սկաուտական քանի մը խումբեր իրարու միանալով կազմեցին «Կռունկ» խումբը, որուն անդամ էին նաեւ ես: Օր մը, եղբ. Առաքելն ու եղբ. Տիրանը մեր բնակարանը այցելեցին եւ ծնողքիս հետ տեսակցելով խնդրեցին, որ Հայաստան ներգաղթելու պարագային չհրաժարինք մեր ազգային գաղափարէն: Հայրս իրենց ցոյց տալով Մայիս 28-ի առիթով «Ազգակ» օրաթերթին մէջ տպագրուած Արամ Մանուկեանի դունաւոր պատկերը, որ տան պատին վրայ տեղադրուած էր, ըսաւ. «Այնքան ատեն որ Արամ Մանուկեանի պատկերը կը մնայ այստեղ՝ հրաժարական չենք տար»:

Մեր օրերուն, միութեան մարզական կեանքն ալ եռուն էր: Սկաուտները եւս ունէին Ֆութպոլի պատուոյ առաջին խումբ, նաեւ՝ երկրորդական խումբեր, որոնք իրարու հետ կը մրցէին: Այդ օրերուն Հ.Մ.Լ.Մ.ի պաշտօնական անունը «Նետի Սուրի Ռիատի» էր, վերջը եղաւ «Նետի Եարմուք»:

Նոյն օրերուն, Հ.Մ.Լ.Մ.ի վարչութիւնը Հունգարիայէն հրակիրեց Ֆրանց Մեցարոշ անունով Ֆութպոլի փորձառու մարզիչ մը, որուն նիւթական յատկացումը ապահովուեցաւ միութեան տղոց ջանքերով. պոլսեցի Յարութիւն Պալեանը, որ արհեստով շինարար էր, դրամը ինք կը հաւաքէր:

1958-ին, Հ.Մ.Լ.Մ.ի Ֆութպոլի խումբը եգիպտական բանակին հրակիրով գնաց Եգիպտոս, ուր շատ մեծ ընդունելու-

թիւն գտաւ: Եգիպտոսի Հ.Մ.Լ.Մ.ը «Արարատ» կը կոչուէր: Բանակի խումբին հետ անոնք ալ եկան մեզի դիմաւորելու: Մեր խումբին մէջ Սարգիս անունով խաղացող մը կար, որ Նեկրո անունով կը ճանչցուէր: Նեկրոն մէկ անկիւնը ձեռքը ծալած կը սպասէր պայուսակներու փոխադրութեան: «Արարատ» խումբէն Հ.Մ.Լ.Մ.ական մը կը հարցնէ իրեն, թէ ինչո՞ւ կանգնած կը սպասէ, վարձքը չե՞ն տուած արդեօք: Ո՛չ, կը պատասխանէ ան կակազելով, - Ես ալ Հ.Մ.Լ.Մ.ական եմ: Թուիս ըլլալուն համար բեռնակիր կարծած էին զինք: «Յուսաբեր» թերթի խմբագրատան տանիքը կազմակերպուած պարահանդէսին ընթացքին հանդիսաւարը կը պատմէ այս դէպքը եւ Նեկրո Սարգիսին առիթ կու տայ, որ պարահանդէսին ուզած անձին հետ պարէ:

Ֆութպոլի խումբի խաղացողներէն կը յիշեմ Վազգէն եւ Արսէն Տէր Դուկասեանները, Արմէն Աբգարեանը, Համազասպ Արզումանեանը, Յակոբ Աֆարեանը, բերդապահ Լեւոնը եւ ուրիշներ: Մասնաւորաբար կը յիշեմ Հ.Մ.Լ.Մ.ի Ֆութպոլիստ Մուխր Մարէ Մանուկը, որ Իւնիըն Սփորթիւ խումբին հետ մրցումի ժամանակ հօրեղբօս տղան՝ Արտաւազ Մարութեանը (Արտոն) «կը բռնէր», որպէսզի չըլլայ թէ կոլ մը նշանակէր ան: Արտաւազը եւ եղբայրը՝ Մուշեղ երկու Ֆութպոլիստներ էին. Արտաւազը Իւնիըն Սփորթիւէն կը խաղար, իսկ Մուշեղը՝ Հ.Մ.Լ.Մ.էն: Ֆութպոլի հարցով տան մէջ միշտ կը կուռէին:

16 Ապրիլ 1967. յատկանշական օր մըն էր ինծի համար: Երեկոյեան ժամը 6-ին, Ս. Պսակի արարողութիւնս էր: Նոյն ժամերուն տեղի պիտի ունենար Հ.Մ.Լ.Մ.-Ահլի Ֆութպոլի կարեւոր մրցումը: Անշուշտ, մրցումին ներկայ... գտնուեցայ քեռայրիս՝ եղբ. Ժազ Պոյաճեանին հետ, որ Հ.Մ.Լ.Մ.ի Լիբանանի պասքեթպոլի աղջկանց խումբի երկար տարիներու մարզիչն էր, որուն Հ.Մ.Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը 2014-ին պարզեւտրեց միութեան «Արժանեաց» շքանշանով: Դաշտին մէջ զիրար կորսնցուցինք: Հ.Մ.Լ.Մ.ը յաղթեց եւ յաղթական տրամադրութեամբ, քիչ մը ուշացումով, ես ու

կնքահայրս հասանք պսակին, որուն ամբողջ տեւողութեան, ամէն պատեհ առիթի, իրարու հետ վերլուծեցինք խաղին մանրամասնութիւնները:

Հ.Մ.Լ.Մ.ը եւ ակումբի միութեանական կեանքը մեր ազգային մաքուր նկարագիրը կերտեցին: Շատ բան կը պարտինք Հ.Մ.Լ.Մ.ին:

Հաւատարիմ մնալով երիտասարդ միութեան «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, կը մաղթեմ որ նոր հարիւրամեակներ թեւակոխելով աւելի պայծառաման ու խտանան Հ.Մ.Լ.Մ.ի շարքերը:



«ՆԱՀԱՏԱԿ ՑԵՂԻ ԱՆՄԱՀՆԵՐ»ՈՒ ԿԱՄԱԲՈՐ ԲԱՆԱԿԸ

Խաչիկ Շահինեան
ՀԱԼԷՊ

Հանդիսաւոր օրերու պատշաճ արտայայտութիւններ չեն միայն Հ.Մ.Ը.Մ.ի ուխտն ու երդումը, այլ՝ անհատական թէ հաւաքական կեանքի մնայուն ուղեգիծ:

Հայութեան ծառայելու ի խնդիր հայ ժողովուրդի ծոցէն ծնունդ առած մարմնակրթական այս պանծալի կազմակերպութիւնը՝ Հ.Մ.Ը.Մ.ը կը շնչէ ու կը գործէ նոյն այդ ժողովուրդին հետ պայքարի դրօշը բարձր բռնած՝ անոր կողքին:

Հ.Մ.Ը.Մ.ականը միշտ պատրաստ է ծառայելու իր ազգին եւ հայրենիքին, տեւաբար կը մնայ հաւատարիմ Աստուծոյ եւ իր նուիրական նշանաբանին՝ «Բարձրացիր՝ բարձրացուր»ին:

Ինչքան այ դժուար յաղթահարելի ըլլան իր շուրջ ստեղծուած անբարենպաստ կացութիւնները, որքան այ բիրտ ու կործանարար ըլլան ամպրոպագոռ փոթորիկները, Հ.Մ.Ը.Մ.ականը բնաւ չ'ընկրկիր, չի նահանջեր, չի տկարանար:

Հ.Մ.Ը.Մ.ը հզօր է ու անասան, խորունկ, պինդ ու ծաւալուն են անոր արմատները: Ան կենսունակ է ու աւշառատ, կ'աճի ու կ'ուռնանայ անընդհատ եւ ամէնուրեք՝ աշխարհի չորս ծագերուն:

Եղբայրասիրութիւնը եւ ընկերասիրութիւնը իբրեւ ասպետական ոգիի ազնուագոյն ցուցանիշ, իր ճշմարիտ նուիրագործումը կը գտնէ յանձնառու եւ օրինակելի ղեկավարութեան շունչով թրծուած Հ.Մ.Ը.Մ.ի կողմ եւ կարգապահ շարքերուն մէջ: Արի-արեւոյշներ եւ մարզիկ-մարզիկուհիներ ամենայն նախանձախնդրութեամբ կը մրցին կարծես, այս առաքինի կալուածէն ներս գերազանցութիւն արձանագրելու վեհանձն հետամտութեամբ:

Արդարեւ, Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարութիւնը Ծրագիր-Կանոնագիրի ճամբով գաղափարական շարժում հունաւորեց, բարոյական հեղինակութիւն ծաւալեց, ու մանաւանդ՝ բծախրնդիր, պարկեշտ եւ ինքնամոռ գործելու ոճի թէ տիպար կենսակերպի անձնական օրինակով անօրինակ թափ, մղում ու որակ հաղորդեց աշխարհատարած այս հիասքանչ կազմակերպութեան բազմաշերտ եւ բազմաբեղուն աշխատանքներուն:

Աւելին, ձեռներէջ ղեկավարութեան եւ կանոնապահ շարքերու առօրեայ անընդմէջ շփումներէն եւ հետեւողական արդիւնարար գործակցութենէն գոյաւորուած Հ.Մ.Ը.Մ.ականի անկեղծ, եղբայրական ու ասպետական բիւրեղ ոգին հանդի-



սացաւ անքակտելի շաղախը նորընծայ մանուկ-պատանիին, երիտասարդին, հասուն մարդուն եւ այլեւոր երէջցին միջեւ, այն ոգին՝ որ բազմահազար համակիրներու նեցուկը վայելող այս հզօր կազմակերպութեան վարկն ու կառույցը անխորտակ պահեց, անոր ներկուտակ ուժն ու ճառագայթող հմայքը բազմապատկեց:

Հակառակ հիմնադիր փաղանգի ճառագայթող դէմքերու յաւելած անհատական նկատառելի կշիռին՝ այս պանծալի միութեան կազմաւորման նժարին մէջ, այսուհանդերձ, Հ.Մ.Ը.Մ.ի խոնարհելի վաստակը՝ հաւաքական հաւատքի եւ ճիգի անձնուրաց եւ անշահախնդիր ղեկավարութեան ու կարգապահ հաւատաւոր շարքերու միջեւ համբաւը եւ ներդաշնակ գործունէութեան մը սքանչելի հանրագումարը կը ներկայացնէ գերազանցապէս:

Սովորաբար, նշանաբանի մը կողքին, միութիւններ, կազմակերպութիւններ, վարդապետութիւններ... անհրաժեշտ կարիքը ունեցած են խորհրդանշական ու փայլատակող դէմքի մը կամ դէմքերու, իբրեւ հովանի ու ջահ՝ ինքնութիւն մը սահմանելու, բնութագիր մը տալու սեփական շարքերուն ու համակիր հասարակութեան:

Պատահական չէ, որ Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարի սերմնացան Շաւարշ Քրիսեանի հետ սերտօրէն համագործակցած են մարմնամշակ Գրիգոր Յակոբեանը եւ մտքի ու հոգիի ճարտարապետ Յովհաննէս Հինդլեանը, համայրելով հիմնադիր երրորդութեան հսկաներու լուսապասակ պատուանդանը, միաժամանակ գործնապէս ապացուցելով, որ մարմին, միտք եւ հոգի համահաւասար արժէքներ կը ներկայացնեն մարմնակրթական այս մեծ միութեան համար:

Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադիրները եւ անոնց շառուիղ առաջնորդները, հակառակ իրենց ստանձնած բարձրաստիճան պաշտօններուն, ունեցած ղեկավար դիրքերուն, մասնագիտական գերազանց կարելիութիւններուն եւ արտասովոր օժտւածութեան, եղած են համեստ, խոնարհ եւ բարեհամբոյր նկարագրի աչք անձնաւորութիւններ, ազնիւ ու արժանապատիւ հայեր: Անոնց պարկեշտութիւնը ձեռնհասութիւնն ու անշահախնդրութիւնը եղած է անմրցելիօրէն օրինակելի, վարակիչ եւ հպարտառիթ:

Անոնք սեփական ողջ կարողականութեամբ ներքաշուած են Հ.Մ.Ը.Մ-ի քուրային մէջ հեռահար տեսլական դաւանելով հայ երիտասարդութիւնը դաստիարակելու, հասակ առնող հայ նորահաս սերունդին ծառայելու, եւ ուստի՝ ազգի ու հայրենիքի լուսաւոր ապագան կերտելու վսեմագոյն նպատակը, միշտ հեռու՝ փառասիրութենէ, իշխանատենչութենէ, դիրքապաշտութենէ կամ նեղ անձնական շահախնդրութենէ... եւ այդ բոլորը՝ իրենց իմացական եւ Ֆիզիքական ուժերուն, հոգեմտաւոր ու բարոյական պատկառելի ներդրումին աւրնթեր՝ յաճախ սեփական վտիտ քսակին բովանդակութիւնը եւս պարպելով այնտեղ:

Անոնց համար առաջնահերթ կարեւորութիւն գգեցած է արդիւնարար գործը եւ ոչ թէ դիրքը կամ պաշտօնը: Իրենց կենցաղային եւ աշխատանքային ուղեգիծին գլխաւոր յատկանիշները կազմած են ուղղամտութիւնը, անկողմնակալութիւնը, արդար եւ կառուցողական քննադատութիւնը ու յատկապէս՝ ինքնաքննադատութիւնը: Թէեւ առհասարակ խուսափած են իրենց խօսակիցը կամ գործակիցը նսեմացնելու, վարկաբեկելու փորձութենէն, սակայն անինչայ եւ անբարեացակամ գտնուած են անթոյլատրելի մեղքերու եւ թերացումներու նկատմամբ: Վճռակամ ղեկատուներու հաշտոյն չեն սակարկած, բառերը չեն ծամծամած՝ ով ալ եղած է մեղանշողը կամ նշաւակը:

Համամիտութենական եւ համահայկական աշխատանքներու թէ կարգաւորումներու հարթութեան վրայ, իբրեւ խելամիտ առաջնորդներ անոնք տնօրինած ու գործած են ամենայն ողջախոհութեամբ եւ բարեխղճութեամբ, յարատեւօրէն արհամարհելով հատուածական ճղճիմ աժան եւ նեղմիտ հաշտարկները: Բնականաբար, Հ.Մ.Ը.Մ-ը պիտի հանդիսանար իրենց գործունէութեան առանցքային դաշտը, այնուամենայնիւ, անոնք համընդհանուր հետաքրքրութիւն եւ խանդաղատանք պիտի ցուցաբերէին նաեւ այլ միութիւններու եւ մանաւանդ՝ հայ երիտասարդութեան հանդէպ: Հ.Մ.Ը.Մ-ի «Համահայկական ողիմպիականները», հայկական բոլոր միութիւններուն յղուած մասնակցութեան հրաւերները, ինչպէս եւ բոլորին հետ հաստատուած սերտ կապերը լաւագոյն փաստարկներն են այս առողջ վարքագիծին:

Հասարակական կեանքի կազմաւորման եւ յարատեւման



մէջ գաղթաշխարհի մեր կառույցներէն իւրաքանչիւրը ունեցած է, ունի եւ պիտի ունենայ իր կենսական անշրջանցելի դերակատարութիւնը: Եթէ այդ կառույցներէն մէկը հայու հոգին կը լիացնէ, միւսը՝ սիրտն ու խիղճը կ'ազոնուանէ, երրորդ մը՝ կամքն ու բազուկը կը ջրդեղէ, եւ դեռ մէկ ուրիշը՝ հաւատքն ու յոյսը կ'ամրակայէ, ապա Հ.Մ.Ը.Մ-ը այս բոլորին գոլգահեռ՝ հայագրի մեր գաւակներուն կը պարգեւէ նաեւ առողջ ու տոկուն մարմինը, խաղի հրճուանքն ու իրաւ ընկերասիրութիւնը, կարգապահութիւնն ու յղթանակի հմայքը... Ահա թէ ո՛ւր պէտք է փնտռել այդ վեհապանծ կազմակերպութեան մեր ընտրեալագոյն երիտասարդները արտակարգօրէն ներգրաւելու, անոնց համընդհանուր համակրանքը վայելելու, զանոնք իր մականին տակ համախմբելու եւ իր մարդակերտ ու ազգանուէր գործունէութեամբ խելայեղօրէն ոգեւորելու մոգական ուժն ու անբացատրելի գաղտնիքը:

Հ.Մ.Ը.Մ-ի հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած ոգեկոչական նախաձեռնութիւնները անկրկնելի առիթներ կը հանդիսանան մարմնակրթական այս ուսնափորայ կազմակերպութեան մէկ դարեայ պատմութեան անվերադարձ, բայց յարատեւօրէն ապրող էջերը թերթատելու, իրատեսութեամբ եւ յստակատեսութեամբ այդ պատմութեան ոսկեմատեանէն ուսանելի դասեր քաղելու, ապա վերանորոգ ուխտով հաստատաքայլ շարունակելու դէպի նոր հորիզոններ բացուող անոր յաւերժական երթը՝ նոյն հաւատքով, միեւնոյն անընկճելի վճռակամութեամբ եւ իրաժէշ նուիրումով:

Միութեան հիմնադիրները առաջադրուած նպատակներու կենսագործման ի խնդիր՝ Հ.Մ.Ը.Մ-ական շարքերուն եւ համակիրներուն ներշնչելին անսակարկ եւ անմնացորդ ծառայութեան ոգի, բոլոր գոհողութիւններու առանցքը համարելով հոգեկան բաւարարութիւնը:

(Շար.ը 9 . կողք)



ՎԵՐՅՈՒՇ ՄԸ ԿԷՍ ԴԱՐՈՒ ԸՆՑԵԱԼԷՆ

Խաժակ Տիլպերեան
ՅԱԼԷՊ

Կան դէպքեր ու յիշատակներ, որոնք տարիներու թաւալումին հետ խամրելով մարդոց յիշողութեան մէջ կը կորսնցնեն իրենց այժմէականութիւնն ու հմայքը եւ կը դառնան ժամանցելի, անհետաքրքիր, նոյնիսկ ծիծաղելի եւ մոռացութեան դատապարտուած, լքուած կը մնան ժամանակի մաշեցրնող պարկին մէջ:

Սակայն, կարելի չէ այսպէս բնութագրել շնչող ու ապրեցրնող յուշերը այն ապրումներուն, որոնք միութեան մը, կազմակերպութեան մը ոգին ու գաղափարաբանութեամբ, մարդուն մէջ մա՛րդը կը կերտեն, ազգային գիտակցութիւն կը սերմանեն, ուղի կը հարթեն եւ ենթակային կու տան կոչում, արժէք:

Այսպիսի նկարագիրով տարազաւորուած միութիւններէն մէկն է Հ.Մ.Ը.Մ-ը՝ հարիւրամեայ այս երիտասարդ ուխտաւոր ճանապարհորդը, որ յետադարձ ակնարկով դար մը ամբողջ «պատուաբեր անցեալով» ոգեկինացած, առաջին քայլը կ'առնէ դէպի «յաղթական ապագայ»:

Օ՛, Հ.Մ.Ը.Մ-ականի ապրումները: Մարգագաշտին վրայ իր տարած յաղթանակներն ու կրած պարտութիւնները համատեղ սիրտեր թռնող հանող հուռուճները, կամ ցատումէն իրարու վրայ սեղմուած ակուա-

ներու մէջ, շրթներու բոսոր արիւնը համակիրին: Եւ փառատօններդ, շքերթներդ. հո՛ն են բոլորը դաշտին վրայ, մարզիկներն ու սկաուտները, երէցներ, պարմաններ, դայիկներ ու արծուիկներ կը տողանցեն, ու կը ծնի խօսքը «Անցէ՛ք խրոխտ, անցէ՛ք հպարտ» ու կ'երգէ համակիրը շեփորախումբին կշռոյթով:

**«Հ.Մ.Ը.Մ. իր վաշտերով
Տողանցք կ'ընէ պինդ քայլերով
Յամակիրներն ալ եռանդով
Թասերը վեր, թասերը վեր»:**

Տակաւին բանակումներդ. անմոռանալի յուշեր, ապրուած կեանք մը բանակողին համար: Հոն, բնութեան ծոցին մէջ, իր իսկ ձեռքով բանակալայր կը յարդարէ, վրան կը լարէ, գերաններով, պարաններով դուռ կը պատրաստէ, կայմ, աշտարակ կը բարձրացնէ, ձեռային աշխատանքներով վայրը կը գեղեցկացնէ, օճախ կը շինէ, որուն վրայ պատրաստած կերակուրը, «Օրհնէ ո՛վ Աստուած, օրհնէ այս սեղանը եւ անոր շուրջինները» սկաուտական աղօթքով եղբօրը հետ կը վայելէ: Ու երբ գիշերը բանակողները կը հանգստանան օրուան հաճելի յոգնութենէն ետք, սկաուտական գաւազանը ձեռքին, ան կը հսկէ եղբայրներուն անդորրութեան համար ու հագլու լսելի ձայնով կը մրմուռայ պահակին երգը:

**«Գիշեր է լռին
Վերը քիցջ լուսին
Վարն եմ առանձին ...»:**



Հ.Մ.Ը.Մ-ի բանակումները՝ մեր բանակումները:

Այդպիսին էր յիսուս տարի առաջ՝ 1968-ի Հալչպի տարեկան ընդհանուր բանակումը, Օգոստոս ամսուան մէջ 15 օրուան տեւողութեամբ: Այդ տարիներուն քաղաքի եւ Նոր Գիւղի կազմերը միասնաբար կը կատարէին բանակումը, Քեսապի Ակեր գիւղի «Էթիզօյուք»ի չքնադ բնութեան մէջ: Բանակումը կը գտնուէր գիւղին կալի շրջանին մէջ: Բանակումին ութերորդ օրն էր: Երեկոյեան, դրօշակի արարողութեան ակարտին, հերթապահը յայտարարեց յաջորդ օրուան յայտագիրը. «վաղը առաւօտ միօրեայ արշաւ դէպի ծով»: 15 տարիքը բոլորած եւ ակելի վեր տարիք ունեցող եղբայրները պիտի մասնակցին միայն: Թիւն ալ սահմանուած էր. երեսուն հոգի: Ծշղուած էր անուանացանկն ալ, որ շուտով յայտարարուեցաւ, եւ ի՛նչ ուրախութիւն ես ալ պիտի մասնակցէի խումբի եղբայրներու հետ միասին: Մենք ամենափոքրերն էինք:

Այդ գիշեր կանուխ մտանք վրաններ, բայց մինչեւ ուշ ժամեր չկարողացանք քնանալ: Կ'ուզէինք, որ ժամ առաջ մօտենար արշաւին պահը:

Յաջորդ առաւօտ, շատ կանուխ, աղամամութիւն, խումբը պատրաստ էր սկսելու արշաւը՝ լման տարագով. անբաժանելի սկառտտական սուլիչը, գաւաթը, դանակը, պարանի հիւսքը կախուած էին իւրաքանչիւրին գօտիէն: Իւրաքանչիւրին ուսէն կախուած ջրամանը, լուսարձակն ու սկառտտական գաւազանը կու գային ամբողջացնելու երկարատեւ արշաւի սկառտտական լման տարագի բացատրութիւնը եւ, տակաւին, կարմիր խաչի սնտուկը, հացի տոպրակն ու ուտեստը, գորս իւրաքանչիւր խմբակ հերթականօրէն պիտի փոխադրէր մինչեւ ծովափ:

Երկարք կազմելով խումբը ընթացք առաւ: Կարգապահութիւնը սկառտտութեան հիմնական ուղեկիշն է: Բոլոր պայմաններու տակ սկառտտը պարտաւոր է պահել կարգն ու կանոնը: Տակաւին մուտք էր. խումբին յառաջապահներն ու վերջապահները միայն կը լուսաւորէին ճամբան: Հերթապահին հրահանգով երգեցինք «Տէրունական աղօթք»ը՝ «Հայր Մեր»ը, նաեւ՝ բանակումի նուիրուած քանի մը երգ: Ծամբան

քարքարոտ էր. այդ տարիներուն այսօրուան ողորկ, կուպրապատուած լաշն ճամբան գոյուլթիւն չունէր, սակայն ի՛նչ փոյթ, խումբը կ'ընթանար համաչափ քալուածքով: Բոլորս ուրախ էինք: Լուսաբաց էր: Արեւելքը շառագունած էր, սակայն անտառային բարձր ծառերը, որոնք շրջապատած էին ճամբուն եզրերը, իրենց ճիւղերը խոնարհելով կազմած էին տեսակ մը բնական փակուղի՝ արգելք դառնալով լոյսի թափանցումին: Սքանչելի է առաւօտը անտառին մէջ. ամբողջ գիշերը թթուածինով յագեցած ծառերը կ'արտաշնչէին կենարար կազը եւ մենք լիաթոք կը շնչէինք՝ վայելելով բնութեան պարգեւած մեծ բարիքը:

Մեր ձայներէն եւ ներկայութենէն խրտչած սկիւռներն ու այլ կրծողներ ցատկոտելով ճիւղէ-ճիւղ կը բարձրանային ծառերուն վրայ եւ ակնապիչ կը դիտէին մեզ, իրենց անդորրը խանգարող այս անկոչ եկուորները:

Մեր առաջին կանգառը վարին Այգեստան՝ Պաղատա գիւղի Հայ Կաթողիկէ Աղքատախնամ Միութեան կազմուածման կայանին մօտ գտնուող նոճիներու պուրակն էր, որ ամէն յարմարութիւն ունէր հանգստանալու եւ նախաճաշելու: Պուրակին մօտէն հոսող առուակի մը կարկաչը կը հրապուրէր մեզ ու մենք կը յագեցնէինք մեր ծարաւը՝ խմելով այդ պաղ, գուլայ ջուրը, ու կը լեցնէինք մեր դատարկ ջրամանները: Նախաճաշէն ետք շարունակեցինք արշաւը. յեռնային վայրէջքը վերջ գտած էր: Այժմ ճամբան տափարակ էր: Մեր աջին ու ձախին փուռած էին բուսականութեամբ հարուստ պարտէզներ եւ բանջարանոցներ, որոնց մէջ ուշագրաւ էին իրենց դէմքերը դէպի արեւուն ուղղած փարթամ արեւածաղիկներն ու կորեկի բարձրահասակ ցօղունները, որոնց ոսկեհատիկները կը հրապուրէին մեզ, բայց զգո՛յ՛, հերթապահը կռահելով մեր մտածումը՝ արդիւնք մօտենալ բոյսերուն, պտուղներուն: Է՛հ, սկառտտի դաւանանքին Ց-րդ յօդուածը կը յուշէ. «Սկառտտը կը սիրէ եւ կը պաշտպանէ կենդանիներն ու բոյսերը»: Կլիման փոխուած էր: Բարձունքներուն վրայ տիրող զով գեփիւռին փոխարէն մեր դէմքերուն կը փչէր խոնաւ ու տաք հովը: Արդէն մօտեցած էինք ծովուն.

ոլորապտոյտ քանի մը ճամբաներէ ետք, մեր աչքերուն դիմաց պարզուեցաւ Միջերկրականը, որ կապուտաչեայ գեղուհի մը նման տարածած էր վարսերը՝ մինչեւ հորիզոն, համբուրելով գեղաչեայ կապոյտ երկինքին ...: Ծո՛վը, ծո՛վը պոռացինք բոլորս եւ մոռնալով սկառտտական կարգն ու կանոնը վագեցինք դէպի կապոյտ՝ անտեսելով հերթապահին զգուշացման սուլիչին ձայնը: Արդար պատիժ մը սահմանուեցաւ: Քառորդ ժամ ուշ արտօնութիւն տրուեցաւ ծով մտնելու: Ծովուն մօտ տեղացի գիւղացիներ կանգնեցուցած էին տաղաւարներ, ուր կը վաճառէին զովացուցիչ, քանի մը տեսակ ուտեստեղէն եւ այլ պարէն: Զուրը ձրի էր: Տաղաւարներէն մէկը, որ ազատ էր, տրամադրեցին մեզի՝



ծովագզեստները հագուելու համար: Արդէն յանձնուած էինք ծովու ջուրերուն ու մոռցած երկարատեւ արշաւին յոգնութիւնը:

Ժամերը արագ սահեցան: Կէսօր էր: Խոհարար եղբայրները պատրաստած էին ճաշը, որ անշուշտ այդ տարիներու բանակավայրերու մէջ պատրաստուած տորման, դազան քէպպին կամ թաւան չէր կրնար ըլլալ, այլ՝ միօրեայ արշաւներուն տիրական ուտելիքը՝ համեղ «Ձուան» պահածոյ միսը, լոլիկով, թթուաշոքով եւ տաղաւարներու պաղ զովացուցիչով: Արշաւը ունէր նաեւ դաստիարակչական յայտագիր: Ծաշէն ետք, ծովափէն քիչ մը հեռու, պարտէզներուն քով, հսկայ ուռնեխի մը շուքին տակ շահեկան դասախօսութիւն մը ներկայացուցեցաւ՝ «բանակումին օգտակարութիւնը» նիւթով, որմէ ետք ազատ ժամ տրուեցաւ: Ոմանք հանգստացան՝ խոտերուն վրայ երկննալով, ուրիշներ փափաքը ունէին ծով վերադառնալու: Հերթապահը առիթ տուաւ կէս ժամ միայն: Լողալու սիրահարները դժգոհ էին, բայց ենթարկուեցան հրահանգին: «Չմոռնա՛ք, եղբայրներ, մեր դիմաց ունինք վերադարձի ճամբան, չվատենք մեր ուժերը» խօսքերը համոզեցին բոլորը: Յետմիջօրէի ժամը 4-ին վերադարձի ազդանշանը տրուեցաւ եւ ի գարմանք մեր բոլորին, փոխանակ ուղղուելու դէպի այն ճամբան, ուրկէ եկած էինք, մեզ առաջնորդեցին ծովափին մօտ խարսխած նաւակ մը: Նաւակով պիտի ուղղուէինք թուրք-սուրիական սահմանագիծին վրայ գտնուող Գալատուրանի ծովեզերքը, որով բաւական կրճատած կ'ըլլայինք վերադարձի ճամբան եւ խնայած արդէն իսկ սպառած մեր ներուժը:

Թէ երեսուն հոգի ի՞նչպէս տեղաւորուեցաւ նաւակին մէջ, դժուար է բացատրել: Արգիլուած էր նաւակին վրայ աւերորդ շարժումներ ընել նաւարկութեան ընթացքին: Ծովուն ջուրերը հասած էին նաւուն շրթները, թէեւ ծովը խաղաղ էր, սակայն աննշան ալիքներն իսկ կը թրջէին մեր տաբատները, եւ ջուրը կ'անցնէր նաւակին ներսի կողմը: Սկառուտական գաւաթներով կը փորձէինք ջուրը պարպել: Տեսակ մը վախ պատած էր մեզ: Կը խրախուսէինք զիրար եւ իւրաքանչիւրը կը

փորձէր քողարկել իր վախը: Ապաւինեցանք Աստուծոյ՝ աղօթելով «Հայր Մեր»ը: Թերեւս մինչեւ այդ պահը այդպէս հաւատքով չէինք աղօթած մեր կեանքի ընթացքին, եւ ի՞նչ հրաշք, ալեակներն ալ կարծես չքացան, ծովուն տիրեց կատարեալ հանդարտութիւն: Թերեւս ներկաներուն մէջ անմեղ մը կար, որուն աղօթքը ընդունելի եղաւ Աստուծոյ կողմէ:

Արդէն ժամը հինգ էր, երբ ոտք դրինք եւ ելանք ափ՝ ողջ առողջ: Մեր վախը հազիւ փարատած էր, երբ կը փորձէինք նեղ արահետէ մը վեր բարձրանալ, հրազէններու ձայներ մեզ դիմաւորեցին: Սահմանագրուի էր եւ այդ տարիներուն մաքսանենգներ կ'երթեւեկէին Թուրքիա-Սուրիա սահմանին վրայ: Սուրիոյ սահմանին պահակներն ու ոստիկաններն էին, որոնք զգուշացման համար կրակած էին: Մեր պատասխանատուները բարձրաձայն բացատրեցին, որ սկառուտներ ենք եւ պիտի շարունակենք մեր ճամբան: Պահակները սիրալիք վերաբերմունք ցուցաբերեցին: Առատ ջուր տրամադրեցին, լեցուցինք մեր դատարկ ջրամանները: Խումբը հանգիստի պէտք ունէր: Ծովուն վրայ մեր ապրած վախը եւ կրակոցը մեզ բաւական մը ցնցած էին: Պահականոցէն քիչ անդին կար Սօսիի հսկայ ծառ մը, որուն շուրջ բոլորուած պիտի հանգրատանայինք եւ կատարէինք ընթրիքը՝ ինչ որ մնացած էր կէսօրուան ճաշէն եւ առաւօտեան նախաճաշէն: Օրը տարածած էր. այլեւս մոռնալու էինք նախօրոք ճշդուած ժամանակացոյցը: Ժամը 8-ին պէտք է բանակավայր ըլլայինք, ինչ որ անկարելի էր: Ժամը վեցը կ'անցնէր արդէն:

Ընթրեցինք, բաւական կազդուրուեցանք: Մոռցած էինք ծովուն վտանգն ալ, հրազէնի ձայներն ալ: Համոզուած էինք, որ ժամուան մը ուշացումով, ժամը 9-ին, բանակավայր կը հասնինք:

Խումբը ընթացք առաւ, սակայն այս անգամ անընդհատ վերելք էր ճամբան, ճիշդ հակառակը առաւօտեան վայրէջքին: Սկառուտական համաչափ քայլուածքը տեղի տուած էր անկանոն ընթացքին: Ասիկա բնական է. առաւօտ կանուխ արթննալ, երկար ճամբայ կտրել, ժամեր ամբողջ լողալ, ծանր պահեր ապրիլ եւ այս բոլորէն վերջ՝ շուրջ 10 քմ. ծովուն մակերեսէն բարձրանալ ութ հարիւր մեթր բարձրութիւն, քարքարոտ ու մուրթ ճամբաներով, որքան ալ որ կորովի եւ չարքաշ ըլլայինք, պիտի յոգնէինք: Մկաններու ուժը պիտի սպառէր, սակայն պիտի մնար ոգին. Հ.Մ.Ը.Մ.ական սկառուտին անկոտորում կամբը, յաղթահարելու բոլոր դժուարութիւնները. չէ՞ որ սկառուտական քայլերգը հնչեցնելով միշտ ընթացած ենք անվարան.

«Հ.Մ.Ը.Մ. յոյսի սերունդ,
Չունինք դադար,
չունինք ցաւանց,
Դէպի լեռներ լուսածնունդ
Մենք յաղթաբայլ կ'երթանք
յառաջ»:





Հ.Մ.Ը.Մ.Ը ԵՐԲԵՔ ՊԻՏԻ ՉՄԵՌՆԻ

(Հ.Մ.Ը.Մ.Ի 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ՝ ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՇՐՋԱՆԻ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ ԳՐՈՒԱԾ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԸ)

Միքայել Նալպանտեան ՀԱՐԱԻԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Կար ու չկա՛ր, Ժամանակին, Հ.Մ.Ը.Մ-ը կար:

Բոլորս կը բնակէինք Վանի մօտակայ գիւղի մը ընդարձակ տան մէջ: Մեր տունը ունէր բակ մը, ուր մեծ հայրերս պտուղ եւ կանաչեղէն կը ցանէին, ուր ես երկար Ժամեր եղբայրներու հետ կը խաղայի, մինչեւ որ ճօճանակով Ժամացոյցը նշէր, թէ երեկոյեան Ժամը Ծ-ը եղած է եւ մայրս մեզի ընթրիքի կանչէր, պոռայով թէ՛ «ընթրիք պատրաստ է»: Անմիջապէս կը վագէինք դէպի տաքուկ սրահ, ուր մեզի կը սպասէր տեսակաւոր բարիքներով լեցուն սեղան մը, զոր միշտ կը պատրաստէին մայրս, մեծ մայրս եւ մեծ քոյրս՝ Սօսէն:

Հայրս գիւղի ատաղձագործներէն մէկն էր, որ ունէր աշխատատեղի մը, ուր երկու մեծ եղբայրներուս՝ Սագոյին եւ Հրանդին հետ կ'աշխատէր: Գործը շատ էր, շրջանի բոլոր թուրք փաշաները իրեն կը դիմէին, որպէսզի սքանչելի կահոյք պատրաստէր իրենց ապարանքներուն համար: Երջանկութիւնս կատարեալ էր: Կրտսեր եղբայրներուս հետ կը յաճախէինք Տէր Յակոբի դպրոցը: Մեր ուսուցիչը բաւական խիստ մարդ մըն էր, սակայն պէտք էր հասկնալ, թէ ինչո՞ւ, որովհետեւ դիւրին չէր մեզի պէս անհնազանդ մանուկներ կարգի բերելը:

Օր մը, երբ դպրոցէն տուն կը վերադառնայի, նկատեցի, որ հայրս շատ մտահոգուած էր, սրահին մէկ ծայրէն միւսը կը քայլէր մտածկոտ վիճակի մը մէջ: Մայրս մեծ եղբայրներ

ըուս հետ կը խօսէր եւ կարծես թէ... կու լար: Այդ վայրկեանին մօտեցայ մեծ հօրս, որ անկիւն մը նստած էր: Հարցուցի իրեն, թէ ի՞նչ պատահեցաւ: Թաւ ձայնով ան պատասխանեց ըսելով. «Արա՛մ, արդէն ուշ է, գնա՛, քնացիր, հարցեր կան որ փոքրիկ մը պէտք չէ գիտնայ»: Անմիջապէս սենեակս գացի, ինծի տրուած հրահանգը կատարելով:

Յաջորդ առաւօտ, շատ բարձր աղմուկով մը արթնցայ: Հսկի պուշտուք մը, մուտքի դռնէն կու գար, անմիջապէս այդ ուղղութեամբ վագեցի եւ տեսայ, որ հայրս թուրք գինւորի մը հետ կը վիճէր: Թուրք գինուորը կ'ըսէր՝ «Շո՛ւն կեաւուր, ներքին գործոց նախարար Թախթաֆ փաշայի հրամանով բոլոր այր մարդիկը, որոնք 18 տարեկանէն վեր են, բանակ պէտք է արձանագրուին Օսմանեան կայսրութիւնը պաշտպանելու համար»: Հայրս կը փորձէր հասկցնել, որ ինք ատաղձագործ էր, սակայն գինուորները հոն չէին եկած բացատրութիւններ ստանալու համար: Անոնցմէ մէկը, յանկարծ, իր հրացանին կոթով ուժգին յարուած մը տուաւ հօրս գլխուն եւ ան անմիջապէս գետին փռուեցաւ: Այդ պահուն վերջին անգամն էր, որ հայրս, Սագօ եւ Հրանդ եղբայրներս կը տեսնէի:

Շաբաթ մը ետք, կառավարութեան քանի մը պաշտօնեաներ եկան եւ մեզի տեղկացուցին, որ պարտաւոր էինք ամէն ինչ ձգել եւ հեռանալ, որովհետեւ մեզի «աւելի ապահով վայրեր» պիտի փոխադրէին: Այդպէս այ եղաւ: Մայրս, մեծ քոյրս՝ Սօսէն, մեծ հայրերս, ես ու փոքրիկ քոյրերս երկա՛ր ճամբորդութիւն մը սկսանք ոտքով, մինչեւ անապատ: Ճամբորդու-



Թեան ընթացքին խնդուք չկար, ո՛չ համեղ ուտելիք, ո՛չ ալ ուրախութիւն, ընդհակառակն: Բայց այս պատմութիւնը բոլորդ անդիր գիտէք եւ նպատակ չունիմ զայն կրկնելու:

Ինչ որ պէտք է գիտնաք այն է, թէ ամբողջ ընտանիքէս ողջ մնացինք կրտսեր եղբայրս՝ Նժդեհը եւ ես: Մնացեալ անդամները կա՛մ մահացան, կամ ալ անհետացան ճամբուն ընթացքին:

Անթիլիասի որբանոց մեր ժամանումէն քանի մը ամիսներ անցած էին, երբ օրին մէկը յայտնուեցաւ Շաւարշ անունով մէկը, որ մեր տնօրէնին համոզեց, որ արտօնէ կարգ մը երեխաները իր հետ ձեռնարկի մը տանելու: Այսպէս ալ եղաւ եւ կարգ մը երեխաներու հետ զիս ալ տարին վայր մը, ուր մեզի պէս որբեր կային: Անոնք աշխարհի մէջ առանձին չէին, ինչպէս մենք, որովհետեւ բոլորս ալ մեր ընտանիքները կորսնցուցած էինք Յեղասպանութեան ընթացքին: Այդ օր կարգ մը խաղեր խաղացինք եւ անոնց հետ կիսեցինք նախընթացի մը: Շաբաթներու ընթացին նման հանդիպումները շարունակուեցան եւ մենք սկսանք մասնակիլ գործունէութեան մը, որուն նպատակն էր բնութիւնը սիրել, կարգապահ ըլլալ, մեր ժողովուրդի պատմութեան ծանօթանալ եւ մեր հերոսներուն՝ Հայկ Նահապետին եւ Քաջ Վարդանին անզուգական քաջագործութիւններով հպարտանալ:

Շաւարշը անդամ էր հայկական կազմակերպութեան մը, որ կ'աշխատէր որբերու հետ, որպէսզի անոնց հնարաւորութիւն տրուէր մեծնալ առողջ միաբնով ու մարմնով: Կազմակերպութիւնը կը զբաղէր որբերով, որոնք մեզի նման կորսնցուցած էին իրենց ընտանիքները: Կազմակերպութիւնը կը կոչուէր Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն, կըրճատուած՝ Հ.Մ.Ը.Մ.:

Հ.Մ.Ը.Մ-ի մէջ ես գտայ նոր

ընտանիք: Այլեւս ինքզինքս որբ ու առանձին չէի գգար: Ամէն անգամ որ կը հաւաքուէինք, կը խնդայինք, կ'երգէինք, կը պարէինք, կը խաղայինք, մեր սրտերուն մէջ նոր Հայաստան մը կը կառուցէինք: Մեր մանկութեան երջանիկ վայրկեանները կը յիշէինք: Բոլոր այն բաները, զորս Հ.Մ.Ը.Մ-ի մէջ սորվեցայ, հետագային հասուն տարիքիս պէտք եղան, յաջող մարդ ըլլալու համար, չմոռնալով անշուշտ արմատներս եւ սէրս՝ առ կորուսեալ հայրենիքս:

Երբ որոշեցի Հարաւային Ամերիկա ճամբորդել, նոր էջ մը բացուեցաւ կեանքիս մէջ: Բնակութեան վայր փոխելու գաղափարը ինծի թէ՛ կ'ոգեւորէր եւ թէ՛ վախ կը պատճառէր: Ի՞նչպէս վախ չզգայի, երբ գիտէի, թէ ի՞նչ կը նշանակէր առանձին մնալ եւ բնաւ չէի փափաքեր այդ զգացումը վերապրիլ: Այդ ժամանակ արդէն երեխայ մը չէի, որպէսզի մէկը ինծի խղճար... ես էի ու աշխարհը:

Անցնող տարիներու հետ հարցերս բաւական մը լուծուեցան: Տանիք ու գործ ունէի: Կօշիկի գործարանի մը մէջ կ'աշխատէի եւ ազատ կը գգայի սիրած բաներս կատարելու: Եղբայրս ալ լաւ էր, կանաչեղէնի կրպակ մը ունէր եւ ամերիկահայ աղջկայ մը սիրահարած էր: Սակայն, ես ինքզինքիս հարց կու տայի, թէ ա՞յս է կեանքը, ո՛ր էր այն երջանկութիւնը, ո՛րը են Լիբանանի որբերուն խաղերն ու ժպիտները, կամ թէ միակ ձեւը ուրախ ըլլալու տխուր ըլլա՞լն էր... կը կարծեմ թէ ո՛չ:

Նկատեցի, թէ ինձմէ բաժին մը ձգած էի Հ.Մ.Ը.Մ-ի Անթիլիասի մասնաճիւղին մէջ, բայց մոռցած էի, որ Հ.Մ.Ը.Մ-ն ալ իր կարգին բան մը ձգած էր իմ մէջս: Այս մտածումներու մէջն էի, երբ խենթութիւն մը ծնաւ մէջս: Նկատի ունենալով որ բաւական մեծ թիւ մը հայեր այս վայրերը եկած են, ինչո՞ւ Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղ մը չհիմնել այստեղ: Այսպէսով կը կարողանայի իմ ապրած գեղեցիկ բաներս բաժնեկցիլ նոր երեխաներուն հետ, եւ այս նոր որբերը, հայրենիքի՛ որբերը, որոնք ծնած էին մայր Հայաստանէն հեռու, կը կարողանային ունենալ երկրորդ ընտանիք մը, որ զիրենք մօտեցնէր Հայաստանին: Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքը:

Այս խենթ գաղափարը ամէն գիշեր քունս կը փախցնէր: Կը մտածէի, որ եթէ քանի մը «խենթ» երրորդացան Յեղասպանութեան օրերուն, հակառակ բոլոր տեսակի դժուարութիւններուն, միութիւն հիմնել, ի՞նչպէս ես պիտի չկարողանայի շատ աւելի լաւ պայմաններու մէջ մասնաճիւղ մը հիմնել:



Այսպէս, վեց ամիս մտածելէ եւ խորհելէ ետք, համոզուեցայ թէ կրնայի՛ր ընել եւ անցայ գործի:

Ժամանակ առաւ, մինչեւ որ արտօնագիրները, նիւթական միջոցները եւ կառուցային հարցերը կարենայի լուծել, բայց ամէն պարագայի յաջողեցա՛յ: Նպատակս էր կենդանի պահել Հայաստանը՝ բարձր պահելով Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը: Նաեւ, կը ջանայի հնարաւորութիւն տալ այն հայերուն, որոնք զանազան պատճառներով Հարաւային Ամերիկա եկած են, մօտենայու Հայաստանին, որպէսզի իրենք ալ զգան այն ինչ որ ես զգացի, երբ այս միութիւնը գիս իր թեւերուն տակ առաւ, ցոյց տալով որ եթէ մենք գոյութիւն ունինք, Հայաստանն ալ կենդանի է եւ անոր պէտք է արժանին ընծայել:

Հետզհետէ նոր ընտանիքներ սկսան միանալ Հ.Մ.Ը.Մ.ին, մինչեւ որ ան մասնաճիւղի մը վերածուեցաւ, իր յարմարութիւններով, զարգացնելու համար սկսուողութիւնն ու մարմնամարզը:

Ժամանակին հետ մասնաճիւղը աճեցաւ, իսկ ես սկսայ տարիք առնել: Հասաւ այն օրը, երբ ես այլեւս անկարող էի մասնակցութիւնս բերել սիրելի Հ.Մ.Ը.Մ.ի աշխատանքներուն: Այս մէկը ինծի շատ ցաւ պատճառեց:

Անձրեւոտ երեկոյ մըն է:

Ի՞նչ է այս սպիտակ պատերով սենեակը:

Պատին վրայ ժամացոյց մը կայ:

Ճօճանակով ժամացոյցն է այս, որ կը նշէ ժամը 8-ը:

Դուռը կը բացուի...

Արդեօք մա՞յրս է, որ գիս նախաճաշի կը կանչէ...

Ո՛չ, ո՛չ, բանե՛ր կ'երեւակայես Արամ, ասոնք փաղանգի տղաքն են: Այս պատանիները հիւանդանոց ինծի այցելութեան եկած են:

Այնպիսի վախով մը կը նային, կարծես թէ անձանօթ մը ըլլամ:

Անոնցմէ մէկը ինծի կը մօտենայ, ձեռքս կ'առնէ արեւուն մէջ եւ աչքերուն մէջը նայելով կ'ըսէ. «Ձեմ ուզեր որ երթաս, իսկ եթէ պատահի որ երթաս, կ'ուզեմ գիտնաս, որ Հ.Մ.Ը.Մ.ը երբեք պիտի չմեռնի: Իմ մեծագոյն փափաքս է քեզի փոխանցել, որ անոնք որոնք մեզմէ ետք պիտի գան, անոնց պիտի սորվեցնենք այն ինչ որ դու մեզի սորվեցուցիր, եւ երբ ես ալ այլեւս չըլլամ, ուրիշներ պիտի գան շարունակելու գործը, ապա՛ ուրիշներ, իսկ եթէ Հ.Մ.Ը.Մ.ը չվերջանայ, Հայաստանը պիտի շարունակէ ապրիլ»:

Հիմա, այո՛, նպատակս ամբողջացաւ:


Յանկարծ ճօճանակով ժամացոյցը կը դադրի գործելէ...
նաեւ՝ սիրտս:

Pink Kimberley
AUSTRALIA

PinkKimberley.com.au

Diamonds beyond rare

Pink Kimberley is an exquisite blend of natural Australian pink diamonds from the Argyle mine and white diamonds surrounded by 18ct gold. The jewellery designs are unique and distinctive. Australian Argyle pink diamonds are the rarest & most precious diamonds in the world.



Հ.Ս.Ը.Ս. 1942 ՕՐԱԳՈՅՑ 1942

| | ԵՍՆԱԿԵՐ | ՊԵՏՐՈՒՄ |
|-----|----------------|------------|
| Կր. | - 4 11 18 25 | 1 8 15 22 |
| Ու. | - 5 12 19 26 | 2 9 16 23 |
| Պ. | - 6 13 20 27 | 3 10 17 24 |
| Պ. | - 7 14 21 28 | 4 11 18 25 |
| Ս. | - 1 8 15 22 29 | 5 12 19 26 |
| Ս. | 2 9 16 23 30 | 6 13 20 27 |
| Ը. | 3 10 17 24 31 | 7 14 21 28 |

| | ՄԱՐՏ | ՅՈՒՆԻ |
|-----|---------------|----------------|
| Կր. | 1 8 15 22 29 | - 5 12 19 26 |
| Ու. | 2 9 16 23 30 | - 6 13 20 27 |
| Պ. | 3 10 17 24 31 | - 7 14 21 28 |
| Պ. | 4 11 18 25 | - 1 8 15 22 29 |
| Ս. | 5 12 19 26 | - 2 9 16 23 30 |
| Ս. | 6 13 20 27 | - 3 10 17 24 |
| Ը. | 7 14 21 28 | - 4 11 18 25 |

Հ.Ս.Ը.Ս.Ի ՎԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐՈՒՄ 1942 ՕՐԱԳՈՅՑ 1942

ՈՒԽՏ ԱՐԱՐԱՏԻՆ 20Ն՝ Հ.Ս.Ը.Ս.ԻՆ

**Հ.Ս.Ը.Ս.Ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան
Մամուլի Յանձնախումբ
ՀԱԼԷՊ**

*Պիտի հասնինք սրբազան լեռ կայարիդ,
Երբ ջրհեղեղը ռուսներուն գրնէ վերջ
Ու արիւնի ծովերն հագնին ծիածան...
Երբ մորթուած խաղաղութեան աղանձին
Վերադառնայ արհաւիրքի վիհերէն
Չիքննիի հաշտարար ճիւղը բերնին,
Պիտի հասնինք կայարիդ...*

Չկայ հայ մը, որ իր սրտի իւրաքանչիւր բարսխումին հետ
չէ երագած, չէ փափաքած իրականացած տեսնել Անդրանիկ
Ծառուկեանի բանաձեւած Արարատի Ուխտը: Բայց ոչ բոլոր
ըր տեղեակ են, որ՝

*Քաղաքներէն, ճամբաներէն, դաշտերէն,
Արտորի խուլ գոհիներուն խորերէն,
Պիտի շարքերը մեր խորհար փոթորկիին
Մեր պապերուն ի խնդիր սո՛ւրբ երազին...
... Տե՛ս մեր շարքերը խանդարորբ ու արի...
... Ու կամքը մեր, քնն ժայռերուդ պէս ամուր...*

Ծառուկեան այս բանաստեղծութիւնը ձօնած է Հ.Ս.-
Ը.Ս.Ին՝ նկարագրելով անոր խորխոտ, խանդաբորբ ու արի
շարքերը, տպելով գայն 1942-ի Ս. Ծնունդի շնորհաւորական

քարթին վրայ: «Երագային Հալէպը» գիրքին մէջ, հեղինակը
կը մանրամասնէ ծնունդը «Ուխտ Արարատին» բանաստեղ-
ծութեան: Այսպէս, իր իսկ գրիչով, մեծ հետաքրքրութեամբ
կը կարդանք.

«...Երբ Ծնունդը մօտենար, Նշանին [Թիւսիւզեան-«Մ».]
սիրալիրութիւնները կ'աւելնային: Ընդհանրապէս ես իրենց
տունն եմ, Պրն. Խոսրովին աղջիկներուն եւ Կարպիսին հայե-
րէնի մասնաւոր դասեր կու տամ, բայց Ծնունդի օրերուն
Նշանը մեր տունն է, կերակուրի պահանջներ ունի, ի մեծ եր-
ջանկութիւն մալրիկիս սինեմա կ'երթամ՝ հետս է, սրճարան՝
քովս է: Կը շոյէ, կը գուրգուրայ: Կատարեալ դարպաս մը, եւ
ի վերջոյ կ'ըսէ.

- Սա ոտանաւորը ե՞րբ պիտի գրես, շատ ժամանակ չկայ...

Այդ օրերուն Նշանը ոչ խանութ կ'երթայ եւ ոչ ալ ուրիշ
գործի կը նայի: Մէկ գործ ունի՝ Ծնունդի քարթիւրը: Աւան-
դութիւն է: Սկաւտները, բազմաթիւ խումբերու բաժնուած
պիտի շրջին տունէ տուն- պարզապէս պիտի «սանտրեն» քա-
ղաքը- եւ շնորհաւորական քարթիւր ներկայացնելով, իրենց
կղպուած գանձանակներուն մէջ նուէրներ հաւաքեն, ինչ որ
միութեան տարեկան պիւտճէին կարեւոր մէկ բացը կը բացէ:
Քարթին վրայ՝ օրացոյց, նկար, եւ այլն, բայց ետեւն ալ բա-
նաստեղծութիւն մը գրուած պէտք է ըլլայ: Ատիկա՝ ես եմ,
իսկ ձեռնարկին պատասխանատուն Նշանն է: Սպայակոյտի
հրամանատարի մը պէս, քաղաքին քարտէսը առջեւը, թաղէ



Թաղ խմբակներ կը ճշդէ, դասաւորումներ կ'ընէ, պատուէրներ կու տայ, բայց... քարթին բանաստեղծութիւնը կը պակսի: Ահա թէ ինչու Նշանը փակած է ինծի եւ մեծարանքներով կ'ողորդէ:

- Քեզ պատի մը հետ ի՞նչպէս ես այսօր: Եթէ կ'ուզես Սեպիլ երթանք: Բայց ուրիշ մարդ չըլլայ, ես ու դուն, հոն կը գրես:

Նշանին խելքով, կարելի էր տեղ մը նստիլ հետը եւ տեղն ու տեղը բանաստեղծութիւն մը գրել:

- Նշան այս բանը ապսպրանքով չ'ըլլար, չէ՞ս հասկնար:

- Եթէ ուզես կ'ըլլայ: Օրերը կը մօտենան սակայն: Նշա-

նին սիրալիրութիւնները շղայնութեան կը վերածուին: Քէն կ'ընէ: Նորէն կը հաշտուի: Կը պնդէ, կը հետապնդէ: Պատահած է, որ սրճարանը քովս նստի եւ ըսէ:

- Մինչեւ չգրես, այստեղէն ո'չ դուն կ'ելլես, ո'չ ալ ես:

Այսպէս, հինգ վեց տարի, չափուած ձեւուած «Ուխտ» երգրած եմ Նշանին համար: Այդ միջակութիւններէն ազատագրուած է միայն մէկը, եւ դասագիրքերու մէջ անցած: Մինչեւ այսօր կ'արտասանեն հանդէսներու մէջ - «Ուխտ Արարատին»: Գրողը ես եմ, բայց ոչ ոք գիտէ թէ ատոնց իրական հեղինակը Նշանն է... («Երազային Հայկալը, էջ 250-251»):

Իբրեւ վերջաբան, մինչեւ օրս, Հ.Մ.Լ.Մ.ը կը մնայ պարկեշտ, գիտակից այն «Ուխտ»ին, որուն իրագործումին պատասխանատուութիւնը սիրայօժար ստանձնած է:

... Եւ հաւաքաւ, կրանիդեայ ո՞վ Աստուած,

Սրբազան լեռ, հաւաքաւ՝

Թէ կը հասնինք, մենք կը հասնինք կատարիդ...

ՆՈՐ 100-ԱՄԵԱԿՆԵՐՈՒ ՏԵՍԼԱԿԱՆՈՎ...

Մանուկ Քեօշկերեան ՅԱԼԷՊ

Այսօր, անխառն հպարտութեամբ է, որ աշխարհով մէկ կը յիշատակուի Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ Հ.Մ.Լ.Մ.ի 100-ամեայ յրբելեանը:

Պատմական երթի այս հանգրուանին, պահն է յետադարձ ակնարկով մը կը ռադատելու տարողութիւնը ծով տառապանքներու եւ անսահման զոհողութեան գնով իրագործուած ազգանուէր ու Աստուածահաճոյ ծառայութեան, մեր միութեան հետապնդած նպատակներուն իրագործման ուղիին:

1918-ին, Պոլսոյ մէջ հիմնուեցաւ Հ.Մ.Լ.Մ.ը, որուն պարտականութիւնը պիտի ըլլար նորահաս սերունդներու մարմնակրթութիւնը, ազգային դաստիարակութիւնը, մարդկային արժէքներու փոխանցումն ու բարոյական չափանիշերու շեշտումը:

Իր կոչումին գիտակից, իբրեւ երիտասարդական կազմակերպութիւն, Հ.Մ.Լ.Մ. յաջողեցաւ հայ մարզիկին եւ սկաուտին ջամբել ազգային դաստիարակութիւն՝ նուիրումով ծառայելու ազգին ու հայրենիքին, ինչպէս նաեւ՝ իր հարազատ ժողովուրդին, մնալով հաւատարիմ անոր պատմական ու մշակութային առաքելութեան:

Հ.Մ.Լ.Մ., այս մեծ կազմակերպութիւնը, եղաւ օրհնաբեր, եղաւ բարասան ու սպեղանի, ջարդէն հրաշքով փրկուած հազարաւոր պատանիներուն, անոնց մէջ սերմանելով հայրենիքին ու ազգին հանդէպ սէր ու ծառայութեան ոգի, անոնց մէջ

դրոշմելով Հ.Մ.Լ.Մ.ի նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր», որ իր մէջ կը խտացնէ հայ մարդուն կեանքին իմաստը. բարձրանալ դէպի մարդկային եւ ազգային վեհ արժանիքներ, ապա ձեռք երկարել օգնութեան կարօտ եղբոր կամ քրոջ, զայն եւս բարձրացնելով գաղափարի եւ բարոյականի գագաթները: Թող անոնք ըլլան անխոնջ դրօշակակիրները մեր դաւանած նշանաբանին:

Իբրեւ վահան, տակաւին ապառաժի նման պէտք է մնայ 100-ամեայ Հ.Մ.Լ.Մ.ը, ի գին ամէն տեսակի զոհողութեանց: Ան պէտք է շնչէ, որպէսզի մեր երազները անմար մնան, ու որպէսզի ան հասնի բոլորին օգնութեան, «Մի՛շտ պատրաստ» ծառայելու եւ պահպանելու հայ յեզուն եւ մշակոյթը:

Թէեւ յառաջիկայ 100 տարիներուն դէմ յանդիման պիտի կանգնինք նոր մարտահրաւէրներու, բայց աւելի ազդու եւ այժմէական միջոցներով ու գիտութեամբ գինուած՝ պիտի շարունակենք ընթանալ, լաւագոյն դաստիարակութիւնը տալով Հ.Մ.Լ.Մ.ական իրերայաջորդ սերունդներու:

Հ.Մ.Լ.Մ.ի անցնող 100 տարիները եղան պատուաբեր, իսկ յաջորդ 100 տարիները պիտի ըլլան յաղթական:

Արդ, թող բոցավառ մնայ նուիրաբերումի եւ ծառայասիրութեան այս հնոցը, որպէսզի Հ.Մ.Լ.Մ.ականի առողջ ոգին միշտ թեւածէ միութեան աշխարհատարած 110 մասնաճիւղերուն վերեւ, որպէսզի անոր անդամները այս սրբազան միութեան ճամբով ծառայեն իրենց գաղութներուն, հայրենիքին ու հայութեան:

Փա՛ռք ու պատիւ Հ.Մ.Լ.Մ.ի 100-ամեակին:

Կեցցէ՛ Հ.Մ.Լ.Մ.ը:

Կեցցէ՛ զայն ծնող ժողովուրդը:

ԱԶԳԱՅԻՆ ՏԱՌԱՊԱՆՔԷ ԾՆԱԾ ՄԻՈՒԹԻՒՆԸ

Սեւան Նազարեան ՓԱՐԻՉ

Ծնունդն էր ժողովուրդին:

Ծնած էր ծառայելու իր ժողովուրդին, մեծցաւ ու զարգացաւ նոյն ուղիով: «Օ՛ն, յառա՛ջ» վանկարկեց անվերապահ, ապրեցաւ ու կ'ապրի ճիշդ ու միայն ա՛յդ նպատակին համար:

Հարիւրամեայ միութիւն, ծնած ազգային տառապանքէ, մկրտուած վերապրումի յոյսով եւ գոյատեւման կամքով:

Ո՞վ է այս հսկան, որ կու գայ պատմութեամբ թրծուած ու անկոխ ճամբաներ բացած, իր ազգի զաւակները որբութենէ հասցնելով ինքնութեամբ հպարտ քաղաքացիներու ու հայրութեամբ տոչորուած անհատներու բարձրութեան:

Պէտք է դառնայ 19-րդ դար, երբ հայ քաղաքական մտքի եւ մշակոյթի զարթոնքն ու 1908-ի Օսմանեան Սահմանադրութեան հռչակումը արեւմտահայ զանգուածին համար ունեցան որոշիչ իմաստ:

Եւրոպական համալսարաններէ վկայեայ տղաք, միջազգային սկստական նորաստեղծ շարժումով խանդավառուածներ, Պոլսոյ մէջ նուիրուեցան հայ երիտասարդութեան մարմնակրթութեան գործին:

Այդ սերունդի ներկայացուցիչներէն հանդիսացան Շաւարշ Քրիսեան, Յովհաննէս Հինդլեան, Գրիգոր Յակոբ-



եան՝ հիմնադիրներ Հ.Մ.Ը.Մ.ի, Վահան Չերազ, Տիգրան Խոյեան, Օնիկ Եագմաճեան եւ ուրիշներ:

Շաւարշ Քրիսեան, յանդուգն անձնաւորութիւն մը, յաջողեցաւ հիմնել «Մարմնամարզ» ամսաթերթը ու քաջալերել հայ երիտասարդին մօտ մարզական ոգին: Սակայն անոր երազը, մտքի թռիչքն ու կեանքի թելը կտրուեցաւ, որովհետեւ ինք եւս զոհերէն մէկը եղաւ Հայկական Ցեղասպանութեան:

Քրիսեան կ'իյնար նահատակ:

Սակայն բացուած էր ճամբան ու փոխանցուած էր ոգիի ուժը:

Նոյեմբեր 1918-ին, մեր ժողովուրդի հրաշափառ յարութեան օրերուն, Պոլսոյ մէջ հիմը կը դրուէր Հ.Մ.Ը.Մ.ի՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան, որուն նպատակն էր մարմնակրթական եւ բարոյական դաստիարակութեամբ Եղեռնի խրեակներէն առողջ ու ամուր նկարագիրով ապագայ հայ մարդը պատրաստել:

Հազիւ ինքզինք հաստատած, Հ.Մ.Ը.Մ. իր մասնակցութիւնը կը բերէր նորանկախ Հայաստանի ամրապնդման աշխատանքներուն: Հայրենիք կ'ողարկէր եռանդամ պատուիրակութիւն մը՝ տեղւոյն վրայ կազմակերպելու համար մարմնակրթական եւ սկստական գործը: Կը ստանձնէր որբախնամի պարտականութիւն, կ'օժանդակէր սովահար ու ցրտահար տարագիրներուն, կը մասնակցէր ազգային նուիրահաւաքի եւ թեւ ու թիկունք կը կանգնէր հայկական բանակին:

Մինչեւ 1921 Հ.Մ.Ը.Մ. կը գործէր Պոլսոյ եւ գաւառներուն մէջ, սակայն, Սեպտեմբեր 1922-ին, քաղաքական ծանօթ պայմաններու բերումով, ան պաշտօնապէս լուծուած կը յայտարարուէր Թուրքիոյ մէջ: Պոլիսը կը զրկուէր իր մանուկը պահելու իրաւունքէն:

Հայաստանի խորհրդայնացումով, Հ.Մ.Ը.Մ. կը դառնար Սփիւռքի միութիւն՝ հայապահպանման առաքելութեամբ:



Շուտով, նոր կազմաորուող գաղութներ եկեղեցիներու կողքին կը կառուցէին դպրոցներ եւ ակումբներ, որոնց յարկին տակ անպայման կը հնչէր Հայ Սկաուտին երգումը, կը տարածէր Հ.Մ.Ը.Մ.-ական մարզիկին եռանդը:

Անապատէն ճողոպրած հայորդիներ իրենց հետ աշխարհի չորս ծագերը կը տանէին Հ.Մ.Ը.Մ.-ի մարմնակրթական ջահը: Զահ մը, որ կը բոցավառէր անվերջ՝ Հալէպէն մինչեւ Պէյրութ, Սոֆիայէն Պուլքէշ, Փարիզ, Աթէնք, Պոսթրն, Պուէնոս Այրէս եւ այլուր:

Այնուհետեւ, յաջորդող տասնամեակները Հ.Մ.Ը.Մ.-ի համար կը դառնային բարգաւաճման ու զարգացման տարիներ: Կը կազմակերպուէին մարզական շքեղ հանդիսութիւններ, միջ-մասնաճիւղային հանդիպումներ, որոնց յառաջացուցած խանդավառութիւնը կը դառնար վարակիչ:

Մարզական առումով, Հ.Մ.Ը.Մ.-ի խումբերը կը տիրանային իրենց երկրի ֆուտպոլի ախոյեանութիւններուն: Նուաճումներ կ'արձանագրուէին պասքէթպոլի, փինկ-փոնկի, հեծելարշաւի եւ աթլետիկայի մրցումներուն:

Մինչ սկաուտական շարքերը կը խոտանային, հայ պատանին կը սորվէր դառնալ շարքաշ ու արի, ազգասէր ու հայրենասէր, օրինապահ ու կարգապահ:

Շատ չանցած, Միջին Արեւելքի քաղաքական ու տնտեսական պայմանները հայ մարդը կը ստիպէին տեղաշարժերու: 1960-ական տարիներուն, մեծաթիւ հայեր կը զաղթէին դէպի Մ. Նահանգներ, Գանատա եւ Աւստրալիա, որուն իբրեւ արդիւնք՝ կը ստեղծուէին նոր մասնաճիւղեր, Հ.Մ.Ը.Մ.-ը դարձնելով քիչ մը աւելի տարածուն, որոշիչ դեր մը վերապահելով հայութեան ծառայող ու հայութեամբ շնչող այս միութեան:

1970-1980-ական թուականներուն Հ.Մ.Ը.Մ.- կը վերածուէր համազաղութային կազմակերպութեան եւ կ'օժտուէր Կեղ-



րոնական Վարչութեամբ: 1974-ին, Պէյրութի մէջ գումարած Միութեան Ա.Ը.նդհանուր ժողովը այս իմաստով նոր էջ կը բանար միութեան պատմութեան մէջ:

Այնուհետեւ ընթացք կ'առնէին համա-Հ.Մ.Ը.Մ.-ական նախաձեռնութիւնները. բանակումներ, մարզախաղեր, ըսկաուտական համագումարներ, միջ-դիւանական խորհրդաժողովներ եւ այլն:

1980-ին Պէյրութի մէջ կը սկսէր հրատարակուիլ միութեան «Մարզիկ» պաշտօնաթերթը: Միաժամանակ, ճամբայ կ'ելլէին երկու կարեւոր նախաձեռնութիւններ՝ Նաւասարդեան մարզախաղերը Լոս Անճելըսի մէջ եւ Մայիսեան փառատօնները Լիբանանի մէջ: Երկուքն ալ Հ.Մ.Ը.Մ.-ական վերանորոգ ուժի եւ կենսունակութեան արտայայտութիւններ:

Յաջորդական տարիները Հ.Մ.Ը.Մ.-ի համար կը հանդիսանային կազմակերպական ուժեղացման եւ հզօրացման վկաներ. սկաուտական աշխատանքները կը ստանային նոր թափ ու մղում, մարզական կեանքը կ'ապրէր մեծ աշխուժութիւն:

Կը յաջորդէր Հ.Մ.Ը.Մ.-ի արդի պատմութեան ամենէն բախտորոշ հանգրուանը, Դեկտեմբեր 1989-ին, Հ.Մ.Ը.Մ.-ի

հայրենիք վերադարձով: Այսպէս, տասնամեակներու եւ սերունդներու երազներ կ'իրականանային Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.-ական շարքերու յառաջացումով եւ միութեան համահայկական կառույցի ստեղծումով:

1995-ին, Միութեան Զ. Ընդհանուր ժողովին որոշումով, Հ.Մ.Ը.Մ.-ի Հայաստանի սկաուտութիւնը կը վերանվանուի Հայաստանի Ազգային Սկաուտական Կազմակերպութիւն՝ Հ.Ա.Ս.Կ. եւ այնուհետեւ կը ստանձնէ համաշխարհային սկաուտութեան մօտ հայ սկաուտութեան ներկայացուցչութեան ջահը, 1997-ին պաշտօնապէս մաս կազմելով Համաշխարհային Սկաուտական Շարժումին: Տարի մը ետք, Հ.Մ.Ը.Մ.-



Հ.Ա.Մ.Կ. կը հանդիսանայ սկաուտական եւրո-ասիական բաժանմունքի հիմնադիրներէն:

100 մասնաճիւղերով եւ 23 հազար անդամներով Հ.Մ.Ը.Մ. մեծ յաջողութիւններով ու մարտահրաւէրներով կը թեւակոխէ 21-րդ դարը:

Յաջողութիւնները կապուած են կազմակերպական իր կառուցին ընդարձակման եւ շրջանային ձեռնարկներու ամրապնդման:

Արդարեւ, համա-Հ.Մ.Ը.Մ. ական նախաձեռնութիւնները կը շարունակուին նախկին թափով: Այս տարիներու նորութիւնները կ'ըլլան շրջանային նախաձեռնութիւնները, մանաւանդ որ՝ Իրաքի եւ Սուրիոյ տագնապներէն ետք մեծաթիւ հայու թիւն տագնապահար այդ շրջաններէն կը փոխադրուի եւրոպական ոստաններ: Հ.Մ.Ը.Մ. անտէր չի կրնար ձգել զանոնք: Հ.Մ.Ը.Մ. ի նախաձեռնութեամբ Եւրոպայի մէջ կը կազմակերպուին շրջանային մակարդակով միջ-մասնաճիւղային խաղեր, Եւրոպայի մասնաճիւղերու բանակում եւ Եւրոպայի մասնաճիւղերու միջ-գիւղական հանդիպումներ: Շրջանային նախաձեռնութիւններ կ'իրագործուին նաեւ ամերիկեան



ցամաքամասի եւ Միջին Արեւելքի մէջ:

Կազմակերպական հզօրացման նպաստող կարեւոր յաջողութիւններ կ'ըլլան նոր կեդրոններու բացումները:

Կը շարունակուին Հ.Մ.Ը.Մ. ի բանակավայրերու եւ մարզադաշտերու կառուցումները, իբրեւ հայակերտման միջավայր ու միջնորոտ ստեղծող կեդրոններ:

Այսօր՝

100-ամեակի հանգրուանն է:

«Պատուաբեր անցեալէն յաջմական ապագայ» կարգախօսով երթը կը շարունակուի: Պիտի շարունակուի, մինչեւ որ կարելի ըլլայ Եռագոյն դրօշը կոթողել «Կատարն հայրենի լեռանց հեռագոյն»:

Մարզիկը իր դնդերով, սկաուտը իր խոյանքով, վարչականը իր ճակտի քրտինքով, 110 մասնաճիւղերու 26 հազար անդամներն ու համակիրները իրենց ուժերուն առաւելագոյն չափով մասնակից պիտի դառնան այդ երթին, որուն պատմութիւնը պիտի գրուի միասնաբար,

Ամէնուն շունչով, բոլորին համար:

Հայութեան եւ Հայաստանին համար:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF
THE NEW AIRLINE COMPANY

Armavia
Արմավիա

Photos: © Yann Arthus-Bertrand, La Terre vue du Ciel. Licence 075 960031. Studio K&E 2003 P&B

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select
your Journey
- Guided Tours
for 8 Days
or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՐԺԵՒՈՐՄԱՆ ՓՈՐՉ

Գեորգ Յակոբժեան ՎԻԵՆՆԱ

Քանի մը ամիս անցած է Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրու-
թեան դարադարձին նուիրուած՝ Հայաստանի
պաշտօնական եւ ժողովրդային հանդիսութիւննե-
րէն: Մանաւանդ այս օրերուն, երբ շատերս քննադատու-
թեան մէկական վարպետներ ենք, յաճախ ձեռնածալ նստած՝
կը քննադատենք այս կամ այն միութեան քրտնաբեր կամ չքրտնաբեր,
սխալներն ու մարտահրաշխանները նշելու կողքին, գործնական
եւ ազդու լուծումներ չենք առաջարկեր, «եթէ մենք չենք կազ-
մակերպողը, ուրեմն թերի-անկատար է»-ի հոգեբանութեամբ
կը գործենք ու կը զլանանք արդար գնահատականներ տալ
դրական երեւոյթներուն: Կը հաւատանք, որ Հ.Մ.Ը.Մ.ի 100-
ամեակին նուիրուած հայաստանեան ձեռնարկներուն բոլոր
դերակատարներուն, ամէնէն մեծէն մինչեւ ամէնէն չնչին
ներդրում ունեցողներուն անխորժ՝ երախտապարտութեան
խօսք արձանագրելը մեր խիղճին նուազագոյն պարտքն է:

Հետեւաբար, երախտապարտութեան ազնիւ խօսք՝ բոլոր
անոնց, որոնք ամիսներ շարունակ ծրագրեցին, դասաւորե-
ցին, կազմակերպեցին, համակարգեցին, գործադրեցին, նուիր-
ութեանը, օժանդակեցին, շարքերը գորաշարժի ենթարկե-
ցին, քուլիսներու ետին, ժողովներու միջոցով կամ Երեւանի
ու Բիւրականի տօթին ու կիզիչ արեւուն տակ ջիղ ու համբե-
րութիւն վատնեցին, ուստիսփի եղան, մարտահրաշխաններ
յաղթահարեցին, մէկ խօսքով ԳՈՐԾԵՑԻՆ, որպէսզի պատ-
մական այդ տասը օրերը ոսկի տառերով արձանագրուին ո՛չ
միայն Հ.Մ.Ը.Մ.ի, այլեւ՝ հայոց նորագոյն պատմութեան տա-
րեգրութեան մէջ:

Պատմական էին այդ օրերը, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը հա-
մայն հայութեան առջեւ իր հարիւրամեայ աշխարհատարած
երթին հաշուետուութիւնը կու տար ՃԱԿԱՏԱԲԱՑ, հայրենի
անկախ հողին վրայ, Եւագոյնի հովանիին ներքեւ, ինքնու-
րո՛յն, կազմակերպ, բծախնդրօրէն մշակուած ձեռնարկնե-
րով, սկառուտական կուռ շարքերով, զանազան երկիրներէ
ժամանած հարիւրաւոր միութեանականներով, պետական, քա-
ղաքական, ակադեմիական աւագանիի ներկայութեամբ,
անոնց իրաւացի գնահատականով ու քաջալերանքով, հայրե-
նաբնակ եւ սփիւռքաբնակ հայրենակիցներու ժողովրդային
մասնակցութեամբ:

Պատմական էին, որովհետեւ իբրեւ հայ ժամանակակից
իրականութեան մէջ մեծագոյն թիւը եւ ցանցը ունեցող հա-
մահայկական կազմակերպութիւն, Հ.Մ.Ը.Մ. Հայաստանի
մէջ այս ձեռնարկներու կազմակերպումով կու գար իր լու-
ման ներդնելու ընդամէնը երկու ամիս առաջ ժողովրդային

յեղափոխութեամբ իշխա-
նափոխութիւն ապրած հայ-
րենիքին ու ժողովուրդին
կեանքին մէջ: Այսպէսով,
Հ.Մ.Ը.Մ.ը անգամ մը եւս կը
փաստէր, որ ինք հայրենա-
կեղրոն ու հայրենանուէր
միութիւն է: Միաժամանակ,
իշխանութիւններուն ցուցաբե-
րած ողջունելի համագործակցութիւնը եւ անվերապահ գո-
րակցութիւնը վստահութիւն կը ներշնչէին բոլոր մասնակից-
ներուն եւ կ'ամրապնդէին ժողովուրդ-իշխանութիւն համա-
հայկական կազմակերպութիւններ յարաբերութիւնները:



Պատմական էին այդ օրերը, որովհետեւ խորհրդանշակա-
նօրէն Պոլիսէն, Արարատի գագաթէն, Փարիզէն ու Անթիլիա-
սէն բերուած ջահերը կը միաձուլուէին Ծիծեռնակաբերդի
անմար կրակին հետ, որ մեր ժողովուրդի արդար իրաւունք-
ներու եւ պահանջատիրութեան կրակն է:

Պատմական էին, որովհետեւ աշխարհի չորս ծագերէն
աւելի քան 1200 սկառուտներ Հայաստան մէկտեղելով՝ Հ.Մ.-
Ը.Մ.ը անուղղակիօրէն կը վերահաստատէր իր առաքելու-
թիւնը՝ «Նահատակ ցեղի անմահներ»-ը ղէպի հայրենի կատար-
ներ առաջնորդելու:

Պատմական էին, որովհետեւ Օփերային թատրոնի սրահին
պաշտօնական հանդիսութեամբ, Բիւրականի մէջ բացուած
յուշաքարով, Երեւանի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի կեդրոնին առջեւ
քողագերծուած Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներու որմնաքանդակ-
ներով եւ Կիւմրիի մէջ տեղադրուած Վահան Չերազի արձա-
նով, ինչպէս նաեւ հարիւրամեակի դրոշմաթուղթի, գիտաժո-
ղովի եւ Հ.Մ.Ը.Մ.ի թանգարանային իրերու ալյոմին հրա-
տարակութեամբ, Երեւանի կեդրոնին մէջ տեղադրուած մեծ
պատառներով ու լրատուական գանգուածային միջոցներու
անդրադարձով, Հայաստանի մէջ Հ.Մ.Ը.Մ.ի հանրաճանա-
չութեան մակարդակը կը բարձրանար:

Յառաջիկայ տասնամեակներուն նմանօրինակ պատմա-
կան յորեթաններ նշելու համար Հ.Մ.Ը.Մ. այլեւս ունի կայա-
ցած համաշխարհային կառույց, կամաւորներու հսկայ բա-
նակ, ներուժ եւ պատմական փորձ: Կը մնայ առարկայական
արժեւորումի ենթարկել միութեան ներկա՛ն, ներկան ու ներ-
կայի նպատակասլաց գործը առաջնահերթ նկատել, չզիւնով-
նալ անցեալի փառքով, չտարուել ապագայի վարդազոյն
երազներով, վերանորոգուել, աւելի արդիականանալ, միշտ
որակը գերադասել, ստեղծագործել ու ժամանակակից աշ-
խարհայեացքով, ռազմավարութեամբ, ծրագիրով եւ աշխա-
տելատճով թեւակոխել երկրորդ հարիւրամեակ:

«ԲԱՐՉՐԱՑԻՐ-ԲԱՐՉՐԱՑՈՒՐ»

Տաթև Ա. Քինյ.Միքայելեան
ՅԱԼԷՊ



Դար մը առաջ ծնունդ առած Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան վրայ ակնարկ մը նետելը, ինքնին, բաւարար է տեսնելու եւ վկայելու յաղթական, յառաջդիմական գնացքը հարիւրամեայ այս հաստաբեւտ կաղնիին, որ աշխարհացրիւ իր 110 մասնաճիւղերով, իսկապէս համահայկական հսկայ կազմակերպութիւն մըն է՝ իր բեղուն աշխատանքով, մշտադալար ու մշտանորոգ:

Այս վիթխարի միութեան գոյատեւման գաղտնիքը կը կայանայ հիմնադիր սերունդէն մինչեւ օրս իրերայաջորդ սերունդներուն փոխանցուող ազգային վեհ գիտակցութեան, անբասիր նկարագիրին, անկուն կամքին ու յարատեւութեան մէջ:

Պատմութեան ընթացքին քիչ ժողովուրդներ կարողացած են փայլուն էջեր եւ յաղթանակներ արձանագրել, հակառակ այն բոլոր դժուարութիւններուն, որոնք կը միտին խափանել խաղաղութիւնն ու բերկրալի կեանքը: Այդ քիչերէն կը նկատուի մեր ժողովուրդը, որ իր ապրած դժիւսմ օրերու փոշին հագիւ թօթափած, Ցեղասպանութեան արիւնալի տարիներէն անմիջապէս ետք, իր անխորտակ կամքով կարողացաւ համախմբել ու կազմակերպել ջարդէն մազապուրծ ճողոպրած ժողովուրդը, կերտել Հայաստանի անկախութիւնը եւ անկախութեան կողքին ծնունդ տալ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան՝ «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանով:

Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան օրէն, անոր գործունէութեան պարզագոյն ձեւին մէջ իսկ, մեր ժողովուրդի դարաւոր պայքարին մարմնացումը կը տեսնենք: Այս բոլորը՝ հայ պատանիին ու երիտասարդին Ֆիզիքական, մտաւոր ու հոգեկան աշխարհը առողջ պահելով՝ «առողջ մարմին, միտք եւ հոգի» գաղափարը հետապնդելով:

Դար մը բոլորած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը միշտ մնաց պատնշի վրայ՝ ջանալով բարձր պահել հայ մարդուն արժանիքները, վանելով վատը, սերմանելով բարին ու վսեմը: Այսպէս, ան ունեցաւ իր սկզբունքները եւ ջանադիր եղաւ չարը եւ քայքայիչը անջատելու հայ մարդու ետէն, փոխարէնը գայն լուսաւորելով գիտութեամբ զարդարած մարդկայնութեամբ: Այս միտքերուն կարելի է հանդիպիլ Հ.Մ.Ը.Մ.ականի երգումին եւ դաւանանքի յօդուածներուն մէջ:

Հ.Մ.Ը.Մ.ը իր բովանդակ պատմութեան ընթացքին սրբա-

զան առաքելութիւն նկատած է հայ մարդը իր կոչումին արժանի պահելը: Այդ կոչումը Հ.Մ.Ը.Մ.ականներուն համար հետեւեալ կէտերուն մէջ խտացած է.-

- 1) Հայեցի եւ քրիստոնէական դաստիարակութեան անաղարտ պահպանում:
- 2) Մարդկային, ընկերա-անհատական կեանքի բարոյականութեան եւ որակի պահպանում:
- 3) Անդիջող կեցուածք եւ հաւատարմութիւն Հ.Մ.Ը.Մ.ի սկզբունքներուն, որոնք կը մարմնաւորեն հայ ժողովուրդին իտէալը:

Միրելի՛ Հ.Մ.Ը.Մ.ականներ,

Այսօր, հարիւր տարի ետք, մարդակերտման դարբնոցի՝ Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը «Բարձրացի՛ր-բարձրացուր»ը հրաւէր մըն է ուղղուած բոլոր ազնիւ հոգիներուն, որոնք կը հաւատան այս ուռձացած միութեան (այս դպրոցին) առաքելութեան: Այն դպրոցին, որ մարդուս մէջ կ'արմատացնէ վեհագոյնին, կատարեալին ձգտումը, առողջ մարմին ու միտք, մաքուր հոգի ու նկարագիր կերտելով: Այս ներդաշնակութիւնն, որ կը գատորոշէ Հ.Մ.Ը.Մ.ը այլ կազմակերպութիւններէ ու միութիւններէ:

Փա՛ռք հիմնադիրներու խնկելի յիշատակին:

Թող յաւէտ օրհնեալ ըլլան Հ.Մ.Ը.Մ.ի ազգանուէր ծառայութիւնն ու գործունէութիւնը:

Կեցցէ՛ հայ ժողովուրդն ու Հայաստանը:

Կեցցէ՛ 100-ամեայ Հ.Մ.Ը.Մ.ը՝ «Պատուաբեր անցեալէն՝ յաղթական ապագայ», «Փառապանծ անցեալէն, դէպի պայծառ ապագայ» իր երթով:

